ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՈՒՂԻՈՎ

ԵՐԵՎԱՆ

Ժողովածուն նվիրված է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-ամյակին: Լուսաբանված են հեղափոխության միջազգային նշանակությունը. միջազգային հեղափոխական շարժման մեջ տեղի ունեցած մի շարք արմատական փոփոխություններ և Սովետական Միությունում ձեռք բերված վիթխարի հաջողությունները: Ցույց է տրված ռուս ժողովրդի դերը սովետական կարգերի հաստատումից հետո Հայաստանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական վերափոխումների գործում:

Մեծ տեղ է տրված կոմունիստական կուսակցության կազմակերպիչ և դնկավար դերին. մեր երկրի ժողովուրդների ինտերնացիոնալ համախմբումը և բարեկամությունը:

ՀԱՍԱ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ
АРМЯНСКИЙ ФИЛИАЛ ИНСТИТУТА
МАРКСИЗМА-ЛЕНИНИЗМА ПРИ ЦК КПСС

ПО ПУТИ ВЕЛИКОГО ОКТЯБРЯ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1977

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՍՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՈՒՂԻՈՎ

ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտ Գրադարան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1977

33С5 (С43)
М 55

խմբագրական կոլեգիա

Հ. Հ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ, Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ (նախագահ),
Վ. Ն. ՂԱԶԱԽԵՅԱՆ, Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ,
Վ. Ն. ՆԵՐՍԱՐԱՐՅԱՆ



М 10601
703 (02)—77 11—77 © Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1977

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վ. Ի. Լենինի ստեղծած բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ 60 տարի առաջ Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները տապալեցին շահագործողների տիրապետությունը և իրենց ձեռքը վերցրին բաղաքական իշխանությունը: Ռուսաստանում հաստատվեց պրոլետարիատի դիկտատուրա: Սկսվեց մարդկային հասարակության պատմության նոր դարաշրջանը: Բնորոշելով այդ դարաշրջանի էությունը, Վ. Ի. Լենինը գրել է. «Կապիտալիզմի և նրա հետևերի ոչնչացումը, կոմունիստական հասարակարգի հիմքերի հաստատումը կազմում է համաշխարհային պատմության այժմ սկսված նոր դարաշրջանի բովանդակությունը»[1]:

Մեծ Հոկտեմբերը որպես XX դարի գլխավոր իրադարձություն, իր նպատակներով արմատապես տարբերվում է նախորդ հեղափոխություններից: Իշխանությունը հանձնելով աշխատավոր մարդկանց՝ նյութական բարիքներ արտադրողներին, նա «...պատմական շրջադարձ նշանավորեց մեր երկրի ժողովուրդների նակատագրում: Նա մեր հայրենիքը փրկեց վերահաս աղետից, դեպի որը նրան հրում էր կառավարող շահագործողական դասակարգերի՝ կալվածատերերի և բուրժուազիայի, հանցավոր բաղաքականությունը, նրան դուրս բերեց իսկապես անկախ զարգացման, սոցիալ-տնտեսական և կուլտուրական համակողմանի առաջադիմության ուղին»[2]: Այդ հնարավորություններ ստեղծվեցին իրագործելու սոցիալիզմի, խաղաղության, ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության գաղափարները:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ազատություն բերեց Ռուսաստանի բոլոր ազգերին ու ժողովուրդներին: Այդ ազատության դրոշակակիրը, հեղափոխության առաջատար ուժը Ռուսաս-

---

1 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 31, էջ 491:*

2 *«ՍՄԿԿ կենտկոմի 1977 թ. հունվարի 31-ի որոշումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին», Երևան, 1977, էջ 4:*

տանի բանվոր դասակարգն էր, որին գլխավորում էր կոմունիստական կուսակցությունը: Ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ Հայաստանում սովետական կարգերի հաստատումով ազատագրվեց նաև հայ ժողովուրդը, որը արևմտյան իմպերիալիստների խարդախ, թուրքական զավթիչների չարդարարական և դաշնակցականների ազգադավ հաղաֆականության հետևանքով կանգնած էր ֆիզիկական ոչնչացման վտանգի առջև:

Հոկտեմբերյան հեղափոխությունը արմատական շրջադարձի սկիզբ դրեց միջազգային կյանքում: Նրա հաղթանակով ավելի խորացավ կապիտալիզմի ճգնաժամը, սրվեցին նրա հակասությունները: Ռուսաստանի հեղափոխական բանվոր դասակարգի և նրա ավանգարդ կոմունիստական կուսակցության օրինակով շահագործողների միրապետության դեմ պայքարի ելան Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի բանվորները ու գյուղացիները: Ընդդեմ գաղութատիրության և ժողովուրդների հարստահարման, ազգային-ազատագրական պայքարի դրոշը բարձրացրին Աֆրիկայի շատ ժողովուրդներ: Ուժեղացավ միջազգային հեղափոխական ուժերի պայքարը ընդդեմ շահագործման, հանուն ազգային ու սոցիալական ազատագրման: Այդ պայքարը գլխավորում են կոմունիստական ու բանվորական կուսակցությունները, հեղափոխական և դեմոկրատական, ազգային-ազատագրական ուժերը:

Երկրորդ համաշխարհային պատերազմում գերմանական ֆաշիզմի և ճապոնական միլիտարիզմի ջախջախման գործում վճռական դեր կատարեց Հոկտեմբերյան հեղափոխության ծնունդ Սովետական պետությունը: Սովետական Միության եղբայրական անշահախնդիր օգնությամբ Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներ կանգնեցին սոցիալիստական ուղու վրա: Դրանով իսկ 60 տարի առաջ սկզբնավորված հեղափոխական պրոցեսը հասավ որակական նոր բնագծի: Ստեղծվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, որն ապրեց արագ զարգացում և դարձավ աննախընթաց ուժ: «Համաշխարհային սոցիալիզմի հզորությունը և օրինակը բազմապատկեցին միջազգային բանվոր դասակարգի հեղափոխական հնարավորությունները, նպաստելով ամբողջ ազատագրական շարժման առաջընթացին»[3]:

Գնալով ավելի է ամրապնդվում սոցիալիստական սիստեմի ժողովուրդների համաշխարհային համագործակցությունը, որը նոր տիպի դաշինք է:

---

3 *Նույն տեղում, էջ 15։*

Բարձր գնահատելով անցած 60 տարում սովետական ճիրուս ժողովրդի ձեռք բերած խոշոր հաջողությունները, ՍՄԿԿ Կենտկոմի հունվարի 31-ի որոշման մեջ ասված է. «Սովետական ժողովրդի անձնվեր աշխատանքի կարևորագույն արդյունքը եղավ մեր երկրում կառուցված զարգացած սոցիալիզմի հասարակարգը», որը «կոմունիստական ֆորմացիայի կազմավորման օրինաչափ փուլն է»[4]: Զարգացած սոցիալիզմի բնորոշ կողմերն են՝ գիտատեխնիկական հեղաշրջման եվանումների միացումը տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունների հետ, վճռական շրջադարձ դեպի տնտեսության զարգացման ինտենսիվ մեթոդները, կարևոր հաջողությունները կապիտալիզմի հետ տեղի ունեցող տնտեսական մրցության մեջ, մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների հիման վրա աշխատավորների գաղափարական-քաղաքական համախմբվածությունը, նրանց բարեկեցության անընդհատ աճը:

---

4 *Նույն տեղում, էջ 8:*

Ծ. Պ. ԱՂԱՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը XX դ. «գլխավոր իրադարձությունն է, որն արմատապես փոխեց ամբողջ մարդկության զարգացման ընթացքը»[1] *և կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու նոր դարաշրջան բացեց։ Նախորդ բոլոր հեղափոխությունները, պատմական պրոցեսի զարգացման համար կարևոր նշանակություն ունենալով հանդերձ, չվերացրին աշխատավորական մասսաների ճնշումն ու շահագործումը, իշխող մի դասակարգին փոխարինից մեկ ուրիշը, շահագործման մի ձևը փոխարինվեց մյուսով։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը միակն էր, որ հիմնովին ջախջախեց ստրկության շղթաները։ Աշխատավոր մարդը դարձավ իր բախտի տերը, պատմության իսկական կերտողը։ Այդ հեղափոխության մեջ համակողմանիորեն բացահայտվեց բանվոր դասակարգի ազատագրական մեծ առաքելությունը։ «Բազմազգ Ռուսաստանի պրոլետարիատին վիճակվեց նոր հասարակարգի ստեղծման ահռելիության դժվարին, բայց և պատվավոր դերը»*[2]*։*

Հոկտեմբերի հաղթանակը արդյունք էր Ռուսաստանի պրոլետարիատի հերոսական պայքարի, որին գլխավորում էր մարտերի բովով անցած Վ. Ի. Լենինի ստեղծած նոր տիպի կուսակցությունը, բոլշևիկների կուսակցությունը։ Այդ պատմական հաղթանակն իր մեջ մարմնավորում է ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի փորձը, որը հիմնված է մարքսիզմ-լենինիզմի հանճարեղ ուս-

---

1 «ՍՄԿԿ կենտկոմի 1977 թ. հունվարի 31-ի որոշումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին», էջ 3։

2 Նույն տեղում, էջ 4։

մունքի՝ աշխարհը վերափոխող անհաղթ գիտության վրա։ Կապիտալիզմի խորտակման և նոր հասարակարգի ստեղծման օրինաչափությունների հայտնագործությունը մարքսիզմի խոշորագույն նվաճումն է։ Մարքսիզմը հաստատեց, որ «ի հակադրություն հին հասարակությանն իր տնտեսական աղքատությամբ և քաղաքական խելագարությամբ, այժմ ծնվում է մի նոր հասարակություն, որի միջազգային սկզբունքը կլինի խաղաղությունը, որովհետև ժողովուրդներից ամեն մեկի մոտ էլ տիրապետողը կլինի միևնույն բանը՝ «աշխատանքը»[3]։

Նշելով մարդկային հասարակության առաջընթացի նոր ուղին, Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը առաջ քաշեցին և հիմնավորեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները, որի հիմքում ընկած է ամբողջ աշխարհի աշխատավորների դասակարգային շահերի միասնությունը։ Այդ շահերի միասնությունը առավել բյուրեղացած ձևով արտահայտվեց «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լոզունգում։ Այդ մեծ իմաստությունն էլ դարձավ միջազգային բանվոր դասակարգի պայքարի ու հաղթանակի նշանաբանը, որը և գրվեց նրա դրոշի վրա։

Կ. Մարքսը վերլուծելով կապիտալիստական հասարակարգի ողջ կառուցվածքը, եզրահանգեց, որ զարգացման օրինաչափությունները նրան տանում են դեպի խորտակում, որին փոխարինելու է գալիս նորը՝ սոցիալիստական հասարակարգը։ Այդ վերափոխող ուժը պրոլետարիատն էր, բանվոր դասակարգի համաշխարհային բանակը։

Բոլշևիկների կուսակցությունը, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, ռուսական պրոլետարիատին տվեց դեմոկրատական և սոցիալիստական հեղափոխությունների գիտականորեն մշակված ծրագիր, նրան քաղաքականապես կազմակերպեց ու պայքարի հանեց ինքնակալության դեմ։

Վ. Ի. Լենինը բացահայտեց Ռուսաստանում փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծված իրադրության էությունը, նշեց այդ իրադրության օգտագործման կոնկրետ ուղիները, ընդգծեց իմպերիալիզմի դարաշրջանում բուրժուա-դեմոկրատական և սոցիալիստական հեղափոխությունների մոտեցումը և առաջինի վերաճումը երկրորդին։ Դեռևս 1905 թ. Վ. Ի. Լենինը նշել է, որ «...դեմոկրատական հեղափոխությունից մենք իսկույն ևեթ կսկսենք անցնել հենց մեր ուժի, գիտակից ու կազմակերպված պրոլետարիատի ուժի չափով, կսկսենք անցնել սոցիալիստական հեղափոխության։ Մենք կողմնակից ենք անընդհատ

---

3 Կ. Մարքս, Ընտիր երկեր, հատ. 2, Երևան, 1941, էջ 467։

հեղափոխության։ Մենք կանգ չենք առնի կիսաճանապարհին»[4]։ Լենինյան այդ հանճարեղ տեսությունը նոր լույս սփռեց տարբեր էտապներում բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի հարցերի վրա։

Վ. Ի. Լենինի կանխատեսման հիման վրա մեկ հզոր շարժման մեջ միավորվեցին բանվոր դասակարգի սոցիալիստական շարժումը, գյուղացիների պայքարը հողի համար և Ռուսաստանի ճնշված ժողովուրդների ազգային ազատագրական շարժումները։

Կուսակցության ծավալած գործունեությունը հեղափոխության քաղաքական բանակի պատրաստման գործում լիովին իրեն արդարացրեց։ Ժամանակավոր կառավարության տապալման նախօրյակին Պետրոգրադի և Մոսկվայի պրոլետարիատը գնում էր բոլշևիկների հետից։ Հյուսիսային և Արևմտյան ռազմաճակատներում զինվորների մեծ մասը ևս համակրում էր բոլշևիկներին։

Դեռևս 1917 թ. հոկտեմբերի 8-ին Վ. Ի. Լենինը խնդիր էր դնում վճռականորեն պայքարի անցնել, տապալել Կերենսկուն և վերցնել իշխանությունը։ Վերցնելով իշխանությունը, Սովետները «իսկույն հաշտություն կառաջարկեն բոլոր ժողովուրդներին և պրանով կկատարեն իրենց պարտքը գերմանական հեղափոխականների հանդեպ, դրանով վճռական քայլ կանեն պայթեցնելու ռուսական հեղափոխության դեմ ուղղված ոճրագործ դավադրությունները, միջազգային իմպերիալիստների դավադրությունները»[5]։

Այստեղ էլ Վ. Ի. Լենինը նշում է, որ «Հապաղելը մահվան է հավասար։

«Ամբողջ իշխանությունը Սովետներին» լոզունգը ապստամբության լոզունգ է... Իսկ ապստամբությանը պետք է կարողանալ մոտենալ որպես արվեստի...—...որովհետև այս է սովորեցնում մարքսիզմը, այս է սովորեցնում այժմյան ամբողջ դրությունը Ռուսաստանում և ամբողջ աշխարհում»[6]։

Իսկ արդեն հոկտեմբերի 10-ին նա ընդգծում է, որ «վճռական մոմենտը մոտ է։

Միջազգային դրությունն այնպես է, որ նախաձեռնությունը մեր կողմից պետք է լինի»[7]։

---

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 9, էջ 297։

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 220։

6 Նույն տեղում, էջ 221։

7 Նույն տեղում, էջ 222։

Վ. Ի. Լենինը վճռականապես պնդում էր, որ ապստամբության հարցը լիովին հասունացել է, պետք է միայն մշակել նրա տեխնիկական կողմը։ Հոկտեմբերի 18-ին Վ. Ի. Լենինը գրում է «Նամակ բոլշևիկների կուսակցության անդամներին», որտեղ դատապարտում է Կամենևին և Զինովևին, որոնք մենշևիկյան ուղղության «Նովայա ժիզն» թերթում դավաճանաբար տպագրել էին զինված ապստամբության մասին բոլշևիկների գաղտնի որոշումը։ Վ. Ի. Լենինը այդ համարեց «շտրեյկբըրեխերություն»։ Նա կոչ արեց՝ «Ավելի սերտ համախմբենք շարքերը,— պրոլետարիատը պետք է հաղթանակի՛»[8], ընդգծելով, որ իշխանության վերցնելը ապստամբության գործ է, որ «ժողովուրդն իրավունք ունի և պարտավոր է նման հարցերը լուծել ոչ թե քվեարկություններով, այլ ուժով. ժողովուրդն իրավունք ունի և պարտավոր է հեղափոխության կրիտիկական մոմենտներին ուղղություն տալ իր ներկայացուցիչներին, անգամ իր լավագույն ներկայացուցիչներին և ոչ թե սպասել նրանց»[9]։

Ահա թե ինչպիսի վճռականությամբ էր վարում Իլյիչը հեղափոխության ղեկը։ Նա ամենայն համառությամբ տիրապետում էր զինված ապստամբության հզոր արվեստին։

Հաղթանակից Հոկտեմբերյան հեղափոխությունը, տապալվից ժամանակավոր կառավարությունը, իշխանությունն անցյալ Պետրոգրադի պրոլետարիատի և ռազմա-հեղափոխական կոմիտեի ձեռքը։ Հոկտեմբերի 25-ին ռազմա-հեղափոխական կոմիտեն հայտարարեց. «Այն գործը, որի համար պայքարում էր ժողովուրդը՝ դեմոկրատական հաշտության անհապաղ առաջարկում, հողի կալվածատիրական սեփականության վերացում, արտադրության վրա բանվորական վերահսկողություն, Սովետական կառավարության ստեղծում,— այդ գործն ապահովված է»[10]։ Նույն օրը հանդես գալով բանվորների և զինվորների դեպուտատների Պետրոգրադի սովետի նիստում, Վ. Ի. Լենինը հայտարարեց. «Այսուհետև նոր շրջան է սկսվում Ռուսաստանի պատմության մեջ, և ամբողջ երրորդ ռուսական հեղափոխությունը վերջին հաշվով պետք է հասցնի սոցիալիզմի հաղթանակին»[11]։ Վ. Ի. Լենինը անսահման հավատ ուներ դեպի Ռուսաստանի բանվոր դասակարգը, դեպի միջազգային պրոլետարիատը։ Առաջին հերթին նա հույս էր կապում Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի պրոլետարիատի հետ։

---

8 Նույն տեղում, էջ 260։

9 Նույն տեղում, էջ 278—279։

10 Նույն տեղում, էջ 283։

11 Նույն տեղում, էջ 284։

Առաջնորդի հույսերը լիովին արդարացան։ Ամբողջ աշխարհի աշխատավորները պայքարի ելան՝ պաշտպանելու աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը։

* * *

Խաղաղության դեկրետը ռադիոյով հաղորդվեց՝ «Բոլորին, բոլորին, բոլորին»։ Այն հույսով ու հավատով լցրեց համայն աշխարհի աշխատավորների սրտերը։ Իմպերիալիստները կատաղի վայնասուն բարձրացրին նրա դեմ և մերժեցին խաղաղություն հաստատելու սովետական կառավարության վճռական պահանջը։

Ջինվորները մեծ ոգևորությամբ ընդունեցին սովետական կառավարության դիմումը։ Ճակատի բոլոր տեղամասերում եղբայրացման ուժեղ շարժում սկսվեց։ Խաղաղության դեկրետը աշխարհի բազմաթիվ լեզուներով տարածվեց բոլոր ժողովուրդների մեջ և ընդունվեց չտեսնված ոգևորությամբ։

Մեծ նշանակություն ունեցավ 1917 թ. դեկտեմբերի 17-ին Պետրոգրադում կայացած մասսայական ցույցը, որին մասնակցում էին հաղարավոր գերմանացի, հունգարացի, ավստրիացի, չեխ, լեհ և այլ ազգերի ռազմագերիներ։

Դեկտեմբերի 25-ին Մոսկվայում կայացած ինտերնացիոնալիստների ցույցին մասնակցեց 3 հազար ռազմագերի։ Այդպիսի ցույցեր կազմակերպվեցին Օմսկի ռազմագերիների ճամբարում և այլ վայրերում։ Ցույցերի մասնակիցները պահանջում էին վերջ տալ պատերազմին։

Պատերազմին վերջ տալու և ամբողջ աշխարհում խաղաղություն հաստատելու առաջարկով Սովետական կառավարությունը դիմեց ոչ միայն պատերազմող, այլև մյուս բոլոր կապիտալիստական երկրներին, որոնք, սակայն, միայն ինչնամական ոտնձգություններ կատարեցին։ Մերկացնելով նրանց, վ. Ի. Լենինը գրեց. «Հենց անգլո-ֆրանսիական և ամերիկյան բուրժուազիան չընդունեց մեր առաջարկը, հենց նա հրաժարվեց մեզ հետ ընդհանուր հաշտության մասին նույնիսկ խոսելուց։ Հենց նա դավաճանորեն վարվեց բոլոր ժողովուրդների շահերի նկատմամբ, հենց նա ձգձգեց իմպերիալիստական սպանդը»[12]։

---

12 վ. Ի. Լենին, *երկեր*, *հատ. 28*, *էջ 61*։

Սովետական կառավարությունը ոչ միայն հայտարարեց, այլև անմիջապես սկսեց կենսագործել խաղաղության դեկրետի սկզբունքները։ Ռուսական զորքերն անմիջապես ետ քաշվեցին Ռումինիայի տերիտորիայից, ճանաչվեց Ֆինլանդիայի և Լեհաստանի պետական ինքնուրույնությունը, չեղյալ հայտարարվեցին մի շարք երկրների հետ ցարական կառավարության կնքած անիրավահավասար պայմանագրերը, վերջ տրվեց գաղտնի դիվանագիտությանը և հրապարակվեցին գաղտնի պայմանագրեր։ Բոլշևիկների կուսակցությունը մեկընդմիշտ հայտարարեց, որ Ռուսաստանը այսուհետև պետք է պայքարի ընդհանուր խաղաղության համար, որպեսզի «բոլոր տանջված ժողովուրդները օգտվեն նրա արդյունքից»[13]։

Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի բանվոր դասակարգը, ինչպես կանխատեսում էր Վ. Ի. Լենինը, ակտիվ պայքարի ելավ։ Այդ ժամանակ Կարլ Լիբկնեխտը, գտնվելով կայզերական բանտում, ողջունում է Ռուսաստանի խոշորագույն հեղափոխական վերափոխումները և նշում. «Ես կուզեի օգնության գալ ռուսական հեղափոխությանն ու խաղաղությանը, նրանց նվիրել իմ հազարավոր կյանքերը, եթե դրանք ես ունենայի»[14]։ Կլարա Ցետկինի բնորոշմամբ, Հոկտեմբերյան հեղափոխությունը բոլշևիկների սկզբունքների և տակտիկայի խոշորագույն հաղթանակն էր։ Ֆրանց Մերինգը Հոկտեմբերը համարեց Փարիզյան կոմունայից հետո ընկած ժամանակաշրջանի միջազգային պրոլետարիատի մղած հեղափոխական պայքարի հաղթանակը, պայքար, որ «իզուր չէր անցել։ Այն տվեց իր արդյունքը, որը արժանի է իր կեսդարյա հասունացմանը»[15]։

1917 թ. նոյեմբերի 18-ին դեմոկրատական և արդարացի խաղաղության լոզունգներով մեծ ցույց տեղի ունեցավ Բեռլինում[16]։ Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանության օգտին հատկապես մեծ աշխատանք ծավալեց «Սպարտակ միությունը»։ Նրա ղեկավարությամբ 1918 թ. հունվարի 28-ին Բեռլինում տեղի ունեցած հակապատերազմական գործադուլին մասնակցում էր 675 հազար մարդ[17]։ Այդ գործադուլը շուտով համընդհանուր բնույթ ստացավ և ընդգրկեց

---

13 «Правда», 23 ноября 1917 г.

14 *К. Либкнехт*, Избранные речи, письма и статьи, М., 1961, стр. 428.

15 «Правда», 13 июля 1918 г.

16 «Правда», 8 декабря 1917 г.

17 *Л. И. Яковлев*, Очерки по истории международной солидарности трудящихся, М., 1974, стр. 124.

Գերմանիայի գլխավոր կենտրոնները, հատկապես Բավարիան։ Մի շարք տեղերում կազմակերպվեցին սովետներ։ Գերմանական պրոլետարիատի այդ հուժկու ելույթը շատ բարձր գնահատեց Վ. Ի. Լենինը[18]։

Հոկտեմբերը լայն արձագանք գտավ Ավստրո-Հունգարիայում։ Այդ օրերին բազմաթիվ քաղաքներում տասնյակ ցույցեր ու միտինգներ տեղի ունեցան «Անհապաղ խաղաղություն» լոզունգով[19]։ 1917 թ. նոյեմբերի 12-ի Բուդապեշտի ցույցին մասնակցում էր ավելի քան 100 հազար մարդ։ Այդ Հունգարիայի պատմության մեջ ամենախոշոր բանվորական ցույցն էր[20], որտեղ ճառերով հանդես եկան ռուս ռազմագերիները, հունգար հեղափոխական գործիչ Դեժե Բոկանին և ուրիշներ։ «Մենք այստեղ ենք եկել,— ասաց իր ելույթում Բոկանին,— այն հանդիսավոր պահին, երբ միլիոնավոր սրտերի ցանկություններն ու հույսերը ենթարկվում են մի ընդհանուր գաղափարի, որը մենք բարձրացնում ենք մարդկային բարեկամության համընդհանուր աստիճանին, և այդ րոպեին մենք մեր ձեռքն ենք մեկնում ռուս ընկերներին, ջերմորեն սեղմում նրանց ձեռքը, քանի որ նրանք մարդկությանն են վերադարձրել հավատը սոցիալիզմի հանդեպ, վստահությունն ու հույսը»[21]։

Խաղաղության և Սովետական Հանրապետության պաշտպանության ցույցեր ու միտինգներ կայացան նաև Չեխոսլովակիայում։ Պրագայի բանվորների մասսայական ժողովները պահանջում էին եղբայրական օգնություն ցույց տալ հեղափոխական Ռուսաստանին։ «Ռուսաստանի մեր եղբայրներին» դիմումում նրանք գրում էին. «Այդ մեծ պայքարում, որ դուք մղում եք, չեխական սոցիալ-դեմոկրատական պրոլետարիատը կանգնած է ձեր կողմում, որպեսզի պաշտպանի աշխարհում առաջին սոցիալիստական հանրապետությունը»[22]։

Բուլղարիայում մեծ խանդավառությամբ ընդունվեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի և Սովետների համառուսաստանյան II համագումարի ընդունած դեկրետների լուրը։ Ակտիվոր հեղափոխական, «տասնյակների» կուսակցության հիմնադիր Դ. Բլագոևը իր 1917 թ. դեկտեմբերի 2-ին Մոսկվա ուղարկած հեռագրում հաղորդում

---

18 *Տե՛ս* Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 27, էջ 686։

19 «Деревенская беднота», 23 ноября 1917 г.

20 «Правда», 15 декабря 1917 г.

21 Լ. Ի. Յակովլև, նշվ. աշխ., էջ 126։

22 *Вацлав Копецкий*, Великая Октябрьская социалистическая революция и Чехословакия, М., 1957, стр. 6.

էր, որ Սոֆիայի 10 հազար բանվորները ողջունում են ռուսական հեղափոխությունը և պահանջում, որ Բուլղարիան դինադադար հայտարարի բոլոր ճակատներում[23]։

Լհհական պրոլետարիատը ողջունելով սովետական կարգերի հաղթանակը Ռուսաստանում, նշում էր. «Ամբողջ սրտով մեր համակրանքն ենք հայտնում Լենինին... Լենինը աշխարհին ցույց տվեց, թե ինչպիսին կարող է և պետք է լինի իսկական սոցիալիստական քաղաքականությունը, երբ այն տարվում է անկեղծ և հետևողական»։ Հետո նշվում է, որ «ռուս քաղաքագետներից և ոչ մեկին մենք չենք կարող այնպես հավատալ, ինչպես Լենինին»[24]։ Ռումինիայի բանվորները 1917 թ. նոյեմբերին գրել են. «Փառք և մեծարանք ձեզ, ռուս աշխատավորներ»[25]։ Իսկ Անգլիայի բազմահազար պրոլետարիատը հայտարարում էր, որ «բոլշևիկների մղած հերոսական պայքարը ոչ միայն ռուսական բանվոր դասակարգի հաղթանակն է, այլև պայքար է ամբողջ ժողովրդի, աշխարհի բանվորների հաղթանակի համար»[26]։ Անգլիայի բազմաթիվ քաղաքների բանվորական միտինգներում ընդունված բանաձևերում պահանջվում էր անմիջապես սկսել խաղաղության բանակցությունները։ Նրանք հայտարարում էին, որ «Ռուսաստանի գործը նաև մերն է»[27]։ Իլանդիայի սոցիալիստական կուսակցությունը Սովետների հանրապետությունը համարում էր «մի պայծառ լույս ամբողջ աշխարհի համար, բևեռային աստղ պրոլետարիատի պատմության մեջ»[28]։

Հոկտեմբերյան հեղափոխությունը հսկայական արձագանք գտավ նաև գաղութային երկրներում։ 1918 թ. հունվարին Հնդկաստանի անլեգալ թերթերում տպագրվեց ազատության կարոտ հնդիկ ժողովրդի ողջույնը Սովետական Ռուսաստանի ժողովուրդներին։ Այնտեղ հատկապես նշվում էր. «Հնդկաստանը հիացած է այն ազնիվ ու հումանիստական սկզբունքներով, որ դուք, իշխանությունը ձեր ձեռքը վերցնելով, հայտարարել եք ամբողջ աշխարհի աշխատավորների ազատության սկզբունքները»[29]։

Աշխարհի աշխատավորությունը, առաջադեմ մտածողներն ու հա-

---

23 «Правда», 28 ноября 1917 г.

24 «Голос труда», 13 декабря 1917 г.

25 Լ. Ի. Յակովլև, նշվ. աշխ., էջ 129։

26 Նույն տեղում։

27 «Новая и новейшая история», 1957, № 4, стр. 35.

28 «Правда», 1 марта 1918 г.

29 «Правда», 17 ноября 1918 г.

սարակական գործիչները կանդնեցին Հոկտեմբերի պաշտպանության դիրքերում, գարձան նրա պրոպագանդիստները և ջատագովները։

1917 թ. նոյեմբերի 29-ին բելգիական հայտնի նկարիչ Ֆրանց Մազարելը շվեյցարական «Փեյ» շաբաթաթերթում Հոկտեմբերին նվիրված նկարի տակ ժամանակի ոգին արտահայտող հետևյալ խոսքերն է գրել. «Նա ռուսական է, բայց բոլոր ժողովուրդները հասկանում են նրա լեզուն»։ Տաղանդավոր արվեստագետը շատ դիպուկ է ընդգծել Հոկտեմբերի համամարդկային ոգին։ Իսկ Ռոմեն Ռոլանը ամենայն համոզմամբ հայտարարեց, որ «ռուսական հեղափոխության հաղթանակը կունենա վճռական նշանակություն Եվրոպայի ապագայի համար։ Նա կծառայի դրան լավագույն ձևով»[30]։

Իռլանդական հայտնի գրող, բանվորական և ազգային-ազատագրական շարժումների ակտիվ մասնակից Շօն Օ՛ Կեյսը, ստանալով Հոկտեմբերի հաղթանակի լուրը, նշեց, որ հենց Ռուսաստանում «հրաշալի և առնական մարդկանց օգնությամբ տեղի է ունեցել ամբողջ աշխարհի կյանքում մեծ փոփոխությունը»[31]։

Ամերիկյան բանվոր դասակարգը եղբայրական ջերմությամբ ընդունեց մեծ Հոկտեմբերի հաղթանակը։ Ամերիկայի և աշխարհի աշխատավորներին Հոկտեմբերի մասին ճշմարտացի խոսք ասելու գործում հատուկ դեր կատարեց Ջոն Ռիդը։ Վ. Ի. Լենինը, կարդալով Ռիդի «10 օր, որոնք ցնցեցին աշխարհը» գիրքը, նրա առաջաբանում գրել է. «Այս գիրքը ես կցանկանայի տեսնել տարածված միլիոն օրինակներով և թարգմանված բոլոր լեզուներով, քանի որ այն տալիս է դեպքերի ճշմարտացի ու անշափ կենդանի նկարագրությունը, որը շատ կարևոր է՝ հասկանալու համար, թե ինչ բան է պրոլետարական հեղափոխությունը, ինչ բան է պրոլետարիատի դիկտատուրան»[32]։ Ջոն Ռիդը 1917 թ. նոյեմբերի 13-ին հանդիպում ունեցավ Վ. Ի. Լենինի հետ և հաղորդեց նրան Ամերիկայի բանվորների ողջույնը։ Նա նոյեմբերի 22-ին ամերիկյան մամուլում հրապարակեց Հոկտեմբերյան հեղափոխության մասին առաջին հոդվածը, որտեղ հատկապես նշեց, որ

---

30 *Rene Cheval*, Romain Rolland, l'Allemangaeet la guerre. Paris, 1963, p. 642.

31 *Шон О Кейси*, Когда весть пришла в Дублин. «Иностранная литература», 1957, № 11, стр. 49.

32 *В. И. Ленин*, Предисловие к американскому изданию книги Джона Рида «10 дней, которые потрясли мир», М., 1958, стр. 4.

հեղափոխության խնդիրը թե՛ ռուսական և թե՛ ամերիկյան բանվոր դասակարգի ընդհանուր գործն է[33]։

Սովետական Ռուսաստանի դեմ իմպերիալիստների կազմակերպած ինտերվենցիան առաջացրեց ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի վրդովմունքը։ 1918 թ. փետրվարին Նյու-Յորքի սոցիալիստները որոշում են 500 հոգուց բաղկացած կարմիր գվարդիայի ջոկատ ուղարկել Ռուսաստան՝ սովետական իշխանությունը պաշտպանելու համար[34]։

Ամերիկայի բանվորական շարժման ականավոր գործիչ Ուիլյամ Ջ. Փոստերը Հոկտեմբերյան հեղափոխությունը բնութագրել է որպես «լույսի ցոլք և հավատ արևմտյան կիսագնդի՝ Կանադայից մինչև Արգենտինայի միլիոնավոր ճնշված ու շահագործվող բանվորների և գյուղացիների համար։ Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխության օրինակն ու դասերը լուրջ ազդեցություն թողնելու էին ամբողջ նոր աշխարհի ճնշված մասսաների տնտեսական ու քաղաքական պայքարի վրա»[35]։

1919 թ. Նյու-Յորքում կազմակերպված մասսայական ցույցը դատապարտեց իմպերիալիստների ինտերվենցիան Սովետական Ռուսաստանի դեմ, ողջունեց և պահանջեց ճանաչել Սովետների հանրապետությունը։

Իմպերիալիստների ինտերվենցիայի սկսելուց մի քանի օր անց Ամերիկայի սոցիալիստների կոնֆերանսը բողոք հայտնեց «ռուսական սովետական կառավարության կղզիացման դեմ» և կոչ արեց «ողջ աշխարհի բանվորներին պաշտպանելու ռուս ժողովրդի՝ ազատության համար մղած պայքարը»[36]։

1919 թ. նոյեմբերի 30-ին Սենտ Լուիսում 2500 աշխատավորներ բողոքի ցույց կազմակերպեցին և իրենց որոշման մեջ գրեցին. «Մենք պետք է կանգնենք հեղափոխական Ռուսաստանի կողմը, ժամանակն է պարզ ու հստակ պատասխան տալ այն հարցին, թե պե՞տք է արդյոք Վաշինգտոնի կառավարությունը պատերազմի սովետական կառավարության հետ։ Դրա համար էլ սոցիալիստների և այլ քաղաքացիների այս մասսայական ցույցը հայտարարում է, որ մենք բոլոր ուժերը կդնենք՝ օգնելու Ռուսաստանի բանվորների սովետական կառավարությանը։ Մենք հաստատում ենք, որ պետք է անենք ամեն ինչ՝ ամերիկյան զորքերը Ռուսաստանի տերիտորիայից դուրս բերելու համար»։

---

33 *Foner Ph. S.*, The Bolshevik Revolution, N. Y., 1967, p. 54.

34 *Նույն տեղում, էջ 81։*

35 *Уильям Фостер*, Очерки политической истории Америки. М., 1955, стр. 517.

36 *Նույն տեղում, էջ 119։*

ՀԱՅԿ. ԱՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Զգալի կարևոր նշանակություն ուներ ինտերնացիոնալիստների մասնակցությունը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակին և սովետական կարգերի ամրապնդմանը[37]։

* * *

Հոկտեմբերյան հեղափոխության և ՍՍՀՄ սոցիալիստական վերափոխումների ազդեցությունը հսկայական է գաղութային և կիսագաղութային երկրների վրա։ Այդ երկրները, հենվելով Սովետական Միության օգնության վրա, հանդես եկան որպես աշխարհի վերափոխման համար մղվող պայքարի ակտիվ մասնակիցներ և կանգնեցին առաջադիմության ու դեմոկրատիայի ուղու վրա։

«Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին» կարևորագույն փաստաթղթերը հեղափոխող ազդեցություն թողեցին ողջ Արևելքի ճնշված ու ազատության կարոտ ժողովուրդների վրա։ Դնալով հեղափոխական պրոցեսը խորացավ և վերափոխիչ նշանակություն ունեցավ ամբողջ Արևելքի քաղաքական կյանքի ու սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքի վրա։

Դրա արդյունքը միանգամայն ակնհայտ է։ Այսպես, եթե 1919 թ. երկրագնդի բնակչության մոտ 70%-ը գտնվում էր գաղութատիրական ստրկության մեջ, ապա այժմ գաղութատիրությունը այնպիսի փլուզման է ենթարկվել, որ այդ տոկոսը 1-ից էլ պակաս է։ Նախկին գաղութական տերիտորիաներում այժմ ստեղծվել են 80 անկախ ազգային պետություններ, որոնք զարգանում են դեմոկրատիայի ուղիով[38]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, հանդիսացավ «երկու համաշխարհային-պատմական դարաշրջանների՝ բուրժուազիայի դարաշրջանի և սոցիալիզմի դարաշրջանի, կապիտալիստների պաուլամենտարիզմի դարաշրջանի և պրոլետարիատի սովետական պետական հիմնարկների դարաշրջանի համաշխարհային հերթափոխման սկիզբը»[39]։

---

37 Տե՛ս «В. И. Ленин и образование коммунистических партий в странах Центральной и Юго-Восточной Европы», М., 1973. «Октябрь и болгарские интернационалисты», София, 1973; *М. М. Коронен*, Финские интернационалисты в борьбе за власть Советов, Л., 1969.

38 Տե՛ս *Р. Платонов*, Великий Октябрь и мировой революционный процесс, Минск, 1967, стр. 5.

39 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 273։

Հոկտեմբերի հաղթանակը, մի կողմից, բանվոր դասակարգի ինտերնացիոնալիստական և ազգային խնդիրների հրաշալի զուգակցումն էր, մյուս կողմից, որակական նոր աստիճանի բարձրացած պրոլետարական ինտերնացիոնալիզմի, աշխատավորների միջազգային համերաշխության վառ արտահայտությունը։ Պատմության մեջ առաջին անգամ ստեղծվում էր մի պետություն, որը օրինակ էր բոլոր ճնշվածների համար, իսկական հայրենիքը միջազգային պրոլետարիատի։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինը նշել է. «Մենք իրավունք ունենք հպարտանալու և հպարտանում ենք նրանով, որ մեզ երջանկություն բաժին ընկավ սկսելու սովետական պետության կառուցումը, սկսելու դրանով համաշխարհային պատմության նոր դարաշրջան, այն նոր դասակարգի տիրապետության դարաշրջանը, որը ճնշված է բոլոր կապիտալիստական երկրներում և ամենուրեք գնում է դեպի նոր կյանք, դեպի հաղթանակ բուրժուազիայի դեմ, դեպի պրոլետարիատի դիկտատուրան, դեպի մարդկության ազատագրումը կապիտալի լծից, իմպերիալիստական պատերազմներից»[40]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը առաջին իսկ օրից դարձավ համայն աշխարհի պրոլետարիատի հարազատ գործը, իսկ Ռուսաստանը՝ սոցիալիստական հեղափոխության հայրենիքը։ Վ. Ի. Լենինը Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային նշանակությունը դիտել է լայն և նեղ իմաստով։

Լայն իմաստով նրա նշանակությունը ամբողջ աշխարհի վրա հեղափոխական ազդեցությունն է։ Հոկտեմբերը աշխարհի վերափոխման ու նորացման դարաշրջան բացեց՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու դարաշրջանը։ Այն պատմական դեպքերի հզոր արագացուցիչ հանդիսացավ։ Հետագա զարգացման ողջ ընթացքը ցույց տվեց Հոկտեմբերի գաղափարների հաստատումը, որը հիմնովին փոխեց հողագնդի սոցիալ-տնտեսական նկարագիրը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը, կարելով իմպերիալիստական շղթայի թույլ օղակը Ռուսաստանում, դրանով իսկ դրեց պրոլետարական հեղափոխությունների սկիզբը։ Նորաստեղծ բանվորագյուղացիական իշխանության նպատակը դարձավ ժողովրդական մասսաների տնտեսական, սոցիալական և քաղաքական ազատագրումը։ Հանձինս Հոկտեմբերի, ժողովրդական մասսաները գտան այն հիմնաքարը, որի վրա հենվելով պայքարի ելան հանուն խաղաղության ու անվտանգության, հանուն սոցիալական առաջադիմության։

---

40 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 33, էջ 42։

Նախ, Հոկտեմբերի հաղթանակը անմիջական ազդեցություն թողեց ողջ միջազգային բանվորական շարժման վրա։ Վ. Ի. Լենինը հենց այդ է ընդգծել, նշելով, որ «այժմ արդեն մենք մեր առաջ ունենք միջազգային բավականաչափ շատ փորձ, որը լիակատար որոշակիությամբ ասում է, որ մեր հեղափոխության մի քանի հիմնական գծերն ունեն ո՛չ թե տեղական, ո՛չ թե ազգային առանձնահատուկ, ո՛չ թե միայն ռուսական, այլ միջազգային նշանակություն»[41]։

Հոկտեմբերի միջազգային նշանակության երկրորդ կողմը, «նեղ իմաստով»՝ ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, մի շարք հիմնական գծերի հաշվի առնելու անհրաժեշտությունն է, նրա հիմնական օրինաչափության յուրահատուկ ձևով հանդես գալը ամեն մի պրոլետարական հեղափոխության մեջ։

Հետագայում սոցիալիստական հեղափոխությունների փորձը ցույց տվեց այդ օրինաչափությունը գործողության մեջ։ ՍՄԿԿ-ն և միջազգային կոմունիստական շարժումը լուրջ ուշադրություն են դարձնում այդ խնդրի վրա։ Առաջին հերթին՝ աշխատավոր մասսաների ղեկավարությունը բանվոր դասակարգի կողմից, որի առաջնորդող ուժը մարքս-լենինյան կուսակցությունն է, այնուհետև պրոլետարական հեղափոխության հաղթանակի և պրոլետարիատի դիկտատուրայի ապահովումը այս կամ այն ձևով։

Վ. Ի. Լենինը բազմիցս նախազգուշացրել է, որ անհրաժեշտ է կոմունիզմի հիմնական սկզբունքների ճիշտ կիրառումը տվյալ ազգի, տվյալ ազգային պետության յուրահատկությանը համապատասխան։

Վ. Ի. Լենինի ղեկավորած բոլշևիկների կուսակցությունը ոչ միայն յուրացրեց Մարքսի ուսմունքը, այլև հասցրեց այն ավելի բարձր աստիճանի և, որ ամենակարևորն է, կյանքում իրագործեց։ Մարքսիստական ուսմունքի ուժը գործնականորեն ավելի տեսանելի և շոշափելի դարձավ ողջ աշխարհի աշխատավորության համար։ Դրանով էլ Հոկտեմբերը դարձավ բանվոր դասակարգի համաշխարհային հեղափոխական պայքարի ուղին լուսավորող մի վառ փարոս։

* * *

Հոկտեմբերի հաղթանակը ցնցող տպավորություն թողեց ամբողջ աշխարհում։ Կապիտալի ձայնափողերը ամենուր ոռնոց բարձրացրին՝ «ապացուցելու», թե Հոկտեմբերը «անօրեն ծնված զավակ է», պետք է

---

41 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 5։

նրան խեղդամահ անել։ Դրա համար նրանք չխնայեցին ոչ միջոց, ոչ գնք, ոչ զոր։ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի գլխավորությամբ միավորվեցին 14 բշնամական պետություններ և ներքին հակահեղափոխական ուժերի, սպիտակ գվարդիական բանդաների հետ 1918—1921 թթ. ահավոր արշավանք սկսեցին երիտասարդ Սովետական հանրապետության դեմ։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի առաջին իսկ պահից Արևմուտքի իմպերիալիստական պետությունները, հատկապես ԱՄՆ-ը, կատաղի բշնամական դիրք բռնեցին[42]։ Նոյեմբերի 7-ի պատմական օրը Ռուսաստանում ԱՄՆ-ի դեսպանությունը հայտարարեց, որ իր կառավարությունը չի ճանաչում սովետական կառավարությանը։

Վաշինգտոնի քաղաքագետները Հոկտեմբերյան հեղափոխությունը ընդունեցին կատաղի բշնամությամբ և սկսեցին տարածել ամեն կարգի բամբասանքներ և կեղծ լուրեր։ Հոկտեմբերի հաղթանակի առաջին տարվա ընթացքում «Նյու-Յորք-Թայմս» թերթը 91 անգամ հանդես է եկել սովետական կառավարության անկման մասին գուշակություններով[43]։ Ոչ բամբասանքով, ոչ էլ ռազմական ուժով չկարողանալով տապալել սովետների երկիրը, ԱՄՆ-ի ղեկավար գործիչները որոշեցին տնտեսապես և քաղաքականապես կղզիացնել նրան, խեղդել հեղափոխությունը սովով։ Ամերիկյան բոլոր պետությունների կառավարությունները ընդգրկվեցին սովետական ժողովրդի դեմ ուղղված համաշխարհային դավադրության մեջ, հրաժարվեցին առևտուր անել ՍՍՀՄ-ի հետ և ընդունել դիվանագիտական ներկայացուցիչներ։ Նրանք պաշտպանեցին 20-ական թվականներին մեծ տերությունների կողմից ՍՍՀՄ-ի տնտեսությունը քայքայելու նպատակով ստեղծված «սանիտարական կորդոնը»[44]։

Եվ այդպես, շարունակելով իր քաղաքականությունը, ԱՄՆ-ը մինչև 1933 թ. դիվանագիտական կապեր չստեղծեց ՍՍՀՄ-ի հետ։

Վերջապես, բշնամիները ևս ստիպված եղան ճանաչել Հոկտեմբերի նշանակությունը։ Սկզբում նրանք չէին ուզում «նկատել» հեղափոխությունը։ Նրանք անիծում, անօրեն և «չար ոգու ծնունդ» էին հայտարարում ռուսական հեղափոխությունը։ Սակայն ժամանակները փոխվե-

---

42 Այդ հարցը մանրամասն լուսաբանված է Գերմանական Դեմոկրատական Հանրապետության ականավոր պատմաբան պրոֆ. Վոլֆգանգ Ռուդեի «ԱՄՆ և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը» աշխատության մեջ։

43 *И. Минц,* История Великого Октября, т. 3, М., 1973, стр. 225.

44 *Уильям Фостер,* Очерки политической истории Америки, М., 1955, стр. 517.

ցին, երիտասարդ սովետների երկիրը ուժերը հավաքեց ու դարձավ զարգացած հզոր սոցիալիստական երկիր, առաջադիմության ու խաղաղության դրոշակակիր: Անցյալի դիրկն անցան այն «սովետաբաններ-րը», որոնք չնկատելու էին տալիս Հոկտեմբերի ազդեցությունը ամբողջ աշխարհում: Այժմ, անգամ հակակոմունիզմի դիրքերից գրված աշխատություններում կարելի է հանդիպել աշխարհում առաջին սոցիալիստական հեղափոխության հսկայական ազդեցության գիտակցումը: Այսպես, ամերիկացի պրոֆեսոր Զ. Բրիլինգտոնը նշում է, որ եթե 19-րդ դարի մտածողների գլխավոր խնդիրն էր՝ որոշել իրենց վերաբերմունքը ֆրանսիական հեղափոխության նկատմամբ, ապա ժամանակակից մարդու համար կենտրոնական խնդիր է՝ գնահատել ռուսական հեղափոխությունը:

«Վերջին խնդիրը դարձել է ավելի վճռական, քանի որ այժմ աշխարհում համարյա միլիարդ մարդ հայտարարում են, որ իրենք ռուսական հեղափոխության ժառանգներն ու պաշտպաններն են»[45]:

Անգլիական պատմաբան Պ. Դյուկսը այն կարծիքն է հայտնում, որ նախկին հեղափոխությունները ազդել են սահմանափակ շրջանների վրա, իսկ XX դարի պրոլետարական հեղափոխությունների ազդեցությունը զգացվում է ավելի լայն, անգամ համաշխարհային մասշտաբով[46]:

Իսկ ամերիկացի «սովետագետ» Ռ. Պեթիբրիջը գրում է, որ Հոկտեմբերյան հեղափոխության համեմատությամբ XVII—XVIII դդ. հեղափոխությունները ավելին չեն, քան «փոթորիկ մի բաժակ ջրում»[47]:

Սակայն, երբ հարց է դրվում այդ փորձի կրկնության մասին, ապա նորից բուրժուական «սովետաբանները» վայնասուն են բարձրացնում ապացուցելու համար, որ «Հոկտեմբերի օրինակը» անընդունելի է գոնե Եվրոպայի ինդուստրիալ երկրների համար: Եվ ապա նշում են, որ եթե Եվրոպայի արևելյան շրջաններում այդ փորձն այնուամենայնիվ ընդհանուր գծերով կրկնվել է, ապա այդ կատարվել է «սովետական ուժի» շնորհիվ: Իրենց այդ թեզը ապացուցելու համար նրանք ջանում են ցույց տալ, որ Հոկտեմբերը «մաքուր ռուսական երևույթ է», որը հատուկ է Ռուսաստանին և նրան մոտիկ ու նման պայմաններ ունեցող երկրներին: Այդ պայմաններից մեկը, ըստ նրանց, 1917 թ. Ռուսաստանի

---

[45] „World Politics", 1966, vol. XVIII, № 3, p. 452.

[46] *P. Dukes*, The Remegence of the Super-Powers Ashort comparative History of the USA and the USSR, London, 1970, p. 102.

[47] *R. Pethytridge*, The Spread of the Russian Revolution, Essayson 1917, London, 1972, p. IX.

մասսայական հեղափոխական շարժման մեջ քաղաքականապես գիտակից տարրի բացակայությունն էր և բոլշևիկյան կուսակցության «էլիտար» բնույթը[48]։

Բուրժուական պատմաբանները ամեն կերպ ջանում են նսեմացնել աշխատավոր մասսաների ստեղծագործական դերը։ Նրանք մասսայի վրա նայում են որպես տարերային կույր ամբոխի, որը, ըստ նրանց, ընդունակ է միայն ոչնչացնել, քայքայել։ Նրանք մերժում են բանվոր դասակարգի առաջատար դերը, նրա կուսակցության դեկավարությունը։ Հեղափոխական շարժումը, ըստ նրանց, ոչ թե կազմակերպված ու նպատակասլաց շարժում է, այլ տնտեսական ու կենցաղային շարժառիթներից առաջացած ամբոխավարական ելույթ, որտեղ հիմնականում գործում են զգացմունքները և ոչ թե գիտակցորեն կազմակերպված ուժը։ Իսկ անգլիական «սովետաբան» Դ. Փուտմենը պարզապես նշում է, որ Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները հոգնել էին պատերազմից և «ցանկանում էին հող ստանալ և ուրիշ ոչնչով չէին հետաքրքրվում»[49]։ Եվ այդ տալիս է այն հերոսական աշխատավորական մասսաների հասցեին, որոնք ոգևորված հեղափոխության մեծ թափով, կատարեցին պատմական սխրանքներ։

Բուրժուական պատմաբանները զարգացնում են այն թեզը, իբր թե բոլշևիկները իշխանությունը գրավել են մասսաների կամքին հակառակ։ Սակայն ավելի շրջահայաց մտածողները, այնուամենայնիվ, ստիպված են նշելու, որ միայն բոլշևիկներն էին, որ կարողացան ընթանալ «հեղափոխական հոսանքի գծով» և առաջ քաշեցին այնպիսի լոզունգներ, որոնք մոտ էին ու հասկանալի մասսաներին։ Բայց այդ երբեք էլ չի նշանակում, որ նրանք հեղափոխական շարժման մեջ ընդունում են բոլշևիկների դեկավար դերը։ Այդ բուրժուական մտածողների կարծիքով բոլշևիկները, տարբեր շարժառիթների օգնությամբ կարողացան օգտագործել անարխիստորեն տրամադրված պասսիվ մասսային և գրավել իշխանությունը։ Հենց այդ ուղիով էլ բուրժուական «սովետաբանները» ցանկանում են Մեծ Հոկտեմբերը ներկայացնել որպես «ռուսական ֆենոմեն»։ Չկարողանալով մերժել Հոկտեմբերի բացարձակ նշանակությունը, նրա վերափոխիչ դերը, նրանք, այնուամենայնիվ, այն հանգեցնում են ռուսական հրեության։

Սակայն փաստն այն է, որ մարդկությունը քանի հեռանում է

---

48 *И. И. Минц*, Великий Октябрь—поворотный пункт в истории человечества. «История СССР», 1975, № 6, стр. 15.

49 *D. Footman*, The Russian Revolution, London, 1962, p. 67.

1917 թվականից, այնքան ավելի խորն է գիտակցում Հոկտեմբերի վերափոխիչ դերն ու պատմական խոշոր նշանակությունը։

* * *

Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունն այժմ ավելի ակնառու է ու հզոր, քան 60 տարի առաջ։ Այդ բացատրվում է մի շարք գործոններով, առաջին հերթին բանվոր դասակարգի ուժերի համախմբվածությամբ և նրա հսկայական աճով։ Եթե XX դարի սկզբին ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը հաշվվում էր 30 միլիոն, ապա այժմ նրա շարքերում կա 500 միլիոն մարդ։ Բացի քանակական աճից, պրոլետարիատը աճել է քաղաքական հասունության և կազմակերպվածության տեսակետից։ Պրոլետարական կուսակցությունների անդամների թիվը 1917 թ. չէր անցնում 400 հազարից, 1928 թ. այն հասավ 1 մլն. 680 հազարի, 1940 թ.՝ 4 մլն. 200 հազարի, 1967 թ.՝ մինչև 50 մլն. մարդու, այժմ՝ մոտ 60 մլն։ Համաշխարհային հեղափոխական պրոցեսը հսկայական թափ է ստացել հատկապես վերջին տասնամյակներին։ Կապիտալիզմի կործանման այն պրոցեսը, որ սկսվել է 1917 թ., այժմ հասել է մեծ չափերի։ Բանվոր դասակարգի ազդեցությունը հսկայական չափով աճել է ողջ հասարակական կյանքում, նյութական արտադրության մեջ, սոցիալ-քաղաքական հարաբերություններում, գաղափարական մարզում։

Դեռևս Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին Վ. Ի. Լենինը նշում էր, որ «այժմ սոցիալիզմը մեզ է նայում ժամանակակից կապիտալիզմի բոլոր պատուհաններից»։ Լենինյան այդ հանճարեղ եզրահանգումն ավելի ու ավելի հաստատվեց պատմական պրոցեսի ողջ ընթացքում։ Հոկտեմբերի հաղթանակը Ռուսաստանում, որը տեղի ունեցավ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի առաջին էտապում, իր հետ բերեց կապիտալիստական երկրներում հեղափոխության պայքարի բուռն վերելք, գաղութային և կախյալ երկրներում ազատագրական շարժման լայն ծավալ։ Իսկ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ էտապում, XX դարի 40-ական թվականներին, աշխատավորների պայքարը, որը հաճախ սկսվում էր հակաֆաշիստական, դեմոկրատական և հեղափոխական լոզունգներով, մի շարք երկրներում գերաճեց սոցիալիստական հեղափոխության։

Իմպերիալիզմի ամենառեակցիոն ուժերը, հանձինս գերմանական ֆաշիզմի, որ ձգտում էին համաշխարհային տիրապետության, ընդհարվելով դեմոկրատիայի և սոցիալիզմի ուժերին, կրախի մատնվեցին։ Հա-

մայն աշխատավորական մասսաները նորից համոզվեցին, որ սոցիալիզմը անպարտելի ուժ է, մեր դարաշրջանի առաջընթացի դրոշակակիրն է։ Ֆաշիզմի դեմ մղված մահու և կենաց պայքարում հողագնդի դեմոկրատական բոլոր ուժերը համախմբվեցին սովետական հերոս ժողովրդի շուրջը, պաշտպանեցին նրա մղած արդարացի պատերազմը։ Ֆաշիզմը ջախջախվեց։ Այդ պրոցեսում Արևելյան և Հարավ-Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում՝ Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Հարավսլավիայում, ինչպես նաև Ասիայի ու Ամերիկայի մի շարք երկրներում հաղթանակեց սոցիալիստական հեղափոխությունը։ Ստեղծվեց սոցիալիզմի հզոր սիստեմ, որը այժմ վճռական դեր է խաղում համայն մարդկության տնտեսական ու քաղաքական կյանքում։ Նա է որոշում օրինաչափ զարգացման ընթացքը։

Ժամանակակից էտապում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը ցույց է տալիս, որ շատ երկրներում տնտեսական և սոցիալ-քաղաքական պայմանները ավելի են հասունացել սոցիալիզմին անցնելու համար։ Դրա համար իրական գործոններ են հանդիսանում թե՛ սոցիալիզմի սիստեմի ամենուր աճող ազդեցությունը, թե՛ կապիտալիզմի սիստեմում տեղի ունեցող փոփոխությունները, նրա ներսում ուժեղացող հակասությունները։ Սոցիալիստական սիստեմը ակնառու կերպով ցույց է տալիս, որ իսկական առաջադիմությունը կարող է ապահովել միայն և միայն զարգացման սոցիալիստական ուղին։

Հզորացող սոցիալիստական սիստեմը դարձել է վճռական գործոն ժամանակակից հասարակական զարգացման համար։ Այն բարերար ազդեցություն է գործում կապիտալիստական երկրներում ծավալվող դասակարգային պայքարի վրա, ամրապնդում է բանվոր դասակարգի ուժերն ու նրա կազմակերպությունները։ Սոցիալիզմի երկրների ամեն մի լուրջ հաջողություն փոխում է ուժերի հարաբերակցությունը՝ հօգուտ դեմոկրատիայի, հօգուտ խաղաղության։

ՍՍՀՄ կոմունիստական շինարարության միջազգային նշանակությունը կայանում է նրանում, որ այն առաջին հերթին ամրապնդում է ողջ սոցիալիստական սիստեմի տնտեսական, քաղաքական ու պաշտպանական հզորությունը, նպաստում սոցիալիզմի գաղափարների տարածմանը համայն աշխարհում։

Հենվելով Հոկտեմբերի մեծ փորձի վրա, այն ստեղծագործորեն զարգացնելով իրենց երկրների պայմաններին համապատասխան, եղբայ-

յական մարքս-լենինյան կուսակցությունները պլխավորում են մասսաների պայքարը իմպերիալիզմի դեմ։

Անցած 60 տարում բավական նեղացել են իմպերիալիզմի տիրապետության սահմանները, ուժեղացել նրա ներքին սոցիալական ու դասակարգային հակասությունները։ Աշխարհի տարբեր մասերում հաստատվել ու ամրապնդվել են սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրները, որոնք համաշխարհային հեղափոխական շարժման հիմքն ու հենարանն են։

Սովետական երկրի պատմական դերը նրանում է, որ նա իր վրա վերցրեց միջազգային սոցիալիստական հեղափոխության ավանգարդի պատավավոր դերը[50]։ Վ. Ի. Լենինը նշել է, որ Ռուսաստանում ծավալված հեղափոխությունը միայն սկիզբն է միջազգային սոցիալիստական հեղափոխության[51]։

Հոկտեմբերյան հեղափոխության ծնունդ Սովետական Միությունն անցած 60 տարում պատմական խոշոր դեր խաղաց աշխարհի վերափոխման, սոցիալիզմի, դեմոկրատիայի և խաղաղության ասպարեզում։ «Սոցիալիզմն արդեն այսօր հսկայական ներգործություն է ունենում աշխարհի հարյուր միլիոնավոր մարդկանց մտքերի և զգացմունքների վրա»[52]։ Կարևոր նշանակություն է ստանում սոցիալիզմի սիստեմի երկրների անտեսական ու գաղափարական համագործակցությունը։ «Սոցիալիստական համագործակցությունն այժմ դարձել է աշխարհում ամենադինամիկ տնտեսական ուժը»[53], որի շնորհիվ էլ 1970—1975 թթ. սոցիալիստական սիստեմի մեջ մտնող երկրների ինդուստրիան զարգացած կապիտալիստական երկրների հետ համեմատած չորս անգամ արագ է զարգացել։ Մեծ թափով է զարգանում նաև սոցիալիստական երկրների գաղափարական համագործակցությունը։ Գիտությունների շատ ճյուղեր զարգանում են եղբայրական երկրների կոլեկտիվ ջանքերով։ Կուլտուրայի տարբեր բնագավառներում ևս տեղի է ունենում օգտակար համագործակցություն։ Այդ չափազանց կարևոր է, հատկապես, ամենուր ուժեղացող երկու սիստեմների հակամարտությունների պայմաններում, երբ «գաղափարական պայքարի պրոբլեմները ավելի

---

50 *В. И. Ленин*, ПСС, т. 35, стр. 279.

51 *Նույն տեղում, էջ 474։*

52 *Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում։ Երևան, 1976, էջ 15։*

53 *Նույն տեղում, էջ 13։*

ու ավելի են մղվում առաջին պլան, իսկ սոցիալիզմի մասին ճշմարտությունը այդ պայքարի ղորեղ զենքն է»[54]:

Սակայն սոցիալիստական միասնական ճակատի ամրապնդման գործում անչափ վնասակար դերը են դրավում մաոականների պեկինյան ռևիզիոնիստները, որոնց քաղաքականությունը «բացահայտորեն ուղղված է սոցիալիստական պետությունների միջամտության դեմ: Ավելին, այն ուղղակի շաղկապվում է ամբողջ աշխարհի ամենածայրահեղ ռեակցիայի դիրքավորման հետ՝ սկսած արևմտյան երկրների միլիտարիստներից և լարվածության թուլացման թշնամիներից մինչև Հարավային Աֆրիկայի ռասիստներն ու Չիլիի ֆաշիստական կառավարողները: ...Հիմա արդեն քիչ է ասել, որ մաոական դաղափարախոսությունն ու քաղաքականությունն անհամատեղելի են մարքս-լենինյան ուսմունքի հետ: Նրանք ուղղակի թշնամական են այդ ուսմունքի համար»[55]:

ՍՄԿԿ XXV համագումարը ցույց տվեց ավելի ուժեղացնել պայքարը ամեն կարգի ռևիզիոնիստների դեմ, ամրապնդել ինտերնացիոնալիստական կապերը հանուն խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի հաղթանակի: Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXV համագումարում նշեց, որ մենք ապրում ենք սոցիալական փոփոխությունների այնպիսի դարաշրջանում, երբ ամենուր ամրապնդվում և ընդլայնվում են սոցիալիզմի դիրքերը: Ազգային-ազատագրական շարժումներն անկախության ձգտող երկրների առջև նոր հորիզոններ են բացում, ուժեղանում է աշխատավորական մասսաների դասակարգային պայքարը մոնոպոլիաների ու շահագործման դեմ: «Ավելի ու ավելի մեծ չափեր է ընդունում հեղափոխական-դեմոկրատական, հակաիմպերիալիստական շարժումը: Այս ամենը, ամբողջությամբ վերցրած, նշանակում է համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացում»[56]: Կապիտալիստական աշխարհի ամենուր ուժեղացող ճգնաժամի պայմաններում ավելի է աճում սոցիալիզմի ձգողական ուժը, քանի որ «Ազատության գործը, առաջադիմության գործը անպարտելի է»[57]: Այդ մեծ գործի խթանող ուժը ժողովուրդների բարեկամությունն է, պրոլետարական ինտերնացիոնալիզմը: «Մենք՝ սովետական կոմունիստներս,— ասել է Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXV համագումարում,— պրոլետարական ինտերնացիոնալիզմի պաշտպա-

---

54 Նույն տեղում, էջ 15:
55 Նույն տեղում, էջ 16:
56 Նույն տեղում, էջ 43:
57 Նույն տեղում, էջ 48:

նությունը համարում ենք յուրաքանչյուր մարքսիստ-լենինյանի սրբազան պարտականությունը»[58]։

Վ. Ի. Լենինը ժամանակին նշել է, որ բոլոր երկրներում «հասունանում է սոցիալիստական հեղափոխությունը», սակայն այդ հեղափոխությունը «կկազմվի երկարամյա ճակատամարտերից»[59]։

Հաստատվել է լենինյան այդ հանճարեղ կանխատեսումը ևս։ Այժմ արդեն բոլորի համար էլ պարզ է, որ սոցիալիզմի ձգողական ուժը գնալով ավելի է մեծանում, քանի որ այն «բերում է խաղաղություն, բոլոր երկրների սուվերենության հարգում և միջպետական իրավահավասար համագործակցություն, հնարան է ծառայում իրենց ազատության և անկախության համար պայքարող ժողովուրդներին»[60]։ Մինչդեռ կյանքը ցույց տվեց, «որ կապիտալիզմը ապագայից զուրկ հասարակարգ է»[61]։

ՍՄԿԿ ԿԿ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին» պատմական որոշումը կարևորագույն փաստաթուղթ է ժամանակակից համաշխարհային հեղափոխական պրոցեսի, հեղափոխական ուժերի միավորման, բանվոր դասակարգի և կոմունիստական կուսակցությունների դերի մասին։ Որոշման մեջ կարևոր ուղիներ են տրվում զարգացած սոցիալիզմի օրինաչափությունների, զարդացման տեղի ու դերի մասին համաշխարհային հեղափոխական շարժման մեջ, որում ՍՍՀՄ օրինակը կարևորագույն նշանակություն ունի։

«Բոլոր երկրների աշխատավորների ամենապայծառ հույսերը կապված են սոցիալիզմի հետ,— ասված է ՍՄԿԿ ԿԿ-ի որոշման մեջ,—Դրանում է Հոկտեմբերի օրինակի, Սովետական Միության, սոցիալիստական համագործակցության բոլոր երկրների հաջողությունների ուժը»[62]։ Հոկտեմբերի դրոշի համաշխարհային ազդեցությունը գնալով ավելի հզորանում ու անպարտելի է դառնում։

---

58 Նույն տեղում, էջ 50—51։

59 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 21, էջ 506։

60 Լ. Ի. Բրեժնև, նշվ. զեկուցումը, էջ 15։

61 Նույն տեղում, էջ 46։

62 «ՍՄԿԿ ԿԿ-ի 1977 թ. հունվարի 31-ի որոշումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին», Երևան, 1977, էջ 22։

Վ. Ն. ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԸ ԵՎ ՄԱՐՔՍ–ԼԵՆԻՆՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Մարքս-լենինյան ուսմունքի ուժը նրա ստեղծագործական բնույթի մեջ է։ Նրա այդ բնորոշ առանձնահատկության մասին ժամանակին մատնանշել են Կ. Մարքսը, Ֆ. Էնգելսը և Վ. Ի. Լենինը։ Դրանով է պեկավարվում ամբողջ աշխարհի կոմունիստական շարժումը, այդ ոգով են անցնում ՍՄԿԿ և եղբայրական կոմունիստական ու բանվորական կուսակցությունների համագումարները։

ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը մեծ չափով նպաստեցին մարքս-լենինյան տեսության ստեղծագործական հետագա զարգացմանը։ Այն իր արտացոլումը գտավ ամենից առաջ ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ, որով հանդես եկավ նրա գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը, ինչպես նաև համագումարի որոշումներում և մյուս նյութերում։

Նոր, առաջընթաց քայլ կատարվեց տեսական և գործնական բազմաթիվ պրոբլեմների լուծման ու մեկնաբանման ուղղությամբ։ Հետագա տնտեսական մշակման ենթարկվեցին կուսակցության աճող դերի, սոցիալիստական դեմոկրատիայի զարգացման, կոմունիստական արտադրահարաբերությունների, գաղափարական-դաստիարակչական աշխատանքի ծավալման, նոր մարդու կերտման և մի շարք այլ կարևոր հարցեր։

Մարքսիզմ-լենինիզմն ուսուցանում է, որ արդի դարաշրջանի գլխավոր բովանդակությունը անցումն է կապիտալիզմից դեպի սոցիալիզմը, համապարփակ մի պրոցես, որի սկիզբը դրվել է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով։

Այժմ արդեն ոչ ոքի համար գաղտնիք չէ այդ հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը, նրա վերափոխիչ ու դա-

դրակազմիկ դերը ոչ միայն սովետական ժողովրդի կյանքում, այլև մարդկային հասարակության ճակատագրում։ Ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաների սոցիալական և ազգային ազատագրական պայքարի նախընթաց պատմության ոչ մի իրադարձություն իր մասշտաբներով, բովանդակության խորությամբ, լիակատարությամբ ու հետևանքներով չի կարող համեմատվել այն հեղափոխության հետ, որ 60 տարի առաջ կատարեց Ռուսաստանի հերոսական պրոլետարիատը Վ. Ի. Լենինի և նրա ստեղծած կոմունիստական կուսակցության գլխավորությամբ։ Դա մեր դարի գլխավոր իրադարձությունն է, որը արմատապես փոխեց մարդկության զարգացման ընթացքը, բացելով ոչ միայն կապիտալիզմի կործանման և սոցիալիզմի հաղթանակի, այլև ժողովուրդների միջև պատերազմները դադարեցնելու դարաշրջանը։ Հոկտեմբերյան հեղափոխության և մեր երկրում կոմունիստական շինարարության պատմական վիթխարի փորձը սոցիալիստական հեղափոխության, սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման օրինաչափությունների, նրանց կիրառման առանձնահատկությունների մասին մարքս-լենինյան ուսության իրավացիության վառ դրսևորումն է։

Մեծ Հոկտեմբերի հաղթանակով միաժամանակ սկսվեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը, որի առաջին էտապից մինչև ներկա էտապը անցած մոտ 60 տարիների ընթացքում տեղի են ունեցել սոցիալական ու քաղաքական արմատական փոփոխություններ, կապիտալիզմն զգալիորեն կորցրել է իր դիրքերը, մեծապես ամրապնդվել ու ընդլայնվել են սոցիալիզմի դիրքերը։

Կյանքը հաստատեց Վ. Ի. Լենինի կանխատեսությունը իմպերիալիզմի նոր, ծանր պարտությունների մասին[1], այն միաժամանակ ցույց տվեց, որ սոցիալիստական հեղափոխությունները նոր իրադրության պայմաններում կարող են տեղի ունենալ նաև առանց համաշխարհային պատերազմների։ Դրա լավագույն օրինակը Կուբայում սոցիալիզմի հաղթանակն է։

Երկրորդ համաշխարհային պատերազմի և հատկապես Հայրենական մեծ պատերազմի պատմությունը, դրանցից հետո ծավալվող իրադարձությունները լիովին հաստատեցին մարքսիզմ-լենինիզմի տեսական դրույթների իրավացիությունը։ Դրա վկայություններն են՝ սոցիալիզմի կենսունակությունը և անպարտելիությունը, սոցիալիզմի դուրս գալը մի երկրի շրջանակներից և սոցիալիզմի համաշխարհային

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 43 և հատ. 27, էջ 525։

սիստեմի առաջացումը, իմպերիալիզմի գաղութային սիստեմի խարխլումը, ազգային ազատագրական շարժումների նոր, հզոր վերելքն ու նոր զարգացող երկրների և նրանց համագործակցության առաջացումը, կապիտալիզմի դիրքերի թուլացումը։ ՍՍՀՄ-ից ու Մոնղոլիայից հետո Եվրոպայի և Ասիայի 11 երկրներում, իսկ այնուհետև Կուբայում սոցիալիստական հեղափոխությունների հաղթանակը, աշխարհում 80 նոր անկախ պետությունների առաջացումը իմպերիալիզմի դիրքերի թուլացման անվիճելի և ցայտուն արտահայտություններն են։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի առաջին շրջանի բնորոշ կողմը իմպերիալիզմի ճակատի ճեղքումն ու անտեսության սոցիալիստական սիստեմի առաջացումն էր, երբ ՍՍՀՄ-ը սոցիալիզմի միակ երկիրն էր, Մոնղոլական ժողովրդական Հանրապետությունը բռնել էր ոչ կապիտալիստական զարգացման ուղին։ Երկրորդ էտապի բնորոշ գիծը սոցիալիզմի մի երկրի շրջանակներից դուրս գալն ու համաշխարհային սոցիալիստական սիստեմի վերածվելն էր։ Երրորդ էտապը բնութագրվում է ՍՍՀՄ-ում սոցիալիզմի վերջնական հաղթանակով, կոմունիստական շինարարության ծավալմամբ, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի աննախընթաց հզորացմամբ, միջազգային բանվոր դասակարգի հեղափոխական շարժումների խորացմամբ, ազգային ազատագրական շարժումների վերելքով, իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզմամբ։ ՍՄԿԿ XXV համագումարը այդ ամենը որակեց որպես «համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացում»[2], մարդկային հասարակության պատմական զարգացման հզոր ընթացք, երբ հանդես են գալիս «նոր սերունդներ ու սոցիալական խավեր, նոր կուսակցություններ ու կազմակերպություններ»[3], երբ ավելի ու ավելի է մեծանում պատմությունը կերտող ժողովրդական մասսաների ակտիվությունը։

Համաշխարհային հեղափոխության պրոցեսի խորացման վկայությունն առաջին հերթին սոցիալիստական լագերի երկրների բուռն զարգացումն է, նրանց հզորության աճը, մարդկային հասարակության առաջընթացի վրա նրանց ունեցած աճող ազդեցության աննախընթաց մեծացումը։

Իմպերիալիզմը ոչ միայն ի վիճակի չեղավ վերաձևել աշխարհի քաղաքական քարտեզը, այլև չկարողացավ խանգարել սոցիալիզմի հա-

---

2 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1976, էջ 43։

3 Նույն տեղում։

համաշխարհային սիստեմի առաջացմանը, թեև աշխարհի որոշ երկրներում արգելակեց հեղափոխական պրոցեսների խորացմանը: Իսկ այն բանից հետո, երբ իմպերիալիստական տերությունները չկարողացան ջլատել սոցիալիստական երկրների համագործակցության ուժերը և սոցիալիզմը դարձավ համաշխարհային սիստեմ, ստեղծվեցին բոլոր պայմաններն այդ սիստեմի հետագա զարգացման ու մարդկության ճակատագրում նրա խաղացած դերի արագ մեծացման համար: 1960—1970-ական թվականներին այդ սիստեմը լիովին ամրապնդվեց ու այնքան հզորացավ, որ մեկը մյուսի ետևից նորանոր հաղթանակներ է տանում համաշխարհային կապիտալիստական սիստեմի դեմ խաղաղ մրցության բոլոր ճակատամասերում: Դրանում մեծ է ՍՍՀՄ կատարած դերը: ՍՍՀՄ-ը թույլ չտվեց, որպեսզի սոցիալիզմի լագերի երկրներում իմպերիալիստները ռազմական ինտերվենցիա իրագործեն և դրանով իսկ ապահովեց այդ երկրների խաղաղ տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացումը: Սոցիալիստական երկրների տնտեսական, քաղաքական, կուլտուրական և ռազմական բազմակողմանի փոխօգնությունը նպաստեց սոցիալիստական համաշխարհային սիստեմի աննախընթաց հզորացմանը:

Ինչպես Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներում ժողովրդա-դեմոկրատական և սոցիալիստական հեղափոխությունների հաղթանակը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ուղղակի շարունակությունն է, այնպես էլ սովետական ժողովրդի և սոցիալիստական երկրների ժողովուրդների ձեռք բերած նվաճումները Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության անմիջական արդյունքն են, մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ գաղափարների ուղղակի մարմնավորումը: Այժմ սոցիալիզմի համաշխարհային սիստեմը դարձել է անհաղթահարելի մի ուժ, նրա մեջ մտնող բոլոր երկրներում վերացել է կապիտալիզմի վերականգնման վտանգը: Համաշխարհային սոցիալիստական սիստեմը վեր է ածվել մարդկային հասարակության հետագա զարգացման ամենավճռական գործոնի: Առանց նրա չեն կարող վճռական հաղթանակի հասնել նաև հասարակական զարգացման մյուս կարևոր գործոնները՝ կապիտալիստական աշխարհի հեղափոխական և կախյալ ու գաղութային երկրների ազգային ազատագրական շարժումները, իմպերիալիզմի գաղութային սիստեմից ազատագրված նոր զարգացող երկրները:

Վ. Ի. Լենինը նշել է, որ սոցիալիզմը համաշխարհային զարգացման վրա ներգործում է ամենից առաջ տնտեսական օրինակի ուժով:

Իրոք, իր տնտեսական հաջողություններով, դեպի զարգացած սոցիալիզմ ու կոմունիզմ կատարվող համընթաց և անկասելի շարժման ուժով սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրները մեծապես ներգործում են մարդկության հետագա զարգացման ճակատագրի վրա։ Շնորհիվ հասարակական զարգացման օրենքների ճիշտ կիրառման, փոխադարձ օգնության, տնտեսական, քաղաքական ու գաղափարական համագործակցության, տարեցտարի աճում է սոցիալիստական երկրների հզորությունը, ավելի ու ավելի են արագանում նրանց զարգացման տեմպերը, ավելի են մեծանում նրանց դերն ու տեսակարար կշիռը համաշխարհային էկոնոմիկայում ու հասարակական հարաբերությունների մյուս ոլորտներում։

Ինչպես հայտնի է, ՍՍՀՄ-ը և ապագա սոցիալիստական երկրները պատերազմից ավելի ու ավելի շատ տուժեցին, քան կապիտալիստական երկրները։ ԱՄՆ-ը ոչ միայն չտուժեց, այլև պատերազմի հետևանքով նույնիսկ հարստացավ։ Եվ չնայած դրան, շնորհիվ տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունների և զարգացման բարձր տեմպերի, այժմ սոցիալիստական երկրների արդյունաբերության արտադրանքը նախապատերազմյան մակարդակը գերազանցում է 32 անգամ, իսկ կապիտալիստականներինը՝ 4,9 անգամ։ Բացի այդ, համաշխարհային արդյունաբերական արտադրանքում սոցիալիստական աշխարհի բաժինը նախապատերազմյան 10%-ից հասել է 33%-ի[4]։

Միայն IX հնգամյակում ՍՍՀՄ-ի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալն աճեց 43%-ով, ազգային եկամուտն ավելացավ 34%-ով։ Դրա շնորհիվ զարգացած կապիտալիստական երկրների հետ տնտեսական մրցության մեջ ՍՍՀՄ-ը լուրջ նվաճումների հասավ, առաջ անցնելով նրանցից նավթի, պղպատի ու հանքային պարարտանյութերի արտադրության գծով։ Նախորդ հնգամյակում ՍՍՀՄ-ը զարգացած կապիտալիստական երկրներից առաջ էր անցել նաև չուգունի, ածուխի, տրակտորների, բամբակի, բրդի, վուշի և այլ արտադրանքների գծով։ Տասներորդ հնգամյակում ՍՍՀՄ-ը նոր առաջընթաց քայլ կկատարի կապիտալիզմի հետ տնտեսական և այլ բնագավառներում տեղի ունեցող մրցության մեջ, իրագործելով կուսակցության տնտեսական ստրատեգիան, որի առանցքն են կազմում երկրի տնտեսական հզորության հետագա մեծացումը, արտադրական ֆոնդերի ընդլայնումն ու արմատական նորացումը, ծանր արդյունաբերության հաշվեկշռված աճի ապահովումը։ Իր արդյունքներով IX հնգամյակը լավագույնն էր

4 Տե՛ս «Լենինյան ուղիով», ՀԿԿ Կենտկոմի օրգան, 1975, № 5, էջ 47։

551—3

մեր երկրի պատմության մեջ, իսկ X-ը նրա օրգանական շարունակությունն է: Այդ հնգամյակում մեր երկիրը նոր առաջընթաց քայլ կկատարի կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ճանապարհին, կնպաստի սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հետագա հզորացմանն ու կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացմանը:

Բնութագրելով սոցիալիզմի երկրների համագործակցության գլխավոր արդյունքները և անելով տեսական ընդհանրացումներ, Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXV համագումարում ընդգծեց այն փաստը, որ «սոցիալիզմի երկրները ավելի ու ավելի նշանակալի դեր են խաղում նաև համաշխարհային էկոնոմիկայում»[5]: Այսպես, 1971—1975 թթ. սոցիալիստական համագործակցության երկրներում ինդուստրիան չորս անգամ ավելի արագ զարգացավ, քան զարգացած կապիտալիստական երկրներում: Տնտեսական փոխօգնության խորհրդի մեջ մտնող սոցիալիստական երկրները ավելի քան երկու անգամ շատ արդյունաբերական արտադրանք թողարկեցին, քան ընդհանուր շուկայի երկրները: ՏՓՀ-ի երկրների բաժինը արդյունաբերության համաշխարհային արտադրանքում հասել էր մոտ 33%-ի, իսկ ԱՄՆ-ի և նրա արևմտյան պարտնյորների բաժինը 65,4%-ից իջել է 41,4 տոկոսի:

Հասարակական այն կարգը, որ ստեղծված է սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրներում, ունի անսպառ ստեղծագործական ուժ:

Սոցիալիզմը հսկայական ներգործություն է ունենում մարդկային լայն զանգվածների մտքերի ու զգացմունքների վրա, համաշխարհային իրադարձությունների զարգացման, հեղափոխական ու ազգային-ազատագրական շարժումների ընթացքի վրա:

Սոցիալիզմը աշխատավոր մարդկանց համար ապահովում է ազատություն, իսկական դեմոկրատական իրավունքներ, բարեկեցություն, գիտելիքների հարստացման հնարավորություն և վստահություն ապագայի նկատմամբ: Նա բերում է խաղաղություն և հենարան է բոլոր այն ժողովուրդների համար, որոնք պայքարում են հանուն իրենց սոցիալական ու ազգային ազատագրության: Նա հետզհետե ավելի ու ավելի է ապացուցում իր գերազանցությունն ու առավելությունը կապիտալիզմի նկատմամբ: Գնալով ավելի ու ավելի է հզորանում սոցիալիստական երկրների համագործակցությունը, նրանց տնտեսական ինտեգրացիան: Պարզ և որոշակի բացահայտվում է սոցիալիստական երկրների ստեղծանական մերձեցման օրինաչափությունը, որը դառնում է անհաղթա-

5 Լ. Ի. Բրեժնև, նշվ. զեկուցումը, էջ 12:

հարելի ուժ։ Ընդ որում այդ համագործակցությունն ընթանում է տնտեսական, քաղաքական, գաղափարական և այլ ուղղություններով, փոխադարձ հարգանքի, լիակատար իրավահավասարության, ազգային և ինտերնացիոնալ շահերի փոխհաշվառման հիմքի վրա։

Անցյալ հնգամյակում Տնտեսական փոխօգնության խորհրդի մեջ մտնող սոցիալիստական երկրների տնտեսական կապերն ավելի սերտացան, հատկապես բարելավվեց նրանց տարեկան և հնգամյա ու հեռանկարային պլանների համաձայնեցման, տնտեսական օրգանների գործունեության կոորդինացման ուղղությամբ իրագործվող պրակտիկան, ավելի կատարելագործվեցին նրանց էկոնոմիկայի ինտեգրացման ու կոոպերացման, էներգիայի և հումքի ասպարեզում փոխադարձ կարիքների ապահովման ձևերն ու մեթոդները։ Այդ բոլորի արդյունքը եղավ ՏՓԽ-ի երկրների տնտեսական ու քաղաքական հզորության մեծացումը, սոցիալիստական ու կոմունիստական շինարարության նոր հզոր վերելքը։

Նոր հնգամյակում ՏՓԽ-ի երկրների հնգամյա և հեռանկարային պլանների կոորդինացումը կընդունի ավելի մեծ չափեր։ Բազմակողմ տնտեսական պլանների և տնտեսական ինտեգրացիայի կուրսը կտա նոր, ավելի մեծ արդյունքներ։

Բավական է ասել, որ շարունակվելու է 2750 կիլոմետր երկարությամբ Օրենբուրգ—ՍՍՀՄ արևմտյան սահմաններ գազատար ուղու կառուցումը, որ ձեռնարկել են ՏՓԽ-ի երկրները, և որը պետք է Եվրոպայի սոցիալիստական երկրներին տարեկան մատակարարի 15,5 մլրդ խորանարդ մետր գազ։ Դա մեծապես կնպաստի արտադրողական ուժերի զարգացմանը նշված երկրներում։ Եվրոպայի սոցիալիստական երկրների տնտեսական զարգացման համար նույնպիսի դեր կխաղա Վիննիցա—Ալբերտիրշա (Հունգարիա) էլեկտրահաղորդման գիծը, որը տարեկան 6,4 մլրդ կվտ էլեկտրաէներգիա կմատակարարի Հունգարիային, Չեխոսլովակիային և Գերմանական Դեմոկրատական Հանրապետությանը։ Դա հնարավորություն կտա ստեղծելու ՏՓԽ-ի միացյալ էներգասիստեմ, որը մեծ դեր կխաղա նրա մեջ մտնող երկրների հետագա տնտեսական ծաղկման գործում։ Տնտեսական ինտեգրացիայի սկզբունքով համատեղ ուժերով ՏՓԽ-ի երկրները պետք է յուրացնեն Սիբիրի և ՍՍՀՄ Հեռավոր Արևելքի, ինչպես նաև Կուբայի և այլ երկրների էներգետիկ ու հումքային ռեսուրսները։ Սոցիալիստական երկրների ջանքերի համատեղ և նպատակասլաց օգտագործումը, նրանց սերտ համագործակցությունը կնպաստի նրանց տնտեսական, քաղաքական և գիտատեխնիկական

հզորության հետագա վերելքին։ Այդ համագործակցության հիմքերի հիմքը, նշում է Լ. Ի. Բրեժնևը, «նրա կենդանի հոգին և ուղղություն տվող, կազմակերպող ուժը, իհարկե, սոցիալիզմի երկրների կոմունիստական կուսակցություններն են մարտական անխախտ դաշինքն է, նրանց աշխարհայացքի միասնությունը, նպատակների միասնությունը, կամքի միասնությունը»[6]։

Հավատարմությունը մարքսիզմ-լենինիզմի գաղափարներին նրանց հիմք է տալիս գիտականորեն լուծելու հասարակության քաղաքական, տնտեսական, կուլտուրական զարգացման ստրատեգիական ու տակտիկական հարցերը, նվաճելու մասսաներին և կատարելու վիթխարի խնդիրներ։

Հանրագումարի բերելով այդ ուղղությամբ ձեռք բերված հաջողությունները, ՍՄԿԿ XXV համագումարը հանգեց հետևյալ տեսական ընդհանրացմանը. «Սոցիալիզմի երկրների զարգացում, նրանց հզորության աճ, նրանց վարած միջազգային քաղաքականության բարերար ազդեցության ուժեղացում՝ ահա թե որն է ներկայումս մարդկության սոցիալական առաջադիմության գլխավոր ուղղությունը»[7]։

Սոցիալիստական երկրների համագործակցության հետագա ամրապնդումը, նրանց շարքերի ու հզորության անընդհատ աճը, տնտեսական ինտեգրացիայի անշեղ զարգացումը և կապիտալիստական աշխարհի հետ ունեցած մրցության մեջ նրա վերջնական հաղթանակի անխուսափելիությունը հասարակական առաջընթացի օրինաչափություններն են։ Հարավ-արևմտյան Ասիայում ամերիկյան ինտերվենտների կրած պարտությունը և Հարավային Վիետնամի, Լաոսի ու Կամբոջայի ազատագրումը, Վիետնամի և նրա ավելի քան 50 միլիոնանոց ժողովրդի վերամիավորումն ու Սոցիալիստական Վիետնամի ստեղծումը, դա սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հզորության աճման նոր արտահայտություն էր։ Սոցիալիստական Վիետնամի ձևավորումը նոր խթան կհանդիսանա Հարավ-արևելյան Ասիայում ծավալվող հեղափոխական ու ազգային ազատագրական շարժումների հետագա վերելքի համար։

Այդ տեսակետից կարևոր իրադարձություններ էին նաև Լաոսի և Կամբոջայի հայրենասիրական և դեմոկրատական ուժերի տարած հաղթանակները ամերիկյան ինտերվենտների և տեղական ռեակցիոն ուժերի նկատմամբ։ Շահագործող դասակարգերի տիրապետության տապալումը Լաոսում և իշխանության անցումը մարքս-լենինյան կուսակ-

6 *Նույն տեղում, էջ 11։*

7 *Նույն տեղում, էջ 44։*

ցության կողմից գլխավորվող աշխատավորության ձեռքը, ինչպես նաև այդ երկրի կողմից զարգացման սոցիալիստական ուղին բռնելը հնարավոր դարձրին սոցիալիզմի համաշխարհային սիստեմը համալրել ևս մի նոր անդամով։ Մենք բոլոր հիմքերն ունենք հայտարարելու, ասում է Լ. Ի. Բրեժնևը, որ «...հանձին Լաոսի, սոցիալիստական երկրների ընտանիքը համալրվում է ևս մի նոր անդամով»[8]։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի ուժեղացմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի մի քանի երկրներ բռնել են զարգացման ոչ կապիտալիստական ուղին։ Այդ տեսակետից կարևոր նշանակություն է ստանում մեր օրերում սոցիալիստական երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների միասնության հետագա ամրապնդման և այդ երկրների փոխադարձ կապերի հետագա բարելավման ու ամրացման համար նոր նպաստավոր հանգամանքների առաջացումը[9]։

Մարդկային հասարակության զարգացման վճռական գործոններից են նաև հեղափոխական շարժումները կապիտալիստական երկրներում և ազգային-ազատագրական շարժումները կախյալ ու գաղութային երկրներում, ինչպես նաև կապիտալիզմի գաղութային լծից ազատագրված և ոչ կապիտալիստական ուղիով զարգացող, տնտեսական ու քաղաքական լիակատար անկախության ձգտող, նոր զարգացող երկրները։

XXV համագումարը մեկ անգամ ևս ցույց տվեց և ընդգծեց, որ «կապիտալիզմը ապագայից զուրկ հասարակարգ է»[10], որ շարունակվում են նրան հատուկ պարբերական ճգնաժամերը, խորանում է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը և այդ ֆոնի վրա գնալով ավելի է մեծանում սոցիալիզմի ազդեցության ուժը։ Վերջին տարիներին կապիտալիստական երկրներում բռնկված տնտեսական ճգնաժամը, մասնավորապես վալյուտային, էներգետիկ և հումքային ցնցումներն էլ ավելի խորացրին կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը։

Տնտեսական նոր ճգնաժամը բնորոշ է նրանով, որ նա իր խորությամբ ու սրությամբ կարող է համեմատվել միայն 1930-ական թվականների ճգնաժամի հետ, որ նա կազմալուծեց մոնոպոլիստական կապիտալիզմի էկոնոմիկան, որ այն զուգորդեց արտադրության խիստ կրճատմանն ու գործազրկության աճմանը կապիտալի աշխարհում։ ՄԱԿ-ի տվյալներով ներկայումս գործազուրկների բանակը զարգացած

8 «Սովետական Հայաստան», 26 հոկտեմբերի 1976 թ.։

9 Նույն տեղում։

10 Լ. Ի. Բրեժնև, նշված զեկուցումը, էջ 46։

կապիտալիստական երկրներում կազմում է 15 միլիոն մարդ։ Բացի դրանից, միլիոնավոր մարդիկ աշխատում են ոչ լրիվ, շաբաթվա մեջ 2—3 օր։ Առանձնապես ծանր է երիտասարդության, մանավանդ նորավարտ մասնագետների վիճակը։ Ֆրանսիայում ավելի քան մեկ միլիոն գործազուրկների մոտ 46 տոկոսը երիտասարդներ են։ Է՛լ ավելի ուժեղացավ միջիմպերիալիստական մրցակցությունը զարգացած կապիտալիստական երկրներում, մասնավորապես խորացան հակասությունները ՆԱՏՕ-ի և «ընդհանուր շուկայի» ներսում։ Այդ բոլորի հետևանքով ճգնաժամը դարձավ արտասովոր։

ՍՄԿԿ XXV համագումարը հակահարված տվեց բուրժուական գաղափարախոսների և ամեն գույնի ռեֆորմիստների. այն զրպարտիչ պնդումներին, թե իբր ժամանակակից կապիտալիզմն ի վիճակի է ազատվելու ճգնաժամից, թե հնարավոր է «առողջացնել» կապիտալիզմը և նրա շրջանակներում «Համընդհանուր բարօրության հասարակարգ ըստեղծել»։ Կապիտալիստական հասարակության հավիտենականության, մասնավոր սեփականության անձեռնմխելիության, մարդու կողմից մարդու շահագործման անխուսափելիության, կապիտալիզմը սոցիալիզմի հետ ձուլելու, «դեմոկրատական կապիտալիզմ» ստեղծելու, բուրժուազիայի ու պրոլետարիատի հաշտեցման հնարավորության մասին բուրժուական գաղափարախոսների ու նրանց ձայնակցող տարբեր երանգի ռեֆորմիստների ու օպորտունիստների առաջ քաշած դոգմաները պատմական քննության չդիմացան և ձախողվեցին։ Դա հասկանալի է թեկուզ այն պատճառով, որ կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերը անտագոնիստական դասակարգեր են, գնալով մեծանում է բուրժուազիայի և պրոլետարիատի միջև եղած անհամապատասխանությունը, խորանում է բանվոր դասակարգի շահագործման աստիճանը, վիթխարի են դառնում բուրժուազիայի կորզած շահույթների մասշտաբները, ավելի ու ավելի է ծանրանում աշխատավորական մասսաների սոցիալ-տնտեսական դրությունը՝ ինչպես պարբերաբար կրկնվող տնտեսական ճգնաժամերի ու ֆինանսական ցնցումների, այնպես էլ սպառազինությունների շարունակվող մրցավազքի և մի շարք այլ հանգամանքների ազդեցությամբ։ Մյուս կողմից, իմպերիալիստական բուրժուազիան ճարպկորեն խուսանավում է, կեղծում, քանի որ չունի և չի կարող ունենալ գիտական գաղափարախոսություն։ Նա դատապարտված է կործանման։ Նրա գլխավոր զենքը այժմ հակակոմունիզմն է, որի սուր ծայրն ուղղված է ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների դեմ։ Աշխարհի բնակչության հսկայական զանգվածներ այժմ երես են դարձ-

րել բուրժուազիայից ու նրա գաղափարախոսներից։ Այժմ ժողովրդական մասսաներին ավելի ու ավելի է ձգտում մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսությունը, որը դարձել է միջազգային բանվոր դասակարգի գաղափարախոսություն և ուղղված է մարդկության կոմունիստական ապագայի կերտման նպատակին։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բնորոշ գծերից մեկն էլ այն է, որ գնալով ավելի է ուժեղանում բուրժուական հասարակարգի գաղափարական ու քաղաքական ճգնաժամը, ավելի են կազմալուծվում նրա պետական իշխանության օրգանները, ոտնահարվում են դեմոկրատական ազատությունները, խորանում է հոգևոր կուլտուրայի անկումը, սրվում են այդ հասարակության հատուկ բոլոր հակասությունները, մեծ չափերի են հասնում հանցագործությունները, կաշառակերությունը, քայքայվում են բարոյական նորմաները։ Գիտատեխնիկական հեղաշրջման ներկա պայմաններում կապիտալի աշխարհում դժվարությամբ են կիրառություն գտնում գիտական հայտնագործությունները ու տեխնիկական նորությունները, կաշկանդվում է արտադրողական ուժերի արագ զարգացումը։

Սակայն մարքսիզմ-լենինիզմը հեռու է կապիտալիզմի ավտոմատ կործանման տեսությունից։ Կապիտալիզմի տնտեսական ու քաղաքական-գաղափարական ճգնաժամը բանվոր դասակարգին մղում է նոր, ավելի սուր պայքարի։ Եթե բուրժուազիան ճգնաժամից դուրս գալու ելքը որոնում է ավելի թույլ հարևաններին կողոպտելու, ազդեցության նոր շրջաններ ձեռք բերելու, վերջին հաշվով, նոր պատերազմներ հրահրելու և նոր կողոպուտներ կատարելու մեջ, ապա բանվոր դասակարգը ելքը որոնում է հեղափոխական պայքարի ուժեղացման, հեղափոխության հաղթանակի մեջ։ ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը վկայում են կապիտալիստական աշխարհում վերջին տարիներին տեղի ունեցող բանվորական շարժումների վերելքի, բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի նոր էտապի մասին։ Ներկայումս ավելի են ձախացել բանվորական մասսայական կազմակերպությունները, ավելի է բարձրացել բանվոր դասակարգի դերն ու հեղինակությունը, մասսայական շափեր են ընդունել գործադուլային և սոցիալական, ազատագրական շարժումները։ Իրենց տնտեսական և քաղաքական ազատությունների համար պայքարող բանվորների և գյուղացիների թիվը գնալով մեծանում է։ Եթե 1946—1960 թթ. կապիտալիստական երկրներում գործադուլավոր բանվորների թիվը կազմում էր 150 միլիոն, 60-ական թվականներին 340 միլիոն, ապա 70-ական թվականների կեսերին նը-

թանց թիվն արդեն մոտենում է 400 միլիոնի։ Ավելի ու ավելի սերտ դաշինք է ստեղծվում կապիտալիստական, կախյալ ու գաղութային երկրների հեղափոխական և ազգային ազատագրական շարժումների միջև, հուժկու են դառնում իմպերիալիզմին հասցվող հարվածները։

Դրա վառ օրինակներն են Չիլիում և Պորտուգալիայում տեղի ունեցած հեղափոխությունները, Պերուի աշխատավորության հեղափոխական-ազատագրական ուժերի հաջողությունները, Հունաստանի ռեակցիոն-ֆաշիստական կառավարության տապալումը, իսպանական հեղափոխական շարժումների նոր վերելքը, լատինական Ամերիկայի, Աֆրիկայի, Ասիայի մի շարք երկրների ոչ կապիտալիստական ուղիով զարգացումը և այլն։

Չիլիի հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության երկու ուղիների մասին մարքս-լենինյան ուսմունքի ճշմարտացիության դրսևորման արտահայտությունն է[11]։ Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ անցումը կապիտալիզմից սոցիալիզմին հնարավոր է միայն հեղափոխական սոցիալիստական հեղափոխության միջոցով։ Տվյալ երկրի ներքին և արտաքին դրությանը համապատասխան սոցիալիստական հեղափոխությունը կարող է տեղի ունենալ կամ բռնի և կամ խաղաղ միջոցներով։ Յուրաքանչյուր երկրի պրոլետարիատ իր բնական դաշնակիցների հետ միասին իր մարտական ավանգարդի՝ կոմունիստական-բանվորական կուսակցության ղեկավարությամբ հասնելով հաղթանակի, պատմական պայմաններին համապատասխան, յուրահատկություն կդրսևորի ինչպես սոցիալիստական հեղափոխության իրագործման, պրոլետարիատի դիկտատուրայի ձևերի, այնպես էլ սոցիալիստական շինարարության տեմպերի ու եղանակների հարցերում։

Սոցիալիստական հեղափոխությանը բնականորեն օգնության են հասնում սոցիալիզմի համաշխարհային լագերը, կապիտալիստական երկրների բանվոր դասակարգը, ազգային-ազատագրական շարժումները։

Դեմոկրատական պայքարի պրոցեսում ստեղծելով սոցիալիստական հեղափոխության քաղաքական բանակը, պրոլետարիատը իր ղեկավար կուսակցության և դաշնակիցների հետ միասին նպաստավոր իրադրության դեպքում կկատարի սոցիալիստական հեղափոխություն։ Բայց այնտեղ, որտեղ ուժեղ է տեղական ռեակցիոն և ռազմա-ոստիկանական մեքենան, շահագործող դասակարգերը ցույց կտան կատաղի դիմադրություն։ Այս դեպքում հեղափոխությունը անխուսափելիորեն կընդունի

---

11 Տե՛ս Լ. Ի. Բրեժնև, նշված զեկուցումը, էջ 48։

զինված ապստամբության բնույթ։ Իսկ այնտեղ, ուր շահագործող դասակարգերը բավականաչափ թույլ կգտնվեն և հնարավորություն չեն ունենա լուրջ դիմադրություն ցույց տալու հեղափոխական ուժերին, բանվոր դասակարգը կարող է մեծամասնություն ստանալ պառլամենտում և իշխող դասակարգերին զրկել իրենց տնտեսական հզորությունից, պառլամենտը օգտագործել միայն ժողովրդի շահերի համար, այսինքն ստեղծել պրոլետարիատի դիկտատուրա, առանց որի հնարավոր չէ անցումը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ։

Չիլիի հեղափոխությունը ուղղված էր տեղական բուրժուազիայի և օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալիզմի դեմ և իշխանությունը խաղաղ ձևով նվաճելու, սոցիալիստական հեղափոխության խաղաղ մեթոդի իրագործման օրինակ էր։ Այն ղեկավարում էին կոմունիստական ու սոցիալիստական կուսակցությունները Լուիս Կորվալանի և Սալվադոր Ալիենդեի գլխավորությամբ։ Սակայն տեղական ռեակցիայի և օտարերկրյա իմպերիալիստական շրջանների, հատկապես ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական օրգանների համատեղ հարվածներից հեղափոխությունը հանկարծակիի եկավ և պարտվեց։ Չիլիում հաստատվեց Պինոչետի ռազմաֆաշիստական դիկտատուրան։ Գնահատելով Չիլիի հեղափոխության պարտության դասերն ու նշանակությունը, Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXV համագումարում արեց հետևյալ կարևոր ընդհանրացումը. «Չիլիի ողբերգությունը ամենևին չջնջեց կոմունիստների հետևությունը հեղափոխության տարբեր ուղիների, այդ թվում՝ խաղաղ ուղու հնարավորության մասին, երբ դրա համար անհրաժեշտ պայմաններ կան։ Բայց այդ ողբերգությունը միևնույն ժամանակ հիշեցրեց, որ հեղափոխությունը պետք է կարողանա իրեն պաշտպանել։ Այն սովորեցնում է զգոն լինել ժամանակակից ֆաշիզմի և օտարերկրյա ռեակցիայի դավերի հանդեպ, կոչ է անում ուժեղացնել միջազգային համերաշխությունը բոլոր նրանց հետ, ովքեր կանգնում են ազատության և առաջադիմության ուղու վրա»[12]։

Այսպիսով, Չիլիի փորձը ոչ միայն ցույց տվեց, որ ուժի մեջ է մնում սոցիալիստական հեղափոխության իրագործման խաղաղ մեթոդը, այլև այն, որ հեղափոխության հաղթանակի համար անհրաժեշտ է դիմել նաև նրա նվաճումների զինված պաշտպանությանը, ամրապնդել կապերը միջազգային հեղափոխական ուժերի հետ, ճշտորեն զուգորդել հեղափոխության հաղթանակի երկու մեթոդները։

---

12 Նույն տեղում, էջ 48։

Այդ տեսակետից ուսանելի է նաև պորտուգալական հեղափոխության փորձը։ Հակաֆաշիստական, հակաիմպերիալիստական, դեմոկրատական բնույթ ունի պորտուգալական հեղափոխությունը։ Այն նախապատրաստվեց և իրագործվեց երկրի հեղափոխական-դեմոկրատական կուսակցությունների, բանակի հեղափոխական ուժերի (որոնց վրա ճնշ էր հատկապես կոմունիստների ազդեցությունը) ջանքերով։ Դրանով վերջը դրվեց ֆաշիստական ռեժիմին երկրի ներսում և վերացվեց գաղութային վերջին կայսրությունը։ Ստեղծվեցին ռազմահեղափոխական սովետ և կառավարություն, որոնց մեջ ապահովվեց ինչպես երկրի զինված ուժերի հեղափոխական, այնպես էլ կոմունիստական, սոցիալիստական և բուրժուական ձախ կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությունը։ Ձեռնարկվեցին բուրժուադեմոկրատական և սոցիալիստական բնույթի մի շարք միջոցառումներ, մշակվեց սահմանադրություն։

Պորտուգալական հեղափոխության կարևոր հաջողությունների թվին են դասվում մոնոպոլիստական կապիտալի և առհասարակ ռեակցիոն բուրժուազիայի տնտեսական հզորության սասանումն ու թուլացումը։ Ազգայնացնելով 245 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն՝ կամ արդյունաբերության մեջ իշխող ակցիոներական կապիտալի 40 տոկոսը, հեղափոխական կառավարությունը փաստորեն վերացրեց երկրի հիմնական մոնոպոլիստական խմբերը։ Նույն նպատակին էր ուղղված նաև 260 արդյունաբերական ձեռնարկությունների վրա բանվորական վերահսկողության սահմանումը։ Այս փաստերը վկայում են պորտուգալական հեղափոխության հակաիմպերիալիստական բնույթի մասին։

Պորտուգալական հեղափոխությունն ուներ նաև հակաֆեոդալական բնույթ. դրա վառ վկայությունը երկրի գյուղատնտեսական հողային տարածությունների մեկ վեցերորդ մասում ագրարային ռեֆորմների իրագործումն էր, խոշոր լատիֆունդիաների բռնագրավումը և դրա հիման վրա 400 կոոպերատիվ և կոլեկտիվ արտադրական միավորումների ստեղծումը[13]։

1976 թ. ապրիլի 25-ին տեղի ունեցած պառլամենտական ընտրությունները ցույց տվեցին, որ ձախ բլոկի կուսակցություններն ավելի մեծաթիվ կողմնակիցներ ունեն ընտրողների շրջանում, քան աջ բլոկը։ Պորտուգալական հետագա իրադարձությունները, սակայն, ցույց են տալիս, որ դեռ ծանր պայքար է սպասվում հեղափոխության և ռեակցիայի ուժերի միջև, Պորտուգալիայի կոմունիստական կուսակցությունը

---

13 Տե՛ս «За рубежом», 1976, № 48.

և ձախ բլոկի մյուս ուժերը ջանքեր չեն խնայում հեղափոխությունը զարգացնելու ուղղությամբ։ ՍՍՀՄ-ը, մյուս սոցիալիստական երկրները, աշխարհի առաջադեմ մարդկությունը համակրանքով են վերաբերվում պորտուգալական հեղափոխությանը և վճռականապես դեմ են ամեն մի միջամտության նրա ներքին գործերին։ Պորտուգալական հեղափոխության հաղթանակով իմպերիալիզմի գաղութային սիստեմը լիովին խարխլվեց։ Աֆրիկայի և աշխարհի մնացած մասերի նրա գաղութները համարյա լիովին անկախություն ձեռք բերեցին։ Հատկապես կարևոր իրադարձություն էր ազգային-ազատագրական հակաիմպերիալիստական ուժերի հաղթանակը Անգոլայում, որին ակտիվ օգնություն ցույց տվեցին ՍՍՀՄ-ը և սոցիալիստական մյուս երկրները, ինչպես նաև Աֆրիկայի նոր զարգացող երկրների մեծամասնությունը։ Իմպերիալիստական տերությունները ԱՄՆ-ի գլխավորությամբ շատ ջանքեր գործադրեցին ապահովելու ռեակցիայի հաղթանակը Պորտուգալիայում և նրա աֆրիկյան նախկին գաղութներում, բայց ապարդյուն։

Պորտուգալիայի բանվոր դասակարգն ու դյուղացիությունը, ինչպես նաև նրա նախկին գաղութների աշխատավորությունը և մյուս առաջադեմ ուժերը զգոն են տեղական ռեակցիայի և իմպերիալիզմի բլոկից սպասվող վտանգի նկատմամբ, թեև այդ բլոկի ջանքերը, վերջին հաշվով, ինչպես նշել է Լ. Ի. Բրեժնևը, դատապարտված են ձախողման, և աղատության գործը, առաջադիմության գործը անպարտելի է[14]։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի և միջազգային բանվոր դասակարգի օգնության շնորհիվ ազգային-ազատագրական շարժումն ներն ապրում են աննախընթաց վերելք։ Սոցիալիզմի գաղափարները պարարտ հող են գտնում նոր զարգացող երկրներում, որտեղ պայմաններ են ստեղծվում զարգացման կապիտալիստական ստադիան շրջանցելու, սոցիալիզմին անցնելու համար։ Այդպիսի փորձեր են արվում մասնավորապես Աֆրիկայում՝ Ալժիրում, Տանզանիայում, Մոզամբիկում, Սոմալիում, Եթովպիայում, Անգոլայում։ Ուշագրավ է, որ Անգոլան ՍՍՀՄ հետ 1976 թ. հոկտեմբերին կնքած պայմանագրի հիման վրա արդեն մասնակցում է ՏԹԽ-ի աշխատանքներին և ակտիվ քայլեր է անում իր քայքայված ժողովրդական տնտեսությունը վերականգնելու և վերակառուցելու, սոցիալիստական վերափոխություններ կատարելու ուղղությամբ[15]։

---

14 Տե՛ս Լ. Ի. Բրեժնև, նշված զեկուցումը, էջ 48։

15 Տե՛ս «Սովետական Հայաստան», 26 հոկտեմբերի 1976 թ.։

Մեր օրերում գնալով ավելի ու ավելի է մեծանում մարքսիզմ-լենինիզմի անհաղթ գաղափարների վերափոխիչ դերը ոչ միայն Աֆրիկայում, այլև Ասիայում ու մյուս աշխարհամասերում։ Բոլորովին վերջերս սոցիալիստական կողմնորոշման աֆրիկյան որոշ երկրներում ձևավորվեցին բանվոր դասակարգի կուսակցություններ մարքսիզմ-լենինիզմի տեսության հիմքի վրա։ Մոզամբիկի ազատագրության ճակատի (ՖՐԵԼԻՄՕ) III համագումարը որոշեց ստեղծել բանվորագյուղացիական կուսակցություն, որը երկրի աշխատավոր մասսաներին պետք է առաջնորդի սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում։ Անգոլայում, Եթովպիայում, Սոմալիում, Մադագասկարում և այլուր աշխատանք է տարվում բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցություններ ստեղծելու ուղղությամբ[16]։

Այդ բոլորը վկայում են, որ աշխարհում անկասելի պրոցես է տեղի ունենում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների հաղթարշավի ճանապարհին, նրա գաղափարները տիրապետում են նորանոր միլիոնավոր մասսաների և դառնում նյութական հզոր ուժ, սասանելով զառամող կապիտալիզմի խարխլվող հիմքերը։

Ուշադրության արժանի են աշխարհի կոմունիստական ու բանվորական կուսակցությունների քանակական ու որակական կազմի աճման, նրանց համագործակցության, պրոլետարական իսերնացիոնալիզմի սկզբունքի իրագործման, միջազգային լարվածության թուլացման և դասակարգային ու ազգային-ազատագրական պայքարի հարաբերակցության պրոբլեմների մասին ՍՄԿԿ XXV համագումարի տեսական ընդհանրացումները։

Մեր դարաշրջանը բնորոշ է հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումների վիթխարությամբ, սոցիալիզմի և կապիտալիզմի միջև գոյություն ունեցող մեծագույն հակամարտություններով ու ճակատամարտերով։ Կոմունիստական կուսակցությունները կարևորագույն դեր են խաղում համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացման, նրա կազմակերպման, ոգեշնչման ու առաջընթացի գործում։ Աշխարհի կոմունիստական և բանվորական կուսակցությունների քանակը հասնում է 89-ի, որոնց շարքերում միավորված է ավելի քան 60 միլիոն մարդ։ Ընդ որում ոչ սոցիալիստական երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների քանակը հասնում է 75-ի, որից Ասիայում՝ 22, Աֆրիկայում՝ 9, Ամերիկայում՝ 25։ Հատկապես բազմա-

16 Տե՛ս «Правда», 13 февраля 1977 г.

մարդ ու ազդեցիկ են Իտալիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի Դեդերատիվ Հանրապետության, Պորտուգալիայի կոմունիստական կուսակցությունները։ Վերջին տարիներին արագորեն աճել է ոչ միայն սոցիալիստական երկրների, այլև կապիտալիստական և մյուս երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ազդեցությունը։ Այդ ժամանակաշրջանում կապիտալիստական երկրների կոմունիստական կուսակցությունների թվական կազմն աճեց ավելի քան մեկ միլիոն մարդով։ Ավելացավ ընտրովի օրգաններում նրանց օգտին ձայն տվողների թիվը։

Կոմունիստական կուսակցությունների գործողությունները կոորդինացվում են նրանց 1957, 1960, 1969 թթ. միջազգային խորհրդակցությունների ծրագրամների և ընդունած փաստաթղթերի դրույթների հիման վրա։ Պայքարելով աջ և «ձախ» ռևիզոնիզմի դեմ, կոմունիստական կուսակցությունները մարքս-լենինյան ուսմունքի հիման վրա համագործակցում են միմյանց հետ բացառապես ինտերնացիոնալիզմի դիրքերից։ Նրանց ուշադրությունը բևեռված է այն հարցերի վրա, որոնք բխում են շարժման ընդհանուր շահերից, նրանց նպատակների և գործողությունների միասնությունից և ոչ թե տարաձայնությունների ու վեճերի վրա, որոնք հաղթահարվում են, ղեկավարվելով ընկերականության, իրավահավասարության և ինքնուրույնության սկզբունքներով։

ՍՄԿԿ XXV համագումարը նորից հավաստեց այն փաստը, որ «կոմունիստներն իրենց պայքարում ելնում են հեղափոխության զարգացման և սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման ընդհանուր օրինաչափություններից»[17]։

Ինչպես հայտնի է, այդ օրինաչափությունները հանգամանորեն ձևակերպված են կոմունիստական ու բանվորական կուսակցությունների վերոհիշյալ խորհրդակցություններում ընդունված փաստաթղթերում, ընդ որում, յուրաքանչյուր կուսակցություն պատրաստվոր է խելացիորեն և ճիշտ զուգակցել այդ օրինաչափություններն ու իր երկրի առանձնահատկությունները։

Այս կապակցությամբ XXV համագումարում նշվեց, որ ոչ մի դիջում չպետք է արվի սկզբունքների մեջ, որ «եթե օպորտունիզմին արված դիջումը նույնիսկ ինչ-որ ժամանակավոր առավելություն էլ տա, բայց վերջին հաշվով դա վնաս կհասցնի կուսակցությանը»[18]։

---

17 Լ. Ի. Բրեժնև, նշված զեկուցումը, էջ 50։

18 Նույն տեղում։

Համագումարի տեսական այս հետևությունն ուսանելի է համաշխարհային կոմունիստական շարժման զարգացման համար։

Մարքս-լենինյան տեսության հարստացման օրինակ է պրոլետարական ինտերնացիոնալիզմի հարցում ՍՄԿԿ XXV համագումարի դիրքորոշումը։ Հակահարված տալով այն ստահոդ պնդումներին, թե իբր հնացել է պրոլետարական ինտերնացիոնալիզմի մարքս-լենինյան ըմբռնումը և պետք է հրաժարվել մարքսիզմ-լենինիզմի այս սկզբունքից, համագումարը կրկին ընդգծեց նրա կարևորությունը որպես բանվորական շարժման հզոր ու փորձված զենքի և խնդիր դրեց սրբությամբ հավատարիմ մնալ նրան, մանավանդ, հակակոմունիզմը համաշխարհային մասշտաբով կոորդինացնում է իր գործողությունները նրա դեմ։ Համագումարն ամբողջ ուժով հավաստեց ՍՄԿԿ-ի հավատարմությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմին։ Հրաժարումը պրոլետարական ինտերնացիոնալիզմից տանում է դեպի օպորտունիզմ և նացիոնալիզմ՝ ի վնաս համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացման։ Այնինչ հավատարմությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմին տանում է դեպի սոցիալիստական երկրների սերտ համագործակցություն, համաշխարհային կոմունիստական ու աղգային-ազատագրական շարժումների միասնություն, հեղափոխական ուժերի դերակշռություն իմպերիալիզմի և ռեակցիայի մյուս բոլոր ուժերի նկատմամբ։ Համագումարի այս հետևություններն ունեն տեսական ու գործնական նշանակություն։

XXV համագումարը հանրագումարի բերեց այն աշխատանքը, որ կատարել է մեր կուսակցությունը եղբայրական կոմունիստական ու բանվորական կուսակցությունների գործողությունների կոորդինացման, նրանց փոխադարձ կապերի ամրապնդման ուղղությամբ և ողջույնի ու համակրանքի խոսքեր ուղղեց հատկապես այն կոմունիստների հասցեին, ովքեր շարունակում են պայքարել ընդհատակի ծանր պայմաններում։

Իր նպատակների իրագործման ճանապարհին ՍՄԿԿ-ն համագործակցում է մի շարք երկրների առաջադիմական, ոչ կոմունիստական կուսակցությունների՝ սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական, հեղափոխական-դեմոկրատական կուսակցությունների հետ, ամենևին դիջում չանելով ռեֆորմիզմին և օպորտունիզմին։ XXV համագումարի բնորոշ գծերից մեկը բարձր սկզբունքայնությունն է, դասակարգային, կուսակցական մոտեցումը երևույթների գնահատմանը և անհաշտու-

թյունը բուրժուական գաղափարախոսության, ռեֆորմիզմի ու օպորտունիզմի բոլոր տարատեսակությունների նկատմամբ։

Տեսական և գործնական խոշոր նշանակություն ունի միջազգային լարվածության թուլացման, այդ պրոցեսի և դասակարգային պայքարի փոխհարաբերության պրոբլեմի քննությունը, որ պատշաճ տեղ գտավ համագումարում Լ. Ի. Բրեժնևի տված զեկուցման մեջ և միջազգային կոմունիստական շարժման ականավոր գործիչների ելույթներում։ Սոցիալական տարբեր սիստեմների խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքն իր հետագա կոնկրետացումը գտավ դեռևս ՍՄԿԿ XX համագումարում, ինչպես նաև ՍՄԿԿ և եղբայրական կոմունիստական կուսակցությունների այլ համագումարներում ու նրանց միջազգային խորհրդակցություններում։ XXV համագումարն ավելի կոնկրետացրեց ու զարգացրեց այդ սկզբունքը, ցույց տալով, որ «լարվածության թուլացումը, խաղաղ գոյակցությունը վերաբերում են միջպետական հարաբերություններին»[19]— ամենևին չվերաբերվելով դասակարգային պայքարի, ուրիշ ժողովուրդների ազատության ու առաջադիմության նկատմամբ սովետական կոմունիստների ու ժողովրդի ցույց տված համակրանքի ու համերաշխության հարցերին։

Վերլուծելով այդ պրոբլեմները, Լ. Ի. Բրեժնևն ասաց. «Լարվածության թուլացումը ամենևին չի վերացնում ու չի կարող վերացնել կամ փոխել դասակարգային պայքարի օրենքները»[20]։ Լարվածության թուլացումը չի կարող հանգեցնել այն բանին, որ կոմունիստներն ի վերջո հաշտվեն կապիտալիստական շահագործման հետ, իսկ մոնոպոլիստները դառնան հեղափոխության կողմնակիցներ։ Դա, իհարկե, անառարկելի ճշմարտություն է, բայց որ լարվածության թուլացումն անհամատեղելի է ուրիշի ներքին գործերին միջամտելու և ուրիշի անկախությունը վտանգելու հետ, դա նույնպես պարզ պետք է լինի բոլորին։ Սոցիալիզմն ու խաղաղությունը անբաժանելի են։ Պատերազմը կապիտալիզմի ուղեկիցն է, բայց այժմ բավականաչափ նպաստավոր պայմաններ կան պատերազմը կանխելու համար։ Խաղաղության ուժերն անսպառ են և պետք է դրանք կազմակերպել։

Համագումարը բացահայտեց նաև այն պնդման անհիմն լինելը, ըստ որի խաղաղ գոյակցությունն իբր «օգնություն է կապիտալիզմին», գոյություն ունեցող իրադրության հավերժացում, սոցիալ-տնտեսական

---

19 Նույն տեղում, էջ 53։

20 Նույն տեղում։

ստատուսքվոյի սառեցում։ Վկայակոչելով հեպատերազմյան շրջանի վիճակարի սոցիալ-տնտեսական փոփոխությունները, Լ. Ի. Բրեժնևը եզրակացնում է. «Ամեն մի հեղափոխություն նախ և առաջ ավյալ հասարակության ներքին զարգացման օրինաչափ արդյունքն է»[21], ուստի, հավատարիմ լինելով հեղափոխության գործին, սովետական կոմունիստները պայքարում են և կպայքարեն հանուն խաղաղության։ Դա մարդկային առաջադիմության կարևորագույն պայմաններից մեկն է։ Կոմունիստները վճռականորեն դեմ են ինչպես հեղափոխության արտահանման ավանտյուրիստական, այնպես էլ հակահեղափոխության արտահանման իմպերիալիստական ծրագրերին։

Ուշագրավ է, որ օգտագործելով միջազգային լարվածության թուլացման ուղղությամբ ՍՍՀՄ-ի հետ կնքած հայտնի համաձայնագրերը, ԱՄՆ-ը անգոլական դեպքերի կապակցությամբ որոշակիորեն փորձում էր աշխարհը բաժանել ազդեցության ոլորտների և պահանջում էր, որ ՍՍՀՄ-ը չօգնի Աֆրիկայի, մասնավորապես Անգոլայի ժողովրդի ազատագրական հեղափոխական շարժումներին, ձգտելով այդպիսով մթագնել համաշխարհային հասարակական կարծիքը և շփոթել միջպետական հարաբերությունների հարցը դասակարգային պայքարի հարցի հետ։ ՍՍՀՄ-ը վճռաբար մերժեց ԱՄՆ-ի այդ վարքագիծը և շարունակեց ազատագրական հեղափոխական շարժումների նկատմամբ իր ցուցաբերած համերաշխությունն ու օգնությունը։ Անգոլայի ժողովուրդը լիակատար հաղթանակ տարավ։ Այդ գործում անգնահատելի և մեծ է ՍՍՀՄ, Կուբայի և սոցիալիստական մյուս երկրների (բացառությամբ հատկապես Չինաստանի) խաղացած դերը։ Հանրահայտ են մաոիստական Չինաստանի պրոիմպերիալիստական, հակաժողովրդական գործերը Աֆրիկայում և ամբողջ աշխարհում։

Չնայած միջազգային իմպերիալիզմի դավերին ու ջանքերին, վերջին տարիներին մի կողմից ավելի ու ավելի խորացավ և շարունակվում է խորանալ համաշխարհային հեղափոխական պրոցեսը և զգալիորեն թուլացան կապիտալիստական երկրների դիրքերը, մյուս կողմից ավելի ուժեղացավ միջազգային լարվածության թուլացման պրոցեսը, ամրապնդվեցին խաղաղության գործն ու սոցիալիզմի համաշխարհային սիստեմի դիրքերը։ ՍՍՀՄ միջազգային ու ներքին դրությունը ամուր է, ինչպես երբեք։ ՍՄԿԿ XXV համագումարը գիտականորեն վերլուծելով հաշվետու ժամանակաշրջանում մեր երկրում և աշխարհում տեղի

21 Նույն տեղում, էջ 54։

ունեցած սոցիալ-տնտեսական արմատական փոփոխությունները, որ-վազծեց կոմունիզմի կառուցման, խաղաղության ամրապնդման և հա-մաշխարհային հեղափոխական պրոցեսի հետագա խորացման ուղինե-րը։ Համաշխարհային հեղափոխական պրոցեսի, ինչպես նաև կուսակ-ցության տնտեսական ստրատեգիայի, երկրի ժողովրդական տնտեսու-թյան, կուլտուրայի, արվեստի և գիտության հետագա զարգացման ու խաղաղության գործի ամրապնդման վերաբերյալ համագումարի արած տեսական ընդհանրացումներն ունեն միջազգային նշանակություն։ ՍՄԿԿ XXV համագումարում կարդացված զեկուցումներում ու ելույթ-ներում, նրա ընդունած որոշումներում տեղ գտած տեսական ընդհան-րացումներն ու հետևությունները ստեղծագործական մարքսիզմի զար-գացման նոր աստիճան են։

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՍՍՀՄ-ՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ մեր երկրում արմատապես լուծվեց շահագործողների տիրապետությունից ժառանգություն մնացած դժվար հարցերից մեկը՝ ազգային հարցը։

Ինչպես հայտնի է, պրոլետարիատի հեղափոխական ուսմունքի՝ մարքսիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը մինչմոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանում, ուսումնասիրելով և խոր վերլուծության ենթարկելով ազգային շարժումների ընթացքը մի շարք երկրներում, առաջինը տվեցին ազգային-գաղութային հարցի լուծման հիմնական մեկնակետային գաղափարները և նշանակությունը պրոլետարիատի դասակարգային պայքարում։ Նրանք ազգային հարցը սերտորեն շաղկապեցին շահագործողների տիրապետության դեմ ուղղված պրոլետարիատի հեղափոխական պայքարի հետ, ցույց տալով այդ պայքարի ինտերնացիոնալ բնույթը։ Մոտ 130 տարի առաջ նրանց հռչակած «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մարտական լոզունգը մինչև այժմ էլ մնում է միջազգային պրոլետարիատի հեղափոխական պայքարի նշանաբանը։ Բացահայտելով ամենահեղափոխական դասակարգի՝ պրոլետարիատի պատմական դերը որպես կապիտալիզմի գերեզմանափորի, Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ցույց տվեցին, որ միայն կապիտալիստական կարգերի տապալմամբ և պրոլետարիատի իշխանության հաստատմամբ է հնարավոր վերացնել ազգային ճնշումը, ազգերի հավասարությունը և մերձեցումը։ Նրանք բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի առաջին պլանի վրա դրեցին ինտերնացիոնալիզմի և սոցիալիզմի արմատական սկզբունքը՝

չի կարող ազատ լինել այն ժողովուրդը, որը ճնշում է ուրիշ ժողովուրդներին: Պրոլետարիատի մեծագույն ուսուցիչներն ուրվագծեցին ժողովուրդների եղբայրական համագործակցության և իրավահավասարության ուղիները, ընդգծելով, որ դրանց կարելի է հասնել միայն բոլոր ազգերի աշխատավորների ընդհանուր ջանքերի միավորմամբ:

Իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում, ինչպես մարքսիզմի հիմնական բոլոր հարցերը, այնպես էլ ազգային հարցը, մշակեց ու զարգացրեց հանճարեղ մտածող, մեծ հեղափոխական Վ. Ի. Լենինը: Մարքսիզմի գաղափարների անսասան հիմքի վրա նա բազմակողմանիորեն մշակեց նոր տիպի կուսակցության՝ կոմունիստական կուսակցության տեսությունը և ծրագիրը ազգային հարցի վերաբերյալ: Այդ ծրագիրը ելնում է նրանից, որ անհրաժեշտ է պրոլետարիատի հեղափոխական պայքարի միջոցով վճռականորեն և լիովին ոչնչացնել ամեն տեսակի ազգային ու ռասայական ճնշում, ազգերի միջև հաստատել իրավահավասարություն, իրագործել ազգերի ինքնորոշում ընդհուպ մինչև ինքնուրույն ազգային պետություն կազմելը:

Կոմունիստական կուսակցության ստեղծման և սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման, նրա իրականացման համար մղվող պայքարի առաջին իսկ շրջանից Վ. Ի. Լենինը առանձնահատուկ խորությամբ ու պարզությամբ ընդգծեց ռուսական պրոլետարիատի գլխավորությամբ երկրի դեմոկրատական բոլոր ուժերի, բոլոր ազգերի ու ժողովուրդների բանվորների ու գյուղացիների ինտերնացիոնալ համախմբվածության, բանվոր դասակարգի դեկավարությամբ իրենց ազատության ու անկախության համար շահագործողների տիրապետության դեմ նրանց միասնական պայքարի անհրաժեշտությունը և կարևորությունը: Դեռևս 1894 թ. այդ մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Հենց բանվորների դասակարգի վրա են դարձնում սոցիալ-դեմոկրատներն իրենց ամբողջ ուշադրությունն ու իրենց ամբողջ գործունեությունը: Երբ նրա առաջավոր ներկայացուցիչները կյուրացնեն գիտական սոցիալիզմի իդեաները, ռուսական բանվորի պատմական դերի իդեան, երբ այդ իդեաները լայն տարածում կստանան և բանվորների մեջ կստեղծվեն կուռ կազմակերպություններ, որոնք բանվորների այժմյան անջատ-անջատ անտեսական պատերազմը կփոխակերպեն գիտակցական դասակարգային պայքարի,— այն ժամանակ ռուսական բանվորը, բոլոր դեմոկրատական տարրերի գլուխ անցած ոտքի ելնելով կտապալի աբսոլյուտիզմը և ռուսական պրոլետարիատին (բոլոր երկրների պրոլետա-

րիատի հետ կողք-կողքի) բացահայտ հաղաթական պայքարի ուղիղ ճանապարհով կառաջնորդի դեպի հաղթական կոմունիստական հեղափոխությունը»[1]:

Վ. Ի. Լենինի ստեղծած կոմունիստական կուսակցությունը իր գոյության առաջին իսկ շրջանից նշաց աշխատավորներին ամեն տեսակի շահագործումից ազատագրելու ուղին և սկսեց համախմբել նրանց ուժերն այդ ուղիով ընթանալու համար:

Կոմունիստական կուսակցության ազգային ծրագիրը մշակվեց բուրժուական նացիոնալիստների, մենշևիկների, էկոնոմիստների, երկրորդ ինտերնացիոնալի օպորտունիստների և մարքսիզմի մյուս բոլոր թշնամիների դեմ մղված անհաշտ պայքարում: Այդ ծրագիրը ելնում էր նրանից, որ Ռուսաստանում շահագործողների տիրապետության դեմ բանվոր դասակարգի հաղթանակը և իրավազուրկ ժողովուրդների ազատագրումը իմպերիալիզմի լծից անհնարին է առանց բոլոր ազգերի աշխատավորների համախմբման, առանց նրանց միասնական պայքարի՝ ընդդեմ բոլոր շահագործողների: «Պատմական նոր պայմանների համեմատ Լենինը համակողմանիորեն մշակեց ազգային հարցը, առաջ քաշեց ու հիմնավորեց պրոլետարական դասակարգային պայքարը ազգային ճնշման ոչնչացման, սոցիալիզմի համար մղվող պայքարի, սորկացված ժողովուրդների հակաիմպերիալիստական ազատագրական պայքարի հետ միացնելու գաղափարը»[2]:

Կոմունիստական կուսակցությունը ինտերնացիոնալ կուսակցություն է: Նա կառուցվել և աճել է որպես ամեն տեսակի ազգային և սոցիալական ճնշման թշնամի, իր շարքերում միավորելով Ռուսաստանի բոլոր ազգերի ու ժողովուրդների առաջավոր ներկայացուցիչներին: Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Ռուսաստանի բոլոր ազգերի ու ժողովուրդների աշխատավորների համատեղ պայքարը ցարական ինքնակալության դեմ ամրապնդեց այդ ազգերի ու ժողովուրդների բարեկամության հիմքերը:

Ինչպես բնորոշել է Վ. Ի. Լենինը, ցարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ էր: Որպես պրոլետարիատի և նրա հեղափոխական պայքարի ամենաոխերիմ թշնամի, ցարական ինքնակալությունը շարունակ դիմադրում էր նրա միավորմանը և համախմբմանը, դաժան կերպով հալածում էր Ռուսաստանում ապրող այլ ազգերին ու ժողո-

---

1 Վ. Ի. Լենին, *երկեր, հատ. 1, էջ 376:*

2 «Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի թեզիսները», *Երևան, 1970, էջ 15:*

վուրդներին, արհամարհում նրանց կուլտուրան, լեզուն, սովորույթները։ Ցարիզմը նրանց զրկել էր քաղաքական ամենատարրական իրավունքներից, բազմակողմանի շահագործման և ճնշման էր ենթարկում, ժողովուրդների միջև մշտապես սերմանելով անվստահություն և թշնամանք, հաճախ նրանց հրահրելով արյունահեղ ազգամիջյան ընդհարումների, ինչպես այդ տեղի ունեցավ 1905—1907 թթ. Անդրկովկասում։ Ռուս բանվորներն ու գյուղացիները նույնպես շահագործվել, ճնշվել ու հալածվել են ցարական ինքնակալության կողմից, ինչպես երկրի մյուս բոլոր ժողովուրդները։

Ցարական Ռուսաստանի ծայրամասերում, ուր ապրում էին գերազանցապես ոչ ռուս ազգեր ու ժողովուրդներ, հաստատվել էր գաղութային ռեժիմ։ Ազգային որոշ շրջաններում եղած առանձին արդյունաբերական ձեռնարկությունները չէին փոխում այդ շրջանների տնտեսական, քաղաքական և կուլտուրական հետամնացության կերպարանքը։ Այդպիսի ձեռնարկությունների զգալի մասը գտնվում էր օտարերկրյա կապիտալիստների ձեռքում, որոնք անողոքաբար կեղեքում էին տեղական բնակչությանը։

Ցարական Ռուսաստանի ազգային շրջաններում ծայրահեղ հետամնաց էր նաև գյուղատնտեսությունը։ Գյուղում ամենուրեք տիրում էր մասսայական աղքատություն, հողը և հարստությունը գտնվում էին ռուս և մյուս ազգերի կալվածատերերի, կուլակների և վաշխառուների փոքրաթիվ խմբերի ձեռքում։ Աշխատավոր գյուղացիության դրությունն ավելի ու ավելի էր ծանրանում ցարիզմի հարկային քաղաքականության հետևանքով։

Ինչպես դասակարգային, սոցիալական, նույնպես և ազգային ճնշումը կապիտալիզմի անբաժանելի ուղեկիցն է, որն առանձին սրությամբ դրսևորվում է նեոկայսրս իմպերիալիզմի ընդհանուր հակասությունների ծայրահեղ սրման պայմաններում։

Մարքսիզմ-լենինիզմը ուսուցանում է, որ ազգային ճնշման վերացումը հնարավոր է միայն շահագործողների տիրապետության վերացումով, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումով։ Այդ մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Կապիտալիզմի օրով չի կարելի ոչնչացնել ազգային (և առհասարակ քաղաքական) ճնշումը։ Դրա համար անհրաժեշտ է ոչնչացնել դասակարգերը, այսինքն՝ անհրաժեշտ է մտցնել սոցիալիզմ։ Բայց, խարխլելով էկոնոմիկայի վրա, սոցիալիզմը բնավ էլ ամբողջապես չի հանգում էկոնոմիկային։ Ազգային ճնշումը վերացնելու համար անհրաժեշտ է ֆունդամենտ—սոցիալիստական արտադրություն, բայց

այդ ֆունդամենտի վրա անհրաժեշտ է ունենալ նաև պետության դեմոկրատական կազմակերպություն, դեմոկրատական բանակ և այլն»[3]։

Առաջնորդվելով լենինյան դրույթներով, ցարական Ռուսաստանի ճնշված և իրավազուրկ ժողովուրդները համախմբվեցին ռուս մեծ ժողովրդի, նրա հեղափոխական բանվոր դասակարգի շուրջը, ավելի համբարպնդեցին դարերի խորքում սկիզբ առած իրենց բարեկամությունը և կոմունիստական կուսակցության գլխավորությամբ հասան իրենց ազգային ու սոցիալական ազատագրությանը։

XX դարի սկզբին իմպերիալիզմի ամբողջ սիստեմի հակասությունները միահյուսվեցին Ռուսաստանում։ Վերջինս դարձավ այդ հակասությունների հանգուցակետը, իմպերիալիզմի սիստեմի ամենաթույլ օղակը։ Հեղափոխական շարժման կենտրոնը Արևմտյան Եվրոպայից փոխադրվեց Ռուսաստան։

Վ. Ի. Լենինի ստեղծած կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ երկրի բանվոր դասակարգը և մյուս աշխատավորները հեղափոխական պայքարի դրոշ բարձրացրին ցարական ինքնակալության դեմ։ Այդ պայքարում ամենահեղափոխական դասակարգի՝ ռուսական պրոլետարիատի շուրջը համախմբվեցին ոչ ռուս ազգերի ու ժողովուրդների բոլոր առաջադեմ, հեղափոխական ուժերը։ Նրանք բարձրացրին 1905—1907 թթ. առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, որը սասանեց ցարական ինքնակալության հիմքերը և հանդիսացավ 1917 թ. հեղափոխական ճակատամարտերի նախերգանքը, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության գլխավոր փուրձը։

Կոմունիստական կուսակցությունը, որը ստեղծվեց մարքսիզմ-լենինիզմի գաղափարական ամուր պատվանդանի վրա, գիտական սոցիալիզմը միացրեց հեղափոխական շարժման հետ և Ռուսաստանի բանվոր դասակարգին ու աշխատավոր գյուղացիությանը պայքարի հաննեց շահագործողների տիրապետությունը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու համար։

Ընդգծելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի մեծագույն նշանակությունը, Վ. Ի. Լենինը գրել է. «Այսուհետև նոր շրջան է սկսվում Ռուսաստանի պատմության մեջ, և տվյալ երրորդ ռուսական հեղափոխությունը վերջին հաշվով պետք է հասցնի սոցիալիզմի հաղթանակին»[4]։

---

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 438։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 284։

Այդ մեծ հեղափոխությունը արմատապես լուծեց նաև ազգային հարցը։ Նա ազատություն և իրավահավասարություն տվեց Ռուսաստանի բոլոր ազգերին ու ժողովուրդներին։ Սկսվեց մեր երկրի ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության նոր շրջանը, երբ նրանց զարգացման և բուռն վերելքի համար ստեղծվեցին բոլոր նախադրյալները։

Հեղափոխության հաղթանակից մեկ շաբաթ հետո, նոյեմբերի 2 (15)-ին Սովետական կառավարությունը ընդունեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որի մեջ շարադրված են սովետական իշխանության ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները։ Այնտեղ ասված է, որ Սովետական կառավարությունը ազգային հարցում իր գործունեության հիմքում դնում է հետևյալ սկզբունքները.

«1. Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունն ու սուվերենությունը.

2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև անջատումն ու ինքնուրույն պետություն կազմելը.

3. Բոլոր և ամեն տեսակի ազգային ու ազգային-կրոնական արտոնությունների ու սահմանափակումների վերացումը.

4. Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների և ազգային խմբերի ազատ զարգացումը»[5]։

Ամբողջությամբ համապատասխանելով անցյալում իրավազուրկ և ճնշված ազգերի կենսական շահերին, այդ Դեկլարացիան գործնականում հաստատեց, որ անհնարին է ազգային ճնշումը վերացնել առանց շահագործող դասակարգերի տիրապետության տապալման, առանց պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման։

Ազգային հարցի վերաբերյալ Սովետական կառավարության մյուս կարևոր փաստաթուղթը ժողովրդական կոմիսարների սովետի՝ «Ռուսաստանի և Արևելքի բոլոր մուսուլման աշխատավորներին» ուղղված դիմումն է, որն ընդունվեց 1917 թ. նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 3-ին)։ Այնտեղ հանդամանորեն ցույց է տրված Հոկտեմբերյան հեղափոխության մեծագույն նշանակությունը մուսուլման աշխատավորության համար։ Դիմումում ասված էր, որ ինչպես մյուս ազգերի, նույնպես և մուսուլման աշխատավորության հավատալիքները և սովորույթները, ազգային և կուլտուրական հաստատությունները ազատ են և անձեռն-

[5] «Образование СССР. Сборник документов. 1917—1924», М.—Л., 1949, стр. 20.

մըխելի, որ բոլոր ժողովուրդների, այդ թվում մուսուլման ժողովուրդների իրավունքները պահպանվում են հեղափոխության ամբողջ հզորությամբ և իշխանության օրգաններով[6]։

Նույն թվականի դեկտեմբերի 29-ին Սովետական կառավարությունը ընդունեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որով արևմտահայության համար սահմանվեց լիակատար անկախություն և ազատ ինքնորոշման իրավունք։ Այդ իրավունքի կենսագործման համար դեկրետով նախատեսվում էին մի շարք երաշխիքներ՝ թուրքական և ռուսական զորքերի դուրս բերում Արևմտյան Հայաստանից, ներքին կարգ ու կանոն ապահովելու համար հայկական ժողովրդական միլիցիայի կազմակերպում, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանից Թուրքիայի խորքերը արտաքսված և փախստական հայերի վերադարձ Արևմտյան Հայաստան և այլն[7]։ Դեկրետի իրականացման հսկողությունը հանձնարարվեց Կովկասի գործերի արտակարգ կոմիսար, վ. ի. Լենինի հավատարիմ զինակից Ս. Գ. Շահումյանին։

Հայ ժողովուրդը մեծ բերկրանքով ու գոհունակությամբ ընդունեց իր պատմական բախտի համար մեծագույն նշանակություն ունեցող՝ «Թուրքահայաստանի մասին» դեկրետը։ Սակայն 1917—1918 թթ. օտարերկրյա իմպերիալիստների հարձակումը Սովետական Ռուսաստանի վրա և ինտերվենցիայի ու քաղաքացիական կռիվների ծավալումը, դրա հետ միասին ներքին հակահեղափոխական, բուրժուա-նացիոնալիստական ուժերի կողմից Անդրկովկասի անջատումը Սովետական Ռուսաստանից, արգելակեցին այդ դեկրետի իրագործումը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության առջև հրամայական խնդիր դրվեց սոցիալիզմի կառուցումն ապահովելու համար համախմբել երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների ուժերը, նախապատրաստել և կազմակերպել նրանց պետական միությունը։ Այդ դժվարին հարցի լուծումը պահանջում էր բազմակողմանիորեն հաշվի առնել երկրի քաղաքական ու տնտեսական զարգացման առանձնահատկությունները, այնտեղ ապրող ազգերի ու ժողովուրդների, բոլոր սովետներն հանրապետությունների կենսական շահերը։

Բազմազգ սոցիալիստական պետության առաջին օրինակը հանդի-

---

6 Նույն տեղում, էջ 21—22։

7 Նույն տեղում, էջ 27—28։

սայալ Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը, որը կազմակերպվեց 1918 թ. հունվարին՝ Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ։ Հենվելով սովետական ազգային ավտոնոմ հանրապետությունների և մարզերի, նրանց աշխատավորների ամուր դաշինքի վրա, Ռուսաստանյան Ֆեդերացիան 1918—1921 թթ. քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի տարիներին ոչ միայն կարողացավ դիմադրել ներքին ու արտաքին թշնամիների ահեղ զրոհներին, այլև գլխովին ջախջախեց նրանց, դուրս շպրտեց մեր երկրի սահմաններից։ Նա անշահախնդիր եղբայրական օգնություն ձեռք մեկնեց իրենց ազգային ու սոցիալական ազատագրության համար պայքարի ելած Ուկրաինայի, Բելոռուսիայի, Անդրկովկասի, Միջին Ասիայի և մեր երկրի մյուս ժողովուրդներին։ Վերջիններս իրենց հերթին եղբայրական օգնություն ցույց տվեցին Սովետական Ռուսաստանին։

Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով և օգտագործելով Ռուսաստանյան Ֆեդերացիայի փորձը, Անդրկովկասի սովետական Հանրապետությունները՝ Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը երկրամասի կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ 1922 թ. մարտին համախմբվեցին Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ։ Այն գոյություն ունեցավ մինչև 1936 թ. և խոշոր դեր կատարեց այդ հանրապետությունների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական բուռն զարգացման գործում։ Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպումը իրագործվեց բուրժուական նացիոնալիստների և մյուս թշնամիների դեմ մղված անհաշտ պայքարում։ Այդ պայքարը գլխավորում էին աննկուն լենինյաններ Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ա. Ֆ. Մյասնիկյանը, Ս. Մ. Կիրովը, Ն. Ն. Նարիմանովը։

1918—1920 թթ. ընթացքում սովետական ազգային հանրապետությունների միջև հաստատվել էին ամուր կապեր, որն արտահայտվեց ամենից առաջ նրանց ռազմաքաղաքական և դիվանագիտական դաշինքի միջոցով։

Դաշինքի այդ ձևերը մեծ դեր խաղացին օտարերկրյա ինտերվենցիայի դեմ մղվող պայքարում և քաղաքացիական կռիվներում մեր ձեռք բերած հաղթանակի գործում։ Սակայն, խաղաղ շինարարության անցնելուց հետո, օբյեկտիվ անհրաժեշտություն առաջացավ ավելի զարգացնել, կատարելագործել դրանք։ Ահա թե ինչու, խոսելով սովետական հանրապետությունների միջև եղած դաշնակցային կապերի մասին, 1920 թ. հունիսին Վ. Ի. Լենինը գրել է. «...Անհրաժեշտ է ձգտել ավելի և ավելի սերտ ֆեդերատիվ միության, նկատի ունենալով, առա-

ջին՝ ամբողջ աշխարհի ռազմական տեսակետից անհամեմատ ավելի զորեղ իմպերիալիստական պետություններով շրջապատված սովետական հանրապետությունների գոյությունը պաշտպանելու անհնարինությունն առանց սովետական հանրապետությունների ամենասերտ դաշինքի. երկրորդ՝ սովետական հանրապետությունների տնտեսական սերտ դաշինքի անհրաժեշտությունը՝ առանց որի անիրագործելի է իմպերիալիզմի կողմից ավերված արտադրողական ուժերի վերականգնումը և աշխատավորների բարեկեցության ապահովումը. երրորդ՝ միասնական, մի ընդհանուր պլանով բոլոր ազգերի պրոլետարիատի կողմից կարգավորվող համաշխարհային տնտեսության՝ որպես ամբողջության ստեղծման տենդենցը, որը միանգամայն ակնհայտորեն դրսևորվել է արդեն կապիտալիզմի օրով և անպայման ենթակա է հետագա զարգացման ու լիակատար ավարտման սոցիալիզմի օրով»[8]: Իսկ դրանից մեկ տարի առաջ, 1919 թ. հուլիսին, մեծ առաջնորդը նշել է, որ սովետական հանրապետությունները «...սկզբում միավորվում են մեկ սոցիալիստական պետության մեջ, հետո Սովետական հանրապետությունների Միության մեջ»[9]: Ըստ որում, Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ այդ միությունը պետք է լինի ազգերի կամավոր միություն, որը պետք է հենվի նրանց սուվերեն իրավահավասարության, լիակատար փոխադարձ վստահության, եղբայրական միասնության և կամավոր համաձայնության վրա[10]:

Դնելով սովետական հանրապետությունների պետական միավորման, նրանց ֆեդերացիայի ստեղծման հարցը, Վ. Ի. Լենինը նշել է, որ իր սկզբունքներով ու նպատակներով այն ֆեդերատիվ պետության նոր ձև է լինելու, որը ոչ մի առնչություն չունի բուրժուական ֆեդերացիայի հետ:

Վ. Ի. Լենինի ցուցումների հիման վրա, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ամբողջ երկրում սկսվեց և լայն ծավալ ընդունեց համաժողովրդական շարժումը Հանուն Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման: Այդ շարժման մեջ էին ընդգրկված բոլոր սովետական հանրապետությունների աշխատավորները:

1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում գումարվեց Սովետների համամիութենական առաջին համագումարը, որտեղ ձևակերպվեց

---

8 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 31, էջ 168:*

9 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 29, էջ 524:*

10 *Տե՛ս* Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 30, էջ 368:*

ՍՍՀՄ-ն։ Նրա մեջ սկզբում մտան չորս հանրապետություն՝ ՌՍՖՍՀ, Ուկրաինան, Անդրկովկասյան ֆեդերացիան և Բելոռուսիան, իսկ հետագայում ընդգրկվեցին նոր հանրապետություններ։

Հիվանդության պատճառով Վ. Ի. Լենինը ի վիճակի չէր անձամբ մասնակցելու համագումարի աշխատանքներին, բայց նա ուշադիր կերպով հետևում էր համագումարի ընթացքին և ղեկավարում այն։ Համագումարը մեծ առաջնորդին ընտրեց իր պատվավոր նախագահ և ողջույնի հեռագիր ուղարկեց նրան։ Այդ օրերին՝ դեկտեմբերի 30-ին և 31-ին Վ. Ի. Լենինը թելադրեց «Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» նամակը՝ ուղղված կուսակցությանը։ Այդ նամակում տալով պրոլետարական ինտերնացիոնալիզմի խոր վերլուծությունը, նա ընդգծեց, որ անհրաժեշտ է խստիվ պահպանել կուսակցության ծրագրում առաջադրված ազգային հարցի սկզբունքները։ Քննադատելով Ի. Վ. Ստալինի կողմից առաջ քաշված «ավտոնոմիզացիայի» սխալ գաղափարը, Վ. Ի. Լենինը սովետական հանրապետությունների պետական միավորման միակ ճիշտ ձևը համարեց ազգային սովետական հանրապետությունների սովերեն իրավահավասարության հիման վրա ստեղծված պետական միությունը, որը և կազմակերպվեց այդ օրերին։

Սովետական Միության ստեղծումը հանդիսացավ կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության նոր, փայլուն հաղթանակը։ Ինչպես նշել է ընկ. Լ. Ի. Բրեժնևը, «ՍՍՀՄ ստեղծումը մարդկության զարգացման նոր դարագլուխ բացած մեծ Հոկտեմբերի գործի ուղղակի շարունակությունն է, ազատ ազգերի կամավոր դաշինքի վերաբերյալ մեծ Լենինի գաղափարի պրակտիկ մարմնավորումը»[11]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ ստեղծված սովետական ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը, նրանց պետական դաշինքը մեր սոցիալիստական բազմազգ պետությանը տալիս են հսկայական ուժ ու կենսունակություն։ Կոմունիստական կուսակցությունը կուռել և անդադրում ամրապնդում է սովետական ժողովուրդների բարեկամությունը, անողոքաբար մերկացնելով և ջախջախելով նացիոնալիզմի, շովինիզմի և կոսմոպոլիտիզմի յուրաքանչյուր արտահայտություն, սիստեմատիկ աշխատանք տանելով սովետական մարդկանց ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու համար։

---

11 Լ. Ի. Բրեժնև, *Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության հիսնամյակի մասին*, Երևան, 1973, էջ 3։

Հեռատեսականորեն իրագործելով Սովետական Միության ժողովուրդների սուվերեն իրավահավասարության և եղբայրական համագործակցության լենինյան սկզբունքը, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո կոմունիստական կուսակցությունը խնդիր դրեց կարճ ժամանակամիջոցում հասնել սովետական ժողովուրդների հավասարությանը տնտեսական, քաղաքական և կուլտուրական բնագավառներում: Այդ նպատակով անհրաժեշտ էր բալմակողմանի օգնություն կազմակերպել մեր երկրի այն բոլոր ժողովուրդներին, որոնք երկար ժամանակ ճնշվել և կեղեքվել էին ցարական Ռուսաստանի տիրապետող դասակարգերի և օտարերկրյա բուրժուազիայի կողմից:

Ազգային հարցի վերաբերյալ բանաձևում ՌԿ(բ)Կ X համագումարը (1921 թ. մարտ) նշեց, որ կուսակցության խնդիրն է «օգնել ոչ-վելիկոռուս ժողովուրդների[12] աշխատավոր մասսաներին հասնելու առաջ անցած կենտրոնական Ռուսաստանին»[13]:

Կոմունիստական կուսակցությունը և նրա առաջնորդ Վ. Ի. Լենինը ռուսական պրոլետարիատի, ռուս մեծ ժողովրդի առջև խնդիր դրեցին կազմակերպել այդ օգնությունը, ազգային հանրապետություններում լայն ճակատով ծավալել սոցիալիստական շինարարությունը: Եվ այդ դժվարին խնդիրը իրագործվեց հաջողությամբ:

1925 թ. վերջերին արդեն առկա էին ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիստական շինարարության լուրջ հաջողությունները: Այդ ժամանակ երկրի խոշոր արդյունաբերության ընդհանուր արտադրանքը կազմում էր նախապատերազմյան արտադրանքի երեք քառորդը, իսկ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը՝ 87 տոկոսը: Լուրջ հաջողություններ էին ձեռք բերվել ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում և կուլտուրական շինարարության բնագավառում:

Սովետական Միության առաջին հաջողությունների ֆոնի վրա առանձնապես աչքի էին ընկնում ազգային հանրապետությունների հաջողությունները:

Սոցիալիզմի կառուցումը հրամայական անհրաժեշտություն էր առաջացնում ամենակարճ ժամանակամիջոցում երկիրը ևնթարկել ին-

---

12 1921 թ. մեր երկրի բնակչությունը 140 միլիոն էր, որից 65 միլիոնը ոչ ռուսներ էին (տե՛ս «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», I մաս, Երևան, 1954, էջ 713):

13 «ՍՄԿԿ-ն բանաձևերում...», I մաս, էջ 713:

դուստրացման։ Առանց դրսի օգնության, սեփական ուժերով, հսկայածավալ հետամնաց երկրի ինդուստրացումը կապված էր վիթխարի դժվարությունների հետ։ Կոմունիստական կուսակցությունը վճռական հարվածներ հասցնելով բոլոր թշնամիներին, որոնք դեմ էին երկրի ինդուստրացման լենինյան քաղաքականությանը, մեծ հաջողությամբ իրագործեց պատմական այդ խնդիրը, որը սոցիալիզմի կառուցման կարևորագույն պայմանն էր։

Երկրի ինդուստրացման շնորհիվ ազգային բոլոր հանրապետություններում ստեղծվեցին արդյունաբերական խոշոր օջախներ, մեծ չափով զարգացան արտադրողական ուժերը։ Ըստ որում նրանց արդյունաբերության զարգացումն ընթանում էր ավելի արագ տեմպերով, քան կենտրոնական Ռուսաստանում։ Այսպես, եթե 1913 թ. համեմատությամբ 1936 թ. Ռուսաստանյան ֆեդերացիայի արդյունաբերության ընդհանուր արտադրանքը ավելացել էր 7,8 անգամ, ապա Բելոռուսիայում՝ 15,9 անգամ, Վրաստանում՝ 18,5, Կիրգիզիայում՝ 95,0, Տաջիկստանում՝ 116, Հայաստանում 12 անգամ[14] և այլն։ Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Ղազախստանում արդյունաբերություն չի եղել։ Երկրորդ հնգամյակի վերջում այստեղ արդյունաբերության զարգացումը հասել էր այնպիսի աստիճանի, որ նրա արտադրանքը կազմում էր ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի 56,8 տոկոսը։ 1940 թ. Ուզբեկստանում գործում էին նորակառույց 900 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, իսկ Բելոռուսիայում՝ 1700։

Տեղի ունեցավ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում, հաղթանակեց կուլտուրական հեղափոխությունը։ Ստեղծվեցին ազգային սեփական կադրեր կուսակցական և պետական շինարարության, տնտեսության, մշակույթի, գիտության և արվեստի բոլոր բնագավառներում։ Աննախընթաց վերելք ապրեց սովետական ժողովուրդների սոցիալիստական կուլտուրան։

Սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ Սովետական Միությունում ձևավավորվեցին նոր, սոցիալիստական ազգեր, որը արմատական հեղաշրջում էր ազգերի պատմության մեջ, թռիչք հին որակից՝ բուրժուական ազգերից դեպի նոր որակ՝ սոցիալիստական ազգերը։ Այդ տեղի է ունեցել երկու ճանապարհով՝ մի կողմից հին, բուրժուական ազգերի, մյուս կողմից՝ այն ժողովուրդների և ազգագրական խմբերի բազայի

---

14 «Խորհրդային իշխանության 20 տարին»։ Վիճակագրական ժողովածու, Երևան, 1938, էջ 99։

վրա, որոնք մինչև սովետական կարգերի հաստատումը դեռևս չէին ձևավորվել որպես ազգեր։

Սոցիալիստական ազգերի ծագման օբյեկտիվ հիմք են ծառայել այն արմատական քաղաքական, տնտեսական ու կուլտուրական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման շնորհիվ։ Այդ գործում վճռական դեր է խաղացել Կոմունիստական Կուսակցության Լենինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործումը։ Սակայն սոցիալիստական ազգերի ձևավորումը չի կարելի սահմանափակել միայն ազգային հարցի լուծմամբ։ Մարքսիզմ-լենինիզմը ուսուցանում է, որ ազգային հարցը հնթակա է ավելի ընդհանուր և արմատական՝ սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի հարցին։ Այստեղից էլ հասկանալի է, որ Սովետական Միությունում ազգային հարցի լուծումը և սոցիալիստական ազգերի ծագումն ու զարգացումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման արդյունք են։

Սոցիալիստական ազգերի հոգևոր և սոցիալ-քաղաքական կերպարի բնորոշ գծերն են՝ բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինք ազգի ներսում, ազգային ճնշման ոչնչացում, անհաշտ պայքար նացիոնալիզմի և շովինիզմի մնացուկների դեմ, ինտերնացիոնալիզմի և սովետական հայրենասիրության գաղափարների հիման վրա ժողովուրդների անխախտ բարեկամության և համագործակցության հաստատում, միասնական ճակատ կապիտալիստական աշխարհի բոլոր ճնշված և ոչ ազատ ազգերի ու ժողովուրդների հետ՝ ընդդեմ իմպերիալիզմի։

Մինչև 1941 թ., մոտ մեկ քառորդ դարի ընթացքում, ձեռք բերելով վիթխարի հաջողություններ և հիմնականում ավարտելով սոցիալիզմի կառուցումը, Սովետական Միության բոլոր ազգերը, բոլոր ժողովուրդները շարունակում էին սոցիալիստական խաղաղ շինարարության աշխատանքները։ Նրանք ունեին խաղաղ աշխատանքի հետագա ավելի մեծ պլաններ, որոնց նպատակն էր կատարելագործել, ավելի բարձր աստիճանի հասցնել սոցիալիստական հասարակարգը։

Մեր հաջողությունները, եթե մեկ կողմից ոգևորում էին աշխարհի առաջադեմ ուժերին, Սովետական Միության բարեկամներին, ապա մյուս կողմից կատաղեցնում իմպերիալիստական ռեակցիոն ուժերին։ Այդ ուժերը, որոնց չէր հաջողվել Հոկտեմբերյան հեղափոխությունը և պրոլետարիատի դիկտատուրան խեղդել նրա օրորոցում, այժմ մեծ մասըշ-

տաբի ռազմական պլաններ էին մշակում Սովետական Միության ջախջախման համար։ «Ուստի Սովետական Միության զարգացումն ընթանում էր միջազգային բարդ իրադրության մեջ, իմպերիալիստական ագրեսիայի մշտական վտանգի պայմաններում։ Այդ վտանգն առանձնապես ուժեղացավ, երբ Գերմանիայում իշխանությունը զավթեց ֆաշիզմը՝ իմպերիալիզմի առավել ռեակցիոն ու ագրեսիվ ուժերի բացահայտ տեռորիստական ու շովինիստական դիկտատուրան։ Ֆաշիզմն ամրապնդվեց և կարողացավ իրականացնել Գերմանիայի վերազինումը՝ շնորհիվ ամերիկյան ու անգլիական մոնոպոլիստների օգնության, որոնք նրան համարում էին հակակոմունիզմի հարվածային ուժը»[15]։

Ջնայած Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականությանը և բոլոր ջանքերին, գնալով պատերազմի վտանգն ավելի ու ավելի ակնառու էր դառնում։ Ուստի մեր երկիրը հարկադրված էր մեծ միջոցներ հատկացնել իր արևմտյան սահմանների ամրապնդման և կարմիր բանակի հզորացման համար։

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիայի բանակը հարձակվեց ՍՍՀՄ-ի վրա։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի ելավ ֆաշիստական զավթիչների դեմ։

Ազատագրական այդ մեծ պատերազմում Սովետական Միությունը չէր հետապնդում զավթողական ոչ մի նպատակ։ Ահա թե ինչու ֆաշիզմի դեմ ուղղված այդ պատերազմը մեծ պաշտպանություն և աջակցություն գտավ հակաֆաշիստական բոլոր ուժերի կողմից ամբողջ աշխարհում։

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից նոր ուժով և է՛լ ավելի մեծ հզորությամբ դրսևորվեց մեր երկրի ժողովուրդների լենինյան բարեկամությունն ու եղբայրական համագործակցությունը։ Սոցիալիստական բոլոր ազգերը համախմբվեցին կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության շուրջը։ Ֆաշիզմի դեմ մղվող պայքարը դարձավ համաժողովրդական։ Սովետական բոլոր մեծ ու փոքր ազգերը, բոլոր ժողովուրդները ցուցաբերեցին պատմության մեջ չտեսնված համաժողովրդական շահերի պաշտպանություն։ Նրանք հերոսաբար պաշտպանեցին ոչ միայն իրենց ազգային ազատությունն ու անկախությունը, այլև ամբողջ Սովետական Միության, բոլոր ժողովուրդների ազատությունն ու անկախությունը։

---

15 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին», ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի թեզիսները, Երևան, 1967, էջ 23։

Գլխովին ջախջախելով գերմանաֆաշիստական բանակը և պետությունը, ինչպես և ճապոնական միլիտարիստներին, Սովետական Միությունը եղբայրական օգնության ձեռք մեկնեց Եվրոպայի և Ասիայի մի շարք ժողովուրդների, որոնք կանգնեցին դեմոկրատական, սոցիալիստական զարգացման ուղու վրա։ Ստեղծվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը։

Հայրենական մեծ պատերազմում մեր պատմական հաղթանակից հետո նոր էտապ սկսվեց սովետական ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության մեջ։ Ավելի ու ավելի ընդարձակվեցին նրանց տնտեսական ու կուլտուրական կապերը, եղբայրական համագործակցությունը և փոխադարձ օգնությունը։

Դեռևս պատերազմական ծավալուն գործողությունների ժամանակ, սկսած 1943 թ. կեսերից, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը եռանդուն միջոցառումներ ձեռնարկեցին ֆաշիստական օկուպացիայից ազատագրված մարզերի, քաղաքների ու գյուղերի արագ վերականգնման համար։ Այդ աշխատանքների ընդհանուր ուղղությունը և խնդիրները նշվեցին ՀամԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ ժողովրդական Կոմիսարների Սովետի 1943 թ. օգոստոսի 21-ի «Գերմանական օկուպացիայից ազատագրված շրջանների ժողովրդական տնտեսության անհետաձգելի խնդիրների մասին» որոշմամբ։ Դրան հաջորդեցին Պաշտպանության պետական կոմիտեի 1944 թ. մարտի 23-ի՝ Լենինգրադի արդյունաբերության ու քաղաքային տնտեսության վերականգնման և հուլիսի 18-ի՝ Դոնբասի վերականգնման միջոցառումների վերաբերյալ որոշումները[16]։ Հենց պատերազմի ընթացքում սովետական կառավարությունը 18 մլրդ ռուբլի հատկացրեց Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Մոլդավիայի, ՌՍՖՍՀ ազատագրված շրջանների ժողովրդական տնտեսության վերականգնման համար[17]։ Այդ հսկայական գումարը կուտակվել էր բոլոր հանրապետությունների, բոլոր ժողովուրդների միջոցներից։ Բացի դրանից, կարմիր բանակի շարքերից զորացրվեցին զգալի թվով մասնագետներ՝ ազատագրված շրջաններում աշխատելու համար։

Սովետական Միության բոլոր ժողովուրդներն ամենաակտիվ մաս-

---

[16] «Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам», т. 2, М., 1957, стр. 829—834.

[17] «История Великой Отечественной войны Советского Союза, 1941—1945», т. 5. М., 1963, стр. 402.

նակցություն ցուցաբերեցին եղբայրական Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Մոլդավիայի և ՌՍՖՍՀ պատերազմից տուժած մարզերի ժողովրդական տնտեսության վերականգնման գործին։ Ազգային հանրապետություններից այնտեղ մեկնեցին հարյուր հազարավոր աշխատավորներ։ Մեր հայրենիքի բոլոր ծայրամասերից, բոլոր հանրապետություններից դեպի պատերազմից տուժած շրջաններն էին շարժվում հազարավոր ապրանքատար գնացքներ՝ ժողովրդական տնտեսության վերականգնման համար անհրաժեշտ սարքավորումներով, հաստոցներով և շինանյութերով։ Սովետական բոլոր ժողովուրդների եղբայրական ջանքերով արագ կերպով բուժվում էին պատերազմի վերքերը։

Պատմությունը դեռ չէր տեսել այնպիսի օրինակ, երբ պատերազմական գործողություններին զուգընթաց, այդպիսի արագությամբ վերականգնվեին նրա ավերածությունները։

Ինչպես հայտնի է, պատերազմից տուժել էին ոչ միայն թշնամու կողմից գրավված երկրամասերն ու մարզերը, այլև մեր ամբողջ ժողովրդական տնտեսությունը, քանի որ այդ տարիներին նրա զարգացումն ընթացել էր միակողմանի՝ ռազմական պահանջներին համապատասխան և խոշոր անարտադրողական ծախսեր էին կատարվել։

Այդ վնասները արագ կերպով վերականգնելու և սոցիալիստական խաղաղ շինարարությունը լայն ծավալով առաջ տանելու նպատակով հետպատերազմյան տարիներին կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մեծ միջոցառումներ մշակեցին, որոնք արտացոլվեցին ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլաններում։ Չորրորդ հնգամյա պլանը (1946—1950) նախատեսում էր ոչ միայն վերականգնել պատերազմից տուժած մեր սոցիալիստական արդյունաբերությունը և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը, դրանք հասցնել 1940 թ. մակարդակին, այլև զգալիորեն գերազանցել այդ մակարդակը։

Հավաքագրելով իրենց ուժերն ու հնարավորությունները, Սովետական Միության ազգային հանրապետությունները, նրանց բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը հերոսական աշխատանք կատարեցին այդ հնգամյակի առաջադրանքների կատարումն ապահովելու համար։ Արդյունքն այն եղավ, որ չորրորդ հնգամյա պլանի առաջադրանքներն արդյունաբերության բնագավառում կատարվեցին 4 տարի 3 ամսում։ ՍՍՀՄ-ում վերականգնվեցին և նոր կառուցվեցին արդյունաբերական 6000 ձեռնարկություններ։ Ան-

նախընթաց զարգացում ապրեց ծանր արդյունաբերությունը, որի շնորհիվ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը շարունակեցին արագ թափով զինվել հայրենական ժամանակակից տեխնիկայով։

Հետագա նոր հաջողություններ ձեռք բերվեցին հինգերորդ հնգամյա պլանի (1951—1955) կատարման համար մղված պայքարում։ Արդյունաբերության բնագավառում այդ հնգամյա պլանի կատարումն ավարտվեց 1955 թ. ապրիլին, այսինքն 4 տարի 4 ամսում։

Սովետական ժողովուրդների եղբայրական համագործակցության և ժողովրդի հերոսական աշխատանքի շնորհիվ խոշոր հաջողություններ ձեռք բերվեցին նաև վեցերորդ հնգամյակի (1956—1960) առաջին երեք տարիներին։

Սովետական Միության զարգացման ընդհանուր ֆոնի վրա ավելի ակնառու էին ազգային հանրապետությունների էկոնոմիկայի զարգացման արագ տեմպերը։ Այսպես, եթե 1940 թ. համեմատությամբ Սովետական Միության արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1955 թ. աճել էր 320 տոկոսով, ապա Ղազախստանում այն ավելացել էր 420, Լիտվայում՝ 495, Մոլդավիայում՝ 483, Լատվիայում՝ 588, Էստոնիայում՝ 670, Հայաստանում՝ 471 տոկոսով[19] և այլն։ Իսկ 1914 թ. համեմատությամբ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1955 թ. ավելացել էր՝ Ուկրաինայում՝ 16, Բելոռուսիայում՝ 19, Ղազախստանում՝ 33, Վրաստանում՝ 27, Ադրբեջանում՝ 12, Կիրգիզիայում՝ 38, Հայաստանում՝ 41 անգամ[20]։

Սովետական Միությունը և նրա մեջ մտնող բոլոր ազգային հանրապետությունները հետագա նոր հաջողությունների հասան ՍՄԿԿ XX համագումարի (1956) որոշումների կենսագործման համար մղած պայքարում։ Ամփոփելով այդ պայքարի արդյունքները, 1959 թ. կուսակցության XXI արտահերթ համագումարը նշեց, որ Սովետական Միությունում սոցիալիզմը հաղթանակել է լիովին ու վերջնականապես։ Սոցիալիզմի լիակատար ու վերջնական կառուցումը, մեր երկրի բազմազգ և բազմամիլիոն ժողովրդի համաշխարհային-պատմական սխրագործությունն է, որին նա հասավ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։ Սկսվեց սովետական հասարակության առաջընթացի նոր՝ զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանը։

1961 թ. ՍՄԿԿ XXII համագումարը ընդունեց կուսակցության նոր

---

19 «Народное хозяйство СССР». Статистический сборник. М., 1956, стр. 61.

20 Նույն տեղում։

ծրագիրը, մեր երկրում կոմունիզմի կառուցման ծրագիրը, ուր ասված է. «Կոմունիստական հասարակարգի կառուցումը դարձել է սովետական ժողովրդի անմիջական գործնական խնդիրը: Սոցիալիզմի աստիճանական վերաճումը կոմունիզմի՝ օբյեկտիվ օրինաչափություն է. այդ վերաճումը նախապատրաստված է սովետական սոցիալիստական հասարակարգի ամբողջ նախընթաց զարգացումով»[21]: Կուսակցությունը սահմանեց կոմունիզմի կառուցման հիմնական խնդիրները տվյալ ժամանակաշրջանում: Դրանք են՝ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, սոցիալիստական հասարակական հարաբերությունների հետագա զարգացումը և կատարելագործումը, սովետական մարդկանց դաստիարակումը կոմունիզմի ոգով:

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ճանապարհին կարևորագույն առաջընթաց քայլ հանդիսացավ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի (1959—1965) հաջող կենսագործումը: Ամփոփելով յոթնամյա պլանի կատարման արդյունքները, կուսակցության XXIII համագումարում (1966) ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվության մեջ ընկ. Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ այդ տարիներին Սովետական Միության ազգային եկամուտն աճել է 53 տոկոսով, իսկ արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալը՝ 84, ժողովրդական տնտեսության հիմնական արտադրական ֆոնդերը՝ 92 տոկոսով: Արդյունաբերությունը թողարկել է 46 միլիարդ ռուբլու արտադրանք[22]: Համագումարը միաժամանակ մեծ գոհունակությամբ ընդգծեց, որ յոթնամյակի տարիներին նորանոր հաջողությունների են հասել ազգային բոլոր հանրապետությունները: Նույն հաշվետվության մեջ ասված է. «Կարելի է առանձին գոհունակությամբ նշել, որ վերջին տարիներս հատկապես շատ բան է արվել, որպեսզի միութենական հանրապետությունների քաղաքական հավասարությունը և ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, որոնք նվաճվել և կոփվել են սոցիալիզմի կառուցման ընթացքում, ամրապնդվեին նրանց տնտեսական զարգացման մակարդակների հավասարեցումով»[23]:

Այդ հաջողություններն ավելի ծավալվեցին ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման ութերորդ (1966—1970) և իններորդ (1971—1975 թթ.) հնգամյա պլանների կատարումով: Ութերորդ հնգամյակի տարիներին «առաջընթաց քայլ կատարից բոլոր հանրապետություննե-

21 «ՍՄԿԿ ծրագիրը», Երևան, 1974, էջ 96:

22 Տե՛ս «ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը», Երևան, 1967, էջ 52:

23 Նույն տեղում, էջ 60:

րի ժողովրդական տնտեսությունը, մեծացավ նրանցից յուրաքանչյուրի ներդրումը համապետական խնդիրների լուծման գործում։ Դա նշանակում է, որ ընդլայնվեց մեր բոլոր ժողովուրդների դաշինքի և եղբայրության տնտեսական հիմքը»[24]։

Սոցիալիզմի հաղթանակի և կոմունիստական շինարարության ծավալման շնորհիվ Սովետական Միությունում առաջացավ մարդկանց պատմական նոր ընդհանրություն՝ սովետական ժողովուրդը։ Այդ նոր ընդհանրության տնտեսական հիմքը արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունն է, քաղաքական հիմքը՝ սովետական պետական հասարակարգը, իսկ գաղափարական հիմքը՝ մարքսիզմ-լենինիզմը։ Սովետական ժողովրդի, որպես պատմական ընդհանրության, բնորոշ գծերն են՝ «նվիրվածությունը կոմունիզմի գործին, սոցիալիստական հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմը, աշխատանքային ու հասարակական-քաղաքական բարձր ակտիվությունը, անհաշտությունը շահագործման ու ճնշման նկատմամբ, ազգային և ռասայական նախապաշարմունքների նկատմամբ, դասակարգային համերաշխությունը բոլոր երկրների աշխատավորության հետ»[25]։

Կոմունիստական կուսակցության ծավալած հսկայական աշխատանքի շնորհիվ գնալով ավելի ու ավելի է ընդարձակվում մեր մեծ հայրենիքի սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների քաղաքական ու աշխատանքային ակտիվությունը, նրանց ստեղծագործական համագործակցությունը, կուլտուրաների փոխազդեցությունը։ Նրանք միասնաբար պայքարում են մեկ նպատակի՝ կոմունիզմի կառուցման համար։

Սովետական ժողովուրդների բարեկամությունը և եղբայրական համագործակցությունը առանձնապես մեծ ուժով է դրսևորվում նրանց միջև ծավալված սոցիալիստական մրցությամբ։ Ավանդաբար միմյանց հետ սոցիալիստական մրցության մեջ են Դոնբասի և Կուզբասի ածխահատները, Խարկովի և Լենինգրադի մեքենաշինարարները, Ադրբեջանի խողովակաշինական գործարանի և Վրաստանի Ռուսթավիի մետաղաձուլական գործարանի բանվորները, Ուկրաինայի մայրաքաղաք Կիևը և Հայաստանի մայրաքաղաք Երևանը, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի մանածագործները և այլն։ Նույնպիսի մրցություն է ծավալված սոցիալիստական գյուղատնտեսության և ժողովրդական տըն-

24 «ՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 45—46։

25 «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 50-ամյակի նսխասպատրաստության մասին», ՄԿԿ կենտկոմի որոշումը, էջ 21։

տեսության մյուս ճյուղերի, գիտության ու կուլտուրայի աշխատողների միջև։

Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ միութենական բոլոր հանրապետություններում ստեղծվել և բեղմնավոր աշխատանք են կատարում այդ հանրապետությունների գիտությունների ակադեմիաները, որոնք ռուս գիտնականների օգնությամբ ձևեցրել են իրենց ազգային կադրերը։ 1966 թ. ՍՍՀՄ-ում գիտության բնագավառում աշխատում էր 712,4 հազար մարդ, որից 27.098-ը՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայում 7.874-ը՝ Ուկրաինայի գիտությունների ակադեմիայում, 2.332-ը՝ Բելոռուսիայի գիտությունների ակադեմիայում, 2.787-ը՝ Ուզբեկստանի գիտությունների ակադեմիայում, 2.600-ը՝ Ղազախստանի գիտությունների ակադեմիայում, 3.463-ը՝ Վրաստանի գիտությունների ակադեմիայում, 2.834-ը՝ Ադրբեջանի գիտությունների ակադեմիայում, 1.722-ը՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայում[26] և այլն։

Մեր երկրում հաղթանակել է կուլտուրական հեղափոխությունը։ Սովետական իշխանության տարիներին 48 ազգերի ու ժողովուրդների համար ստեղծված է գիր և գրականություն։ Վաղուց հիմնովին վերացված է անգրագիտությունը, մինչդեռ նախասովետական Ռուսաստանի բնակչության համարյա երեք քառորդը անգրագետ էր, իսկ հեռավոր հյուսիսի և Միջին Ասիայի բնակչությունը խարխափում էր համատարած անգրագիտության մեջ։

Սովետական Միության և նրա մեջ մտնող ազգային հանրապետությունների էկոնոմիկայի բուռն զարգացման հետ միասին, աննախընթաց վերելք է ապրել այդ հանրապետությունների մշակույթը։ Լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ «ապահովվել է բոլոր ազգերի ու ազգությունների փաստական հավասարությունը հասարակության կյանքի բոլոր ոլորտներում, ծաղկել է ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, հաստատվել է աշխատավոր մարդկանց իսկական եղբայրություն՝ անկախ նրանց ազգությունից, եղբայրություն, որը զոդված է արմատական շահերի, նպատակների և մարքս-լենինյան գաղափարախոսության ընդհանրությամբ»[27]։

---

26 «Страна Советов за 50 лет». Сборник статистических материалов, М., 1967, стр. 283—285.

27 «ՍՄԿԿ կենտկոմի 1977 թ. հունվարի 31-ի որոշումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին», Երևան, 1977, էջ 11։

Սովետական Միությունում հսկայական ծավալ է ընդունել հրատարակչական գործը։ Բացի միութենական բազմաթիվ հրատարակչություններից, յուրաքանչյուր ազգային հանրապետություն ունի իր տարբեր հրատարակչությունները։ Մեր երկրում գրքեր, ամսագրեր և թերթեր հրատարակվում են ավելի քան 122 լեզուներով։ Գիրքը և դիտության նորագույն նվաճումները դարձել են կոմունիզմ կառուցող մարդկանց սեփականությունը, նրանց ստեղծագործական աշխատանքի աղբյուրը։ Հրատարակչական գործի մեծ հաջողությունների մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը։ Եթե 1913 թ. ցարական Ռուսաստանում լույս տեսած գրքերի տպաքանակը կազմել է 99 միլիոն, ապա 1966 թ. Սովետական Միությունում այն հասել էր 1.260 միլիոնի, թերթերի և ամսագրերի տպաքանակը համապատասխանաբար՝ 117 միլիոնից հասել էր 1.956 միլիոնի[28]։ Ըստ որում այդ թվերը հսկայական չափով աճել են ազգային հանրապետություններում։

ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեն և Սովետական կառավարությունը շարունակում են ավելի ու ավելի մեծ ուշադրություն դարձնել ազգային հանրապետությունների էկոնոմիկայի ու կուլտուրայի հետագա զարգացման, աշխատավորների կենսական մակարդակի բարձրացման հարցերի վրա։ Դրա փայլուն օրինակներից է ընկ. Լ. Ի. Բրեժնևի նախաձեռնությամբ ՍՄԿԿ կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1975 թ. ապրիլին ընդունած որոշումը «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման միջոցառումների մասին»։

Հանրապետության աշխատավորները մեծ ոգևորությամբ ընդունեցին Հայաստանի համար պատմական նշանակություն ունեցող կուսակցության կենտկոմի և Սովետական կառավարության այդ որոշումը և այժմ հերոսաբար պայքարում են նրա կենսագործման համար։

Կոմունիստական կուսակցությունը մշտապես մեծ ուշադրություն է դարձրել և այժմ էլ դարձնում է աշխատավորության հայրենասիրական դաստիարակության, ինտերնացիոնալիստական գիտակցության ամրապնդման վրա։ Ինչպես նշվեց ՍՄԿԿ XXV համագումարում, այդ տեսակետից հսկայական դեր խաղացին ՍՍՀՄ-ի կազմավորման հիսնամյակի և Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի երեսնամյակի տոնակատարությունները[29]։

---

28 «Страна Советов за 50 лет», стр. 290.

29 Տե՛ս Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցու-

Մեր սոցիալիստական մեծ հայրենիքի՝ Սովետական Միության ու նրա մեջ մտնող բոլոր հանրապետությունների հետագա բուռն զարգացում է նախատեսված տասներորդ հնգամյա պլանով (1976—1980), որի դիրեկտիվները հաստատվեցին ՍՄԿԿ XXV համագումարում։ Մեծ միջոցառումներ են կենսագործվելու աշխատավորների նյութական կենսամակարդակի հետագա բարձրացման, կապիտալ շինարարության, կուլտուրայի և գիտության զարգացման բնագավառներում[30]։

Պայքարելով տասներորդ հնգամյակի խնդիրների կենսագործման համար, մեր երկրի աշխատավորները նրա առաջին տարում՝ 1976 թ., հասան կարևոր արդյունքների։ Այդ ցույց է տալիս, որ սովետական մարդկանց հերոսական աշխատանքի շնորհիվ այս հնգամյա պլանը ևս կկատարվի հաջողությամբ։

Սովետական մեծ հայրենիքի բոլոր հաջողությունների ու հաղթանակների, ազգերի զարգացման, ժողովուրդների անխախտ բարեկամության և համագործակցության ամրապնդման բնագավառում առաջատար դեր է կատարել ռուս մեծ ազգը, որը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ առաջինը բարձրացրեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթական դրոշը։ Մեր պատմական հաջողությունների ու հաղթանակների գործում նա ունի ամենից մեծ ներդրումը։ Ջինված մարքսիզմ-լենինիզմի անհաղթ ուսմունքով, Ռուսաստանի հեղափոխական բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, իր շուրջը համախմբելով երկրի բոլոր հեղափոխական ուժերին, բոլոր ազգերի աշխատավորներին, կատարեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։

Արմատապես լուծելով ազգային հարցը և լայն չափով նպաստելով մեր երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական բուռն զարգացմանը, կոմունիստական կուսակցությունը ներկայումս էլ մեծ ուշադրություն է դարձնում մեր երկրում ազգային հարցի վրա, քանի որ «ազգային հարաբերությունները հասուն սոցիալիզմի հասարակության մեջ էլ մի այնպիսի իրողություն են, որը մշտապես զարգանում է, առաջադրում նոր պրոբլեմներ ու խընդիրներ։ Կուսակցությունը մշտապես այդ հարցերը պահում է տես-

---

թյան հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում (զեկուցում ՍՄԿԿ XXV համագումարում, 1976 թ. փետրվարի 24-ին), Երևան, 1976, էջ 123—124։

30 *«ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմնական ուղղություններըե», Երևան, 1975, էջ 27, 107, 109, 111—112, 114—115։*

պաշտում, ժամանակին լուծում դրանք՝ ելնելով ամբողջ երկրի և յուրաքանչյուր առանձին հանրապետության շահերից, կոմունիստական շինարարության շահերից»[31]։ Կուսակցությունը միաժամանակ չի մոռանում, որ «նացիոնալիստական նախապաշարումները, ազգային ղպացումների ուռճացված կամ խեղաթյուրված դրսևորումը, չափազանց կենսունակ, քաղաքականապես ոչ բավական հասուն մարդկանց հոգեբանության մեջ համառորեն պահպանվող երևույթ են»[32], որ նացիոնալիստական միտումները հաճախ միահյուսվում են տեղայնության հետ, որ նացիոնալիստական մնացուկների բորբոքմանը նպաստում է դրսից մղվող բուրժուական պրոպագանդան։ Հաշվի առնելով այդ, կոմունիստական կուսակցությունը ինչպես միշտ, նույնպես և ներկայումս առանձնահատուկ ուշադրություն է դարձնում կոմունիզմ կառուցող մարդկանց ինտերնացիոնալիզմի, սովետական հայրենասիրության ու ժողովուրդների բարեկամության ու եղբայրական համագործակցության ոգով դաստիարակելու հարցերի վրա, անհաշտ պայքար տանելով բուրժուական նացիոնալիզմի և շովինիզմի արտահայտության յուրաքանչյուր դրսևորման դեմ։

Սովետական Միությունում ազգային հարցի լուծման բազմահարուստ փորձը ունի միջազգային խոշոր նշանակություն։ Այն ներկայումս դարձել է սոցիալիստական լագերի երկրների սեփականությունը և հաջողությամբ իրագործվում է նրանց մոտ։ Այդ փորձը փայլուն օրինակ է իրենց սոցիալական ու ազգային անկախության համար պայքարող բոլոր երկրների ժողովուրդների համար։

---

31 Լ. Ի. Բրեժնև, *Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Հիսնամյակի մասին*, էջ 36։

32 Նույն տեղում, էջ 37։

բամասի և ռազմաճակատի զինվորական կազմակերպությունների կոնֆերանսը կոչով դիմում է զինվորներին՝ հանդես գալու Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանությամբ[3]։

Հոկտեմբերի 27-ին Թիֆլիսում տեղի է ունենում աշխատավորության երկհազարանոց ժողով, որը բանաձև է ընդունում պաշտպանել սովետական իշխանությունը և անհապաղ վերընտրել բանվորների ու զինվորների դեպուտատների Թիֆլիսի Սովետը, հրավիրել Կովկասյան բանակի համագումար և զինել անզեն զորամասերին, վերջ տալ հեղափոխությանը նվիրված զորամասերի զինաթափմանն ու արձակմանը։ Հաջորդ օրը Թիֆլիսի կայազորի հեղափոխականորեն տրամադրված զորամասերը կազմում են պատգամավորական ժողով, որը բոլշևիկների ղեկավարությամբ պարտավորվում է ամեն տեսակի օգնություն ցույց տալ Ժողովրդական Կոմիսարների Սովետին։ Պատգամավորական ժողովը փաստորեն Թիֆլիսի զինվորական դեպուտատների առաջին բոլշևիկյան Սովետն էր։

Նոյեմբերի 3-ին Անդրկովկասի երկաթուղու գլխավոր արհեստանոցների բանվորները իրենց պատրաստակամությունն են հայտնում պրոլետարական հեղափոխության ավանգարդի՝ Ռուսաստանի բանվորների հետ միասին պաշտպանել Ժողովրդական Կոմիսարների Սովետը հակահեղափոխական բուրժուազիայի ու կալվածատերերի դեմ։ Նույն օրը Կարսի զինվորների ժողովը լսելով Բագրատ Բորյանի զեկուցումը «Ընթացիկ մոմենտի և բոլշևիկների տակտիկայի մասին» ողջունում է հեղափոխության հաղթանակը Պետրոգրադում և հայտարարում սովետական իշխանությունը լիովին պաշտպանելու մասին։ Զինվորները բողոքում էին բուրժուական մամուլի կողմից բոլշևիկների հասցեին տարածվող զրպարտիչ հերյուրանքների դեմ։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հնագույն գործիչ Բագրատ Բորյանը որպես կուսակցության Կենտկոմի ներկայացուցիչ, հոկտեմբերյան օրերին շրջագայում է Կովկասի բազմաթիվ քաղաքներում՝ Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Ելիզավետպոլում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում և այլն, օգնում է տեղական կազմակերպություններին և գործերի վիճակի մասին զեկուցագրեր, նամակներ է ուղարկում Կենտկոմին, անձամբ Վ. Ի. Լենինին[4]։

---

3 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում»։ Փաստաթղթերի և նյութերի ժողովածու։ ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960, էջ 110։

4 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 2, св. 15, ед. хр. 163, л. 15.

բությամբ հեղափոխական շարժումների բովում կոփված Բաքվի բազմազգ պրոլետարիատը։

1917 թ. հոկտեմբերի 27-ին ՌՍԴԲԿ(բ) Բաքվի կոմիտեն քաղաքի բանվորներին դիմում է հատուկ կոչով, որի մեջ նրանց հայտնելով Պետրոգրադում տեղի ունեցող իրադարձությունների վիթխարի պատմական նշանակությունը, առաջարկում է պաշտպանել հեղափոխությունը, ամբողջ իշխանությունը տալ սովետներին։ Նույն օրը Բաքվի սովետի ընդլայնված նիստում քննարկվում է Պետրոգրադում տեղի ունեցած իրադարձություններին վերաբերմունք ցույց տալու հարցը։ Հակառակ էսեռա-մենշևիկյան-դաշնակցական բլոկի, որը հանդես էր գալիս սովետական իշխանության դեմ, բոլշևիկները պահանջում են ամբողջ իշխանությունը հանձնել Սովետներին։

Բաքվի Սովետի նոյեմբերի 2-ի նիստում ընտրվում է Գործադիր կոմիտեի նոր կազմ, որի մեջ մտնում են Ս. Շահումյանը, Ա. Ջապարիձեն, վ. Ֆիոլետովը, Ս. Էֆենդիևը, Մ. Բասինը, Ի. Վացեկը, Մ. Վեղիրովը և ուրիշներ։ Սովետի Գործկոմի նախագահ կրկին ընտրվում է Ս. Շահումյանը, որը Գործկոմի անունից դիմելով Բաքվի բանվորներին և ամբողջ բնակչությանը, հայտարարում է Պետրոգրադում հեղափոխության հաղթանակի, վ. Ի. Լենինի գլխավորությամբ ժողկոմսովետի ստեղծման ու նրա դեկրետների մասին և կոչ անում ամեն կերպ աջակցել Սովետների իշխանությանը։ «Բոլորը,— ասված էր կոչում,— ովքեր ժողովրդի բարիքը և հյուծված ու տանջված երկրում ամենաարագ կերպով խաղաղություն ու կարգ հաստատել են ցանկանում, պետք է անհապաղ ու վճռականորեն անցնեն նոր կառավարության, Լենինի գլխավորած Ժողովրդական Կոմիսարների կառավարության կողմը»[2]։

Բաքուն դառնում է պրոլետարական հեղափոխության միջնաբերդը, առաջին սովետական քաղաքը Անդրկովկասում, որի օրինակով երկրամասի տարբեր քաղաքների ու գյուղերի բանվորները, զինվորներն ու աշխատավոր գյուղացիները իրենց անհողդողդ կամքն են արտահայտում Ռուսաստանի աշխատավորության հետ, կրծքով պաշտպանելու սովետական իշխանությունը հակահեղափոխական ուժերի հարձակումներից։ Ի պաշտպանություն Սովետական կառավարության և նրա ղեկավար Վ. Ի. Լենինի, մխիթարներ, ժողովներ, ելույթներ են տեղի ունենում Թիֆլիսում, Երևանում, Բաթումում, Քութայիսիում, Ալեքսանդրապոլում, Շուշիում, Ալավերդում, Ադդանում և այլ վայրերում։

Հոկտեմբերի վերջին բոլշևիկների կուսակցության Կովկասյան երկ-

2 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, Երևան, 1958, էջ 18։

բամասի և ռազմաճակատի զինվորական կազմակերպությունների կոնֆերանսը կոչով դիմում է զինվորներին՝ հանդես գալու Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանությամբ[3]։

Հոկտեմբերի 27-ին Թիֆլիսում տեղի է ունենում աշխատավորության երկհազարանոց ժողով, որը բանաձև է ընդունում պաշտպանել սովետական իշխանությունը և անհապաղ վերընտրել բանվորների ու զինվորների դեպուտատների Թիֆլիսի Սովետը, հրավիրել Կովկասյան բանակի համագումար և զինել անզեն զորամասերին, վերջ տալ հեղափոխությանը նվիրված զորամասերի զինաթափմանն ու արձակմանը։ Հաջորդ օրը Թիֆլիսի կայազորի հեղափոխականորեն տրամադրված զորամասերը կազմում են պատգամավորական ժողով, որը բոլշևիկների ղեկավարությամբ պարտավորվում է ամեն տեսակի օգնություն ցույց տալ ժողովրդական Կոմիսարների Սովետին։ Պատգամավորական ժողովը փաստորեն Թիֆլիսի զինվորական դեպուտատների առաջին բոլշևիկյան Սովետն էր։

Նոյեմբերի 3-ին Անդրկովկասի երկաթուղու գլխավոր արհեստանոցների բանվորները իրենց պատրաստակամությունն են հայտնում պրոլետարական հեղափոխության ավանգարդի՝ Ռուսաստանի բանվորների հետ միասին պաշտպանել ժողովրդական Կոմիսարների Սովետը հակահեղափոխական բուրժուազիայի ու կալվածատերերի դեմ։ Նույն օրը Կարսի զինվորների ժողովը լսելով Բագրատ Բորյանի զեկուցումը «Ընթացիկ մոմենտի և բոլշևիկների տակտիկայի մասին» ողջունում է հեղափոխության հաղթանակը Պետրոգրադում և հայտարարում սովետական իշխանությունը լիովին պաշտպանելու մասին։ Զինվորները բողոքում էին բուրժուական մամուլի կողմից բոլշևիկների հասցեին տարածվող զրպարտիչ հերյուրանքների դեմ։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հնազույն գործիչ Բագրատ Բորյանը որպես կուսակցության Կենտկոմի ներկայացուցիչ, հոկտեմբերյան օրերին շրջագայում է Կովկասի բազմաթիվ քաղաքներում՝ Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Ելիզավետպոլում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում և այլն, օգնում է տեղական կազմակերպություններին և գործերի վիճակի մասին զեկուցագրեր, նամակներ է ուղարկում Կենտկոմին, անձամբ Վ. Ի. Լենինին[4]։

---

3 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում»։ Փաստաթղթերի և նյութերի ժողովածու։ ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960, էջ 110։

4 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 2, св. 15, ед. хр. 163, л. 15.

Այդ օրերին, «Կավկազսկի ռաբոչի» թերթում տպագրված իր հոդվածներից մեկում Սարիղամիշի բոլշևիկների ղեկավար Ս. Ալավերդյանը գրում էր Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության համաշխարհային պատմական նշանակության մասին[5]։ Բաքվում տեղի ունեցած ադրբեջանական աշխատավորության միտինգում Մ. Վեզիրովը հայտարարում է. «Մուսուլմանական Արևելքի համար ազատության արևը ծագում է Ռուսաստանում, Պետրոգրադում և մեր սրբազան պարտքն է պաշտպանել Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատիան և նրա իշխանությունը»[6]։

Նոյեմբերի 10-ին Ալեքսանդրապոլի կայազորի զինվորների և քաղաքի աշխատավորների բազմահազարանոց ցույցի մասնակիցները, լսելով զեկուցում ընթացիկ մոմենտի մասին, մեծ ոգևորությամբ ողջունում են Վ. Ի. Լենինին, Պետրոգրադի բանվորներին, երդվում են պնդքը ձեռքերին պաշտպանել նորաստեղծ բանվորա-գյուղացիական կառավարությունը, վճռական հակահարված տալ հակահեղափոխական ուժերին։

Նոյեմբերի 11-ին ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան Երկրային կոմիտեն հանդես գալով հատուկ դեկլարացիայով Անդրկովկասում իշխանության կազմակերպման հարցի մասին, նշում էր, որ ինքը ամբողջովին կանգնած է Սովետների երկրորդ համագումարի և Ժողովրդական Կոմիսարների Սովետի դիրքերի վրա, որ տեղական սովետները կազմելով մեկ երկրային կենտրոն, պետք է ենթարկվեն համագումարի և նրա կողմից ընտրված օրգանների որոշումներին, մնան որպես Ռուսաստանի կենտրոնական իշխանության տեղական ու անբաժանելի մասերը։

Անդրկովկասի հեղափոխական մասսաները բոլշևիկների ղեկավարությամբ մեծ աշխատանք տարան մերկացնելու մենշևիկներին, էսեռներին, դաշնակցականներին ու մուսավաթականներին, որոնք աշխատում էին ամեն կերպ օգտագործել սովետական իշխանության ամրապնդման համար մղված պայքարի դժվարությունները, Վ. Ի. Լենինի և նրա կողմնակիցների դեմ հարձակումներն ուժեղացնելու համար։

Սովետական իշխանության, լենինյան կառավարության միջոցառումների պաշտպանությամբ հանդես են գալիս Անդրկովկասի բոլոր ժողովուրդները՝ վրացիները, հայերը, ադրբեջանցիները, ռուսները և մյուսները։

---

5 «Кавказский рабочий», 1917, № 202.

6 «Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане». Документы и материалы, Баку, 1957, стр. 231.

1917 թ. նոյեմբերի 15-ին վրացական մենշևիկները, հայ դաշնակցականները և ադրբեջանական մուսավաթականները ամերիկյան գաղութարարների նախաձեռնությամբ կազմակերպեցին Անդրկովկասյան կոմիսարիատը, իսկ 1918 թ. փետրվարի 10-ին Անդրկովկասյան սեյմը, որոնք վրացական, ադրբեջանական և հայկական, այսպես կոչված, «ազգային խորհուրդների» հետ միասին հակահեղափոխության բլոկ կազմեցին՝ ուղղված Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորների ու աշխատավոր գյուղացիների դեմ։

Անդրկովկասի բոլշևիկները և աշխատավորական մասսաները շարունակում էին հերոսական պայքար մղել սովետական իշխանության համար։ Նրանք վճռական կերպով մերժում են Անդրկովկասյան կոմիսարիատի հակահեղափոխական իշխանությունը և հանդես գալիս ի պաշտպանություն Վ. Ի. Լենինի գլխավորած Սովետական կառավարության, պահանջում են ճանաչել միայն սովետական իշխանությունը։

Բաքվի սովետը բոլշևիկների ղեկավարությամբ չճանաչեց Անդրկովկասյան կոմիսարիատը, այն համարելով շահագործող դասակարգերի հակահեղափոխական օրգան։ «Մենք, բաքվեցիներս,— գրում է Բաքվի Սովետի նախագահ Ս. Շահումյանը «Բակինսկի ռաբոչի» թերթում 1917 թ. նոյեմբերի 18-ին,— ոչ մի լավ բան չունենք սպասելու կովկասյան նոր կառավարությունից։ Այդ կառավարությունը, նախկին «Օզակոմ»-ի նման, Անդրկովկասը կբաժանի երեք ազգային սատրապության՝ Վրաստանը կվերցնեն մենշևիկները, Հայերին կդնեն «դաշնակցություն» կուսակցության տրամադրության տակ, մուսուլմաններին կտրամադրեն մուսուլման նացիոնալիստներին»։ Բայց հեղափոխությունը կշարունակվի Կովկասում,— գրում էր Ս. Շահումյանը,— «Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի հետ համաքայլ ընթացող բանվորներն ու գինվորները պայքարելու են հեղափոխությունը շարունակելու համար, ժողովրդական կոմիսարների իշխանությունը Լենինի գլխավորությամբ ճանաչելու համար, տեղերում բանվորների, գինվորների և գյուղացիների դեպուտատների Սովետների իշխանության համար։ Մենք Կովկասում ճանաչում ենք միայն այն իշխանությունը, որ ստեղծված է Սովետների համագումարում և պատասխանատու է Սովետների երկրային կենտրոնի առաջ»[7]։

1917 թ. դեկտեմբերի 10-ից մինչև 23-ը Թիֆլիսում տեղի է ունենում Կովկասյան բանակի երկրային II համագումարը, որը բոլշևիկնե-

7 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, էջ 22—23։

րի ղեկավարությամբ խիստ դատապարտելով Անդրկովկասյան կոմիսարիատի հակահեղափոխական քաղաքականությունը, վճռականորեն արտահայտվում է երկրամասում անհապաղ սովետական իշխանություն ստեղծելու օգտին։ Համագումարը հատուկ բանաձև է ընդունում Ժողովրդական Կոմիսարների Սովետին պաշտպանություն ցույց տալու մասին[8]։ Ընտրվում է բանակի երկրային Սովետ և Ռազմա-հեղափոխական կոմիտե՝ անվանի բոլշևիկ Գ. Ն. Կոբզանովի գլխավորությամբ։

Վ. Ի. Լենինը և կուսակցության կենտրոնական կոմիտեն ամենայն ուշադրությամբ հետևում էին Անդրկովկասում ծավալվող իրադարձություններին, ղեկավար ցուցումներ էին տալիս, օգնություն կազմակերպում սովետական իշխանության համար մղվող պայքարը հաջողությամբ ծավալելու համար։

1917 թ. վերջին և 1918 թ. սկզբին Կենտկոմը, Ռուսաստանի Սովետական կառավարությունը և անձամբ Վ. Ի. Լենինը անմիջական կապեր ունեին Անդրկովկասի տասնյակ քաղաքների հետ։ Բաքվի, Թիֆլիսի, Երևանի և այլ քաղաքների հասցեներով ստացվում էին սովետական իշխանության դեկրետները, հրահանգները, նամակները, դրույթյունները և այլն։

1917 թ. դեկտեմբերի 16-ին Ժողովրդական Կոմիսարների Սովետի նիստում քննարկվում է Կովկասում ստեղծված դրության հարցը և որոշվում Բաքվի Սովետի նախագահ Ս. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի արտակարգ կոմիսար։ Այս մասին Վ. Ի. Լենինի ստորագրությամբ մանդատ է տրվում Ս. Շահումյանին, նրա տրամադրության տակ է դրվում 500 հազար ռուբլի։ Սովետական կառավարության մանդատը և դրամը Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Պետրոգրադից Կովկաս է բերում հեղափոխական, լեգենդար հերոս Կամոն։

1917 թ. դեկտեմբերին Ազգությունների գործերի Ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծված մի շարք ազգային կոմիսարիատներ թվում էր նաև հայկական գործերի կոմիսարիատը, որի աշխատանքները անմիջականորեն գլխավորում էին ականավոր պետական գործիչ Վաղրամ Ավանեսովը (Սուրեն Մարտիրոսյան) և բոլշևիկ-պոետ Վահան Տերյանը։ Հայկական գործերի կոմիսարիատը մեծ դեր է կատարում մարքսիստական-լենինյան գաղափարները հայ աշխատավորության մեջ տարածելու, հայ ժողովրդի հեղափոխական ազատագրական պայքարը կազմակերպելու գործում։ Նրա ղեկավարությամբ թարգմանվում

---

8 Տե՛ս «Кавказский рабочий», 1917, № 202.

և լայնորեն տարածվում են Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները, սովետական իշխանության դեկրետները։ 1918 թ. հրատարակվում է «Կոմունիստ» շաբաթաթերթը։ Փորձված ագիտատորներ ու կազմակերպիչներ են ուղարկվում Անդրկովկաս, որոնք մեծ օգնություն են ցույց տալիս տեղական կուսակցական կազմակերպություններին սովետական իշխանության համար մղվող պայքարը կազմակերպելու գործում։

1918 թ. հունվարի 10—18-ը տեղի ունեցավ Սովետների համառուսաստանյան III համագումարը, որն ամրապնդեց Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները։ Համագումարն ընդունեց Վ. Ի. Լենինի գրած «Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան»[9], որը դրվեց սովետական առաջին սահմանադրության (1918) հիմքում։ Լենինյան այդ պատմական փաստաթղթում նշվում էր, որ Ռուսաստանը հայտարարվում է բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների Սովետների հանրապետություն՝ ստեղծված ազատ ազգերի ազատ միության հիմունքով, իբրև Սովետական ազգային հանրապետական ֆեդերացիա։ Դեկլարացիան ողջունում էր ժողովրդական Կոմիսարների Սովետի քաղաքականությունը՝ Ֆինլանդիայի լիակատար անկախության հռչակման, զորքերը Պարսկաստանից դուրս բերելու, Հայաստանի ինքնորոշումը հայտարարելու մասին։

Սովետական իշխանության առաջին իսկ ամիսներին, չնայած երկրի չափազանց ծանր դրությանը, Վ. Ի. Լենինն ընդունում է Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների բազմաթիվ ներկայացուցիչների, զրույցներ է ունենում նրանց հետ, ցուցումներ տալիս և օգնություն կազմակերպում սովետական իշխանության համար մղվող պայքարում։ Անդրկովկասի բոլշևիկները մամուլում և բանավոր ելույթներում ծանոթացնում էին մասսաներին Վ. Ի. Լենինի կենսագրությանը։ Թարգմանում, տպագրում և տարածում էին հեղափոխության առաջնորդի հոդվածները։

Լենինյան ջերմ հոգատարությունը ոգեշնչում է Անդրկովկասի աշխատավորությանը՝ ուժեղացնելու պայքարը հակահեղափոխական նացիոնալիստական բլոկի դեմ։ Այդ պայքարը բոլշևիկների ղեկավարությամբ Անդրկովկասի մի շարք վայրերում ստանում է զինված ապըստամբության բնույթ։ 1917 թ. վերջին Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեն և Սովետը տեղափոխվում են Բաքու, որտեղ

9 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 517—520։

պրոլետարիատն ու կայազորը իշխանությունը վերցրել էին իրենց ձեռքը, ճանաչել ժողովրդական Կոմիսարների Սովետի իշխանությունը։ Մեծ աշխատանք է ծավալվում բանվոր դասակարգի դաշինքը աշխատավոր գյուղացիության հետ ամրապնդելու համար։

1918 թ. սկզբից գյուղացիական ապստամբությունների հզոր ալիքն ընդգրկում է Ելիզավետպոլի, Երևանի նահանգները, Գորիի, Լոռու և այլ շրջանների ադրբեջանցի, վրացի, հայ և այլազգի աշխատավոր գյուղացիությանը, որոնց մեջ Անդրկովկասի բոլշևիկները մեծ աշխատանք են ծավալում։ Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, բոլշևիկների կուսակցության ագրարային ծրագրով, նրանք պարզաբանում էին, որ Անդրկովկասում հողային հարցը կարելի է լուծել միայն հեղափոխության միջոցով՝ հետևելով Սովետական Ռուսաստանի օրինակին։

«Հողային հարցը և գյուղացիական հեղափոխությունը Անդրկովկասում» հոդվածում Ս. Շահումյանը նշում էր, որ «...հողային հարցի լուծումն Անդրկովկասում պետք է տեղի ունենա միայն նույն ճանապարհով, ինչ ճանապարհով դա տեղի ունեցավ Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, որն ամբողջ իշխանությունը հանձնեց բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին և բացեց սոցիալիստական վերափոխությունների դարաշրջանը»[10]։

1918 թ. սկզբին դիմելով ադրբեջանական աշխատավորությանը և նրանց պարզաբանելով սովետական իշխանության քաղաքականությունը, Նարիման Նարիմանովը նշում էր, որ փրկության միակ ելքը նոր կառավարությանը ցույց տրվելիք օգնության մեջ է, Վ. Ի. Լենինի ծրագրի մեջ, պետք է այնպես անել, որ ամենուրեք իշխանությունն անցնի բանվորների և գյուղացիների դեպուտատների Սովետների ձեռքը, միայն նրանք կիրականացնեն Վ. Ի. Լենինի ծրագիրը և կապահովեն հեղափոխության խորացումն ու ամրապնդումը[11]։

1918 թ. հունվար—փետրվար ամիսներին ՌՍԴԲԿ(բ) Բաքվի կոմիտեի օրգան «Բանվորի խոսք» թերթում լույս է տեսնում Վահան Տերյանի «Ինչ է ասել Լենինը գյուղացիներին» հոդվածաշարքը, որտեղ հեղինակը հանրամատչելի ձևով հայ գյուղացիներին բացատրում էր Լենինյան ուսմունքը ագրարային հարցի մասին. «...ժողովուրդը պարզ տեսնում է,— գրում է Տերյանը, որ միակ հավատարիմ բարեկամը, իր

---

10 Ստ. Շահումյան, *երկեր, հատ. 3, էջ 74։*

11 *Տե՛ս* «Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане», стр. 238—242.

շահերի շիտակ ու անվախ պաշտպանը մեծամասնական (բոլշևիկների) Կոմունիստական կուսակցությունն է, որը կոչվ է հայտարարել բոլոր կեղեքիչներին, բոլոր հողատեր ու փողատեր աղաներին, ժողովրդի բոլոր կիզծ ու սուտ բարեկամներին, բոլոր գառան մորթի հագած գայլերին»[12]։

Նկատի ունենալով սովետական իշխանության հաղթանակի համար մղած պայքարի ծանր պայմանները, Վ. Ի. Լենինը Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի բոլշևիկներին խորհուրդ էր տալիս Հոկտեմբերից հետո ստեղծված բարենպաստ պայմանների հմուտ օգտագործման համար մշակել ավելի ճկուն տակտիկա։

1917 թ. դեկտեմբերի 13-ին «Պրավդա»-ում տպագրված սահմանադիր ժողովի մասին թեզիսներում Վ. Ի. Լենինը գրում էր. «Վերջին դեպքերն Ուկրաինայում (մասամբ նաև Ֆինլանդիայում ու Բելոռուսիայում, ինչպես նաև Կովկասում) նմանապես ցույց են տալիս դասակարգային ուժերի այն նոր խմբավորումը, որը տեղի է ունենում մի կողմից՝ Ուկրաինական ռադայի, Ֆինլանդական սեյմի ու դրանց նմանների բուրժուական նացիոնալիզմի և մյուս կողմից՝ այդ ազգային հանրապետությունների յուրաքանչյուրի սովետական իշխանության, պրոլետարական-գյուղացիական հեղափոխության միջև մղվող պայքարի պրոցեսում»[13]։

Որպես Ռուսաստանի Սովետական կառավարության ղեկավար և կուսակցության առաջնորդ, ճնշված ժողովուրդների մեծ բարեկամ Վ. Ի. Լենինն ամեն ինչ արեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթական ելքին արագացնելու համար։

Անդրկովկասը մշտապես ստանում էր Սովետական Ռուսաստանի բազմապիսի աջակցությունը։ Դրա փայլուն վկայություններն էին Վ. Ի. Լենինի ցուցումները, սովետական իշխանության լենինյան դեկրետներն ու որոշումները։ Այս գործում մեծ էր Սովետական Ռուսաստանի ժողովրդական Կոմիսարների Սովետի, Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծված մուսուլմանական գործերի և հայկական գործերի կոմիսարիատների դերը։ Նրանք լայնորեն տարածում էին մարքսիստական-լենինյան դաղափարները հայ և ադրբեջանական աշխատավորության մեջ, կազմակերպում էին նրանց հեղափոխական-ազատագրական պայքարը, նյութական և բարոյական աջակ-

12 Վաճառ Տեր-յան, երկեր, Երևան, 1956, էջ 19։

13 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 26, էջ 463։

ցություն էին ցույց տալիս անդրկովկասյան ժողովուրդներին, Ռուսաստանի տարբեր մասերում գտնվող հայ մասսաներին, Թուրքիայից փախած գաղթականներին։

Միայն 1918—1920 թթ. հայկական գործերի կոմիսարիատը հրապարակել և տարածել է 80 անուն գիրք՝ 422 հազար ընդհանուր տպաքանակով։

1917 թ. վերջին և 1918 թ. սկզբին երկրամասում ստեղծվել էին բարենպաստ պայմաններ սովետական իշխանության հաղթանակի համար։

Սակայն Մեծ Հոկտեմբերի հաղթարշավն Անդրկովկասում հանդիպում է երկրամասի հակահեղափոխական ուժերի և նրանց օտարերկրյա տերերի կատաղի դիմադրությանը։

Օգտվելով Անդրկովկասի ազգաբնակչության խիստ բազմազգ, իր ճնշող մեծամասնությամբ մանրբուրժուական, գյուղացիական կազմից, վրացական մենշևիկները, դաշնակցականները, մուսավաթականները և հեղափոխության մյուս ոխերիմ թշնամիները թունավորում էին աշխատավորության գիտակցությունը նացիոնալիզմի թույնով ու ազգային թշնամություն հրահրում նրանց միջև։ Թշնամական դիրք բռնելով Հոկտեմբերյան հեղափոխության նկատմամբ, բուրժուական նացիոնալիստական կուսակցություններն Անդրկովկասն անջատեցին Սովետական Ռուսաստանից, բարբարոսական հարձակումներ գործեցին այստեղ գտնվող ռուսական զորամասերի վրա և նրանցից հափշտակված զենքով սկսեցին զինել ազգային՝ վրացական, հայկական, ադրբեջանական հակահեղափոխական զորամասերը։ Ինտերնացիոնալ բանակին նրանք հարկադրեցին նացիոնալիստական զորքերը։

1918 թ. հունվարի 24-ին Անդրկովկասյան կոմիսարիատը որոշում է ձերբակալել Ս. Շահումյանին և նրա քարտուղար Ն. Կուզնեցովին։ Մի քանի օր հետո օրդերներ են ստորագրվում Ֆ. Մախարաձեին, Հ. Նազարբեկյանին, Դ. Շահվերդյանին և այլ բոլշևիկ գործիչների ձերբակալելու մասին։ Ձերբակալվում և գնդակահարվում են մի շարք հեղափոխական գործիչներ, փակվում են «Կավկազսկի ռաբոչի», «Բրձոլա», «Բանվորի կռիվը», «Պրավդա ժիզնի» բոլշևիկյան թերթերը։ Փետրվարի 10-ին Թիֆլիսում, Ալեքսանդրյան այգում գաղանաբար գնդակոծվում է աշխատավորների խաղաղ ցույցը, որը բոլշևիկների կոչով հավաքվել էր բողոք հայտնելու Անդրկովկասի նացիոնալիստական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականության դեմ։ Անդրկովկասի մի շարք շրջաններում ռազմական դրություն է մտցվում։

Այս բոլորը նոր վրդովմունք է առաջացնում հեղափոխական բանվորների, զինվորների ու գյուղացիների մեջ։

Անդրկովկասյան կոմիսարիատի այս հանցագործությունների դեմ փետրվարի 11-ին հատուկ թռուցիկ են հրատարակում ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան Երկրային և Թիֆլիսի կոմիտեները, որն ավարտվում էր «Կեցցե Սովետների Համառուսաստանյան Սոցիալիստական Հանրապետությունը» կոչով[14]։

Հակահեղափոխական ուժերի բռնություններն անզոր էին կանխելու Անդրկովկասում ծավալվող հեղափոխությունը, որն ընդգրկում էր բանվորների, զինվորների և գյուղացիների նորանոր մասսաներ, թափանցում նույնիսկ ազգային զորամասերը։ Տեղափոխվելով Բաքու, Ս. Շահումյանը շարունակում է Կովկասի գործերի արտակարգ կոմիսարի իր եռանդուն գործունեությունը և սերտ կապ պահպանելով Սովետական Ռուսաստանի ու անձամբ Վ. Ի. Լենինի հետ, ամեն ինչ անում է Կովկասում սովետական իշխանության հաղթանակն ապահովելու համար։ 1918 թ. հունվարի 31-ին նա հրապարակում է «Բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների բոլոր Սովետներին, Կովկասի բոլոր բանվորներին ու գյուղացիներին» կոչը, ուր ասված էր. «Կովկասը կանգնած է անդունդի եզրին։ Փրկեցե՛ք նրան։ Ստեղծե՛ք այստեղ ինտերնացիոնալ բանվորագյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու ժողովրդական կոմիսարների Սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությունը կառաջնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»[15]։

Կովկասի հեղափոխական բոլոր ուժերը բոլշևիկների ղեկավարությամբ համախմբվում են սովետական իշխանության դրոշի ներքո։

1918 թ. գարնանը զինված ապստամբություններ են տեղի ունենում Արևմտյան Անդրկովկասում՝ Աբխազիայում, Հարավային Օսեթիայում, Աջարիայում և մի շարք այլ շրջաններում։

1918 թ. մարտին Անդրկովկասի հակահեղափոխական իշխանությունների դեմ ապստամբություն բարձրացրած Աբխազիայի հեղափոխական մասսաները բոլշևիկների ղեկավարությամբ հռչակեցին սովետական իշխանություն, որի գլուխ անցան Ա. Ե. Էշբան, Գ. Ա. Աթար-

---

14 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 189—190։

15 Ստ. Շահումյան, երկեր, հատ. 3, էջ 69—70։

բեկյանը, Ն. Ս. Ա. Լակոբան և այլ լենինյաններ։ Սակայն գերմանական իմպերիալիստների աջակցությամբ Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը արյան մեջ խեղդեցին սովետական իշխանությունը Աբխազիայում։

Օգտվելով Սովետական Ռուսաստանի ծանր կացությունից, գերմանաթուրքական զավթիչներն ամեն ինչ անում էին սովետական երկիրը կործանելու համար։ Թուրքական ռազմամոլները ձգտում էին Սովետական Ռուսաստանից կտրել և նվաճել Կովկասը, Ղրիմը, Միջին Ասիան, դուրս գալ Վոլգա, ռեակցիոն ուժերի միասնական ճակատ կազմել Սովետական Ռուսաստանի դեմ։ Նրանք մտադրվել էին ստեղծել «մեծ Թուրքիա», որի մեջ մտնելու էին Կովկասը, Դոնը, Ղրիմը և Ուկրաինայի հարավային շրջանները։ Այս գործում նրանց ուղղակի գործակալներն էին մուսավաթականները, որոնք պատրաստ էին Ադրբեջանը և Դաղստանը միացնել Թուրքիային[16]։

Վ. Ի. Լենինը վճռականորեն մերկացնում էր ինչպես անգլո-ամերիկյան ու ֆրանսիական, այնպես էլ գերմանաթուրքական իմպերիալիստների զավթողական պլանները։

Վ. Ի. Լենինը, բոլշևիկները կոչ էին անում կրծքով պաշտպանել սոցիալիստական հայրենիքը բոլոր տեսակի իմպերիալիստներից։

1918 թ. հունվարի վերջին թուրքական զորքերը խախտելով 1917 թ. դեկտեմբերի 5-ին Անդրկովկասյան կոմիսարիատի հետ էրզրումում կնքած զինադադարը, Կովկասյան ռազմաճակատում հարձակման անցան, վերստին գրավելով Սարիղամիշը, Բաթումը, Կարսը, Ալեքսանդրապոլը և շարժվեցին դեպի Անդրկովկասի կենտրոնական շրջանները, դեպի սովետական Բաքու։

Այս դժվարին օրերին չընդունելով Բրեստի դաշնագրի պայմանները, Անդրկովկասյան իշխանությունները որոշում են սեպարատ հաշտության պայմանագիր կնքել Թուրքիայի հետ։ Դաշնակցական, մենշևիկյան և մուսավաթական նացիոնալիստները, անդրկովկասյան ժողովուրդների շահերին ու կամքին հակառակ, ոչ միայն վճռական միջոցների չէին դիմում կանխելու թուրքական զորքերի առաջխաղացումը, այլև ձգտում էին օտարերկրյա զորքերի միջոցով ճնշել երկրամասում աճող հեղափոխական շարժումները, վերջ դնել սովետական իշխանությանը Բաքվում։

Իմպերիալիստական զավթիչներից Անդրկովկասի պաշտպանության

---

16 Տե՛ս «История гражданской войны в СССР», т. III, М., 1957, стр. 140.

գործի կազմակերպումը, աշխատավոր մասսաների հայրենապաշտպանության շարժումն իրենց ձեռքն են վերցնում բոլշևիկները։ Նրանք պարզաբանում են թուրքական առաջխաղացման նպատակները, մերկացնում անդրկովկասյան նացիոնալիստների դավաճանությունը, կոչ անում զինել ժողովրդին, ստեղծել կարմիրգվարդիական ջոկատներ։

Ռուսաստանի հեղափոխությունը, Վ. Ի. Լենինի ստեղծած կառավարությունը պաշտպանելու համար կարմիր գվարդիա ստեղծելու կոչ էին անում Ալեքսանդրապոլի բոլշևիկները։ «Ռուսական սոցիալական բռնկումներից ահաբեկված, իմպերիալիստների ոհմակը,— գրում էին նրանք 1918 թ. մարտին հրատարակած թռուցիկում,—վճռել է ինչ գնով էլ լինի խեղդել ռուսական հեղափոխությունը, որի նշանաբանն է՝ հավասարություն, եղբայրություն և բոլոր ազգերի ազատ ինքնորոշում։ Տաճիկ իմպերիալիստների բարբարոս հորդաները արդեն ներս են խուժել մեր ազատ հեղափոխական երկիրը։

...Անողոք կռիվ հեղափոխության թշնամիներին...»[17]։

Քաղաքի բոլշևիկյան կոմիտեի գրասենյակը դառնում է հեղափոխական ուժերի կազմակերպման մարտական շտաբ։ Մի քանի օրում Ալեքսանդրապոլի բոլշևիկներին հաջողվում է ստեղծել մոտ 500 մարդուց բաղկացած ջոկատ, որի հիմնական կորիզը կազմում էին կոմունիստները։

Կարմիր գվարդիական ջոկատներ են կազմակերպվում մի շարք վայրերում։ Թուրքական զավթիչների դեմ մղվող պայքարի շրջանում բոլշևիկների ազդեցությունը մասսաների վրա էլ ավելի է աճում։ Նրանք ակնառու տեսնում էին, որ կոմունիստները ոչ թե խոսքով, այլ գործով, զենքը ձեռքերին կռվում են օտարերկրյա բանդաների դեմ՝ հանուն հայրենիքի ու ազատության։

Իրադրության և փաստաթղթերի օբյեկտիվ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Անդրկովկասում այն ժամանակ առկա էին ուժեր՝ երկրամասը թուրքական զավթիչներից պաշտպանելու համար։ Դրա համար անհրաժեշտ էր ճանաչել Վ. Ի. Լենինի գլխավորած Ռուսաստանի սովետական իշխանությունը, և հենվելով հեղափոխական ուժերի վրա, ջախջախել ու երկրամասից դուրս շպրտել թուրքական զորքերին, ազատագրել Արևմտյան Հայաստանը։

Հենց սրա համար էին պայքարում բոլշևիկները։ Այն հարցին, թե

---

17 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 210։

ինչ հնարավորություն կառավարող կուսակցությունների քաղաքականության հետևանքով ստեղծված սարսափելի փակուղուց աշխատավոր մասսաներին դուրս բերելու համար, Ս. Շահումյանը պատասխանում է՝ ճանաչել բանվորագյուղացիական կառավարությունը, Ժողովրդական Կոմիսարների Սովետի իշխանությունը, գումարել բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների համագումար, Կովկասում ստեղծել կազմակերպված հեղափոխական դասակարգերի ինտերնացիոնալ ուժեղ և հեղինակավոր իշխանություն[18]։

Այս անգամ էլ Սովետական Ռուսաստանն անտարբեր չմնաց Անդրկովկասի ժողովուրդների բախտի նկատմամբ։ 1918 թ. ապրիլի 13-ին Սովետական կառավարությունը ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմ Գ. Վ. Չիչերինի և ժողկոմի տեղակալ Լ. Մ. Կարախանի ստորագրությամբ հեռագրեց Թիֆլիսի գերմանական հյուպատոսին՝ թուրքական զորքերի Անդրկովկաս շարժվելու և Գերմանիայի պատասխանատվության մասին։ Հեռագրում ասված է. «Թուրքական բանակը առաջ է շարժվում դեպի Բաթում, Կարս, Արդահան, ավերելով երկիրը և ոչնչացնելով գյուղացիական բնակչությանը։ Հայերի հետագա ճակատագրի համար պատասխանատվությունն ընկնում է Գերմանիայի վրա, որովհետև նրա պնդմամբ էլ հենց ռուսական զորքերը դուրս բերվեցին հայկական մարզերից, և այժմ Գերմանիայից է կախված թուրքական բանակի ետ պահումը վրեժի և չարության հողի վրա ծագող սովորական էքցեսներից։ Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ մի այնպիսի կուլտուրական պետություն, ինչպիսին Գերմանիան է, որը հնարավորություն ունի ազդելու իր դաշնակից Թուրքիայի վրա, թույլ կտա, որ իր կամքից անկախ այս համաշխարհային պատերազմի մեջ քաշված հայ ժողովրդի համար Բրեստի հաշտության պայմանագիրը ծառայի անթիվ թշվառությունների աղբյուր։ Ուստի Սովետը հավատացած է, որ Դուք ձեռք կառնեք միայն ձեզանից կախված անհրաժեշտ միջոցները ազդելու թուրքական իշխանության վրա՝ խաղաղ բնակչության ոչնչացումը, ինչպես այդ տեղի ունեցավ Արդահանում, կանխելու նպատակով»[19]։

Սովետական կառավարությունը հնարավոր ամեն ինչ անում էր Անդրկովկասի աշխատավոր մասսաներին օրհասական վիճակից փրկելու համար։

---

18 Տե՛ս Ստ. Շահումյան, *երկեր, հատ. 3, էջ 110։*

19 *«Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 211—212։*

Դրա փոխարեն Անդրկովկասյան բուրժուա-նացիոնալիստական կառավարությունները զբաղված էին դիվանագիտական խաղերով։ Այդ դժվարին օրերին, 1918 թ. ապրիլի 22-ին Անդրկովկասյան սեյմը որոշեց Անդրկովկասն անջատել Սովետական Ռուսաստանից, որի կործանարար հետևանքները շատ ծանր նստեցին վրացի, հայ, ադրբեջանցի և երկրամասի մյուս ժողովուրդների վրա։

Բոլշևիկներն ամեն ինչ արեցին այս ահավոր ակտը կանխելու համար։ Փետրվարի 24-ին Ս. Շահումյանը «Բակինսկի ռաբոչի» թերթում գրում էր. «Կարելի՞ է արդյոք պատկերացնել ավելի տխուր արդյունքներ, քան այնպիսիք, որոնց հասել է Անդրկովկասի «սոցիալիստական» կառավարությունը, որը Կալեդինին գերադասում է Լենինից, խաամեդովներին՝ կովկասյան բոլշևիկներից»[20]։ Գնահատելով այն ժամանակ ստեղծված իրերի վիճակը, մարտի 15-ին Թիֆլիսում լույս տեսնող բոլշևիկյան «Բանվոր» թերթը գրում էր. «Կոռնիլովի համար տեղ են պատրաստում Անդրկովկասում»[21]։

Սովետական Ռուսաստանն Անդրկովկասից անջատելու որոշում ընդունելով, վրացական, ադրբեջանական և հայկական նացիոնալիստները օտարերկրյա իմպերիալիստների և ներքին շահագործող դասակարգերի դատաստանին էին հանձնում սովետական իշխանության համար պայքարող Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի աշխատավոր մասսաներին, խիստ դժվարացնում էին նրանց հեղափոխական ազատագրական պայքարը, նոր փորձությունների առաջ էին կանգնեցնում նրանց։

Սովետական Ռուսաստանի, Վ. Ի. Լենինի կառավարության նկատմամբ խոր սիրով ու հավատարմությամբ տոգորված Անդրկովկասի աշխատավոր մասսաները բուռն պայքարի նոր ալիքով են պատասխանում հակահեղափոխության ստոր ոտնձգություններին։

«Պրավդա»-ն լուսաբանելով այս ժամանակաշրջանում Կովկասում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները, նշում էր, որ Անդրկովկասի «անկախությունը» հայտարարող և գերմանական իմպերիալիստներին օգնության կանչող սեյմի դեմ բորբոքվում է համաժողովրդական շարժման հզոր բոցը[22]։

Հենց այս շրջանում էլ Բաքվի պրոլետարիատը բոլշևիկների ղեկավարությամբ ինտերնացիոնալիզմի դրոշը պարզած, զենքը ձեռքին

20 Ստ. Շահումյան, երկեր, հատ. 3, էջ 109։

21 «Բանվոր», 1918, № 13։

22 Տե՛ս «Правда», 16 мая 1918 г.

պաշտպանում է երկրամասի բազմազգ ժողովուրդների իրավունքները, հանուն սերտ կապի Սովետական Ռուսաստանի հետ, հանուն Վ. Ի. Լենինի գլխավորած կառավարության դեկրետների ու որոշումների կենսագործման:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո Անդրկովկասում հեղափոխական շարժման անհաղթահարելի վերելքը և մասնավորապես 1918 թ. Բաքվի հերոսական կոմունայի ստեղծումը հսկայական նշանակություն ունեցան 1920—1921 թթ. Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական կարգերի հաստատման ու ամրապնդման, անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամության հետագա զարգացման, երկրամասի ժողովուրդների հավերժ միասնության համար:

Պ. Մ. ԴԱԼԱՔՅԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԽՄԲՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (1918—1921)

Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, գործելով երկրամասի բազմազգ աշխատավորների միջավայրում, կուտակել էին աշխատանքի հարուստ փորձ։ Այդ մասին ասված է ՌՍԴԲԿ Կենտկոմի 1913 թ. Հունվարի Կրակովյան խորհրդակցության՝ «ազգային» սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների վերաբերյալ բանաձևում. «Խորհրդակցությունը Ռուսաստանի բոլոր ազգությունների բանվորներին համառ կոչ է անում ...ս. դ. բանվորներին տեղերում ամենասերտ կերպով համախմբել ու միաձուլել ՌՍԴԲԿ միասնական կազմակերպությունների մեջ, որոնք աշխատանք են կատարում տեղական պրոլետարիատի ամեն մի լեզվով և իրականում կենսագործում են միասնությունը ներքևից, ինչպես այդ վաղուց ի վեր տեղի է ունենում Կովկասում»[1]։

Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ ազգային հարցում կոմունիստները պետք է հանդես բերեն առավելագույն ճկունություն, համբերություն և զգուշություն, որպեսզի իրենց ուժերը հմտորեն միավորեն ընդհանուր թշնամու՝ իմպերիալիզմի դեմ պայքարելու համար։

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները իրենց ամբողջ աշխատանքը տանում էին այդ սկզբունքով։

Ինչպես հայտնի է, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը՝ մենշևիկները, դաշնակցականները, մուսավաթականները և մյուս թշնամիները, օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ 1918 թ. երկրամասը անջատեցին Սովետական Ռուսաստանից և այն պայքարի բազա դարձրին նրա դեմ։ Նրանք ամենակատաղի հարձակումների

1 «ՍՄԿՊ-ն բանաձևերում», I մաս, էջ 371—272։

դիմեցին հեղափոխական ուժերի, առաջին հերթին կոմունիստական կազմակերպությունների դեմ, աշխատավորների շրջանում սերմանելով ազգային թշնամանք։

Այդպիսի պայմաններում ավելի ու ավելի դժվարացավ հեղափոխական պայքարը և աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության գործը։ Սակայն Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի բոլշևիկները շարունակում էին պայքարը հանուն երկրամասում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի, հատուկ ուշադրություն դարձնելով աշխատավորների ինտերնացիոնալ համախմբման վրա։

Բաքվի կուսակցական կոմիտեն, օգտվելով լիգալ աշխատանքի հնարավորություններից, մեծ աշխատանք ծավալեց քաղաքի բանվորության ու մտավորականության շրջանում, նրանց մեջ պրոպագանդելով սովետական իշխանության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարները։ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունները հանդուն աշխատանք էին կատարում բանվորության, գյուղացիության, մտավորականության, զինվորականության ու ծովայինների միջավայրում՝ թե բանավոր, թե գրավոր։ Իսկ երկրամասի բուրժուազիան, նացիոնալիստական կուսակցությունները ցանկանում էին քայքայել Կովկասյան ռազմաճակատի զորամասերը, փորձելով ստեղծել ազգային զորամասեր, ջլատել բանակի հեղափոխական ուժերը։ Բաքվի ռազմահեղափոխական կոմիտեն կոչ էր անում քաղաքի բոլոր աշխատավորներին, առանց ազգային խտրության, համախմբվել սովետական իշխանության շուրջը և կուռ շարքերով հակահարված տալ հեղափոխության թշնամիներին։

Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեն արձակից հրաման, ուր կովկասյան հեղափոխական բանակի բոլոր սովետներին և կոմիտեներին պարզաբանում էր ազգայնական սկզբունքով գնդեր ստեղծելու գաղափարի հակահեղափոխական էությունը և կոչ էր անում չվինովորագրվել դրանց։

Կովկասյան բանակի երկրամասային հեղափոխական սովետը հատուկ կոչով դիմեց զինվորներին, բացատրելով չմանել հակահեղափոխական «ազգային» գնդերը։ Ռուս բանվորներն ու գյուղացիները, ասված է այնտեղ, կոչ են անում վրացի, հայ, թաթար, ուկրաինացի, լեհ և մյուս ազգությունների բանվորներին ու գյուղացիներին՝ պայքարել միավորվելու մի հզոր բանակում, քանի որ նրանք ունեն մեկ ընդհանուր թշնամի՝ կապիտալիստները։

Երկրամասի հեղափոխական սովետը կոչ էր անում բոլոր ազգերի

ընկեր զինվորներին, բանվորներին ու գյուղացիներին միասնաբար, մեկ եղբայրական ընտանիքի նման պայքարելու ընդհանուր թշնամու՝ բուրժուազիայի դեմ, որը ցանկանում է եղբայրասպան պատերազմ հրահրել։

Բոլշևիկյան կուսակցության երկրամասային կոմիտեն մերկացնում էր Անդրկովկասյան կոմիսարիատի, սեյմի և բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների սևհարյուրակային քաղաքականությունը։ Անդրկովկասում սեյմ հրավիրելու կապակցությամբ 1918 թ. փետրվարին ՌՍԴԲԿ Կովկասյան երկրամասային կոմիտեն դիմեց Կովկասի բանվորներին, գյուղացիներին ու զինվորներին, ուր ասված է. «Բանվորա-գյուղացիական հեղափոխությունը մեզ մոտ սկսված է, անհրաժեշտ է ծավալել այն և մտցնել այդ շարժման մեջ գիտակցականություն ու կազմակերպվածություն...

Անհրաժեշտ են հերոսական ջանքեր, որպեսզի փրկենք հեղափոխությունը, որպեսզի նորից կապվենք մեծ Ռուսաստանի Սովետական Հանրապետության հետ։

Կորչի բեկերի, կալվածատերերի, բուրժուազիայի և նրանց հլու ծառաներ՝ նացիոնալիստների դաշինքը։ Կեցցե հեղափոխական ու սոցիալիստական դաշինքը Ռուսաստանի պրոլետարիատի ու գյուղացիության հետ։

Կեցցե սովետական իշխանությունը Կովկասում»[2]։

Բոլշևիկների եռանդուն աշխատանքը տվեց իր պտուղները։

Հակահեղափոխական ուժերի դեմ մղվող պայքարի առաջին շարքերում ընթանում էր երկրամասի բանվոր դասակարգը։ Սեյմի ստեղծման կապակցությամբ Բաքվի նավթարդյունաբերության Բալախանու շրջանի բանվորների ժողովում ընդունված բանաձևում ասված է. «Կալվածատերերի ու կապիտալիստների կողմից թելադրված, կովկասյան իշխող կուսակցությունների (մենշևիկների, դաշնակցականների, մուսավաթականների, աջ էսեռների և այլն) նացիոնալիստական քաղաքականությունը հակահեղափոխական է։

Կովկասում հակահեղափոխությունը իր սև գործը կատարում է ազգերի պառակտման միջոցով։ Կալվածատերերն ու կապիտալիստները, օգտվելով մասսաների ցածր գիտակցությունից, ազգամիջյան կռիվ են հրահրում, որպեսզի բանվորների ու գյուղացիների եղբայրական ալյան մեջ խեղդեն բանվորագյուղացիական հեղափոխությունը։ Մենք

---

2 «Бакинский рабочий», 8 марта 1918 г.

արտահայտում ենք մեր վճռական անվստահությունը և ի լուր ամենքի հայտարարում, որ մենք՝ բոլոր բանվորներս եղբայրներ ենք։ Մեր դասակարգային թշնամիներին չի հաջողվի մեզ բաժանել միմյանցից։ Բոլոր ազգերի գիտակից բանվորների և գյուղացիների պարտքն է անհապաղ պայքարել այդ պրովակացիայի դեմ»[3]։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար աշխատողները սիստեմատիկաբար հանդես էին գալիս բանվորական կոլեկտիվներում, գյուղացիության շրջանում, բանակում և այլուր։ Այնտեղ, ուր հանդես էին գալիս ականավոր բոլշևիկները, ընդունվում էին համապատասխան բանաձևեր, որտեղ աշխատավորներն իրենց պայքարն էին արտահայտում բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հակահեղափոխական քաղաքականության, երկրամասի բուրժուազիայի ու կալվածատերերի սևհարյուրակային գործունեության նկատմամբ, միահամուռ կերպով իրենց վստահությունն ու հավանություն էին արտահայտում Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի և նրա քաղաքականության նկատմամբ։

Հաշվի առնելով հեղափոխական իրադրությունը երկրամասում, Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանը 1918 թ. հունվարի 31-ին հատուկ կոչով դիմեց բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների բոլոր սովետներին, Կովկասի բոլոր բանվորներին ու գյուղացիներին, որտեղ անարգանքի սյունին էր գամում ռեակցիոն բուրժուական, կալվածատիրական ազգային խորհուրդներին, կոմիսարիատին, սեյմին, բուրժուա-նացիոնալիստական կուսակցություններին, որոնք երկրամասը տանում էին դեպի հակահեղափոխության և ազգայնական պատերազմների անդունդը։ Նա գտնում էր, որ ազգամիջյան կռիվների առաջն առնելու միակ միջոցը Կովկասում սովետական իշխանություն հաստատելն է և պահանջում էր անհապաղ գումարել Կովկասի բոլոր սովետների համագումար՝ կենտրոնական հեղինակավոր սովետական իշխանություն ստեղծելու համար։ «Բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների ինտերնացիոնալ-դեմոկրատական և հեղափոխական Սովետների փոխարեն,— գրում էր Ստ. Շահումյանը,— մենք ունենք ռեակցիոն բուրժուական կամ կալվածատիրական ազգային խորհուրդներ, որոնք ազգային կառավարությունների դեր են խաղում։ Ինտերնացիոնալ սովետական Կարմիր գվարդիայի փոխարեն մենք ունենք ռեակցիոն տարրե-

---

3 «Известия Бакинского совета», 16 января 1918 г.

րի կողմից զեկավարվող ազգային գնդեր։ ... Պայքար է սկսվում հանուն Սովետական իշխանության նաև Կովկասում»[4]։

Սովետական իշխանության հաղթանակի համար Անդրկովկասի աշխատավորներին համատեղ պայքարի էր առաջնորդում ՌԿ(բ)Կ Անդրկովկասյան երկրամասային կոմիտեն։ Երկրամասի բոլշևիկները աշխատավոր մասսաների դիտակցությանն էին հասցնում Լենինյան գաղափարները։

Բալախանու նավթագործ բանվորների ընդհանուր ժողովը լսելով Ստ. Շահումյանի զեկուցումը՝ Կովկասի քաղաքական դրության մասին, ընդունել էր բանաձև, ուր ասված է. «Մենք պահանջում ենք իշխանությունը ամբողջ երկրամասում անհապաղ հանձնել բանվորական, զինվորական ու գյուղացիական սովետներին, որոնք պետք է ձեռք-ձեռքի տված աշխատեն համառուսաստանյան բանվորական, զինվորական ու գյուղացիական դեպուտատների սովետների կենտրոնական գործադիր կոմիտեի հետ և կյանքում կենսագործեն ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետները։

...Բարձրաձայն հայտարարում ենք, որ մենք՝ ադրբեջանցի, դաղըստանցի, վրացի, հայ, ռուս բանվորներս, բոլորս եղբայրներ ենք։ Մենք չենք ենթարկվի նացիոնալիստների պրովոկացիաներին... կուռ շարքերով կգնանք մեր դասակարգային թշնամիների դեմ»[5]։

Սովետական իշխանության համար մղվող պայքարի այդ ժամանակաշրջանում բաղմազգ Անդրկովկասի համար մեծ կարևորություն ուներ ազգային պետականության հարցի հստակ դրումը, նրա լենինյան մեկնաբանությունն ու կենսագործումը։ Մինչդեռ երկրամասի բոլշևիկների զեկավար շրջանում տվյալ հարցի վերաբերյալ այդ ժամանակ դեռևս հստակ դիրքորոշում չկար։

Խոսելով այդ մասին, ականավոր բոլշևիկ Ֆ. Մախարաձեն գրել է. «Անհրաժեշտ է խոստովանել..., որ մենք մինչև վերջ չէինք հասցնում ազգերի ինքնորոշման իրավունքը և բավարարվում էինք մարզային տերիտորիալ ավտոնոմիայի պահանջի առաջադրմամբ»[6]։ Նույնն է ասում նաև Ա. Միկոյանը, որը անդրադառնալով Անդրկովկասի բոլշևիկների այդ ժամանակահատվածի գործունեությանը, գրում է, որ «Կովկասյան բոլշևիկների շրջանում տարաձայնություններ կային Կովկասի ժողովուրդների համար ազգային հարցի որոշման եղանակի շուրջը։

---

4 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, էջ 66, 68։

5 «Известия Бакинского совета», 21 января 1918 г.

6 *Ф. Махарадзе,* Соч., т. 4, Тифлис, 1924, стр. 253.

Այդ հանգամանքը իր կնիքը դրեց Կովկասում սովետական իշխանության համար մղվող պայքարի ամբողջ ընթացքի վրա և անկասկած հեշտացրեց տարբեր ազգերի բանվորների և հեղափոխական գյուղացիության միջև անջրպետ ստեղծելու բուրժուական շովինիստների գործը»[7]:

Ադրբեջանի ականավոր պետական գործիչ Դադաշ Բունիաթ Զադեն 1918 թ. նոյեմբերին զրույց է ունեցել Վ. Ի. Լենինի հետ: Իր հուշերում այդ մասին նա գրել է. «Երբ Իլյիչին հաղորդեցին, որ Ադրբեջանում երկու ուղղություն գոյություն ունի, առաջին՝ Բաքվի և Ադրբեջանի ազատագրումից հետո պետք է ստեղծել ինքնուրույն Սոցիալիստական Սովետական Հանրապետություն, երկրորդ՝ ոչ մի հանրապետություն պետք չէ, անհրաժեշտ է Ադրբեջանը բաժանել նահանգների և միացնել ՌՍՖՍՀ-ին, Իլյիչը այդ կապակցությամբ ուղղակի ասաց՝ առաջին կարծիքը՝ ինքնուրույն հանրապետություն ստեղծելու մասին ճիշտ է, իսկ երկրորդը՝ գաղութատիրություն է հանդիսանում և նույնիսկ վայրենություն»[8]:

Վ. Ի. Լենինը և նրա ստեղծած կոմունիստական կուսակցությունը, հետևողականորեն կենսագործելով անկախ ազգային հանրապետություններ ստեղծելու գիծը, գտնում էին, որ բոլոր դեպքերում ազգային պետականության յուրաքանչյուր ձև պետք է կառուցվի սովետական հիմքի վրա և ծառայի պրոլետարիատի դիկտատուրայի հաստատմանն ու ամրապնդմանը:

Սոցիալիստական հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո, 1918 թ. հունվարին «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիայում» Վ. Ի. Լենինը ամբողջ աշխարհի առջև ազդարարեց՝ «Սովետական Ռուսաստանի հանրապետությունը հիմնվում է ազատ ազգերի ազատ միության վրա, որպես սովետական ազգային հանրապետությունների ֆեդերացիա»[9]:

Նոր պայմաններում Ռուսաստանի ժողովուրդների ֆեդերատիվ կապերի պահանջն ակնառու կերպով ցույց էր տալիս, որ սովետական իշխանությունը ճանաչում և օրինականացնում է նախկինում ճնշված ժողովուրդների ազատ զարգացման իրավունքը: Դա օրինակ էր ծառայում մյուս ծայրամասերի ժողովուրդների համար, որտեղ սովետական իշ-

---

[7] «Красный архив», 1938, № 4—5, стр. 39.

[8] «Воспоминания коммунистов Закавказья о В. И. Ленине», Ереван, 1972, стр. 242.

[9] «Декреты Советской власти», т. 1, стр. 341.

խանությունը դեռևս չէր հաղթանակել։ Միաժամանակ այդ պահանջը տարբեր ազգերի աշխատավորներին միավորում էր հեղափոխական ուժերի շուրջը, ընդլայնում սոցիալիստական հեղափոխության շրջանները։

Ուշագրավ է այն փաստը, որ մեր օրերում ևս, հեղափոխության հաղթանակից տասնամյակներ անց, կոմունիզմի թշնամիները, Սովետական Միության կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության կեղծարարները (Գ. Շտեհկել, Ա. Լոու, Բ. Մեյսներ և ուրիշներ), փորձում են բուրժուա-նացիոնալիստական «կառավարություններին» դեմ սովետական իշխանության պայքարը ներկայացնել որպես մասսաների ազգային շարժման, ազգային ազատության ու սուվերենության բռնի ճնշում։ Իրականում միանգամայն հակառակն էր։

Տեղական ազգային բուրժուազիան ցանկանում էր օգտվել ժողովրդական հեղափոխության հաղթանակի պտուղներից, կանգնել «ազգային պետականության» գլուխ, քողարկվելով «ազգային ազատության պաշտպանություն», «ազգային սուվերենություն», «ազգային միասնություն» լոզունգներով։ Ակնհայտ է, որ ազգային բուրժուազիայի դեմ սովետական իշխանության համար պայքարը իր էությամբ ինքնըստինքյան դասակարգային էր։

Սովետական իշխանության հաղթանակի համար ծայրամասերի բազմազգ աշխատավորությանը Ռուսաստանի բանվոր դասակարգի ցույց տված օգնությունը դասակարգային համերաշխության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի վառ օրինակ է։ Առանց այդպիսի ինտերնացիոնալիստական քաղաքականության, ծայրամասերի աշխատավոր մասսաների համար անշափ դժվար կլիներ, իսկ որոշ դեպքերում թերևս անհնարին, իրականացնել ինքնորոշման իրավունքը և հիմնել իր ազգային, իսկական ժողովրդական պետությունը։

Վ. Ի. Լենինը հետևողական պայքար էր մղում մի կողմից աջ օպորտունիստական գծի դեմ, որը փորձում էր օգտագործել ազգերի ինքնորոշման իրավունքը նացիոնալիստական, հակահեղափոխական նպատակների համար, մյուս կողմից՝ «ձախ» օպորտունիստների դեմ, որոնք փորձում էին հակադրել ազգային պետականության ձևերը պրոլետարիատի դիկտատուրայի ինտերնացիոնալիստական էությանը։

Այդ պայքարի պրոցեսում Վ. Ի. Լենինը խոր վերլուծության ենթարկեց ազգայինի և ինտերնացիոնալիստականի դիալեկտիկական փոխադարձ կապը հատկապես ապագա սովետական ազգային պետականության կառուցվածքի տեսակետից։ Այսպիսով, Հոկտեմբերյան հեղա-

փոխության հաղթարշավի ամենաբարդ ժամանակաշրջանում, երբ որոշվում էր նախկին ռուսական կայսրության բոլոր ժողովուրդների ապագան, երբ մասսաները, Հոկտեմբերի հաղթանակի ազդեցությամբ պատրաստ էին «սարեր շրջել», և ամեն մի պրովոկացիոն ելույթ կարող էր կրքեր բորբոքել հետամնաց խավերի մոտ, Վ. Ի. Լենինը առաջադրեց կոնկրետ ու հրատապ խնդիրներ և Ռուսաստանի բազմազգ ու բազմամիլիոն ժողովուրդներին համախմբեց մեծ Հոկտեմբերի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի, սովետական իշխանության շուրջը։

Օտարերկրյա իմպերիալիստների հովանավորությամբ 1918 թ. մայիսին ստեղծված Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կառավարությունները մեկը մյուսի նկատմամբ թշնամական վերաբերմունքից բացի, միաժամանակ աղտային թշնամանք էին հրահրում դարերով եղբայրացած Անդրկովկասի ժողովուրդների միջև։ Չնայած դրան, Անդրկովկասի բոլշևիկներն իրենց շուրջը համախմբելով աշխատավոր մասսաներին, հատկապես ակտիվ բանվորներին և առաջավոր մտավորականությանը, կարողանում էին ինտերնացիոնալիստական աշխատանք ծավալել և պահպանել դասակարգային համերաշխությունը կապիտալի դեմ մղվող անհաշտ պայքարում։

1918—1920 թթ. բոլշևիկների գլխավորությամբ երկրամասի աշխատավոր մասսաները բարձրացրել էին հեղափոխության դրոշը։ Ռուսաստանի բանվորների և գյուղացիների օրինակով նրանք պայքարում էին սովետական իշխանության հաղթանակի համար, Սովետական Ռուսաստանի հետ միանալու համար։ Բաքվի բազմազգ բանվորների 1920 թ. հունվարի 7-ի համաքաղաքային միտինգի բանաձևում ասված է. «Եթե Ադրբեջանական կառավարությունը չհամաձայնի դուրս գալու Դենիկինի դեմ, այն ժամանակ Բաքվի պրոլետարիատը, Ադրբեջանի գյուղացիության հետ միասին, մուսավաթական կառավարության գլխի վրայով իսկ, հնարավոր է և նրա դիակի վրայով, իր եղբայրական ձեռքը կմեկնի հեղափոխական Ռուսաստանին՝ ռուսական և համաշխարհային ռեակցիայի դեմ մղվող պայքարում։ Կեցցե կարմիր բանակը։ Կեցցե Սովետական բանվորագյուղացիական Ռուսաստանը։ Կեցցե Ադրբեջանի և Սովետական Ռուսաստանի բանվորների և գյուղացիների դաշինքը»[10]։

Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կուսակցություններն ու կառավարությունները սերտորեն միանալով գերմանա-թուրքական,

---

10 «Труды Азербайджанского филиала ИМЛ за 1948 г.», книга 9, стр. 80.

այնուհետև անգլո-ամերիկյան իմպերիալիստների հետ, աշխատելով նրանց թելադրանքով, ամեն ջանք գործադրեցին, որպեսզի Հոկտեմբերի հաղթարշավը չտարածվի երկրամասում: Նրանց հանցավոր գործերից են Թիֆլիսի Ալեքսանդրյան այգում աշխատավորների խաղաղ ցույցի դնդակոծությունը, Ռուսաստան վերադարձվող զինվորների կոտորածը Շամխորի կայարանում, Կովկասյան գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի կալանավորման մասին որոշումը, բոլշևիկյան մամուլի արգելումը և այլն: Անդրկովկասի հակահեղափոխական ուժերի ամենանողկալի հանցանքը Անդրկովկասի անջատումն էր Սովետական Ռուսաստանից:

ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն հատուկ կոչով դիմեց բանվորներին, գյուղացիներին, զինվորներին և աշխատավոր մտավորականությանը, որտեղ պարզաբանելով Անատանի երկրների և Անդրկովկասի նացիոնալիստական կառավարությունների հակահեղափոխական էությունը, կոչ արեց Անդրկովկասի աշխատավոր մասսաներին՝ հերոսական կարմիր բանակի, Ռուսաստանի Սովետական կառավարության հետ մեկտեղ ստեղծել անխախտ ինտերնացիոնալ միություն, ընդհանուր ուժերով դուրս գալ ներքին և արտաքին հակահեղափոխական ուժերի բլոկի դեմ և հասնել սովետական կարգերի հաղթանակին: Կոչում ասված է. «Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ միասին, մեզ մոտ և ամբողջ աշխարհում, ստեղծենք պրոլետարական իշխանություն և հավերժ ծածանենք կոմունիզմի կարմիր դրոշը»[11]:

Շնորհիվ բոլշևիկյան կազմակերպությունների հետևողական, սիստեմատիկ և նպատակասլաց գործունեության, որն ընթանում էր բուրժուա-նացիոնալիստական ռեժիմի անատանելի պայմաններում, աստիճանաբար տեղի էր ունենում հեղափոխական ուժերի համախմբում, բանվորները, աշխատավոր գյուղացիությունը ազատագրվում էին էսեռա-մենշևիկյան, դաշնակցության, մուսավաթական կուսակցությունների ազդեցությունից և կանգնում սովետական իշխանության դրոշի ներքո, զինվորագրվում սոցիալիստական հեղափոխությանը: Անդրկովկասի աշխատավորները լավ էին հասկանում, որ իրենց միակ հուսալի բարեկամը ռուսական պրոլետարիատն է, Սովետական Ռուսաստանը: Այդ մասին է վկայում Կովկասի ժողովուրդների աշխատավոր մասսաների 1920 թ. մարտի դիմումը Սովետական Ռուսաստանին: Այնտեղ

---

11 *И. Таирян,* XI Красная армия в борьбе за установление и упрочение Советской власти в Армении, Ереван, 1971, стр. 34.

ասված է. «Մենք՝ Կովկասի բոլոր ժողովուրդների աշխատավոր մասսաներս, հղում ենք մեր եղբայրական ողջույնը Ռուսաստանի պրոլետարիատին, գյուղացիությանն ու կարմիր բանակին։

Անտանտի տնօրեն ու զայրացուցիչ ակտիվ միջամտությունը մեր ներքին գործերին, Գերմանիայի, Թուրքիայի ու Անգլիայի ռազմական ուժերի կողմից Կովկասի հետևողական ու բռնի օկուպացումը, Վրաստանի մենշևիկների, Ադրբեջանի մուսավաթականների, Հայաստանի դաշնակցականների կողմից աշխատավոր մասսաների շահերի դավաճանության ու մատնության հետևանքով մենք՝ Կովկասի աշխատավոր մասսաներս մինչև այսօր դատապարտված ենք քարշ տալու մեր սարկական գոյությունը մեր և օտար կապիտալիստների իշխանության տակ... Մեզ դեռևս չի լուսավորել Հոկտեմբերյան հեղափոխության արևը...»[12]։

Այս փաստաթուղթը ցույց է տալիս, որ Կովկասի աշխատավոր մասսաները մեծապես ձգտում էին դեպի Սովետական Ռուսաստանը, ցանկանում էին նրա օրինակով ու օգնությամբ հաստատել սովետական իշխանություն, որ կոմունիստական կուսակցության դեկավարությամբ դասակարգային մարտերում ամրապնդվում ու կոփվում էր հաշտաուսաստանյան պրոլետարիատի և Անդրկովկասի աշխատավորության ինտերնացիոնալ միասնությունն ու մարտական ընկերությունը։

Երկրամասի բոլշևիկների ինտերնացիոնալիստական գործունեությունը իր բարերար ազդեցությունն ունեցավ նաև գյուղացիության վրա։ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի գյուղացիությունն իր հերթին հեղափոխական պայքար մղելով կալվածատերերի, բեկերի ու կուլակության դեմ, իր համակրանքն էր արտահայտում Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարության նկատմամբ և եղբայրական ձեռք մեկնում ռուսական պրոլետարիատին ու գյուղացիությանը։ Վրաստանի Դուշեթի գավառի գյուղացիության կոչը պահանջում էր պաշտպանել գավառի հեղափոխական գյուղացիության պայքարը սովետական իշխանության համար։ Կոչում ասված է՝ «Պայքարը մղվում է եղբայրության, հավասարության ու միասնության հաստատման համար, պայքարը մղվում է բանվորա-գյուղացիական հեղափոխության ավարտման համար... Կորչի մենշևիկների ու կալվածատերերի կառավարությունը։ Կեցցե Սովետական կառավարությունն Անդրկովկասում։

---

12 «Борьба за Советскую власть в Грузии. 1917—1921 гг.». Сборник документов, Тбилиси, 1958, стр. 547—548.

Կեցցե Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների միասնությունը»[13]:

Հայաստանի գյուղացիության հեղափոխական, ինտերնացիոնալիստական տրամադրության մասին էր խոսվում մայիսյան հերոսական ապստամբության պարտությունից հետո Բաքվի «Կոմունիստ» թերթում լույս տեսած հոդվածում, ուր ասված է. «Դաշնակցականների ու նրանց վարձկան մաուզերիստների ձեռքով վայրագ ձևով ճնշվեց Հայաստանի կենտրոնում հեղափոխական շարժումը, սակայն դասակարգային ինքնագիտակցությունը և հեղափոխական ոգին չմեռավ հայ գյուղացու, բանվորի և զինվորի մեջ:

Չկարողանալով դիմադրել գաղանացած վարձկաններին, թողնելով տունն ու տեղը, շատ գյուղացիներ, հեղափոխական զինվորներ ու բանվորներ, վենքը ձեռքերին ապաստանեցին լեռները և մինչև այժմ էլ համառ կռիվ են մղում, համոզված լինելով, որ վերջին հաղթանակն իրենցն է, որ Ռուսաստանի և Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները իրենց հետ են, և հեղափոխական Կարմիր բանակը օգնության կհասնի:

Ապստամբ գյուղացիների և զինվորների մի մասը ապաստանել է Սովետական Ադրբեջանի Ղազախի գավառում: Սրտառուչ տեսարան է ներկայացնում կյանքը Ղազախում: Երեկվա «թշնամի» հայն ու ադրբեջանցին ապրում են կողք-կողքի և դաշնակցական գաղանների ձեռքից փախած հայ աշխատավորը ապաստան է գտնում ադրբեջանցի աշխատավորից...

...Ղազախի ադրբեջանցի գյուղացու համար պարզվեց, որ յուր թշնամին ոչ թե հայ աշխատավոր մասսան է, այլ դաշնակցական հրոսակները և նրանց հավատարիմ զինակից մուսավաթիստները, բեկերն ու խաները»[14]:

Կուսակցության ղեկավարությամբ առաջավոր պրոլետարները ձրդտում էին հակահեղափոխության դեմ մղվող պայքարում ապահովել բոլոր ազգերի բանվորների ու չքավոր գյուղացիության ամենասերտ դասակարգային համախմբումը, դեն նետելով բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսության դրսևորումները:

Չնայած բազմաթիվ դժվարություններին, երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունները հմուտ կերպով ղեկավարում էին աշխատավորների պայքարը հանուն իշխանության: Այդ պայքարի առավել ուժե-

---

13 Նույն տեղում, էջ 304:

14 «Կոմունիստ» (հայերեն, Բաքու), 25 հունիսի 1920 թ.:

ղացումը կապված էր Անդրկովկասի կոմունիստական կուսակցությունների կազմակերպման հետ։ Ուստի կուսակցության Կենտրոնական կոմիտեի քաղբյուրոն, Վ. Ի. Լենինի մասնակցությամբ, 1919 թ. դեկտեմբերի 20-ին որոշում ընդունեց. «Կովկասում կոմունիստական կուսակցություններ կազմակերպելու հարցի մասին»։

Երկրամասի կոմունիստական կուսակցությունները կազմավորվեցին գրեթե միաժամանակ՝ Ադրբեջանում՝ 1920 թ. փետրվարին, Վրաստանում՝ նույն թվականի մայիսին, իսկ Հայաստանում՝ հունիսին։

Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունների կազմակերպումը միանգամայն օրինաչափ երևույթ էր։ Առաջին հերթին պետք է նշել այդ ժողովուրդների քաղաքական-սոցիալական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը փետրվարյան, հատկապես Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո, նրանց քաղաքական գիտակցության մեջ՝ ընդհանրապես և ազգային ինքնագիտակցության մեջ՝ առանձնապես։ Երկրորդ՝ ազգային կոմունիստական կուսակցությունների կազմավորման անհրաժեշտությունը բխում էր հեղափոխական շարժման վերահաս խնդիրներից։ Նրանք գտնվում էին սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար պայքարի նոր էտապում, ազգային պետականության կազմավորման նախօրեին։

Պարզ է, որ նման բարդ խնդիրների կենսագործումը միջազգային ներքին ծանր իրադրության պայմաններում, հնարավոր չէր առանց կազմակերպված մարտական ավանգարդի՝ կոմունիստական կուսակցության։

1920 թ. փետրվարին կայացած Ադրբեջանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության առաջին համագումարը առաջնահերթ խնդիր համարեց զինված ապստամբությամբ մուսավաթական կառավարության տապալումը։ Ադրբեջանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեն, երկրային կոմիտեի ղեկավարությամբ, սերտ կապ հաստատեց 11-րդ կարմիր բանակի հրամանատարության հետ, որը անհրաժեշտության դեպքում պետք է օգնության հասներ ապստամբ աշխատավորներին։ Մուսավաթական բուրժուա-նացիոնալիստական կառավարության օրերն արդեն հաշվված էին։ Հեղափոխական մասսաների ճնշման տակ նա պետք է տեղի տար։ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի հեղափոխական ուժերը, 11-րդ բանակի զորամասերի եղբայրական օգնությամբ տապալեցին մուսավաթականների բուրժուա-նացիոնալիստական իշխանությունը, հաստատվեցին սովետական կարգեր։

Ադրբեջանում սովետական իշխանության հաղթանակը հեղափոխականացնող վիթխարի նշանակություն ունեցավ ամբողջ երկրամասի համար։ Վրաստանում և Հայաստանում մեծ ցույցեր տեղի ունեցան հազարավոր աշխատավորների մասնակցությամբ, որոնք ողջունեցին Ադրբեջանի աշխատավորների հաղթանակը։

Հայաստանի աշխատավորությունը, ոգևորված ադրբեջանական ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրությամբ, 1920 թ. մայիսի 1-ին բոլշևիկների ղեկավարությամբ դուրս եկավ հզոր ցույցերի ու միտինգների, որոնք անցան կոմունիստական լոզունգներով։ Ցույցերը և միտինգները կարճ ժամանակամիջոցում վերաճեցին հուժկու զինված ապստամբության, որը ցնցեց դաշնակցական կառավարության հիմքերը։ Դժբախտաբար թշնամուն հաջողվեց արտաքին ուժերի օգնությամբ ճնշել Մայիսյան հերոսական ապստամբությունը և դատապատնեշել հեղափոխական ուժերի հետ։ Սակայն նույն թվականի նոյեմբերին Հայաստանի աշխատավորների պայքարը ավարտվեց պատմական հաղթանակով՝ սովետական իշխանության հաստատումով։

Վրաստանի բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիությունը՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, նախապատրաստվում էր զինված ապստամբության միջոցով տապալել մենշևիկների տիրապետությունը։ Թիֆլիսում հիմնավորվել էին բազմաթիվ արտասահմանյան երկրների դեսպանություններ, ռազմական ներկայացուցիչներ, որոնք դավեր էին սարքում Կովկասի ժողովուրդների, Ադրբեջանի և Հայաստանի սովետական հանրապետությունների դեմ։ Ս. Օրջոնիկիձեն Վ. Ի. Լենինին ուղղված հեռագրում նշում էր, որ Վրաստանը վերջնականապես դարձել է համաշխարհային հակահեղափոխության շտաբը Մերձավոր Արևելքում։ Չնայած այս բոլորին, Վրաստանի աշխատավորությունը պատրաստ էր գրոհելու մենշևիկյան կառավարության խախուտ դիրքերը։

ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն այդ ժամանակ հատուկ կոչով դիմեց բանվորներին, գյուղացիներին և զինվորներին, մերկացրեց Անդրկովկասի նացիոնալիստական կուսակցությունների և Անտանտի հանցագործ դավադրության հակահեղափոխական էությունը և խրնդիր դրեց կարմիր բանակի հետ միասին ընդհանուր ուժերով վճռական պայքարի ելնել արտաքին և ներքին հակահեղափոխական ուժերի դեմ։

1921 թ. փետրվարի 12-ին բռնկվեց Լոռվա «չեզոք գոտու» գյուղացիության ապստամբությունը։ Ապստամբ գյուղացիները բոլշևիկների

ղեկավարությամբ տապալեցին մենշևիկյան իշխանությունը Լոռու «չեզոք գոտում»։ Ապստամբների խնդրանքով նրանց օգնության հասան 11-րդ կարմիր բանակի զորամասերը։

Վրաստանում առաջինը ապստամբությունը սկսեց Բորչալուի գավառը, ուր փետրվարի 16-ին կազմակերպվեց Վրաստանի հեղափոխական կոմիտեն։ Շուտով ապստամբություններ բռնկվեցին ամբողջ Վրաստանում։ Փետրվարի 25-ին Վրաստանի հեղափոխական կոմիտեն Վրաստանը հայտարարեց Սովետական Սոցիալիստական Հանրապետություն։

Այսպիսով, Վրաստանում սովետական իշխանության հաստատումով ամբողջ Անդրկովկասը դարձավ սովետական։

Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական իշխանության հաղթանակը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակն էր, որն իրագործվեց Վ. Ի. Լենինի ստեղծած կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և ռուս մեծ ժողովրդի եղբայրական անշահախնդիր օգնությամբ։ Դա ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության հաղթանակն էր։

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության հիմնադրման մասին Լ. Ի. Բրեժնևի զեկուցման մեջ ասված է. «Քաղաքացիական պատերազմի տարիներին, ինչպես և մեծ Հոկտեմբերի անմոռանալի օրերին, բանվոր դասակարգի, ամբողջ աշխատավոր ժողովրդի ինտերնացիոնալ համախմբվածությունը հանդիսացավ մեր հաղթանակի կենսարար աղբյուրներից մեկը»[15]։

---

15 Լ. Ի. Բրեժնև, *Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության հիմնադրման մասին*, Երևան, 1973, էջ 6։

Հ. Խ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԿՈՄԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ԵՎ ԱՆԴԻԿԻՎԿԱՍԸ (1919—1921)

Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման անհրաժեշտությունը առաջ է քաշվել Վ. Ի. Լենինի և բոլշևիկների կողմից առաջին համաշխարհային պատերազմի սկզբին՝ երկրորդ ինտերնացիոնալի կրախից անմիջապես հետո։ Կոմինտերնի ստեղծման առաջին քայլերը հանդիսացան Ցիմմերվալդի (1915) և Կինտալի (1916) միջազգային սոցիալիստական կոնֆերանսները, որոնք հրավիրվեցին բոլշևիկների նախաձեռնությամբ։ Չնայած ցիմմերվալդյան առաջին կոնֆերանսի փաստաթղթերը ունեին ցենտրիստական բովանդակություն, այնուհանդերձ, պատերազմի պայմաններում դրանք առաջին լուրջ ձեռնարկումներն էին ինտերնացիոնալիստական ուժերի համախմբման ճանապարհին։ Հենց դրանով է բացատրվում ցիմմերվալդյան գաղափարների արագ տարածումը Եվրոպայի ու Ամերիկայի բոլոր երկրներում։ Ցիմմերվալդյան գաղափարների, հատկապես «ձախ» թևի հայացքների պրոպագանդմամբ ակտիվորեն հանդես եկան Վ. Ի. Լենինը, բոլշևիկները, մյուս երկրների հեղափոխական ինտերնացիոնալիստները։ Ամենուր ցույց էր տրվում, որ կատարվել է «առաջին քայլը պրոլետարիատի դասակարգային պայքարի վերածնման, 3-րդ Ինտերնացիոնալի ստեղծման ճանապարհին»[1]։

Ռուսաստանում ցիմմերվալդյան կոնֆերանսի նյութերի տարածման մասին ցարական գործակալների զեկույցները հաջորդում էին միմյանց։ Այդպիսի զեկույցներ ստացվում էին երկրի բոլոր ծայրերից։ 1915 թ. նոյեմբերի 11-ին Հայաստանի մի շարք գավառների (Ալեքսանդրապոլ, Կարս, Էջմիածին) ժանդարմական պետերի և սահմանա-

1 *Տե՛ս* ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 351, оп. 10, ед. хр. 29454, л. 1.

պահ կետերի անունով ստացվեց Ամերիկանական դեպարտամենտի պաշտոնի շրջաբերական նամակը՝ Շվեյցարիայում գումարված շվեյցարական սոցիալ-դեմոկրատական կուսակցության համագումարի, նրանում բոլշևիկների մասնակցության, ցիմմերվալդյան ոգով ընդունված որոշումների և դրանք Ռուսաստանում տարածելու հնարավորության մասին[2]: Նույն թվականի դեկտեմբերի 20-ին ժանդարմական բոլոր վարչությունների անունով ստացվեց նոր շրջաբերական: Զգուշացվում էր, որ ցիմմերվալդյան մանիֆեստի նման Ռուսաստան կարող էր թափանցել նաև «Սոցիալ-դեմոկրատ» թերթը, որը հրատարակում էր ցիմմերվալդյան փաստաթղթեր: Ուստի Ամերիկանական դեպարտամենտը ժանդարմական վարչություններից և պահնորդական բաժիններից պահանջում էր արգելել «հեղափոխական հրատարակությունների տարածումը կայսրության տերիտորիայում»[3]:

Ցիմմերվալդյան մանիֆեստը բազմացվեց ՌՍԴԲԿ տեղական կազմակերպությունների, այդ թվում Կովկասյան բյուրոյի կողմից: Բաքվից ժանդարմական վարչությունը հայտնում էր, որ Կովկասյան բյուրոյի բազմացրած մանիֆեստի օրինակներ են հայտնաբերվել նավթագործների մոտ ռուսերեն և վրացերեն: Մանիֆեստի օրինակներ էին հայտնաբերվել նաև Քութայիսում, որոնք այստեղ էին բերվել Պետրոգրադից: 1916 թ. փետրվարի 26-ին Ամերիկանական դեպարտամենտին ուղարկված զեկուցագրում Անդրկովկասի երկաթուղային ճանապարհների Ալեքսանդրապոլի ժանդարմական ամերիկանական բաժանմունքի պետը հայտնում էր, որ փետրվարի 14-ի առավոտյան Ալեքսանդրապոլի երկաթուղային դեպոյում անհայտ անձնավորությունների կողմից տարածվել է «Ինտերնացիոնալ սոցիալ-դեմոկրատական կուսակցության» կոչը՝ ուղղված պատերազմի դեմ: Կոչի մի օրինակ գտնվել է մոնտյոր Սավիկի մոտ և հանձնվել դեպոյի պետ Օդեշելիձեին: «Կոչի մյուս օրինակները ոչնչացվել են բանվորների կողմից»[4]:

Ինչպես Ռուսաստանի կենտրոնական շրջաններում, այնպես էլ ծայրամասերում, հաջողությամբ տարածվեցին նաև ցիմմերվալդյան երկրորդ կոնֆերանսի (Կինտալ, 1916 թ. ապրիլ) փաստաթղթերը: Արդեն 1916 թ. մայիսի 10-ին ՌՍԴԲԿ կենտկոմի արտասահմանյան բյուրոն տեղեկացրեց Ռուսական բյուրոյի ներկայացուցչին, որ Ցյուրիխում

---

2 *Տե՛ս ՄԼԻ ՀՖԱ, ֆ. 4033, ց. 1, գ. 449, թ. 1—2:*

3 ЦГАОР СССР, ДП ОО, д. 28, т. 2, 1915, лл. 237, 247, 256.

4 *ՄԼԻ ՀՖԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 842, թ. 1, նաև* ЦГА Груз. ССР, ф. 29, ед. хр. 3668, л. 9.

բազմացվել է Կինտալի կոնֆերանսին ներկայացված բոլշևիկյան ֆրակցիայի նամակը՝ Ռուսաստան ուղարկելու համար։ Ռուսաստան առաքվեցին նաև ցիմմերվալդյան «Ձախ» օրգան «Vorbota» թերթի համարներից մեկը Լենինի հոդվածով և «Սոցիալ-դեմոկրատ» այն համարը, որն ամբողջովին նվիրված է Կինտալի կոնֆերանսին[5]։ Ցարական պահնորդական բաժինը անհանգստությամբ հայտնում էր, որ ռուսական ինտերնացիոնալիստները միջոցներ են ձեռնարկում Ռուսաստանի պրոլետարական մասսաների շրջանում տարածելու միջազգային սոցիալիստական կոնֆերանսի նյութերը։ Ոստիկանական դեպարտամենտը դիմելով ժանդարմական բոլոր վարչություններին, պահանջում էր ամեն գնով արգելել այդ փաստաթղթերի տարածումը[6]։

Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման համար բոլշևիկների մղած պայքարը նոր բովանդակություն ստացավ Ռուսաստանում փետրվարյան և հատկապես Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո, երբ հսկայական մասշտաբներով ծավալվեց միջազգային բանվորական, ազգային-ազատագրական և կոմունիստական շարժումը։

Հոկտեմբերյան հեղափոխության և ծավալվող միջազգային բանվորական շարժման ազդեցության ներքո, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ձախ խմբերը համախմբվում էին կոմունիստական կուսակցությունների շուրջը։ 1918 թ. ընթացքում կոմունիստական կուսակցություններ ստեղծվեցին Գերմանիայում, Հունգարիայում, Ֆինլանդիայում, Ավստրիայում, Լեհաստանում, Հոլանդիայում, Սրգենտինայում։ Միջազգային պրոլետարիատի մեծագույն նվաճումներից մեկը Գերմանիայի կոմունիստական կուսակցության ստեղծումն էր։ Վ. Ի. Լենինը այդ առթիվ գրում է. «...Երբ «Սպարտակի Միությունը» իրեն անվանեց «Գերմանիայի կոմունիստական կուսակցություն»,—այն ժամանակ իրոք պրոլետարական, իրոք ինտերնացիոնալիստական, իրոք հեղափոխական III Ինտերնացիոնալի, Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադրումը դարձավ փաստ»[7]։

1918 թ. ստեղծված կոմունիստական կուսակցություններից էր «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը», որի հիմնական խնդիրներից մեկը արևմտահայ գաղթականության մեջ կազմակերպական

---

5 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 10, ед. хр. 1832 л. 1.

6 Տե՛ս ՄԱԻ ՀՖԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 846, թ. 1։ Տե՛ս նաև ЦГА Груз. ССР, ф. 291, ед. хр. 4302, л. 13—14.

7 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 28, էջ 559։

և պրոպագանդիստական աշխատանք կատարելն էր՝ իրագործելու համար «Թուրքահայաստանի» մասին դեկրետը։ Որոշակի աջակցություն ստանալով ՌԿ(բ)Կ Կենտկոմից, այդ կուսակցությունը զգալի աշխատանք կատարեց արևմտահայ գաղթականության մեջ։ Նա հրատարակում էր «Կարմիր օրեր», իսկ հետո «Կարմիր դրոշակ» թերթերը, որոնք որոշ դեր կատարեցին աշխատավորներին բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների ազդեցությունից ազատագրելու և բոլշևիկների գաղափարների շուրջը համախմբելու գործում[8]։

1919 թ. սկզբին ավարտվեց Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման համար պայքարի եղրափակիչ փուլը։

1919 թ. հունվարի 21-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ձախերի խորհրդակցություն, որին մասնակցում էին կոմունիստական կուսակցությունների մի շարք ներկայացուցիչներ, ինչպես նաև Հայաստանի կոմկուսակցության ներկայացուցիչը։

Խորհրդակցությունը մշակեց նոր ինտերնացիոնալի կազմակերպական հիմունքները և Վ. Ի. Լենինի առաջարկությամբ որոշեց դիմել արտասահմանյան բոլոր կազմակերպություններին, խմբերին ու կուսակցություններին՝ ակտիվորեն մասնակցելու Կոմինտերնի առաջին համագումարին։ Խորհրդակցությունը և նրա ընդունած կոչը հսկայական նշանակություն ունեցան Կոմինտերնի առաջին կոնգրեսի նախապատրաստման և հրավիրման գործում։ Խորհրդակցությունից մի փոքր անց Մոսկվա ժամանեցին մի շարք կուսակցությունների ներկայացուցիչներ։ Սակայն Սովետական Հանրապետության ռազմական բլոկադայի պատճառով շատ կազմակերպությունների ներկայացուցիչների չհաջողվեց մասնակցել Կոմինտերնի հիմնադիր կոնգրեսին։ Կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու համար ընդամենը հրավիրված էին 39 կուսակցություններ, խմբեր, կազմակերպություններ, այդ թվում նաև Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, Վրաստանի և Ադրբեջանի կոմունիստական կազմակերպությունները, բազմաթիվ կազմակերպություններ Արևելքի գաղութային և կախյալ երկրներից։ Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը կոնգրեսին մասնակցում էր վճռական ձայնի, իսկ Վրաստանի և Ադրբեջանի կոմունիստական կազմակերպությունները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով։

Կոմինտերնի հիմնադիր կոնգրեսն իր աշխատանքները սկսեց Մոսկ-

---

8 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 261։

վայում, 1919 թ. մարտի 2-ին։ Նրա աշխատանքներին մասնակցում էին 21 երկրների 35 կազմակերպությունների 52 պատվիրակ, որոնցից 34-ն ունեին վճռական, 18-ը՝ խորհրդակցական ձայնի իրավունք[9]։ Կոնգրեսում քննարկված գլխավոր հարցերն էին Վ. Ի. Լենինի զեկուցումը «Բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին» և Կոմինտերնի պլատֆորմի ընդունումը։

Կոնգրեսի նիստերի դահլիճում, ռուսերեն և այլ լեզուներով գրված ողջույնի լոզունգների կողքին տեղ էր գտել նաև «Կեցցե 3-րդ Կոմունիստական ինտերնացիոնալը» հայերեն լոզունգը։ «Հայաստանի կոմկուսակցության» ներկայացուցիչ Գ. Հայկունին կոնգրեսին ներկայացրեց գրավոր զեկուցագիր։ Գ. Հայկունին 17 պատվիրակությունների ներկայացուցիչների հետ միասին ստորագրեց հիմնադիր կոնգրեսի «Կոմունիստական ինտերնացիոնալի մանիֆեստը» փաստաթղթի, ինչպես նաև «Ամբողջ աշխարհի պրոլետարներին» կոչի տակ։

Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադրումը պատմական մի ամբողջ ժամանակաշրջանի համառ ու երկարատև աշխատանքի արդյունքն էր, որ կատարեցին բոլշևիկները Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։ Հանրագումարի բերելով Կոմինտերնի հիմնադիր կոնգրեսի արդյունքները, Վ. Ի. Լենինը գրում էր. «Հեղափոխության մեջ հաստատուն է միմիայն այն, ինչ որ նվաճված է պրոլետարիատի մասսաների կողմից։ Գրանցել արժե միմիայն այն, ինչ որ իսկապես հաստատուն կերպով նվաճված է։

III, Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադրումը Մոսկվայում 1919 թվականի մարտի 2-ին այն բանի գրանցումն էր, ինչ նվաճել են ո՛չ միայն ռուսական, ո՛չ միայն ռուսաստանյան, այլև գերմանական, ավստրիական, հունգարական, ֆինլանդական, շվեյցարական,—մի խոսքով՝ միջազգային պրոլետարական մասսաները։

Եվ հենց դրա համար էլ III, Կոմունիստական Ինտերնացիոնալը հիմնադրումը մի հաստատուն գործ է»[10]։

Կոմինտերնի առաջին կոնգրեսից հետո համաշխարհային կոմունիստական շարժման զարգացումը հաստատեց Վ. Ի. Լենինի այն կանխատեսումը, թե Կոմինտերնի ստեղծումն ավելի կարագացնի օպորտունիզմից ձախ սոցիալիստների կապերի խզման պրոցեսը և կնպաստի մի շարք երկրներում կոմունիստական կուսակցությունների առաջացմանը։

---

9 Տե՛ս «Первый конгресс Коминтерна. Протоколы», М., 1933, стр. 4, 48, 50, 161, 250, 251.

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 621։

Եվ իրոք, ընդամենը մեկ տարվա ընթացքում «Կոմունիստական Ինտերնացիոնալը այնպիսի հաղթանակներ ձեռք բերեց, որպիսիք չէր կարելի սպասել և կարելի է համարձակորեն ասել, որ նրա հիմնադրման ժամանակ ոչ ոք այդպիսի վիթխարի հաջողությունների չէր սպասում»[11]: Կոմինտերնի առաջին կոնգրեսից հետո կոմունիստական կուսակցություններ ստեղծվեցին մի շարք երկրներում: Կոմինտերնի պլատֆորմին միանալու ցանկություն հայտնեցին որոշ երկրների սոցիալիստական կուսակցություններ: «Աշխարհում չկա ոչ մի երկիր, նույնիսկ ամենաանդարդացած, որտեղ մտածող բոլոր բանվորները չմիանան Կոմունիստական Ինտերնացիոնալին, գաղափարապես չհարեն նրան: Սրա մեջ է լիակատար երաշխիքը այն բանի, որ Կոմունիստական Ինտերնացիոնալի հաղթությունը ամբողջ աշխարհում ոչ չափազանց հեռավոր ժամանակամիջոցում ապահովված է»[12],— նշում էր Վ. Ի. Լենինը Կոմինտերնի ստեղծման տարեդարձի առթիվ արտասանած ճառում:

Մարքս-լենինյան ուսմունքի պրոպագանդման, միջազգային կոմունիստական շարժման տեսության, ստրատեգիայի ու տակտիկայի արմատական հարցերի մշակման և հետագա զարգացման գործում կարևոր դեր խաղաց «Կոմունիստական Ինտերնացիոնալ» ամսագիրը, որի առաջին համարը լույս տեսավ 1919 թ. մայիսին, Կոմինտերնի առաջին կոնգրեսի որոշմամբ: Նրա էջերում տպագրվում էին Վ. Ի. Լենինի հոդվածներն ու աշխատությունները, որոնք գործողության ուղեցույց էին միջազգային կոմունիստական շարժման ստրատեգիական գծի և պայքարի տակտիկական միջոցների մշակման համար:

Ամսագրին ակտիվորեն աշխատակցում էին միջազգային կոմունիստական շարժման ականավոր գործիչներ Կ. Ցետկինը, Մ. Ցխակայան, Մ. Կաշենը, Մ. Թորեզը, Պ. Տոլյատին, Գ. Դիմիտրովը, Վ. Պիկը, Ջ. Ռիդը, Յու. Մարխլևսկին, Դ. Մանուիլսկին և ուրիշներ:

«Կոմունիստական Ինտերնացիոնալի» էջերում հաճախ արտացոլում էր գտնում նաև Անդրկովկասի կյանքը: Հոդվածներ, նյութեր էին տպագրվում Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական ծանր դրության, նրանց հերոսական պայքարի մասին՝ ընդդեմ բուրժուա-ազգայնական կառավարությունների հակաժողովրդական քաղաքականության: Այդ հոդվածներում մերկացվում էին ինչպես Անտանտի իմպերիալիստները, որոնք ցանկանում էին իրենց տիրապետությունը հաստատել Անդրկով-

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 532:

12 Նույն տեղում, էջ 543:

կասում, այնպես էլ Երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդները, որոնք ամեն կերպ ձգտում էին Անդրկովկասը դարձնել հենակետ՝ բոլշևիզմի դեմ պայքարելու համար։ Այդ միտքն է արտահայտված հատկապես Կոմինտերնի գործկոմի կոչում՝ ուղղված «Պարսկաստանի, Հայաստանի և Թուրքիայի հարստահարված ժողովրդական մասսաներին», ինչպես նաև «Կոմունիզմը Հայաստանում» ու «Սովետական Ռուսաստանը և անգլո-ֆրանսիական ինտրիգները Արևելքում» հոդվածներում։ «Կոմունիզմը Հայաստանում» հոդվածում կարդում ենք. «Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաների նկատմամբ միջազգային իմպերիալիստների ծաղրուծանակը առանձնապես պարզորոշ արտահայտվեց Հայաստանի մանդատն ընդունելու մեջ։ Մինչև այժմ էլ Հայաստանի մանդատի սակարկությունները իմպերիալիստների կողմից շարունակվում են։ Բայց իմպերիալիստները այնուամենայնիվ ձեռքից բաց չեն թողնում Հայաստանը, որը ամենից առաջ նրանց հարկավոր է բոլշևիզմի դեմ պայքարելու համար»[13]։ Մյուս հոդվածում, որի հեղինակը Մ. Պավլովիչն է (Վելտման), նշվում է, որ անգլո-ֆրանսիական իմպերիալիստներն ամեն կերպ ցանկանում են իրենց ազդեցությունն ամրապնդել Արևելքում, սակայն «Սովետական Ռուսաստանի գոյությունը խանգարում է իմպերիալիստական պետությունների ավազակային պլանների իրականացմանը Արևելքում»[14]։ Արևելքում ծավալված հեղափոխական շարժումներից մասսաների ուշադրությունը շեղելու նպատակով Անգլիան և Ֆրանսիան Ռուսաստանի դեմ հարձակման նետեցին սպիտակ լեհերին և Վրանգելին, դրա հետ միասին շարունակելով ամրապնդել մենշևիկների և դաշնակցականների իշխանությունը Վրաստանում և Հայաստանում։ «Պատերազմը Սովետական Ռուսաստանի դեմ՝ դա պատերազմ է հեղափոխական Արևելքի դեմ, պատերազմը Արևելքի դեմ՝ դա պատերազմ է Սովետական Ռուսաստանի դեմ»[15]։ Հետևաբար, երբ եվրոպական իմպերիալիստները զենքով, փողով ու հացով աջակցում էին մենշևիկյան Վրաստանին և դաշնակցական Հայաստանին, ա պա դա անում էին ելնելով միայն իրենց շահերից, նպատակ ունենալով տապալելու սովետական իշխանությունը Ռուսաստանում և Կովկասը կտրելու Ռուսաստանից։ «Անգլիան,— գրում էր հոդվածագիրը,—չի բավարարվում մեր դեմ միայն քրիստոնեական պետություններից կազմված միավորումով (Վրաստան, Հունաստան, Հայաստան, վրան-

13 «Коммунистический Интернационал», 1920, № 13, стр. 25—44.

14 Նույն տեղում, № 14, էջ 2762։

15 Նույն տեղում։

գելյան Դրիմ), այլ փորձում է նաև մեր դեմ պայքարի մեջ ներքաշել մուսուլմանական մասսաներին»[16]:

Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում իմպերիալիստները կարևոր տեղ էին հատկացնում Բաքվին: «Կարելի է առանց չափազանցնելու ասել, որ ոչ միայն Ռուսաստանի համառուսաստանյան ֆեդերացիայի աշխատավոր մասսաների բախտը, այլ նաև 3-րդ ինտերնացիոնալի ապագան նշանակալի չափով կախված է այն բանից, թե ում ձեռքին կգտնվի Բաքուն»[17]: *Այդ պատճառով էլ, երբ Ադրբեջանում հաղթանակից սովետական իշխանությունը, Անգլիան և Ֆրանսիան ամեն կերպ ջանում էին մենշևիկյան Վրաստանը և դաշնակցական Հայաստանը կռվի մեջ քաշել Սովետական Ադրբեջանի դեմ:*

Անտանտի իմպերիալիստների և անդրկովկասյան հանրապետությունների հակաժողովրդական կառավարությունների այդօրինակ մտադրությունները միշտ էլ մերկացվում էին երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների կողմից, որոնք Կոմինտերնի երկրորդ կոնգրեսի նախօրյակին ձևավորվեցին որպես ինքնուրույն կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցություններ: Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում կոմունիստական կուսակցություններ ստեղծելու հարցը բարձրացավ 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին: Դեռևս 1919 թ. դեկտեմբերի 21-ին Ռ Կ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն ողջունեց Ադրբեջանի կոմունիստական կուսակցության ծնունդը, միաժամանակ առաջարկեց կոմկուսակցություններ ստեղծել նաև Հայաստանում և Վրաստանում:

1920 թ. հունվարի 3-ին Ռ Կ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն, Վ. Ի. Լենինի մասնակցությամբ, նորից անդրադարձավ Կովկասի կուսակցական կազմակերպությունների հարցին և այդ առթիվ ընդունեց բանաձև, որի մեջ ասվում էր. «Պայքարը տեղական շովինիզմի դեմ և ռուսական ցարիզմի լծի տակ գտնվող ազգերի մեջ սոցիալիստական հեղափոխության պրոպագանդելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը անհրաժեշտ են դարձնում, որպեսզի նախկին ռուսական կայսրության սահմաններում փաստորեն ստեղծված «ինքնուրույն» պետություններում կոմունիստական կազմակերպությունները աշխատեն որպես ինքնուրույն կոմունիստական կուսակցություններ: Առանձնապես կարևոր է կազմակերպման նման եղանակը Արևելքում, այն պատճառով, որ Ասիայի նախաշեմին ապրող ժողովուրդների վստահության

---

16 Նույն տեղում, էջ 2770:

17 Նույն տեղում, էջ 2773:

նվաճումը կազմում է Սովետական Ռուսաստանի և ՌԿԿ-ի հիմնական խնդիրներից մեկը»[18]։

Ղեկավարվելով այդ որոշմամբ, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները ձեռնամուխ եղան ինքնուրույն կոմկուսակցությունների ստեղծմանը։ 1920 թ. փետրվարին ձևավորվեց Ադրբեջանի, մայիսին՝ Վրաստանի, հունիսին՝ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունները[19]։

1920 թ. հուլիսի 30-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմակերպական բյուրոն հատուկ որոշմամբ հաստատեց Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում կոմունիստական կուսակցությունների ստեղծումը՝ տալով նրանց մարզային կազմակերպությունների իրավունք, որոնք պետք է ենթարկվեին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյին։

Հայաստանում և Վրաստանում սովետական իշխանության համար մղվող պայքարում կարևոր դեր խաղացին Կոմինտերնի երկրորդ կոնգրեսի որոշումները, որոնք գործողության ուղեցույց դարձան երկրամասի կոմունիստական կազմակերպությունների համար։ Գնալով ավելանում էր տեղական կոմունիստական կազմակերպությունների թիվը, որոնք, թեև ստիպված էին աշխատել անլեգալ պայմաններում, սակայն վարպետորեն զուգակցում էին անլեգալ աշխատանքը պայքարի լեգալ հնարավորությունների հետ։ Նման տակտիկան լիովին համապատասխանում էր Կոմինտերնի գծին։ «Այն երկրներում, որտեղ իշխանության գլուխ կանգնած է բուրժուազիան, կամ հակահեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, կոմկուսակցությունները պարտավոր են պլանաչափ կերպով զուգակցել լեգալ աշխատանքը անլեգալի հետ, դրա հետ միասին լեգալ աշխատանքը պետք է գտնվի անլեգալ կուսակցության փաստական վերահսկողության ներքո»[20]։

Կոմինտերնի II կոնգրեսը, որ տեղի ունեցավ 1920 թ. հուլիսի 19-ից մինչև օգոստոսի 7-ը՝ ավելի ներկայացուցչական էր, քան առաջինը։ Ոչ լրիվ տվյալներով նրա աշխատանքներին մասնակցում էին 218 պատվիրակ 37 երկրների 69 կազմակերպություններից։

Բուրժուական գրականության մեջ փորձեր են արվում ժխտելու

---

18 «Очерки коммунистических организаций Закавказья», ч. 1 (1883—1921 гг.). Тбилиси, 1967, стр. 344.

19 Հայաստանի կոմունիստական կուսակցությունը որպես էքստերիտորիալ կազմակերպություն 1920 թ. ամռանը դադարեցրեց իր գործունեությունը, իսկ նրա անդամները մտան ՌԿ(բ)Կ տեղական կազմակերպությունների մեջ։

20 «Коминтерн в документах», М., 1933, стр. 110.

Կոմինտերնի II կոնգրեսի միջազգային ներկայացուցչական բնույթը։ Այսպես, ամերիկյան պատմաբան Ջ. Հյուլսը հայտարարում է, որ բոլշևիկները ընտրելով հատուկ պատվիրակներ, իրենց համար ապահովեցին «բացահայտ առավելություն կոնգրեսում»։ Իսկ Լ. Ֆիշերի կարծիքով՝ Մոսկվան և Լենինը տիրապետում էին II կոնգրեսում։ Հակակոմունիզմի ջատագովները բանն այնպես են ներկայացնում, որ իբր արտասահմանյան կուսակցությունների ներկայացուցիչները չէին կարող որևէ ազդեցություն թողնել կոնգրեսի որոշումների վրա։ Նույն Հյուլսի կարծիքով կոնգրեսում լավագույն դեպքում ներկայացված էին Ռուսաստանը և Եվրոպան, իսկ մյուս մայր ցամաքներից ներկայացված էին քիչ թվով պատվիրակներ։ Այս պնդումը չի դիմանում քննադատության, որովհետև կոնգրեսի աշխատանքներին գործուն մասնակցություն ցույց տվեցին ԱՄՆ-ի, Ինդոնեզիայի, Մեքսիկայի, Ավստրալիայի, Հընդկաստանի, Կորեայի, Չինաստանի, Իրանի, Թուրքիայի, Բուխարայի և այլ երկրների ներկայացուցիչներ։

Կոնգրեսի աշխատանքներին վճռական ձայնի իրավունքով մասնակցում էին նաև Անդրկովկասի կոմունիստական կուսակցությունները։ Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը ներկայացնում էին Ռ. Ախունդովը և Սապոնովը, Հայաստանի կոմկուսակցությունը՝ Ա. Նուրիջանյանը և Հ. Նազարեթյանը, Վրաստանի կոմկուսակցությունը՝ Վ. Վաշակաձեն, Ֆ. Մախարաձեն, Ա. Միքաձեն, Ս. Բոդրիան, Մ. Ցխակայան, Վրաստանի կոմունիստական երիտասարդական միությունը՝ Հ. Վարդանյանը, Հարավային Օսեթական կոմունիստական կազմակերպությունը՝ Կոզաևը[21]։

Կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էին նաև Լ. Կարախանը, Ենուկիձեն, Ռ. Քաթանյանը, Վ. Ավանեսովը և Անդրկովկասի ուրիշ կոմունիստներ։

Կոմինտերնի II կոնգրեսի առաջին նիստը տեղի ունեցավ 1920 թ. հուլիսի 19-ին Պետրոգրադում։ Վ. Ի. Լենինը զեկուցեց միջազգային դրության և Կոմինտերնի խնդիրների մասին։ Որոշելով Կոմինտերնի դերը համաշխարհային իմպերիալիզմի դեմ ծավալված հզոր պայքարում, Վ. Ի. Լենինը իր զեկուցման ուրվագծերից մեկում գրում էր. «...Կոմունիստական ինտերնացիոնալը այժմ ոչ թե պրոպագանդիստական միություն է, այլ բանվոր դասակարգի բանակների պրակտիկ շարժման սկիզբ»[22]։ Վ. Ի. Լենինը, վերլուծելով ստեղծված իրադրու-

21 Տե՛ս «Второй конгресс Коминтерна». Июль-август, М., 1934, стр. 664.

22 «Ленин и Коммунистический Интернационал», М., 1970, стр. 49.

թյունը, իր զեկուցման մեջ առաջ քաշեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի մասին դրույթը, մատնանշելով, որ այդ ճգնաժամը սոցիալիստական հասարակարգի ծննդի սկիզբն է։

Պետրոգրադի նիստում սրտառուչ էր հեղափոխության մեծ առաջնորդի հանդիպումը սոցիալիստական շարժման վետերաններից մեկի՝ Մ. Յոհակայայի հետ։ Այդ մասին կոնգրեսի պատվիրակ, Վրաստանի կոմկուսակցության Կենտկոմի անդամ Ս. Թոդրիան հետագայում գրել է. «Մենք՝ Վրաստանի ներկայացուցիչներս, նստել էինք միասին և լարված ուշադրությամբ սպասում էինք ամբիոնի մոտ Լենինի երևալուն։ Մարդկանցով լի բեմի վրա լսվեցին ծափահարություններ, որոնք վերաճեցին ամբողջ դահլիճի բուռն ծափահարությունների։ Երևաց Լենինը։ Ուշադրություն չդարձնելով ծափահարությունների վրա, նա առաջ եկավ և բեմից նայեց դահլիճին։ Դահլիճի կենտրոնում նա նկատեց ինչ-որ մեկի և ժպտալով արագորեն մոտեցավ նրան։ Նա եկավ ուղիղ դեպի մեզ։ Մոտեցավ, գրկեց Միխայինն։ «Ինչպես ես ապրում, լավ, ինչպես են գործերը»[23]։

Կոնգրեսի հաջորդ նիստերը, սկսած հուլիսի 23-ից, տեղի ունեցան Մոսկվայում։ Կոնգրեսը, որը հրավիրվեց միջազգային-բացառիկ բարդ իրադրության պայմաններում, ընդհանրացրեց նախորդ տարիներին պրոլետարիատի ձեռք բերած հաջողությունների փորձը և պարտության դասերը, որոշեց համաշխարհային հեղափոխության զարգացման հեռանկարները, մշակեց պրոլետարիատի դասակարգային պայքարի ստրատեգիան և տակտիկան նոր պայմաններում։

Կոմինտերնի II կոնգրեսը հսկայական ուշադրություն դարձրեց իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում բանվոր դասակարգի դաշնակիցների հարցին։ Այդ կապակցությամբ քննարկվեցին ագրարային և ազգային-գաղութային հարցերը։ Հատկապես այդ և կոմունիստական կուսակցության դերի մասին հարցերը կարևոր նշանակություն ունեին Անդրկովկասի համար, որտեղ հանուն սովետական իշխանության պայքարը թևակոխել էր իր ավարտական փուլը։ Շատ կարևոր էր, թե այդ պայքարում ինչպես պետք է իրականացվեր բանվորա-գյուղացիական դաշինքը։

Ազգային-գաղութային հարցի քննարկումն արժանացավ կոնգրեսի բոլոր մասնակիցների հավանությանը։ Թեև II ինտերնացիոնալը սահմանափակվում էր միայն բանաձևեր ընդունելով, «որոնք կյանքում երբեք չիրականացվեցին,—իր ելույթում նշեց Իրանի կոմկուսի ներկայա-

23 «Труды Грузинского филиала ИМЛ». № 2, 1957, стр. 267.

ցուցիչ Սուլթան-զադեն, առաջին անգամ այժմ, Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսում, այդ հարցը քննարկվում է բազմակողմանիորեն և խորը կերպով, Արևելքի և Ամերիկայի համարյա բոլոր գաղութային և կիսագաղութային երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ»[24]: Ելնելով այն հանգամանքից, որ ազգային-ազատագրական շարժումը դարձել է համաշխարհային հեղափոխության բաղկացուցիչ մասը, Վ. Ի. Լենինը կոմունիստական կուսակցությունների գլխավոր խնդիրներից մեկը Արևելքի երկրներում համարում էր աջակցությունը բուրժուա-դեմոկրատական հեղափոխություններին: Կոմունիստները գաղութային ճնշման դեմ մղվող պայքարում պետք է միավորեն հակաիմպերիալիստական բոլոր ուժերին:

Վ. Ի. Լենինը այն միտքն էր զարգացնում, որ եթե առաջ ազգային ազատագրական շարժումը ավարտվում էր բուրժուազիայի՝ իշխանության գլուխ անցելով, ապա կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում կոմկուսակցությունների գլխավորությամբ պրոլետարիատի ղեկավարած այդ շարժումները հաջողության դեպքում կարող են հանգեցնել իսկական ժողովրդական իշխանության հաստատման:

Հենվելով Միջին Ասիայի սովետական հանրապետություններում ՌԿ(բ)Կ աշխատանքի փորձի վրա, Վ. Ի. Լենինը հիմնավորեց այն կարևորագույն դրույթը, որ իմպերիալիզմի ճնշումից ազատագրվելուց հետո գաղութային երկրները, որոնցում գերիշխում է ֆեոդալիզմը, կարող են առաջավոր երկրների հաղթանակած պրոլետարիատի օգնությամբ իրականացնել անցումը դեպի սոցիալիզմ, շրջանցելով զարգացման կապիտալիստական փուլը:

Որոշելով կոմունիստների խնդիրները Արևելքի երկրներում, Վ. Ի. Լենինը ընդգծում էր. «...Անհրաժեշտ է բոլոր ուժերը ուղղել այն բանին, որպեսզի սովետական կարգի հիմնական սկզբունքները կիրառվեն մինչկապիտալիստական հարաբերություններ ապրող երկրներում «աշխատավորների սովետներ» ստեղծելու ճանապարհով»[25]:

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ Արևելքի կոմունիստները պետք է հենվեն «այն բուրժուական նացիոնալիզմի վրա, որ այդ ժողովուրդների մեջ արթնանում է և չի կարող չարթնանալ, և որը պատմական արդարացում ունի»[26], միաժամանակ զգուշացնելով, որ պաշտպանելով

---

24 «Второй конгресс Коминтерна», июль-август, 1920, М., 1934, стр. 118.

25 «Коммунистический Интернационал». Краткие исторические очерки. М., 1969, стр. 95.

26 Վ. Ի. Լենին, *երկեր, հատ. 30, էջ 189:*

բուրժուական նացիոնալիզմի առաջադիմական բովանդակությունը, չի կարելի մոռանալ նրա սոցիալական էությունը։ Իմպերիալիստներին վռնդելով, հարկավոր է առաջ քաշել աշխատավորներին սոցիալական ճնշումից ազատագրելու հարցը։

Կոմինտերնի II կոնգրեսին մի շարք պատվիրակություններ ներկայացրին գրավոր զեկուցագրեր։ Հայաստանի և Վրաստանի պատվիրակությունների զեկուցագրերում տրված է այդ երկրների ներքին իրադրության վերլուծությունը, հեղափոխական պայքարում կոմկուսակցությունների խնդիրները, մատնանշված են սովետական իշխանության համար մղվող պայքարի հեռանկարները։

Հայաստանի պատվիրակության (Ա. Նուրիջանյան, Հ. Նազարեթյան) զեկուցագրում նկարագրվում էր Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքը, մերկացվում էր դաշնակների հակաժողովրդական քաղաքականությունը։ Նրանում նշվում էր, որ Անդրկովկասի երեք հանրապետություններից տնտեսապես ամենահետամնացը Հայաստանն էր, որին «համապատասխանում է նաև նրա քաղաքական հետամնացությունը»[27]։ Զեկուցագրում ցույց է տրվում, որ դաշնակների կառավարման ժամանակ ավելի մեծ չափերի է հասել երկրի տնտեսական փլուզումը, բռնկվել են ազգամիջյան մի շարք պատերազմներ, որոնք «իրենց ավերիչ հետևանքներով... մաշեցին առանց այն էլ թույլ, տնտեսապես հետամնաց պետության հիմքերը»։

Հայաստանի աշխատավոր զանգվածների ողբերգությունը զեկուցագրում բացատրվում է գլխավորապես նրանով, որ բացակայում էր կազմակերպված բանվոր դասակարգը, որը կարողանար իր կամքը հակադրեր «կառավարության նկրտումներին»։ Այնուհանդերձ, 1918 թ. Բաքվում սովետական իշխանության անկումից հետո Հայաստան վերադարձան շատ բանվորներ և արհեստավորներ, որոնք հիմնականում աշխատանքի անցան երկաթուղիներում։ Հատկապես դրական աշխատանք կատարեցին արհմիութենական կազմակերպությունները, որոնք հակադրվեցին կառավարության կողմից ստեղծված երկաթուղային արհմիութենական կոմիտեին։

Նորաստեղծ կոմունիստական կուսակցությունները այդ տարիներին «ձախությանն» սխալներ էին թույլ տալիս հատկապես արհմիությունների հարցում։ Վ. Ի. Լենինը «Ձախության» մանկական հիվանդու-

---

27 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)», Երևան, 1960, էջ 353—358։

թյունը կոմունիզմի մեջ» աշխատությունում ցույց տվեց այդ սխալների արմատները, իսկ Կոմինտերնի II կոնգրեսը օգնեց երիտասարդ կոմունիստներին՝ ճիշտ հասկանալու արհմիությունների դերը պրոլետարիատի դասակարգային պայքարում։ 1920 թ. ապրիլին կայացած Հայաստանի երկաթուղայինների համագումարում կոմունիստները լիակատար հաղթանակ տարան, բայց կառավարությունը բռնությամբ և կոմունիստ պատգամավորներին ձերբակալելու միջոցով հասավ այն բանին, որ կազմվեց նոր կենտրոնական կոմիտե, որը իր առաջ նպատակ դրեց արմատախիլ անել բոլշևիզմը երկաթուղայինների շրջանում։ Զեկուցագրում նշվում է, որ «կուսակցության գլխավոր ուշադրությունը դարձված է եղել բանվոր դասակարգի կազմակերպման և այն աշխատանքի վրա, որ կատարվում է արհմիություններում, որոնք հետզհետե անցնում են կոմունիստների ձեռքը և յուրացնում կոմունիզմի տակտիկան և քաղաքականությունը»։

1920 թ. հունվարին տեղի էր ունեցել ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը։ Ա. Նուրիջանյանը կոնֆերանսին ներկայացրեց իր կողմից կազմված և Ալեքսանդրապոլի համաքաղաքային II կոնֆերանսում հաստատված բանաձևը։ Նրանում (ի միջի այլոց կոնգրեսին ներկայացրած զեկուցագրում ընդարձակ քաղվածքներ են բերված հենց այդ բանաձևից) լուսաբանվում էր միջազգային դրությունը, Անդրկովկասի նացիոնալիստական կառավարությունների հակաժողովրդական քաղաքականության էությունը։

Կոմինտերնի II կոնգրեսին ներկայացված ազգային ու գաղութային հարցի մասին Վ. Ի. Լենինի զեկուցման մեջ մեծ տեղ էր հատկացվում Արևելքի ժողովուրդների հակաիմպերիալիստական շարժմանը։ Լենինը ցույց էր տալիս ճնշված ժողովուրդների ազգային ինքնագիտակցության արթնացման առաջադիմական նշանակությունը և ընդգծում, որ հեղափոխական Արևելքը հակաիմպերիալիստական շարժման աճող ուժ է։ Լենինը վճռականորեն մերժում էր Արևելքում ծավալված ազգայնական-ազատագրական պայքարը Արևելքի սոցիալիստական հեղափոխության գործին հակադրելու բոլոր փորձերը։ Նա մերժում էր այն պնդումը, «...թե իբր Արևելքի ճակատագիրը բացառապես կախված է արևելյան երկրներում հեղափոխական շարժումների ուժից ու զարգացման աստիճանից»[28]։ Լենինյան այս դրույթը հավասար չափով տարածվում էր նաև Հայաստանի վրա։ Հետևաբար, հայ ժողովրդի ազատագրումը պետք

---

28 «Вестник Второго конгресса Коминтерна», № 1, 27 июля 1920 г.

էր կապել ոչ թե Արևելքի ժողովուրդների ապստամբության, այլ սոցիալիստական Ռուսաստանի կողմից ցույց տրվող օգնության հետ:

Կոնգրեսին զրավոր զեկուցագիր և թեզիսներ ներկայացրեց նաև Վրաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության պատվիրակությունը:

Վերլուծելով Վրաստանում ստեղծված իրավիճակը, զեկուցագրում նշվում էր, որ «Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դասակարգային պայքարը Վրաստանում ծայրահեղորեն սրվել է: Այն արդեն վեր է ածվել քաղաքացիական պատերազմի, որը ժամանակ առ ժամանակ թուլանալով, շարունակվում է մինչև այժմ»[29]: Այնուհետև ընդգծվում է, որ ինչպես Եվրոպայի շատ երկրներում, Վրաստանում ևս բանվոր դասակարգը հեղափոխության սկզբում պառակտվել էր երկու մասի: Նրա մի մասը գնում էր հակահեղափոխական կուսակցությունների և բանվոր դասակարգի դավաճանների հետից (Ժորդանիա, Ծերեթելի, Չխեիձե և ուրիշներ): Գործի բանվորները և գյուղացիության մեծամասնությունը Հոկտեմբերյան հեղափոխության հենց առաջին օրից հանդես եկան որպես սովետական իշխանության ջերմ կողմնակիցներ և «ծավալված քաղաքացիական պատերազմում մի ձեռքում պրոլետարիատի կարմիր դրոշը», մյուս ձեռքում «ազգային դրոշը»՝ պայքարի ելան հակահեղափոխական բուրժուազիայի և նրանց շահերի պաշտպան «սոցիալիստ» մենշևիկների դեմ: Հակահեղափոխությունը սկզբում հաջողության հասավ, իհարկե, օգտագործելով օտարերկրյա իմպերիալիստների ուժերը: Սրանով է հենց բացատրվում հեղափոխության ժամանակավոր պարտությունը Վրաստանում: Սակայն այդ վիճակը երկար չշարունակվեց և «այժմ... բուրժուական դասակարգերը մենշևիկների գլխավորությամբ» դրության բարելավման ուղիներ են փնտրում, իսկ քաղաքային բանվորները, «ազատվելով մենշևիկյան թունավորումից», արագորեն անցնում են հեղափոխության կողմը: Այսպիսի պայմաններում, երբ ուժերի հարաբերությունը սովետական իշխանության կողմն է, կարևոր նշանակություն է ձեռք բերում կոմունիստական կուսակցության կողմից ուժերի ճիշտ օգտագործումը, «նրա տակտիկայի ճկունությունը, մոմենտի ճիշտ գնահատումը»[30]: Կոմկուսակցությունը, նշվում է զեկուցագրում, հենվելով կոմկուսակցության մասին կոնգրեսի որոշումներից, պետք է իր շուրջը համախմբի գյուղի և քաղաքի աշխատավոր զանգվածներին, մինչև վերջ մերկացնի մենշևիկների հակաժողովրդական քաղաքակա-

29 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 65, ед. хр. 257, л. 6.

30 Նույն տեղում:

նութիւնը, ցույց տա, որ նրանք միայն «խոսքերով են սոցիալիստ, իսկ իրականում ինտելիգենտ-բուրժուաների ամենահավատարիմ պաշտպաններն են»[31]: Կուսակցությունը պետք է լայն ագիտացիա ծավալի ազգային փոքրամասնությունների շրջանում, ցույց տալով, որ «միայն սովետական իշխանությունը կարող է լիակատար կերպով բավարարել ազգային ճնշված փոքրամասնությունների բոլոր կենսական պահանջներն ու կարիքները և դրա համար էլ, եթե նրանք իրականում... (տեքստում չի կարդացվում—Հ. Գ.)... նրանք պետք է կանգնեն ազգերի ինքնորոշման ուղու վրա»[32]: Այստեղ բերված է ՌՍՖՍՀ ազգային փոքրամասնությունների օրինակը:

Զեկուցագրում արդեն մտքեր կան այն մասին, որ Անդրկովկասի հանրապետությունները սովետացումից հետո պետք է մտնեն ՌՍՖՍՀ-ի կազմի մեջ ֆեդերատիվ սկզբունքներով: «Անդրկովկասը և մասնավորապես Վրաստանը անջատվել են Սովետական Ռուսաստանից բացարձակորեն արհեստականորեն և ուժով: Կասկած չկա, որ Վրաստանում և Հայաստանում սովետական իշխանության հաստատումով այդ բոլոր հանրապետությունները, Ադրբեջանի հետ միասին, մտնելու են ՌՍՖՍՀ կազմի մեջ ֆեդերատիվ հիմունքներով: Իր ճանապարհին կանգնած դժվարագույն խնդիրները հաղթահարելու համար, նշվում է զեկուցման մեջ, Վրաստանի կոմկուսը պետք է սերտ կապ հաստատի Ռ(բ)Կ հետ՝ մի կողմից և Հայաստանի ու Ադրբեջանի կոմկուսակցությունների հետ՝ մյուս կողմից: Վրաստանի պատվիրակությունը առաջարկեց միաժամանակ ամբողջ Կովկասի մասշտաբով ստեղծել կուսակցական միասնական կենտրոն, ինչպես այդ կար նախկինում, հանձին Ռ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի: Դա անհրաժեշտ էր այնքանով, որ «ներկայումս, սովետական իշխանության հաստատումով Կովկասի տերիտորիայի մեծ մասում այդ միավորման համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ»[33]:

Պետք է նկատել, որ Վրաստանի պատվիրակության զեկուցագրում, ինչպես և կուսակցական այլ փաստաթղթերում այդ ժամանակվա դլխավոր գործելակերպը (1920 թ. մայիսին կնքված սովետա-վրացական պայմանագրից հետո) ոչ թե համարվում էր ընված ապատամբությունը, այլ հեղափոխության խաղաղ ղարգացումը: Դա Ռ(բ)Կ կենտկոմի դիրեկտիվի կատարումն էր: Դեռ մինչև Կոմինտերնի II կոնգրեսի հրա-

31 Նույն տեղում, թ. 7:
32 Նույն տեղում:
33 Նույն տեղում, թ. 8:

վիրումը, 1920 թ. հունիսին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն քննարկեց «Կովկասում քաղաքականության մասին» հարցը: Հատկապես կարևոր է որոշման այն մասը, որը Հայաստանի և Վրաստանի կոմունիստական կազմակերպություններից պահանջում էր հեռու մնալ Վրաստանի և Հայաստանի կառավարությունների դեմ ապստամբություն բարձրացնելու փորձերից: «Հարկավոր է այդ հանրապետություններում հեղաշրջման ձգտող տարրերին բացատրել, որ ելնելով ընդհանուր քաղաքական նկատառումներից և հաշվի առնելով ինչպես համաշխարհային կոնյուկտուրան, այնպես էլ մեր ռազմական դրությունը, նրանք ներկայումս չպետք է ձեռնամուխ լինեն իրենց նպատակների իրագործմանը: Նրանք պետք է մնան պայմանագրի շրջանակներում»[34]: Սակայն որոշ ժամանակ անց, երբ վերսկսվեցին մենշևիկների կողմից հեղափոխական ուժերի բացահայտ հալածանքները, Վրաստանի կոմկուսակցությունը դարձյալ օրակարգում դրեց զինված ապստամբության հարցը:

Կոմինտերնի II կոնգրեսը հիանալի քաղաքական համալսարան հանդիսացավ միջազգային պրոլետարիատի և ճնշված ժողովուրդների հեղափոխական պայքարի համար: Կոմինտերնի նորաստեղծ Գործկոմի կազմում Հայաստանի և Վրաստանի կոմկուսակցությունների կողմից ընտրվեց Մ. Ցխակայան: Կոնգրեսը կարևոր էտապ էր միջազգային կոմունիստական և հեղափոխական շարժման զարգացման մեջ: Նրա որոշումները հսկայական նշանակություն ունեցան Անդրկովկասի (Հայաստանի և Վրաստանի)[35] կոմունիստական կազմակերպությունների համար, որոնք թևակոխել էին սովետական իշխանության համար մղվող պայքարի եղրափակիչ փուլը: Հաշվի առնելով Հայաստանի և Վրաստանի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև ժողովրդական մասսաների հեղափոխական տրամադրությունները, կուսակցական կազմակերպությունները հսկայական դործունեություն ծավալեցին երկրամասում սովետական իշխանության հաղթանակի համար:

Աշխատավոր զանգվածները հսկայական ուշադրությամբ հետևում էին Սովետական Ռուսաստանում և Ադրբեջանում ծավալվող իրադարձություններին, իրենց համակրանքը արտահայտում նրանց հաջողությունների նկատմամբ: Եթե շահագործող դասակարգերը և նրանց շահերը ներկայացնող կառավարությունները ամեն ինչ անում էին երկրամասը Սովետական Ռուսաստանի դեմ պայքարի հենակետ դարձնելու

---

34 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 3, ед. хр. 94, л. 7.

35 Ադրբեջանում արդեն հաստատվել էր սովետական իշխանություն:

համար, ապա աշխատավորներն իրենց ամենօրյա պայքարով ի չիք էին դարձնում այդ ձգտումները և մոտեցնում սովետական իշխանության հաղթանակը Անդրկովկասում։

Վ. Ի. Լենինի, կուսակցության ականավոր գործիչների շատ աշխատություններ, կուսակցության համագումարների, կոնֆերանսների, ինչպես նաև Կոմինտերնի կոնգրեսների և նրա Գործադիր կոմիտեի բազմաթիվ որոշումներ տարածվում էին ազգային լեզուներով և դառնում աշխատավորների սեփականությունը։ Հատկապես մեծ նշանակություն ունեցան Վ. Ի. Լենինի այն աշխատությունները և Կոմինտերնի կոնգրեսների այն որոշումները, որոնցում բարձրացվում էին ազգային-ազատագրական պայքարի հարցերը։ Դրանք քննարկվեցին նաև 1920 թ. սեպտեմբերին, Բաքվում տեղի ունեցած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում, որը հրավիրվեց Կոմինտերնի II կոնգրեսի որոշմամբ։ Այդ առթիվ, արդեն 1920 թ. օգոստոսին, Կոմինտերնի Գործկոմը հատուկ կոչով դիմեց «Պարսկաստանի, Հայաստանի և Թուրքիայի հարստահարված ժողովրդական մասսաներին»։ Նրանում ցույց էր տրվում, որ համագումարի խնդիրը պետք է լինի միավորել Եվրոպայի և Ամերիկայի բանվորագյուղացիական շարժումը Արևելքի երկրների ազգային-ազատագրական պայքարի հետ, որը կարագացնի «համաշխարհային կապիտալիզմի կործանումը և կապահովի ամբողջ աշխարհում բանվորների և գյուղացիների ազատագրումը»[36]։ Եվ ահա, Կոմունիստական ինտերնացիոնալի Գործադիր կոմիտեն, «որպես անգլիական, ֆրանսիական, ամերիկյան, գերմանական և իտալական բանվորների ներկայացուցիչ», ժամանում է Բաքու, որպեսզի համատեղ քննարկի այն հարցերը, թե ինչպես միավորի եվրոպական պրոլետարիատի ջանքերը Արևելքի հետ՝ հանուն ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարի[37]։

Վ. Ի. Լենինը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Բաքվում հրավիրվող Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի նկատմամբ և հսկայական աջակցություն ցույց տվեց նրա կազմակերպմանը։ Նա երկու անգամ, 1920 թ. հունիսի 18-ին և 29-ին, մասնակցեց կուսակցության Կենտկոմի քաղբյուրոյի նիստերին, որտեղ քննարկվում էր այդ հարցը[38]։ Հունիսի 29-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն հանձ-

---

36 «Коммунистический Интернационал», № 12, 1920, стр. 2261—2262.

37 *Տե՛ս В. И. Ленин,* ПСС, т. 41, стр. 635—639.

38 «Коммунистический Интернационал». № 12, 1920, стр. 2259.

նարարեց Գ. Կ. Օրջոնիկիձեին և Ե. Դ. Ստասովային «նրանց կողմից կոոպտացիայի ենթարկված ընկերների հետ միասին ստեղծել Բաքվում Արևելքի ժողովուրդների համագումարի կազմակերպական բյուրո»[39]: Դրան հետևեց Վ. Ի. Լենինի ծածկագիրը Գ. Կ. Օրջոնիկիձեին, որ նրան պետք է հաղորդվի «ինտերնացիոնալ կարևոր հանձնարարություն»[40]:

Հայաստանի և Վրաստանի տասնյակ ներկայացուցիչներ, մասնակցելով Արևելքի ժողովուրդների առաջին համագումարին, երդվեցին «պաշտպանել Սովետական Ռուսաստանը համաշխարհային իմպերիալիզմի հարձակումներից»: Համագումարի պատգամավորների մի մասին հաջողվեց վերադառնալ հայրենիք, մյուսները ձերբակալվեցին սահմանի վրա և նա վերադարձվեցին որպես «դուրս մղվածներ»: Այն հանգամանքը, որ հայ և վրացի շատ պատվիրակներ, զգալով իրենց սպառնացող վտանգը, այնուհանդերձ մեկնեցին Բաքու, վկայում է Հայաստանի և Վրաստանի աշխատավորների՝ դեպի Սովետական Ռուսաստանը և Ադրբեջանը ունեցած համակրանքի մասին:

1920 թ. աշնանը դասակարգային պայքարը ավելի սրվեց Հայաստանում և Վրաստանում: Հայ և վրացի աշխատավորները կոմունիստական կազմակերպությունների գլխավորությամբ վերջին գրոհն էին նախապատրաստում բուրժուա-ազգայնական կառավարությունների դեմ, որոնք շարունակում էին ապավինել Անտանտի իմպերիալիստների և II ինտերնացիոնալի սոցիալ-շովինիստների օգնությանը:

Անդրկովկասի ժողովուրդների ազատագրության հարցերը միշտ էլ գտնվել են Կոմունիստական ինտերնացիոնալի Գործկոմի ուշադրության կենտրոնում: Գործկոմի բազմաթիվ նիստերում քննարկվել են Անդրկովկասում տիրող դրության, այդ դրությունից դուրս գալու մասին հարցերը: Այսպես, Գործկոմի 1920 թ. նոյեմբերի 28-ի նիստում Անդրկովկասի մասին հաղորդումով հանդես եկավ Մ. Պավլովիչը, որը իր ելույթի մեծ մասը նվիրեց Հայաստանում տիրող վիճակին և այնտեղ նախապատրաստվող ապստամբությանը: Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի առթիվ Կոմինտերնի Գործադիր կոմիտեն ողջույն հղեց «Հայաստանի աշխատավոր մասսաներին»: Խոսելով հայ ժողովրդի կյանքում սովետական իշխանության նշանակության մասին, Կոմինտերնի Գործկոմը կոչ էր անում Հայաստանի աշխատավորներին՝ ամուր պահել այդ իշխանությունը, քանի որ «նա ձեզ հնարավորություն կտա վերջնականապես ազատագրվելու բուրժուազիայի

---

39 Տե՛ս В. И. Ленин, ПСС, т. 51, стр. 435.

40 Նույն տեղում, էջ 226:

շահագործումից և հարստահարումից»[41]։ Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի մասին հաղորդագրություն տպագրվեց «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրի 15-րդ համարում։ Կոմինտերնի գործկոմի 1921 թ. հունվարի 9-ի, 10-ի, 14-ի նիստերում լսվել է հատուկ զեկուցում «Վրաստանի դրության մասին»։ Այդ նիստերում զեկուցումներով հանդես է եկել Կոմինտերնի Գործկոմի անդամ Մ. Յակայան։

Վերջապես, 1921 թ. փետրվարին սովետական իշխանությունը հաղթանակ տարավ նաև Վրաստանում։ Այդ առթիվ նույն թվականի մարտի 12-ին Վրաստանի կոմունիստական կուսակցությունը դիմեց աշխարհի բոլոր երկրների պրոլետարներին, նրանց հասցնելով ճշմարիտ խոսքը։ Բանը նրանում էր, որ անհաջողության մատնվելով իրենց երկրներում և ճողոպրելով արտասահման, մենշևիկները և դաշնակցականները հայտարարում էին, թե իբր Վրաստանում և Հայաստանում ժողովրդական հեղափոխություններ տեղի չեն ունեցել, թե սովետական իշխանությունը հաստատվել է դրսից։ Յակայան այդ առթիվ գրում է. «Վրացական մենշևիկները վրացի բանվորների և գյուղացիների, Սովետական Ռուսաստանի դեմ վարած դավաճանական քաղաքականությամբ իրենց համար ստեղծեցին կործանման հնարավորություն։ Դրա համար էլ նրանք տապալվեցին այդպես խայտառակաբար»[42]։ Իսկ 1921 թ. հուլիսի 12-ին ճառով հանդես գալով Կոմունիստական ինտերնացիոնալի III կոնգրեսում, Յակայան հետևողականորեն մերկացրեց մենշևիկների դավաճանական, հակաժողովրդական քաղաքականությունը և հայտարարեց, որ «սովետական եղբայրական հանրապետությունների հետ դաշինքի մեջ մտած, Կոմունիստական ինտերնացիոնալի ղեկավարությամբ, այդ երկրում (Վրաստանում—Հր. Դ.) կբարձրանա սոցիալիզմի հարուստ բերքը»[43]։

Այսպիսով, առաջնորդվելով Վ. Ի. Լենինի և Կոմունիստական ինտերնացիոնալի դաղափարներով, Անդրկովկասի ժողովուրդները կոմունիստական կազմակերպությունների գլխավորությամբ չդադարեցնելով պայքարը բուրժուա-ազգայնական կառավարությունների դեմ, Սովետական Ռուսաստանի եղբայրական աջակցությամբ երկրամասում հաստատեցին սովետական իշխանություն։

---

41 Տե՛ս ПА Груз. филиала ИМЛ при ЦК КПСС (личный архив Махарадзе), ф. 2914, оп. 1, ед. хр. 664, лл. 1—4.

42 «Коммунистический Интернационал». № 18, 1921, стр. 4754.

43 «III конгресс Коминтерна», М., 1922, стр. 471.

Ի. Ի. ԹԱՄՐԱԶՈՎԱ

ԲՐԵՍՏ–ԼԻՏՈՎՍԿԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը ձեռք բերվեց իմպերիալիստական դիշատիչների երկու խմբերի մահացու գոտեմարտի պայմաններում։ Հեղափոխության առաջին օրը Վ. Ի. Լենինը, Սովետների Համառուսաստանյան II համագումարում հանդես գալով հաշտության մասին զեկուցումով, ասաց. «Հաշտության հարցը հրատապ հարց է, արդիականության հիվանդոտ հարցը։ Նրա մասին շատ է խոսվել ու գրվել, և դուք բոլորդ էլ, հավանորեն, քիչ չեք քննարկել այն։ Այդ պատճառով թույլ տվեք ինձ անցնել այն դեկլարացիայի ընթերցմանը, որը պետք է հրատարակի ձեր ընտրած կառավարությունը»[1]։ Սովետների Համագումարի կողմից հաշտության մասին դեկրետն ընդունվեց որպես «Դիմում բոլոր պատերազմող երկրների ժողովուրդներին և կառավարություններին»։

Մերկացնելով իմպերիալիստական պատերազմի թալանչիական բնույթը, Սովետական կառավարությունը բոլոր պատերազմող ժողովուրդներին և նրանց կառավարություններին առաջարկում էր անհապաղ բանակցություններ սկսել արդարացի և դեմոկրատական հաշտության շուրջը, որը պետք է լինի առանց անեքսիաների և կոնտրիբուցիաների։

Սովետական կառավարությունը նշում էր, որ ինքը իր առաջարկությունները ուլտիմատիվ չի համարում և համաձայնվում է քննության առնելու նաև հաշտության այլ պայմաններ։ Առաջարկվում էր անհապաղ զինադադար կնքել երեք ամսից ոչ պակաս ժամկետով և ավարտել հաշտության վերաբերյալ բանակցությունները։ Այդ դեկրետը մի-

1 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 26, էջ 295։

ջազդային հսկայական նշանակություն ունեցավ։ Այն հռչակեց սովետական արտաքին քաղաքականության հիմունքները, ցույց տալով նրա սկզբունքային տարբերությունը բուրժուական արտաքին քաղաքականությունից, մարդկության պատմության մեջ առաջին անգամ տալով հիրավի դեմոկրատական հաշտության ծավալուն ծրագիր։

Վ. Ի. Լենինը նշում էր, որ հաշտության կնքումը ոչ թե կթուլացնի, այլ, ընդհակառակը, է՛լ ավելի կուժեղացնի մեր հեղափոխության միջազգային նշանակությունը։ Հաշտությունն անհրաժեշտ էր սովետական իշխանության ամրապնդման, կարմիր բանակի ստեղծման, սովի վերացման, սոցիալիստական շինարարության անցնելու համար։ 1917 թ. նոյեմբերի 8-ին Սովետական կառավարությունը դիմեց ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի կառավարություններին և նրանց մյուս դաշնակիցներին, իսկ նոյեմբերի 10-ին չեզոք երկրների կառավարությունների միջոցով պաշտոնական դիվանագիտական կարգով դիմեց գերմանական բլոկի երկրներին, հայտարարելով, որ հաշտության մասին Սովետական կառավարության դեկրետը փաստացի պաշտոնական առաջարկություն է անհապաղ դինադադարի և հաշտության բանակցություններ սկսելու վերաբերյալ[2]։ Եվրոպայի բուրժուական կառավարությունները բոլոր ջանքերը ներդրեցին, որպեսզի հաշտության մասին դեկրետի բովանդակությունը թաքցնեն իրենց երկրների ժողովրդական մասսաներից և չպատասխանեցին Սովետական կառավարության առաջարկությանը։

Ժողկոմսովետը, կատարելով Սովետների II համագումարի որոշումը, ամբողջ ժողովրդի կամքը, վճռեց բանակցություններ վարել Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ։ Անտանտի երկրների և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունները փորձում էին Ռուսաստանում վերականգնել հին կարգերը և ստեղծել այնպիսի կառավարություն, որն ամբողջությամբ ենթարկվեր իրենց և շարունակեր պատերազմը Գերմանիայի դեմ։

Վ. Ի. Լենինը, 1917 թ. նոյեմբերի 22-ին (դեկտեմբերի 5-ին) ելույթ ունենալով ռազմական նավատորմի Համառուսաստանյան համագումարում, ասում էր. «Մենք հրապարակել ենք և հետագայում էլ պետք է հրապարակենք գաղտնի պայմանագրերը։ Ոչ մի գայրույթ և ոչ մի զրպարտություն մեզ չի կանգնեցնի այդ ճանապարհին։ Պարոնայք

---

2 Տե՛ս «Документы внешней политики СССР», т. 1, М., 1957, стр. 16—17. 22—23.

բուրժուաները զայրանում են, որ ժողովուրդը տեսնում է, թե ինչի համար են նրան դեպի սպանդը քշել։ Նրանք երկրին վախեցնում են նոր պատերազմի հեռանկարով, այնպիսի պատերազմի, որի մեջ Ռուսաստանը մնկուսացված կլինի։ Սակայն մեզ չի կարող կանգնեցնել այն կատաղի ատելությունը, որը բուրժուազիան երևան է բերում դեպի մեզ և դեպի հաշտություն տանող մեր շարժումը»[3]։

Բրեստի բանակցությունների շեմին, 1917 թ. նոյեմբերի 28-ին Փարիզում տեղի ունեցած միջդաշնակցային կոնֆերանսում Անտանտի երկրները քննարկեցին «Ռուսական հարցը» և որոշում ընդունեցին Սովետական կառավարության արած ընդհանուր հաշտության առաջարկին պատասխանել, որ դաշնակիցները համաձայն են քննարկելու պատերազմի նպատակների և հաշտության պայմանների հարցը Ռուսաստանում «կայուն կառավարության» առկայության պայմաններում։

1917 թ. դեկտեմբերին Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստները պայմանավորվեցին Ռուսաստանը «ազդեցության ոլորտների» բաժանելու համար։

Այդ ժամանակ Գերմանիայի կառավարող շրջաններում կազմավորվել էր երկու խումբ. Հինդենբուրգի, Լյուդենդորֆի, Հոֆմանի, Վիլհելմի գլխավորությամբ գործող ռազմական խումբը հույս ուներ արագորեն ջախջախել Ռուսաստանը։ Այդ խումբը դեմ էր խաղաղ բանակցություններին։ Երկրորդ խումբը, որը ներկայացնում էր մինչև պատերազմը Ռուսաստանի հետ առևտուր անող արդյունաբերական բուրժուազիան, նույնպես պաշտպանում էր բռնի հաշտությունը, բայց նա ամեն կերպ ջանում էր թաքցնել այդ հաշտության թալանչիական էությունը և համառորեն պնդում էր հաշտություն կնքելու վրա։ Նա հույս ուներ, որ Ռուսաստանի հետ կնքած հաշտությունը Գերմանիային կապահովի երկու ճակատով պատերազմելուց, հնարավորություն կտա բոլոր ուժերը կենտրոնացնելու Արևմուտքում, Ռուսաստանի հետ կնքելու առևտրական պայմանագիր, իսկ այնուհետև դուցե նաև՝ դաշինք ընդդեմ Անգլիայի։

1917 թ. նոյեմբերի 27-ին Վ. Ի. Լենինը Սովետական կառավարության անունից նոտայով դիմեց Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Սերբիայի, Ռումինիայի, Ճապոնիայի և Չինաստանի կառավարություններին, առաջարկելով սկսել հաշտության բանակցություններ։ Բայց այս անգամ նույնպես կապիտալիստական երկրները լռությամբ պատասխանեցին։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 421։

Ժողովրդական կոմիսարների սովետը պատերազմող երկրների ժողովուրդներին ուղղված հատուկ դիմումում գրում էր. «...Դաշնակից երկրների կառավարող դասակարգերի պաշտոնական և կիսապաշտոնական ներկայացուցիչները մերժել են մեր առաջարկությունը, հրաժարվելով ճանաչել Սովետների կառավարությանը և նրա հետ համաձայնության գալ հաշտության բանակցությունների շուրջը։ Եթե դաշնակից ժողովուրդները չեն ուղարկում իրենց ներկայացուցիչներին, մենք միանակ ինքներս բանակցություններ կվարենք գերմանացիների հետ։ Մենք ցանկանում ենք ընդհանուր հաշտություն։ Բայց եթե դաշնակից երկրների բուրժուազիան մեզ ստիպի կնքել սեպարատ հաշտություն, պատասխանատվությունն ամբողջությամբ կընկնի նրա վրա»[4]։

1917 թ. դեկտեմբերի 9-ին Բրեստ-Լիտովսկում սկսվեցին հաշտության բանակցությունները Գերմանիայի հետ։ Բանակցությունների հիմքում դրված էին 1917 թ. նոյեմբերի 8-ի հաշտության մասին դեկրետի ընդհանուր սկզբունքները և 1917 թ. դեկտեմբերի 10-ին (նոյեմբերի 27-ին) Ժողկոմսովետի ընդունած հրահանգը։

1917 թ. դեկտեմբերի 27-ին (14-ին) քաղաքական հանձնաժողովի երկրորդ նիստի ժամանակ սովետական պատվիրակության կոնկրետ առաջարկությունները հետևյալն էին. «Նվաճողական պլանների բացակայության և առանց անեքսիաների հաշտություն կնքելու ցանկության վերաբերյալ երկու պայմանավորվող կողմերի բացահայտ հայտարարությանը լիովին համապատասխան Ռուսաստանը իր զորքերը դուրս է բերում Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Պարսկաստանի իր գրաված մասերից, իսկ քաղաքական համաձայնության տերությունները՝ Լեհաստանից, Լիտվայից, Կուրլանդիայից և Ռուսաստանի մյուս մարզերից»[5]։ Հայտնի է, որ բանակցությունների սկզբում Գերմանիան, չցանկանալով մերկացնել իր զավթողական պլանները, ձևականորեն համաձայնեց մեր պատվիրակության առաջարկություններին։

Դա խոսքով էր, իսկ իրականում գերմանական իմպերիալիստները չէին էլ պատրաստվում իսկապես դեմոկրատական հաշտություն կնքել։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ երբ սովետական պատվիրակությունը Պետրոգրադ հաղորդեց հաշտության սովետական պայմաններին Գերմանիայի միանալու մասին, դա մեծ խառնաշփոթություն առաջ բերեց Գերմանիայի կառավարող շրջաններում։ Հոֆմանին ուղարկվեց

---

4 «Документы внешней политики СССР», т. 1, стр. 29—30.

5 «Мирные переговоры в Брест-Литовске», стр. 28.

Հինդենբուրգի հեռագիրը, որը պահանջում էր պարզություն մտցնել դրության մեջ։ Դեկտեմբերի 27-ին Գերմանիայի ներկայացուցիչները հայտարարեցին, որ Գերմանիան չի պատրաստվում և ընդ որում չի էլ կարող ազատել Լեհաստանը, Լիտվան, Կուրլանդիան, քանի որ այնտեղ են գտնվում զինք արտադրող ձեռնարկությունները։ Հոֆմանի խոսքերով, բոլոր այդ երեք երկիրներն արդեն արտահայտվել են հօգուտ Ռուսաստանից անջատվելու, որը «անեքսիա» չի նշանակում։ Հոֆմանը հայտարարեց, որ Գերմանիան չի պատրաստվում ազատել նույնիսկ մեկ միլիմետր տերիտորիա, այդ ամենը կարվի պատերազմն ավարտվելուց և հաշտության կնքելուց հետո, իսկ քանի որ պատերազմի վերջը չի երևում և հայտնի չէ դա երբ կլինի, ապա այդ մասին պետք էլ չէ խոսել։ Դրանով ավարտվեց հաշտության վերաբերյալ բանակցությունների առաջին շրջանը։

Կոնֆերանսն իր աշխատանքը վերսկսեց 1918 թ. հունվարի 9-ին։ 1918 թ. հունվարի 18-ին (5-ին) Գերմանիան առաջ քաշեց իր պայմանները, որոնք հանգում էին հետևյալին. Գերմանիան և Ավստրո-Հունգարիան գրավում էին Լեհաստանը, Լիտվան, Բելոռուսիայի և Ուկրաինայի որոշ մասը, բացի այդ, Էստոնիայի և Լատվիայի մի մասը։ Գերմանացիների ձեռքում էին մնում նաև Մոոզունդյան կղզիները և Ռիգայի ծոցը։ Դա նրանց հնարավորություն էր տալիս վերահսկելու դեպի Ֆիննական և Բոտնիկական ծոցերը տանող ծովային ուղիները և թույլ էր տալիս հարձակողական դիրքեր ծավալելու Ֆիննական ծոցի խորությամբ, ընդդեմ Պետրոգրադի։ Գերմանացիների ձեռքն էին անցնում Բալթիկ ծովի նավահանգիստները, որոնց միջոցով էլ կատարվում էր Ռուսաստանից ամբողջ ծովային արտահանման 27 տոկոսը, ներմուծման 30 տոկոսը[6]։ Սովետական պատվիրակությունը պահանջեց 10 օրվա ընդմիջում։

Փետրվարի 9-ին (հունվարի 27-ին) Գերմանիան և Ավստրո-Հունգարիան հաշտության պայմանագիր կնքեցին Ուկրաինական ռադայի հետ, թեպետ պայմանագիրը ստորագրելու պահին Ռադայի ամբողջ տարածքը սահմանափակվում էր Բրեստի այն սենյակով, որտեղ նա գտնվում էր։ Նույն օրը Բռևլինից հեռագրով յուրաքանչյուր վերջնագիր ներկայացնելու սովետական պատվիրակությանը հաշտության գերմանական պայմաններն ընդունելու վերաբերյալ։

Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունները սուր տարաձայնություններ առաջացրին կոմունիստական կուսակցության մեջ։

---

6 «История дипломатии», т. 3, М., 1965, стр. 86.

Վ. Ի. Լենինը պնդում էր կնքել անհապաղ հաշտություն, որովհետև նա կանխատեսում էր, որ երիտասարդ սովետական պետությունը, որը դեռ չուներ իր բանակը, երկրի անհավատալի տնտեսական քայքայման պայմաններում չէր կարող դիմանալ գերմանական զինված իմպերիալիզմին։ Երկրին դաժար էր հարկավոր։ Այլ կարծիքի էին Տրոցկին և «ձախ կոմունիստների» խումբը՝ Բուխարինի գլխավորությամբ, որոնք պահանջում էին «հեղափոխական պատերազմ», հեղափոխությունը «հրելով առաջ մղել» Գերմանիայում։ Վ. Ի. Լենինը խիստ քննադատության ենթարկեց «հեղափոխական պատերազմի» կողմնակիցների գրաված դիրքը։ «Սեպարատ հաշտություն կնքելով, մենք ավյալ մոմենտի համար ճնարավոր մեծագույն չափով ազատվում ենք միմյանց թշնամի երկու իմպերիալիստական խմբերից, օգտագործելով նրանց թշնամությունն ու պատերազմը, որ դժվարացնում է նրանց գործարքը մեր դեմ,— կօգտագործենք, որոշ ժամանակ ձեռքերի ազատություն ունենալով, որպեսզի շարունակենք և ամրացնենք սոցիալիստական հեղափոխությունը»[7]։

Դեռևս հունվարի 24-ին «ձախերի» տեսակետը մերժվեց և Կենտկոմն ընդունեց Վ. Ի. Լենինի առաջարկը՝ ամեն կերպ ձգձգել հաշտության բանակցությունները և հաշտություն կնքել Գերմանիայի կողմից վերջնագիր ներկայացնելու դեպքում։ Փետրվարի 10-ին սովետական պատվիրակությունը պետք է պատասխաններ վերջնագրին։ Տրոցկին, խախտելով կուսակցության և Վ. Ի. Լենինի ուղղակի դիրեկտիվը, հայտարարեց՝ «Ո՛չ պատերազմ, ո՛չ հաշտություն», այսինքն Սովետական Ռուսաստանը դադարեցնում է պատերազմը, բանակը զորացրում է, բայց հաշտություն չի կնքում։ Տրոցկու այդ դավաճանական հայտարարությունը արձակեց գերմանական իմպերիալիզմի ձեռքերը։ Մի քանի օր անց գերմանացիները ամբողջ ճակատով հարձակման անցան։

Փետրվարի 18-ի առավոտյան տեղի ունեցավ կուսակցության Կենտկոմի նիստը, որտեղ Վ. Ի. Լենինը պահանջեց անհապաղ գերմանացիներին հեռագիր ուղարկել հաշտության առաջարկով, բայց ձայների փոքրամասնություն ստացավ։ Փետրվարի 18-ի երեկոյան կուսակցության Կենտկոմի նիստում Վ. Ի. Լենինը կրկին պնդեց հաշտություն կքնելու վրա։ Այս անգամ Կենտկոմն ընդունեց Վ. Ի. Լենինի առաջարկը։

Փետրվարի 19-ին գերմանացիներին ուղարկված ռադիոգրի մեջ Ժողկոմսովետը բողոք հայտնեց Ռուսաստանի սովետական Հանրապետության դեմ գերմանական զորքերի հարձակման առթիվ և ընդունեց

7 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 26, էջ 546։

ներկայացված վերջնագիրը։ «Ժողովրդական Կոմիսարների Սովետը,— ասվում էր ռադիոգրում,— նկատի ունենալով ստեղծված դրությունը, իրեն հարկադրված է զգում հայտարարելու իր պատրաստակամությունը ֆորմալ կերպով ստորագրելու այն հաշտությունը և այն պայմաններով, որ գերմանական կառավարությունը պահանջում էր Բրեստ-Լիտովսկում»[8]։ Փետրվարի 20-ին Հոֆմանը ռադիոգիրն ստացավ, բայց չշտապեց կանգնեցնելու հարձակումը։ Փետրվարի 21-ին Ժողկոմսովետը հայտարարեց՝ «Սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ է»։ Ամբողջ երկիրը ոտքի կանգնեց Հոկտեմբերի նվաճումները պաշտպանելու։ Պսկովի և Նարվայի մոտ երիտասարդ կարմիր բանակը համառ մարտեր էր մղում, որի շնորհիվ գերմանական զորքերի առաջխաղացումը կանգնեցվեց։ Այդ օրը, փետրվարի 23-ին գերմանացիները պատասխանեցին Սովետական կառավարության ռադիոգրին։ Գեներալ Հոֆմանը այդ առթիվ իր օրագրում գրել է. «Միայն այսօր առավոտյան վերջնագիր ուղարկեցինք։ Պետք է ուղղակի ասել, որ արտաքին գործերի մինիստրությունը և գերագույն հրամանատարությունը լավ աշխատեցին։ Վերջնագիրը պարունակում է այն բոլոր պահանջները, որպիսիք միայն կարելի էր առաջադրել»[9]։

Գերմանական նոր վերջնագիրը ավելի ծանր էր, քան առաջինը։ Եվ, այնուամենայնիվ, փետրվարի 23-ին կուսակցության Կենտկոմը ձայների մեծամասնությամբ կողմ արտահայտվեց հաշտության գերմանական պայմանների ընդունմանը։ Փետրվարի 24-ին Համառուսաստանյան Կենտգործկոմը ընդունեց գերմանացիների վերջնագիրը։

Կուսակցության VII համագումարը (1918 թ. մարտի 6—8) հավանություն տվեց հաշտության պայմանագրին։ Համագումարը բանաձև ընդունեց պատերազմի և հաշտության մասին։ «Ձախերի» կողմից առաջարկված «թեզիսները արդի մոմենտի մասին» մերժվեցին։ Հանդես գալով համագումարում, Վ. Ի. Լենինը ասաց. «Երբեք պատերազմում չի կարելի իրեն կաշկանդել ձևական որոշումներով։ Սիծաղելի է չիմանալ ռազմական պատմությունը, չիմանալ այն, որ պայմանագիրն ուժեր հավաքելու միջոց է. ես արդեն հիշատակեցի պրուսական պատմությունը։ Մի քանիսը, ուղղակի, ինչպես երեխաներ, մտածում են. հաշտությունն ստորագրեցիր, նշանակում է ծախվեցիր սատանային, գնացիր դժոխք։ Այս ուղղակի ծիծաղելի է, երբ ռազմական պատմությունը

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 647։

9 М. Гофман, Записки и дневники, 1914—1918, М., 1920, стр. 240.

պարզից ավելի պարզ ասում է, որ պայմանագիր ստորագրելը պարտության դեպքում ուժեր հավաքելու միջոց է»[10]:

Մարտի 15-ին Սովետների Համառուսաստանյան IV արտակարգ համագումարը վավերացրեց Բրեստի հաշտության պայմանագիրը: Դա ծանր հաշտություն էր, որը գերմանական իմպերիալիզմը զենքը ձեռքին թելադրել էր Սովետական Ռուսաստանին: Հաշտության կնքումը Սովետական պետությանը հնարավորություն տվեց դուրս գալ պատերազմից, դադար առնել և այն առավելագույն չափով օգտագործել սովետական իշխանությունը ամրապնդելու, ժողովրդի ջանքերը երկրի տնտեսության վերականգնմանը նպատակամղելու և կարմիր բանակը ամրապնդելու համար: Հաշտության պայմանագիրը բաղկացած էր 13 հոդվածներից: Պայմանագրի համաձայն, Սովետական Ռուսաստանից անջատվում էին Լեհաստանը, Կուրլանդիան, Լիֆլանդիան և Էստլանդիան: Ուկրաինան և Ֆինլանդիան ճանաչվում էին որպես ինքնուրույն պետություններ: Սովետական Ռուսաստանը պարտավորվում էր հաշտության պայմանագիր կնքել Ուկրաինական ռադայի հետ և ճանաչել հաշտության պայմանագիրը Ուկրաինայի և Գերմանիայի միջև: Ֆիննական և Ալանդյան կղզիները ազատվում էին ռուսական զորքերից[11]: Ռուսաստանը պարտավորվում էր նաև ապահովել Արևելյան Անատոլիայի գավառների շուտափույթ ազատումը և դրանց հանձնումը Թուրքիային: Պայմանագրի IV հոդվածի համաձայն Արդահանը, Կարսը և Բաթումը նույնպես պետք է անհապաղ ազատվեին ռուսական զորքերից[12]: Դա Ռուսաստանի ծայրամասերի տերիտորիաների բացահայտ անեքսիա էր:

1918 թ. մարտի 3-ին սովետական պատվիրակությունը բողոք հայտնեց Կովկասի կարևորագույն մարզերը հօգուտ Թուրքիայի բռնի կերպով անջատելու առթիվ: Բայց ստեղծված պայմաններում պայմանագրի կետերի քննարկումը անօգուտ էր և այդ մասին հայտնելով, սովետական պատվիրակությունը նույն օրը ստորագրեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Սակայն Անդրկովկասում ստեղծված իրադրությունը շատ բարդ էր: Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո բուրժուական ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասում ստեղծեց Անդրկովկասի հատուկ կոմիտե, որի կազմի մեջ մտան հակահեղափոխական նացիոնալիստական երեք կուսակցությունների (վրացական մենշևիկների, հայ դաշնակցականների և

10 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 27, էջ 122:

11 Տե՛ս «История дипломатии». Т. 3, стр. 95.

12 «Документы внешней политики СССР», т. 1, стр. 108.

ապրիլյանական մուսավաթիստների) ներկայացուցիչները։ Անդրկովկասի հատուկ կոմիտեն, ինչպես նաև նրան փոխարինած Անդրկովկասի կոմիսարիատն ու սեյմը շարունակում էին բուրժուական կառավարության տակտիկան և պաշտպանում էին բացառապես բուրժուազիայի և կալվածատերերի շահերը։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը առաջ բերեց Անդրկովկասի հատուկ Կոմիտեի զայրույթն ու ատելությունը և արդեն 1917 թ. դեկտեմբերին այն որոշում ընդունեց չճանաչել ժողկոմսովետի իշխանությունը։ «Բակինսկի ռաբոչի» լրագիրը, մերկացնելով Անդրկովկասի հակահեղափոխական ուժերի իսկական նպատակները, գրում էր այն մասին, որ Կովկասում հեղափոխության ամենակատաղի թշնամին եղել և մնում է Անդրկովկասի հակահեղափոխական կուսակցությունների կողմից իրականացվող նացիոնալիզմը, կուսակցություններ, որոնց վրա է ընկնում պատմական պատասխանատվությունը այդ քաղաքականության բոլոր տխուր հետևանքների համար[13]։

Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը ձգտում էին երկրամասը անջատել հեղափոխական Ռուսաստանից, մեկուսացնել Անդրկովկասի պրոլետարիատի ուժերը, բորբոքել ազգամիջյան թշնամություն, Անդրկովկասի պրոլետարիատին անջատել Ռուսաստանի հեղափոխական բանվորներից ու գյուղացիներից։ Սակայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի լուրը թափանցեց երկրամասի ամենահեռավոր անկյունները։

Պրոլետարիատը, Կովկասի ռազմաճակատի զինվորական մասսաները, աշխատավոր գյուղացիությունը ջերմորեն արձագանքեցին Հոկտեմբերյան հեղափոխության հետ դաշինք կնքած Ռուսաստանի պրոլետարիատի անօրինակ հաղթանակին։ Չնայած հետապնդումներին և ճնշումներին, Անդրկովկասի բոլշևիկները հսկայական աշխատանք էին կատարում երկրամասի բոլոր ազգերի և ազգություններ աշխատավորների շրջանում, նրանց պարզաբանելով Անդրկովկասի հակահեղափոխական կառավարության իսկական նպատակները, նրանց ինտերնացիոնալ միասնության կոչ անելով Սովետական Ռուսաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության հետ։ Սովետների II համագումարի կողմից ընդունված հաշտության և հողի մասին դեկրետները հնչեցին որպես Անդրկովկասի բանվորների և գյուղացիների ելույթների ահազանգ։

1918 թ. փետրվարի 20-ին Կովկասի բանվորներին, գյուղացիներին

---

13 Տե՛ս «Бакинский рабочий», 24 декабря 1917 г.

և զինվորներին ուղղված դիմումի մեջ Ստ. Շահումյանը նրանց պայքարի կոչ արեց հանուն Կովկասում սովետական իշխանության ստեղծման, բանվորներին և գյուղացիներին նախազգուշացնելով Անդրկովկասում հեղափոխության վրա կախված վտանգի մասին: Նույն օրը Ստ. Շահումյանը դիմեց Անդրկովկասի մուսուլմանական գավառների գյուղացիական բնակչությանը, կոչ անելով թոթափել կալվածատերերի, բեկերի, խանների դարավոր լուծը: Նա գրում էր. «Ձեր խանները և ձեր լրագրողները ձեզ խաբել են, թե նրանք (բոլշևիկները) մուսուլմանների թշնամիներն են, ընդհակառակը, բոլշևիկները մուսուլման, ինչպես և բոլոր մյուս գյուղացիների ու բանվորների անկեղծ բարեկամներն են... Հողը պետք է պատկանի ժողովրդին, և այն, ինչ հիմա դուք վերցնեք, ոչ ոք ի վիճակի չի լինի խլելու ձեղնից»[14]:

Այդ օրերին Միրզոևի և մյուս ֆիրմանների հանքերի բանվորների և նավահանգստի բանվորներին միավորող արհմիություններում միասնական բանաձևեր էին ընդունվում, պահանջելով ցրել Անդրկովկասի հակահեղափոխական, նացիոնալիստական կոմիսարիատը և ամբողջ երկրամասում իշխանությունը հանձնել բանվորների և զինվորների դեպուտատների սովետներին:

1918 թ. փետրվարին գավառական ընդհանուր ժողովներում գյուղացիները բանաձևեր ընդունեցին, կոչ անելով պաշտպանել Սովետների II համագումարի կողմից ընտրված ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը:

Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունը հրաժարվեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ճանաչելուց, հաշտության մասին բանակցություններ սկսելով Թուրքիայի հետ: Պետք է ընդգծել, որ Սովետական կառավարությունը, ստիպված լինելով կնքել Բրեստ-Լիտովսկի հաշտությունը, երբեք չի անտեսել Կովկասի ժողովուրդների կենսական շահերը: Անդրկովկասի կոմիսարիատը, իսկ հետագայում նաև սեյմը, որոնք վճռականապես հանդես էին գալիս Բրեստի հաշտության պայմանագրի դեմ, իրենց սեպարատիստական քաղաքականությամբ բռնապատ հող ստեղծեցին գերմանա-թուրքական իմպերիալիստների, իսկ այնուհետև Անտանտի կողմից Անդրկովկասը օկուպացնելու համար: Նացիոնալիստական կուսակցությունների՝ ներքին հակասություններից քայքայվող այդ բլոկը խաղալիք դարձավ գերմանա-թուրքական իմպերիալիզմի ձեռքին: Թուրքիան ձգտում էր, նախ, Անդրկովկասը անջատել

---

14 «Бакинский рабочий», 20 февраля 1918 г.

Ռուսաստանից. երկրորդ, այն մասնատել «ինքնուրույն» հանրապետությունների, որպեսզի յուրաքանչյուրին առանձին վերցրած թելադրի իր պայմանները, երրորդ, օգտագործելով Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը, ազգային թշնամություն բորբոքի երկրամասի ժողովուրդների միջև։

Գերմանական իմպերիալիզմը ձգտում էր զավթել Անդրկովկասը, նպատակ ունենալով այն պլացդարմ դարձնել Ռուսաստանի դեմ պայքարելու համար և ճանապարհ բացել դեպի Աֆղանստան և Հնդկաստան։ Նույն ժամանակաշրջանում Անգլիան մեծ ջանքեր էր գործադրում Պարսկաստանում, որպեսզի փակի այդ ճանապարհը։ Նա իր առջև նպատակ էր դրել Անդրկովկասում ստեղծել բուֆերային պետություն, իսկ այնուհետև Անդրկովկասը վերածել Մեծ Բրիտանիայի գաղութի։

Ստանալով Սովետական Ռուսաստանի Արտգործժողկոմատի 1918 թ. մարտի 2-ի այն հաղորդումը, ուր Ռուսաստանը ստիպված է համաձայնել Արդահանը, Կարսը և Բաթումը ռուսական զորքերից ազատելուն, Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունը ոչ միայն առանց պատասխանի թողեց այն, այլև ռադիոգրով դիմեց Կովկասյան բանակի ժամանակավոր հրամանատար, գեներալ Օդիշելիձեին, իսկ գրության պատճեններն ուղարկեց Բրեստ-Լիտովսկ՝ հաշտության կոնֆերանսին, Պետրոգրադ, Լոնդոն, Փարիզ, Վաշինգտոն, Հռոմ, Տոկիո, Կոստանդնուպոլիս և եվրոպական մյուս պետությունների մայրաքաղաքները, հաղորդելով այն մասին, որ Անդրկովկասին և նրա սահմաններին վերաբերող ամեն մի պայմանագիր, «որ կնքված է առանց Անդրկովկասի ինքնուրույն կառավարության գիտության և հավանության, համարվում է միջազգային նշանակություն և պարտադիր ուժ ունենալուց զուրկ, քանի որ Անդրկովկասը երբեք չի ճանաչել բոլշևիկյան իշխանությունը և ժողովրդական կոմիսարների սովետը։ Թուրքական հրամանատարության առաջարկությամբ մեր կողմից հաշտության պատվիրակություն է ուղարկվել Տրապիզոն, որը կարող է ինքնուրույն կերպով բանակցություններ վարել Թուրքիայի հետ»[15]։ Դրանով իսկ Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունը փաստորեն հայտարարեց երկրամասը Սովետական Ռուսաստանից անջատելու մասին, թեպետ ձևականորեն դա արվեց մի փոքր ավելի ուշ։

Անդրկովկասի բոլշևիկները Բրեստի հաշտության կնքմանը վերա-

---

15 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии». Тифлис. 1919, стр. 87—88.

քերվեցին որպես մի դաժան անհրաժեշտության։ ՌՍԴԲԿ(բ) Կովկասի երկրամասային կոմիտեն 1918 թ. մարտի 11-ի իր բանաձևում նշել է. «Ժողկոմսովետը այդ հաշտության պայմանագիրը ստորագրել է, որպեսզի փրկի հեղափոխությունը և դրանով իսկ եվրոպական պրոլետարիատի աչքին մերկացրել է հարձակման ավազակային բնույթը...»[16]։

Բաքվի պրոլետարիատը բոլշևիկների ղեկավարությամբ ճանաչեց Սովետական կառավարության կողմից ստորագրված Բրեստի հաշտության պայմանագիրը և, Բաքվում սովետական իշխանություն հաստատելով, անողոք պայքար ծավալեց Անդրկովկասի հակահեղափոխության կողմից այն տապալելու փորձերի դեմ։ Ստ. Շահումյանը 1918 թ. ապրիլի 13-ին Ժողկոմսովետին ուղղված նամակում Բաքվի պրոլետարիատի այդ պայքարը բնութագրում է որպես ամբողջ Անդրկովկասում սովետական իշխանության համար մղվող զինված պայքարի սկիզբ։ Սակայն Անդրկովկասի կառավարության պատվիրակությունը 1918 թ. մարտի 1-ին Տրապիզոնում Թուրքիայի հետ սկսել էր անջատ բանակցությունները։ Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր Ռաուֆ-բեյը, Անդրկովկասինը՝ Չխենկելին։

Անդրկովկասի նկատմամբ Թուրքիան երկակի քաղաքականություն էր վարում. մինչև Բրեստի հաշտության պայմանագրի կնքումը նա Անդրկովկասը ճանաչում էր որպես ինքնուրույն պետություն և պնդում էր Սովետական Ռուսաստանից անջատվելու վրա։ Պայմանագիրը կնքելուց հետո նա հայտարարեց, որ Անդրկովկասը Ռուսաստանի հանրապետության մի մասն է, քանի որ իբր թե Բրեստ-Լիտովսկի բանակցությունները վարելու ժամանակ Անդրկովկասի կառավարությունը նույնիսկ չէր կազմված, ուստի Բրեստ-Լիտովսկի կոնֆերանսին Անդրկովկասը չէր կարող մասնակցել։ Ուշադրության առնելով այդ ամենը, Թուրքական կառավարությունը 1918 թ. մարտի 3-ի իր դեկլարացիայում պահանջում էր, որպեսզի Անդրկովկասի պատվիրակությունը ճանաչի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի Կովկասին վերաբերող կետերը։ Անդրկովկասի պատվիրակությունը իր պատասխան դեկլարացիայում հայտարարեց, որ Բրեստի պայմանագիրը ձևականորեն պարտադիր չէ, և ըստ էության ընդունելի չէ Անդրկովկասի համար[17]։ Կոնֆերանսի հինգերորդ նիստի ժամանակ պատվիրակությունը հրապարակեց 1918 թ.

---

16 *Г. В. Хачапуридзе,* Борьба за пролетарскую революцию в Грузии (1917—1921 гг.), Тбилиси, 1951, стр. 401—404.

17 *Տե՛ս* «Протокол первого заседания мирной конференции в Трапезунде».

մարտի 1-ին սեյմի կողմից միաձայն ընդունված «Հիմնական դրույթները» հաշտության մասին, որոնցում Անդրկովկասյան սեյմը իրեն իրավազոր էր համարում Թուրքիայի հետ հաշտություն կնքելու[18]։ Անդրկովկասի պատվիրակության ղեկավար Չխենկելիի և այդ պատվիրակության անդամներից մեկի՝ Խատիսովի խոստովանությամբ, Անդրկովկասի կառավարական պատվիրակության վիճակը շատ խղճուկ էր և անորոշ։ Թուրքական պատվիրակությունը թելադրող կողմն էր։

Մարտի 10-ին Վեհիբ-փաշան Կովկասի ռուսական բանակի գլխավոր հրամանատար գեներալ Լեբեդինսկու անունով, Անդրկովկասի կառավարությանը և հաշտության պատվիրակության նախագահին հեռագիր ուղարկեց, պահանջելով էվակուացնել Կարսը, Արդահանը և Բաթումը։ Վրացական մենշևիկները և հայ դաշնակցականները երկչոտությամբ հանդես եկան թուրքական զավթիչների անեքսիոնիստական պահանջների դեմ, իսկ մուսավաթականները բացեիբաց հայտարարեցին, որ իրենք ուժով չեն պաշտպանի Անդրկովկասի պատվիրակության պահանջները։ Ռուսական զորքերի էվակուացիայից հետո թուրքերը հարձակման անցան, գրավելով Անդրկովկասի կարևորագույն ստրատեգիական կետերը։ Մարտի 12-ին թուրքերը գրավեցին Էրզրումը և շարժվեցին դեպի Կարս։ Մարտի 17-ին Արդահանի քաղաքային և օկրուգային գործադիր կոմիտեի նախագահ Սալարիձեն և օկրուգային կոմիսար Շագալովը Արդահանի դրության մասին հեռագրում հայտնում էին, որ Արդահանում «պլանաչափ գործող անհամար բանդաների կողմից քրիստոնյա բնակչությունը սիստեմատիկ կերպով թալանվում և ջինաթափ է արվում... Քրիստոնյա բնակչության մեջ կատարյալ խուճապ է տիրում»[19]։

Անդրկովկասյան սեյմի նիստի ժամանակ Արդահանի իրադարձությունների առթիվ ավելի խոր և ավելի պարզ կերպով ի հայտ եկան Անդրկովկասի նացիոնալիստական կուսակցությունների հակասությունները։ Այդ բլոկում մուսավաթականները չէին էլ թաքցնում իրենց համակրանքը Թուրքիայի նկատմամբ։ Միևնույն ժամանակ, սեյմից ստանալով արտակարգ լիազորություններ, Անդրկովկասի պատվիրակության նախագահ Չխենկելին 1918 թ. մարտի 21-ին հայտարարեց սեյմի որոշման մասին՝ Թուրքիային զիջելու ամբողջ Օլթիի օկրուգը, Արդահանի

---

18 Տե՛ս «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», стр. 83—84.

19 Նույն տեղում, էջ 121։

օկրուգի կեսից ավելին, Կարսի օկրուգը Բեգլի-Ահմեդ գծից ներքև, Այդղվանի օկրուգը, առանց Կաղզվան քաղաքի և նրա հյուսիսային մասի։ Ապրիլի 5-ին կոնֆերանսի վեցերորդ և վերջին նիստում հրապարակվեց նշված օկրուգները Թուրքիային զիջելու մասին և պատրաստակամություն հայտնվեց թուրքերի հետ համաձայնության գալու հայկական հարցի դրման այնպիսի համատեղ մշակման համար, որը օսմանյան պատվիրակությունը անընդունելի չի համարի իր համար[20]։ Թուրքական պատվիրակությունը Անդրկովկասի պատվիրակությունից վճռականորեն պահանջեց ընդունել Բրեստի հաշտության պայմանները, չթաքցնելով երկրամասի տերիտորիաները նվաճելու, Անդրկովկասը Ռուսաստանից վերջնականապես անջատելու իր ձգտումները։ Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունը չհամաձայնեց Բրեստի պայմանագիրն ընդունելուն և 1918 թ. ապրիլի 14-ին պահանջեց, որպեսզի պատվիրակությունը վերադառնա Թիֆլիս։ Տրապիզոնի բանակցությունները ընդհատվեցին։ Թուրքերը հարձակման անցան, թեպետ նրանք հարձակումը չէին դադարեցրել բանակցությունների ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում։ Ապրիլի 14-ին թուրքերը գրավեցին Անարիա ամրոցը։ Ապրիլի 15-ին Բաթումը գտնվում էր թուրքերի ձեռքին[21]։ Գրավելով նոր բնակավայրեր, թուրքերը կոտորում էին խաղաղ բնակչությանը, թալանելով և հրկիզելով նրանց բնակարանները։ Ուշագրավ է, որ այդ առթիվ Անդրկովկասյան սեյմի կողմից չի եղել և ոչ մի բողոք։

Գերմանիան հանդիսատես էր այդ սարսափելի տեսարանը։ Սովետական Ռուսաստանը 1918 թ. ապրիլի 13-ին Գերմանիային բողոքի նոտա ներկայացրեց, որտեղ ասված է. «Թուրքական բանակը մոտենում է Բաթումին, Կարսին և Արդահանին, ավերելով երկիրը և ոչնչացնելով գյուղական բնակչությանը։ Հայերի հետագա ճակատագրի պատասխանատվությունն ընկնում է Գերմանիայի վրա, քանի որ հենց նրա պընդմամբ են ռուսական զորքերը դուրս բերվել հայկական մարզերից և Գերմանիայից է կախված թուրքական զորքերի դադարումը վրիժառության և գազազման հողի վրա կատարվող սովորական անկարգություններից։ Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ այնպիսի կուլտուրական պետություն, ինչպիսին Գերմանիան է, որը հնարավորություն ունի ներգործելու իր դաշնակցի՝ Թուրքիայի վրա, թույլ տա, որպեսզի Բրեստի հաշտության պայմանագիրը իր կամքից անկախ այս համաշխարհային պա-

20 Նույն տեղում, էջ 152—155։

21 Նույն տեղում, էջ 193—195։

տերազմի մեջ ներքաշված հայ ժողովրդի համար ծառայի որպես անհամար դժբախտությունների աղբյուր...»[22]։ Այնուհետև Սովետական կառավարությունը վստահություն էր հայտնում, որ Գերմանիան բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք կառնի Թուրքական իշխանությունների վրա ներգործելու համար, նպատակ ունենալով կանխել խաղաղ բնակչության ոչնչացումը, ինչպես դա տեղի ունեցավ Արդահանում։ Բայց Թուրքերը չէին էլ մտածում կանգ առնել։ Նրանց հրապուրում էին Բաքվի նավթը, վրացական մարգանեցը և երկրամասի մյուս հարստություններր։ Անդրկովկասի սեյմը ի հաճույս գերմանա-Թուրքական իմպերիալիստների, հակառակ աշխատավորների կամքի և ցանկության, ապրիլի 22-ին պաշտոնապես հայտարարեց Ռուսաստանից Անդրկովկասի անջատման և «Անկախ ֆեդերատիվ Հանրապետության» կազմակերպման մասին։ Նոր կառավարության նախագահ նշանակվեց Չխենկելին։ Անդրկովկասի աշխատավորները վճռական բողոքով հանդես եկան ընդդեմ «անկախության»։ Ամենուրեք ընդունվում էին Անդրկովկասի հակահեղափոխական կառավարության այդ քայլը դատապարտող բանաձևեր։ Սարսափը հյուսիսից եկող պրոլետարական հեղափոխության առջև, անօգնականությունը սեփական բանվորների ու գյուղացիների աճող հեղափոխական շարժման առջև հակահեղափոխական կառավարությանը մղեցին օտարերկրյա իմպերիալիստների գիրկը։ «Անկախությունը» հեղափոխական Ռուսաստանից իրականում նշանակում էր լիակատար կախվածություն գերմանա-Թուրքական իմպերիալիստներից։

Վ. Ի. Լենինը 1918 թ. մայիսի 14-ին Համառուսաստանյան Կենտգործկոմի և Մոսկվայի սովետի միացյալ նիստում արտաքին քաղաքականության մասին կարդացած զեկուցման մեջ ավեց Կովկասում ստեղծված իրադրության սպառիչ բնութագիրը։ Մատնանշելով Անդրկովկասի կառավարության անջատողական քաղաքականությունը, Վ. Ի. Լենինը ասում էր. «Գերմանիային և Թուրքիային, որպես աջակից պետության, հնարավոր էր առաջ շարժվել ու առաջ շարժվել, ոչ մի բանի չպատասխանելով, ոչ մի բանի ուշադրություն չդարձնելով, հայտարարելով՝ մենք կվերցնենք այն, ինչ կկարողանանք վերցնել, մենք չենք խախտում Բրեստի հաշտությունը, որովհետև անդրկովկասյան բանակը այն չի ճանաչում, որովհետև Կովկասը անկախ է»[23]։

Բաթումին հետևեց Օզուրգեթը, ապրիլի 28-ին ընկավ Կարսը։

---

22 Նույն տեղում, էջ 192։

23 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 462։

Սկսվեցին Թուրքերի Թշնամական գործողությունները Ախալքալաքի գավառում, Ախալցխայի շրջանում, հետո հարձակումը Իգդիրի և Ալեքսանդրապոլի վրա։

Բրեստի պայմանագիրը վաղուց էր խախտվել Թուրքիայի կողմից։ Ինչպես հայտնի է, պայմանագրում խոսվում էր այն մասին, որ պետքի Կարսի, Արդահանի, Բաթումի բնակչությանը իրավունք վերապահվի, «նոր ռեժիմ հաստատել հարևան պետությունների համաձայնությամբ...»։ Պայմանագրի այդ կետերը ամենակոպիտ և անթույլատրելի ձևով ոտնահարվեցին Թուրքիայի կողմից։ Օրինական հարց է ծագում՝ Անդրկովկասի կառավարությունը արդյոք հնարավորություն ուներ հակահարված տալու Թուրքերին։ Անվիճելիորեն այո։ Բայց նա իր գլխավոր թշնամին համարում էր ոչ թե Թուրքական իմպերիալիզմը, այլ Սովետական Ռուսաստանը։

Թուրքական իմպերիալիզմը հենց սկզբից Բրեստի պայմանագրի վրա նայում էր որպես Օսմանյան կայսրության տարածքի հետագա ընդլայնման հնարավորություն։

Ս. Մ. Կիրովը գրել է, որ գերմանա-թուրքական իմպերիալիզմը պատրաստվում էր ոչ միայն Բաքվի, այլև Հյուսիսային Կովկասի դեմ, որտեղ նրանք հույս ունեին Թուրքական զորքերի օգնությամբ իրենց կողմը գրավել Հյուսիսային Կովկասի և Դաղստանի մուսուլմանական ժողովուրդներին։ «Բայց նրանք, ըստ երևույթին, չգիտեն, որ լեռնային ավուններում արդեն սերմանվել է այն միտքը, որ կեղեքումը հավասարապես ծանր է բնակչության համար, որտեղից էլ որ այդ կեղեքումը գար՝ ռուսական, գերմանական կամ թուրքական իշխանությունից»[24]։

1918 թ. մայիսի 11-ին իր աշխատանքն սկսեց Բաթումի կոնֆերանսը։ Շուտով Թուրքիան պահանջեց իրեն հանձնել Ալեքսանդրապոլ քաղաքը և Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղին։

Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչները, գտնվելով Անդրկովկասի կառավարության մեջ, ոչինչ չձեռնարկեցին հարձակվող Թուրքական զորքերի կողմից՝ հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կանխելու համար և նույնիսկ Կարսի անկումից հետո նրա ներկայացուցիչները մեկ օրով լքեցին սեյմը, իբր թե նշան բողոքի, իսկ հաջորդ օրը վերադարձան և իրենց ներկայացուցիչներին ուղարկեցին Բաթում՝ Թուրքիայի հետ տեղի ունեցող բանակցություններին մասնակցելու համար։ Մայիսի 15-ին ընկավ Ալեքսանդրապոլը, չհաջողվեց պաշտպանել

---

24 С. М. Киров, Статьи и речи, М., 1937, стр. 61.

նաև երկաթուղին, թալանից ու ավերածությունից փրկել Ղարաքիլիսան։ Իսկ Անդրկովկասի կառավարությունը այդ ամենից հետո համաձայնվեց թուրքական զորքերին ճանապարհ տալ Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղով։ Պետք է նշել, որ հարցերից մեկը, որը եռանդուն կերպով քննարկվեց կոնֆերանսում, Բաքու քաղաքի հարցն էր, որտեղ այդ ժամանակ գոյություն ուներ սովետական իշխանություն։ Այդ քաղաքը առաջնահերթ տեղ էր գրավում գերմանա-թուրքական, իսկ այնուհետև անգլո-ամերիկյան իմպերիալիզմի զավթողական պլաններում։

Գերմանական գեներալ Լյուդենդորֆը գրել է. «...Ես խրախուսանքով էի վերաբերվում թուրքական ձեռնարկումներին, քանի որ դրանք համապատասխանում էին պատերազմի ընդհանուր զարգացման շահերին։ Բայց այդ ձեռնարկումները Թուրքիային չպետք է շեղեին նրա անմիջական ռազմական խնդիրներից կամ մեզ համար դժվարացնեին Կովկասից հումքի արտահանումը, որը, ինչպես մենք սպասում էինք, պետք է էապես թեթևացներ մեր դրությունը...

...Ըստ Թուրքիայի հետ ունեցած համաձայնության, գնդապետ Ֆոն-Կրեսը պետք է կազմակերպեր Բաթում—Թիֆլիս—Բաքու երկաթուղու շահագործումը, որտեղ վագոն-ցիստեռնների մեծ պարկ կար...»[25]։ Բայց Թուրքիայի արագ առաջխաղացումն Անդրկովկասում անհանգստացնում էր Գերմանիային, և 1918 թ. մայիսին Բաթում ժամանեց գերմանական պատվիրակությունը՝ գեներալ Ֆոն-Լոսովի գլխավորությամբ։ Նույն այդ ժամանակ Վրաստանի ներկայացուցիչը, համաձայն Վրաստանի ազգային խորհրդի 1918 թ. մայիսի 14-ի որոշման, գեներալ Ֆոն-Լոսովի միջոցով բանակցություններ էր վարում կայզերական Գերմանիայի կողմից Վրաստանի նկատմամբ պրոտեկտորատ հաստատելու վերաբերյալ, նպատակ ունենալով Անդրկովկասը «փրկել» հեղափոխության հաղթանակից։ Մայիսի 19-ին գեներալ Ֆոն-Լոսովը նամակով դիմեց Անդրկովկասի պատվիրակության նախագահին, որտեղ նա իր ծառայություններն էր առաջարկում որպես միջնորդ Բաթումի բանակցություններում։ Անդրկովկասի պատվիրակությունը դրական պատասխան տվեց Գերմանիայի ներկայացուցչին։ Թուրքիան այդ ակտն ընկալեց որպես ոտնձգություն։ Քանի որ Թուրքիան թալանում էր Հայաստանը և ոչնչացնում խաղաղ բնակչությանը, Գերմանիան հանգիստ դիտում էր այդ տեսարանը, որովհետև նա շահագրգռված էր, որպեսզի

---

25 *Людендорф*, Мои воспоминания о войне 1914—1918 гг., т. 2, стр. 187, 219, 220.

վերջ տրվի հայկական հարցին և հող նախապատրաստվի հետագա զավթումների համար։ Գեներալ Ֆոն-Լոսովը Թուրքերին խորհուրդ էր տալիս «սանձել» հայերին։ Բայց շուտով պարզ դարձավ, որ Թուրքիան ձգտում է զավթել ամբողջ Անդրկովկասը։ Դրան էր ձգտում նաև Գերմանիան և այդ պատճառով խալիլ-բեյը մերժեց գերմանական պատվիրակության առաջարկությունը միջնորդության վերաբերյալ։ Այդ մասին Ֆոն-Լոսովը 1918 թ. մայիսի 24-ին հայտնեց Չխենկելիի անունով գրված նամակում և ստիպված եղավ Թողնել Բաթումը ու վերադառնալ Գերմանիա։

Բայց գործը պատակաման չհասավ։ Անդրկովկասի պատվիրակությունը դիմեց Գերմանիային։ Իսկ փաստորեն միակ կառավարությունը, որին հարկավոր էր դիմել՝ Անդրկովկասը օտարերկրյա իմպերիալիստների վերջնական օկուպացիայից փրկելու համար, Սովետական Ռուսաստանի կառավարությունն էր։ Մայիսի 15-ին իր նոտայում Սովետական կառավարությունը հայտնում էր հետևյալը. իր «...կարծիքով, անհրաժեշտ է ռուսական կառավարության լիազոր ներկայացուցչին մասնակից դարձնել այն բանակցություններին, որոնք տեղի են ունենում Բաթումում՝ մի կողմից գերմանական և օսմանյան կառավարությունների, մյուս կողմից, այսպես կոչված, Անդրկովկասի կառավարության միջև... որ առանց իր մասնակցության կնքված պայմանագիրը, ավյալ դեպքում, ռուսական կառավարությունը իր համար հնարավոր չի համարի ճանաչել որպես ուժ ունեցող...»[26]։

Սովետական կառավարությունը նշված նոտայում իր համաձայնությունը տվեց բանակցությունների մեջ մտնել Չխենկելիի կառավարության ներկայացուցչի հետ՝ Անդրկովկասի անկախությունը ճանաչելու վերաբերյալ, որը ամենևին չէր նշանակում, այսպես կոչված, Անդրկովկասի կառավարության ճանաչում։ Բայց այս անգամ ևս Անդրկովկասի կառավարությունը հրաժարվեց Սովետական Ռուսաստանի հետ բանակցությունների մեջ մտնելու հնարավորությունից։

Գերմանա-թուրքական իմպերիալիստների կամքով, 1918 թ. մայիսի 26-ին սեյմն արձակվեց, վրացական ազգային խորհուրդը, Ն. Ժորդանիայի նախագահությամբ, հռչակեց Վրաստանի «անկախ» հանրապետություն։ Մայիսի 27-ին մուսավաթականները Ադրբեջանը «անկախ» հանրապետություն հայտարարեցին։ Մայիսի 28-ին Թիֆլիսում գտնվող Հայոց ազգային խորհուրդը Հայաստանը «անկախ» հանրապետություն հայտարարեց։ Մասնատվածությունը նպաստում էր Անդրկովկասի

26 «Документы внешней политики СССР», т. 1, стр 302—303.

նկատմամբ օտարերկրյա իմպերիալիստների զավթողական պլանների կենսագործմանը: Անդրկովկասի անջատվելը Սովետական Ռուսաստանից, երեք «անկախ» հանրապետությունների կազմակերպվելը իսկապես կործանարար եղան Անդրկովկասի ժողովուրդների համար: 1918 թ. հունիսի 7-ին Ստ. Շահումյանը Բաքվի բանվորների, կարմիրբանակայիններ, նավաստիների և գյուղացիների սովետի նիստում արտասանած ճառում, բնութագրելով Անդրկովկասի հակահեղափոխության դավաճանական վարքագիծը, ասել է. «Ժողովրդի մեջ սարսափելի դժգոհություն է առաջացել, որն ուղղակի ապստամբության է վերանցվում... «Առանց Ռուսաստանի մենք կկործանվենք» ասում են նույնիսկ ծերունիները, որոնք մինչև այժմ պասսիվ կերպով էին վերաբերվում քաղաքականությանը և հեղափոխությանը: Զայրույթը հասել է այն աստիճանի, երբ այն կարող է ժողովրդական ապստամբության վերածվել: Բայց իսկական պատճառը, որը մենշևիկների կուսակցությանը և դաշնակցությանը մղեց Անդրկովկասի համար կործանարար այդ քայլին, այն էր, որ նրանք վախենում էին, որ Ռուսաստանում հաղթանակած բանվորական հեղափոխությունը մուտք կգործի Անդրկովկաս...»[27]:

Մայիսի 28-ին Գերմանիան ճանաչեց Վրաստանի «անկախությունը», և Փոթիում համաձայնագիր ստորագրվեց, ըստ որի Վրաստանի մենշևիկյան կառավարությունը երկրի բոլոր երկաթուղիները և հարստությունները հանձնում էր Գերմանիայի տիրապետությանը: Հունիսի 13-ին գերմանական զորքերը մտան Վրաստան: Վրաստանի աշխատավորների հեղափոխական զայրույթը ճնշելու գործում մենշևիկներին օգնության հասան գերմանական զինվորները:

Վ. Ի. Լենինը 1918 թ. հուլիսի 29-ին Համառուսաստանյան Կենտգործկոմի նիստում արտասանած ճառում այդ առթիվ ասել է. «Մենք դիտենք, որ Կովկասում մեր ընկեր-կոմունիստների դրությունը առանձնապես դժվար է եղել, որովհետև նրանց ամենուրեք մատնել են մենշևիկները, որոնք ուղղակի դաշինք են կնքել գերմանական իմպերիալիստների հետ, իհարկե, Վրաստանի անկախությունը պաշտպանելու պատրվակով:

Դուք բոլորդ լավ գիտեք, որ Վրաստանի այդ անկախությունը վերածվեց զուտ խաբեության,— իրոք դա Վրաստանի օկուպացումը և լիակատար զավթումն է գերմանական իմպերիալիստների կողմից, գեր-

---

27 ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 7, գ. 12. թթ. 45—46:

մանական սվիններուի դաշինքը մենշևիկյան կառավարության հետ՝ բոլշևիկյան բանվորների ու գյուղացիների դեմ...»[28]։

Դեռևս մայիսի 26-ին, նկատի չառնելով Բաթումում շարունակվող կոնֆերանսը, Խալիլ-բեյը պահանջեց թուրքական զորքերին անդրկովկասյան երկաթուղով ճանապարհ տալ դեպի Բաքու, ընդդեմ այնտեղ գոյություն ունեցող սովետական իշխանության։ Մենշևիկյան կառավարությունը դրական պատասխան տվեց։

Հունիսի 4-ին Բաթումում պայմանագիր ստորագրվեց մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև։ Այդ պայմանագրի համաձայն, Հայաստանի և Վրաստանի հաշվին Թուրքիային էր անցնում 38.000 քառ. վերստ տարածություն 1.250 հազար բնակչությամբ։ Բացի այդ, Անդրկովկասը կորցրեց իր երկաթուղու գրեթե ամբողջ հարավային հատվածը՝ Ջաջուռի լեռնանցքից դեպի Կարս—Սարիղամիշ և Ալեքսանդրապոլ—Ուլուխանլու—Ջուլֆա։ Էնվեր փաշան ցինիկորեն հայտարարեց, որ միայն այդքան խղճուկ սահմաններուի մեջ սեղմված Հայաստանը սպառնալիք չի կարող լինել Թուրքիայի համար։ Թուրքական իշխանությունները շարունակում էին վայրագությունները։ Ամեն օր հայկական գավառներից հուզիչ տեղեկություններ էին ստացվում թուրքական զորքերի կողմից խաղաղ բնակիչների նկատմամբ կատարած գազանությունների մասին։ Բաթումի պայմանագրի ստորագրումից հետո միայն Ղարաքիլիսայում ոչնչացվեցին 2000 տղամարդ, կին ու երեխա։

Խախտելով Բրեստի հաշտության պայմանագրերը, թուրքերն անցան որոշված սահմանները, որի հետևանքով ավելի քան կես միլիոն հայեր փախուստի դիմեցին թուրքերի կողմից գրավված մարզերից, նրանցից շատերը ճանապարհին մահացան սովից ու հիվանդություններից[29]։ Բրեստի պայմանագիրը չճանաչող Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը ճանաչեցին Բաթումի պայմանագիրը, որը Բրեստի պայմանագրի կոպիտ խախտումն էր և խիստ կերպով վատացրեց երկրամասի վիճակը։

Իսկ երբ Գերմանիան պարտություն կրեց իմպերիալիստական պատերազմում և թողեց Վրաստանը, Անդրկովկասում նոր տերեր հայտնվեցին՝ Անտանտի իմպերիալիստները։ Հենց այդ ժամանակաշրջանում սկսվեցին ազգամիջյան երկպառակությունները ամբողջ Անդրկովկա-

---

28 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 8։

29 Տե՛ս Հայկական ՍՍՀ ՀՍՄՇ ԿՊԱ, ֆ. 68, դ. 17, թ. 222։

սում: Անգլիական իմպերիալիզմը իր տիրապետությունը հաստատում էր «բաժանիր, որ տիրես» սկզբունքով:

Մենշևիկների, դաշնակցականների և մուսավաթականների տիրապետության հետևանքով թալանված, մասնատված, մինչև աղքատության և հուսահատության եզրը հասցված Անդրկովկասը ի դեմս Սովետական Ռուսաստանի գտավ իր շահերի միակ պաշտպանին: Գերմանա-թուրքական զորքերի հարձակման ամբողջ ժամանակաշրջանում Ռուսաստանը մի քանի անգամ հանդես է եկել բողոքի նոտայով՝ ընդդեմ օտարերկրյա իմպերիալիստների կողմից Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ կիրառվող չարագործությունների (1918 թ. ապրիլի 12-ի, ապրիլի 13-ի, մայիսի 15-ի նոտաները): ՌՍՖՍՀ ժողկոմսովետի 1918 թ. սեպտեմբերի 20-ի նոտայում ասված է. «...Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածի հետևանքով Արդահանի և Բաթումի օտարացմամբ, որոնք նախկինում մտնում էին ռուսական հանրապետության կազմի մեջ, Կարսի մարզի բնակչությանը իրավունք էր վերապահված «նոր ուժիմ հաստատել հարևան պետություններին, մասնավորապես Թուրքիայի, համաձայնությամբ»: Այդ մարզերի ճակատագիրը և նրանց միջազգային դրությունը պետք է սահմանվեին նրանց բնակչության կամքի արտահայտությամբ... Թուրքական կանոնավոր զորքերը, ավազակների բանդաների հետ միասին, գրավում են այն տերիտորիաները, որոնք պատկանել են ռուսական հանրապետությանը, քաղաքներն ու գյուղերը թալանի և ավերածության են ենթարկում, կոտորում են քրիստոնյա բնակչությանը... Վերջապես ս/թ հուլիս ամսին օսմանյան բանակը էքսպեդիցիա է ձեռնարկել Բաքվի դեմ, և հակառակորդի ճնշող ուժերին սովետական զորքերի կողմից ցույց տրված հերոսական դիմադրությունից հետո բացել է ճանապարհը դեպի ռուսաստանյան հանրապետության ամենակարևոր քաղաքներից մեկը՝ Բաքու... Սովետական կառավարության բոլոր բողոքներին օսմանյան կառավարության ներկայացուցիչները բացասաբար են պատասխանել, այնինչ թուրքական կանոնավոր բանակը գրոհել է Բաքուն և հուլիսի 30-ին Շևքեթ փաշան դիմել է քաղաքի բնակիչներին, առաջարկելով հանձնել քաղաքը: Այժմ, վերջապես, իր գործողությունները պսակելու համար Թուրքիան գրավել և սարսափելի ավերածության է ենթարկել ռուսաստանյան հանրապետության կարևոր քաղաքներից մեկը:

...Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության կառավարությունը ստիպված է խոստովանել, որ օսմանյան կառավարության գործողությունները փաստորեն ոչնչացնում

են Բրեստ-Լիտովսկի պայմանագրի նշանակությունը Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որը խաղաղ հարաբերություններ էր հաստատել այդ երկու պետությունների միջև»[30]։

Սովետական կառավարությունը վերոհիշյալ նոտայով չեղյալ հայտարարեց այդ պայմանագրի այն մասը, որը վերաբերում էր սովետական-օսմանյան հարաբերություններին։ Սովետական կառավարությունը քանիցս բողոքի նոտայով հանդես է եկել գերմանա-թուրքական զորքերի դեպի Բաքու շարժվելու առթիվ (1918 թ. հուլիսի 25-ին, օգոստոսի 19-ին, սեպտեմբերի 21-ին, հոկտեմբերի 10-ին)։

Այդ բոլոր փաստաթղթերը վկայություններ են այն անդուլ հոգատարության և գործուն կարեկցության, որ Սովետական կառավարությունը ցուցաբերում էր Անդրկովկասի ժողովուրդների ճակատագրի նկատմամբ։ Սովետական Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականություն էր, և կյանքը հաստատեց այդ, որովհետև միայն և միայն այդ քաղաքականությունն էր համապատասխանում ճնշված ժողովուրդների շահերին և ակնկալություններին, դեմոկրատական խաղաղության, ազատության և անկախության նրանց ձգտմանը։ Հենց դրանով էլ բացատրվում է երիտասարդ Սովետական Ռուսաստանի արտաքին քաղաքականության ուժն ու կենսունակությունը։ Պատմությունը հաստատեց լենինյան կանխատեսման ճշմարտացիությունը։

1918 թ. նոյեմբերին հեղափոխություն բռնկվեց Գերմանիայում, Վիլհելմ կայզերը գահընկեց արվեց և փախավ։ 1918 թ. նոյեմբերի 13-ին Համառուսաստանյան Կենտգործկոմը չեղյալ հայտարարեց Բրեստ-Լիտովսկի թալանչիական պայմանագիրը։

Պատերազմում Գերմանիայի և Թուրքիայի կրած պարտության հետևանքով իր ուժը կորցրեց նաև 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագիրը։ Համառուսաստանյան Կենտգործկոմը ողջունեց գերմանական իմպերիալիզմի լծից ազատագրված մարդկերի աշխատավոր մասսաներին և նրանց Սովետական Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ եղբայրական միասնության կոչ արեց։

Այսպիսով, Սովետական կառավարությունը, կնքելով Բրեստ-Լիտովսկի հաշտությունը, համորեն օգտագործեց իմպերիալիստական պետությունների բլոկում եղած խոր հակասությունները, Ռուսաստանը դուրս բերեց պատերազմից, պաշտպանեց Հոկտեմբերի նվաճումները և ապահովեց Սովետների միակ երկրի անվտանգությունը։

---

30 «Документы внешней политики СССР», т. I, стр. 490—492.

Անդրկովկասի նացիոնալիստական, հակահեղափոխական կառավարությունների արտաքին և ներքին քաղաքականությունը կործանարար ու դավաճանական էր Կովկասի, Անդրկովկասի ժողովուրդների, ամբողջ սովետական երկրի նկատմամբ։ Այդ պատճառով Անդրկովկասում և հատկապես Հայաստանում ստեղծված դրության հարցում իրենց արդարացնելու և բրեստի հաշտությունը կնքած Սովետական Ռուսաստանին մեղադրելու՝ դաշնակցություն կուսակցության պարագլուխների փորձերը և՛ այն ժամանակ, և՛ հետագայում սնանկ դուրս եկան, որովհետև նրանց փաստարկները մինչև վերջ կեղծ էին և անհիմն։ Ժամանակն աշխատում էր բոլշևիկների օգտին և Անդրկովկասի աշխատավորների պայքարը՝ հանուն սովետական իշխանության, հաղթանակով պսակվեց։

Մ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱԽՏԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը հիմնովին փոխեց ռուսական նախկին կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում հայերի վիճակը։ Սովետական իշխանության հաստատմամբ հայ ժողովուրդը փրկվեց կործանումից և բռնեց ազատ ու երջանիկ կյանքի կառուցման ուղին։ Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում և կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, պատմական կարճ ժամանակամիջոցում նա հասավ տնտեսական ու մշակութային աննախընթաց վերելքի, սոցիալիզմի հաղթանակին և հաստատակամորեն գնում է կոմունիզմի կառուցման ուղիով։ Ինչպես նշել է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը, «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը, Հայաստանում սովետական իշխանության հաղթանակը հայ ժողովրդին բերեցին իսկական սոցիալական ու ազգային ազատագրություն, արմատական շրջադարձ նշանավորեցին նրա ճակատագրում»[1]։

Այդ շրջադարձը ավելի ակնբախ կդառնա, եթե համառոտակի վերհիշենք հայ ժողովրդի դառն անցյալը։

Ծանր մաքառումների ու հերոսամարտերի գնով հայ ժողովուրդը, որոշ ընդհատումներով, մինչև XIV դ. ոչ միայն պահպանեց իր պետականությունը, այլև ստեղծեց հարուստ մշակույթ, որն աչքի է ընկնում ազգային ինքնատիպությամբ ու համամարդկային դաղափարներով։

Միջին դարերի մեծագույն չարիքներից էր օսմանյան թուրքերի ներխուժումը Փոքր Ասիա և «Կարահիսարի ավազակային պետության

1 Լ. Ի. Բրեժնև, *Սովետական Հայաստանի 50 տարին*, Երևան, 1970, էջ 10—11։

ստեղծումը»[2]։ Դրան հետևից նրանց ավերիչ հարձակումը Հայաստանի վրա, որով սկսվեց հայ ժողովրդի պատմության ամենամռայլ ժամանակաշրջանը։ XIV դ. Հայաստանը բաժանվեց սուլթանական Թուրքիայի ու շահական Պարսկաստանի միջև։

Թուրք-պարսկական դաժան տիրապետությունը հույժ կարևոր դարձրեց հայ ժողովրդի ազատագրական պայքարի կողմնորոշման հարցը։ Օտարերկրյա դարավոր լուծը ջլատել էր հայ ժողովրդի ուժերը և նա միայնակ չէր կարող հաղթանակի հասնել երկու բռնակալությունների դեմ։ Բացի սեփական ուժերից հարկավոր էր ապավինել նաև մի այլ՝ դրսի գործոնի վրա, որը մոտ լիներ նրան։ Այդպիսին դարձավ Ռուսաստանը։ XVII դ. արդեն շատ որոշակի էր հայերի ռուսական կողմնորոշումը։ Այն բխում էր թուրք-պարսկական անարդ լծից ազատագրվելու անհրաժեշտությունից և հայկական պետականություն ստեղծելու ակնկալությունից։ Ցարիզմը, իհարկե, պարզապես ձգտում էր Հայաստանը միացնել Ռուսական կայսրությանը և ենթարկել գաղութային ճնշման, ամրապնդել իր ռազմա-ստրատեգիական դիրքերը Անդրկովկասում ու Մերձավոր Արևելքի մատույցներում։ Այնուամենայնիվ, անկախ ցարիզմի զավթողական նպատակներից, Անդրկովկասի միացումը Ռուսաստանին առաջադիմական խոշոր իրադարձություն էր։

1828 թ. հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցավ մեծագույն իրադարձություն։ Դա Արևելյան Հայաստանի միացումն էր Ռուսաստանին, որով հայ ժողովրդի արևելյան հատվածը մտավ տնտեսապես ու կուլտուրապես ավելի զարգացած պետության կազմի մեջ և, ամենակարևորը, իր բախտը մեկընդմիշտ կապեց ռուս մեծ ժողովրդի հետ։ Ընդհանրապես, «Ռուսաստանն իսկապես առաջադիմական դեր էր կատարում Արևելքի նկատմամբ»[3] և բազմաթիվ ժողովուրդներ, այդ թվում հայերը «մեծ համակրանք ունեին դեպի ռուսները» և «Ռուսաստանի մեջ տեսնում էին իրենց միակ հենարանը, իրենց ազատագրողին»[4]։ Արտահայտելով ժողովրդական հոծ զանգվածների նվիրական զգացումները, մեծ հայրենասեր, դեմոկրատ-լուսավորիչ Խաչատուր Աբովյանը գրել է. «Օրհնվի էն սևաթը, որ ոսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի շար շունչը մեր երկրիցը հալածեց»։

---

2 «Архив К. Маркса и Ф. Энгельса», т. 5, стр. 223.

3 *К. Маркс и Ф. Энгельс*, Соч., т. 27, стр. 241.

4 Նույն տեղում, հատ. 9, էջ 32։

Արդարև, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին այն ժամանակ չբերեց և չէր էլ կարող բերել իսկական ազատություն։ Հայ ժողովուրդը ինչպես և Ռուսաստանի մյուս ժողովուրդները, ապրում էին ցարական միահեծանության պայմաններում և ենթարկվում ճնշման ու շահագործման։ Բայց շատ ավելի ծանր էր ու անտանելի թուրքական բռնակալության տակ գտնվող արևմտահայության՝ հայ ժողովրդի մեծ մասի դրությունը։

Կ. Մարքսը Օսմանյան կայսրությունը համարել է «իսկական ռազմական տերություն»[5], որն անտանելի վիճակ էր ստեղծել բոլոր աշխատավորների և հատկապես քրիստոնյա ժողովուրդների համար։ Կատաղի կամայականության ու կրոնական ֆանատիզմի պայմաններում նույնիսկ խոսք չէր կարող լինել անձի ու գույքի տարրական ապահովության մասին։ Հետամնաց թուրքական բռնակալներին ավելի էր կատաղեցնում հպատակ ժողովուրդների կուլտուրական բարձր մակարդակը և նրանք սադիստական դաժանությամբ անարգում ու ոչնչացնում էին տեղական ժողովուրդների, մասնավորապես հայերի դարավոր հուշարձանները, մշակութային մեծագույն արժեքները։

Թուրքիայում հայերի նկատմամբ վարվում էր պետական «իրավունքի» աստիճանի բարձրացված ջարդարարական քաղաքականություն, որն ահավոր չափերի հասավ արյունարբու սուլթան Աբդուլ-Համիդի օրոք (1876—1909 թթ.)։ Դա, իրոք, «զուլումի» ժամանակաշրջան էր, երբ ամենայն դաժանությամբ հետապնդվում էր ամեն մի ազատ խոսք, ստեղծագործական միտք, մի բան, որ հարկադրված են խոստովանել նույնիսկ թուրքական որոշ հետազոտողներ։ Այսպես, Նուրի Երեն Աբդուլ-Համիդին համարում է «արյունոտ սուլթան», որը «ոչ միայն արձևլեց «ազատություն» բառի գործածումը, այլև թույլ չէր տալիս էլեկտրականության կիրառումը, վախենում էր գիտությունից, նրա մեջ մարտահրավեր տեսնելով իր իշխանությանը»[6]։

Թուրքիայում հայերը փաստորեն հայտարարված էին օրենքից դուրս և ենթակա էին հրեշավոր կամայականությունների։ Սուլթան Աբդուլ-Համիդը՝ այդ «թագակիր ավազակը», պահանջում էր «վերջ տալ հայկական հարցին՝ ոչնչացնելով բոլոր հայերին», իսկ նրա մեծ վեզիր Քյամիլ փաշան ցինիկաբար հայտարարում էր. «Հայաստան բառը ոչ միայն չենք ճանաչեր, այլև այդ անունը հնչող կզակները պետք է ջախ-

---

[5] «Архив Маркса и Энгельса», т. 6, стр. 189.

[6] *Nuri Eren*, Turkey today and tomorrow, London, 1963 p. 13.

ջախենք», «հայ ազգը վերացնելու, անհետ ընելու ենք»[7]: Այդ գաղանային ծրագրի իրականացման վկայություն էր Թուրքիայում 1894—1896 թթ. կազմակերպված կոտորածը, որին զոհ գնացին 300 հազար հայեր:

Ընդհանուր առմամբ, եթե ցարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ էր, ապա սուլթանական Թուրքիան դարձել էր մարդկային սպանդանոց: Կ. Մարքսը նշել է, որ այդ կայսրությունը մեծագույն չարիք էր հպատակ ժողովուրդների համար և այնտեղ չէր կարելի պահպանել ստեղծված գոյավիճակը. նման փորձը հավասարազոր էր պահպանելու սատկած ձիու նեխած լեշը, թույլ չտալով, որ այն «լիովին քայքայվի»[8]:

Աբդուլ-Համիդյան արյունոտ ռեժիմը խոր դժգոհություն առաջացրեց ժողովրդական զանգվածների մեջ, որն ավելի բորբոքվեց ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ: Այդպիսի իրադրության մեջ աշխուժացավ նոր զարգացող թուրքական բուրժուազիան, որի գաղափարախոսները, այսպես կոչված «երիտասարդ թուրքերը», փետրաղարդվել էին «ազատություն», «հավասարություն», «եղբայրություն» բուրժուական լոզունգներով: Նրանք ստեղծել էին իրենց կուսակցությունը՝ «Միություն և առաջադիմություն» կեղծ անունով, որի հետ դաշինքի մեջ էր հայկական բուրժուա-ազգայնական դաշնակցություն կուսակցությունը:

Եվ ահա, 1908 թ. տեղի ունեցավ երիտթուրքերի այսպես կոչված հեղափոխությունը, որը, սակայն, բուրժուական վերնախավային հեղափոխություն էր և ոչ մի էական փոփոխություն չմտցրեց երկրի կյանքում: Ճիշտ է, հռչակվեց սահմանադրություն, խոսվեց դեմոկրատական ազատությունների ու ազգերի իրավահավասարության մասին, բայց այդ ամենը կանխամտածված խաբեություն էր: Իրականում երիտթուրքերը դարձան իրենց ուսուցչի՝ Աբդուլ-Համիդի օրինավոր ու եռանդուն ժառանգորդները, ինչպիսիք էին դահճապետեր Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները, Նազըմ բեյը և շատ ուրիշներ:

Կատաղի շովինիստ երիտթուրքերի առաջին իրական «նվերը» հայ ժողովրդին 1909 թ. Ադանայի կոտորածն էր, որին զոհ գնաց 30 հազար մարդ: Սակայն դա մեծ ոճիրի սոսկ սկիզբն էր: Աննախադեպ եղեռնը տեղի ունեցավ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ թուրքական բռնակալները, գերմանական ռազմամոլների անմիջական

---

7 «Փորձ», Տիփխիս, 1879, № 7—8:

8 К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, стр. 5.

աջակցությամբ և ընդհանրապես արևմտյան իմպերիալիստների թողտվության պայմաններում, բնաջնջեցին արևմտահայության հիմնական մասը (շուրջ մեկուկես միլիոն մարդ), իսկ նրա մազապուրծ բեկորները ցրվեցին աշխարհով մեկ։ Միանգամայն զոհ այդ աբյունախում քաղաքականության արդյունքներից, դազանաբարո Թալեաթ փաշան ցինիկաբար հայտարարեց. «Հայկական հարցը լուծելու առնակետից ես երեք ամսում ավելի շատ գործ կատարեցի, քան Աբդուլ-Համիդը երեսուն տարում»։

Այսպիսով, թուրքերի կողմից հայ ժողովրդի բնօրրանի ղրավումը ավարտվեց նրա հրոսակային ամայացմամբ։ Այն առաջ բերեց մարդկության լուսավոր դեմքերի բողոքն ու ցասումը։ Ականավոր լենինյան Ս. Մ. Կիրովը սրտի անհուն կսկիծով ու անսահման ատելությամբ դատապարտեց հայ ժողովրդի նկատմամբ կիրառված հրեշավոր ոճրագործությունը՝ «դանթեական դժոխքը»։ Բոցաշունչ հեղափոխական Կ. Լիբկնեխտը, Ռայխստագում արած իր մեղադրական հարցապնդումով, անարգանքի սյունին գամեց թուրքական բարբարոսներին ու նրանց գերմանական հովանավորողներին, որոնք իրենց ձեռքերը թաթախել էին հայերի արյան մեջ։ Ֆրանսիական աշխարհահռչակ դրող Անատոլ Ֆրանսն ընդգծեց, որ տանջահար հայ ժողովրդի, նրա հանճարի կողմն է բոլոր ազնիվ սրտերի ու մտքերի համակրանքը։ Իսկ ռուս ականավոր գրող ու գիտնական Վ. Յա. Բրյուսովը հատուկ համոզմունք հայտնեց, որ զոհարազարդ մշակույթ ունեցող հայ ժողովուրդը չի կարող մեծ ապագա չունենալ։

Արևմտահայության բռնագաղթն ու կոտորածը պատմության մեջ եղած մեծագույն ոճիրներից մեկն է, որը ընդմիշտ կմնա որպես մեղադրական ակտ՝ ընդդեմ թուրքական բարբարոսների, գերմանական միլիտարիստների և միջազգային իմպերիալիզմի։ Հայ ժողովուրդն այդ օրհասական պահին անդամ չկորցրեց հավատը, ապավինեց իր ուժերին և հերոսական դոյամարտեր մղեց Վանում ու Շատախում, Սասունում ու Շապին-Գարահիսարում, Մուսա լեռան վրա և Ուրֆայում։ Նա ցույց տվեց, որ կարող է ու պետք է ապրի։

* * *

Ժողովուրդների ազատագրման ու բարգավաճման միակ ճիշտ ուղին ցույց տվեց մարքսիզմ-լենինիզմը։ Դա հեղափոխական պայքարով սոցիալական ու ազգային ազատության ձեռքբերումն է։ Առանց շահա-

գործման ու ճնշման վերացման չի կարող արմատականորեն լուծվել ազգային հարցը։

Մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը վճռական նշանակություն ունեցավ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի կյանքում։ Միայն նա ցույց տվեց նրանց սոցիալական ազատագրման ու ազգային վերածննդի ճիշտ ուղին և ապահովեց դրա իրականացումը։ Դա ավելի է ընդգծվում հայկական բուրժուա-ազգայնական կուսակցությունների ու հոսանքների ազգակործան քաղաքականության ընդհանուր ֆոնի վրա։ Դրանք բոլորը և, հատկապես դաշնակցականները, վարելով արկածախնդրական քաղաքականություն, իրենց հույսերը կապում էին արևմտյան տերությունների հետ, հավատում նրանց կեղծ խոստումներին։ Իրականում իմպերիալիստները միայն իրենց շահադիտական նպատակներն էին հետապնդում և դաշնակցականներին օգտագործում որպես գործիք։

Բնականաբար, ցարիզմի դեմ մղվող հեղափոխական պայքարին անմիջականորեն կարող էին մասնակցել այն աշխատավոր հայերը, որոնք գտնվում էին Արևելյան Հայաստանում, Անդրկովկասում և Ռուսաստանում։ Հայ ժողովրդի լավագույն զավակները մտան կոմունիստական կուսակցության մեջ և գործեցին Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։ Հայ ժողովուրդը համընթաց քայլեց Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հետ և ռուսական պրոլետարիատի գլխավորությամբ ակտիվորեն մասնակցեց երկրում ծավալված հեղափոխական շարժումներին։

Այդպիսին էր արևելահայության հեռանկարը։ Հենց այն պատճառով, որ նա իր բախտը կապել էր կոմունիստական կուսակցության, ռուս ժողովրդի հետ և կանգնել ազատագրության մեծ ուղու վրա, դրանով իսկ արտահայտում էր ամբողջ հայ ժողովրդի իղձերն ու նպատակները և հաստատակամորեն իր կողմը գրավում արևմտահայությանը, որն իր հերթին բնականորեն հակված էր դեպի Ռուսաստանը և այնտեղից էր սպասում իր փրկությունը թուրքական բռնակալությունից։

Վ. Ի. Լենինն ամենայն ուժով դատապարտել է թուրքական տեռորիստական ռեժիմը և մեծագույն համակրանքով խոսել նրա լծի տակ հեծող ժողովուրդների ազատագրական պայքարի մասին։ Ամենաբազմապիսի առիթներով նա պաշտպանել ու խրախուսել է հայ ժողովրդի անձնվեր պայքարն ընդդեմ բոլոր կեղեքիչների, այդ թվում՝ թուրքական բռնատիրների։ Այսպես, «Ուրիշի դրոշի տակ» հոդվածում Վ. Ի. Լենինը XIX դ. երկրորդ կեսի հեղափոխական կարևոր իրա-

դարձությունների մեջ հիշատակում է նաև հայկական հուզումները, այսինքն՝ հայերի ազատագրական շարժումները Թուրքիայում։

Բնորոշ է, որ ՌՍԴԲԿ II համագումարում (1903) արծարծվեց նաև արևմտահայության հարցը։ ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի՝ համագումարին ներկայացրած զեկուցագրում նշված էր, որ Թուրքիայում ապրում են 3 միլիոն հայեր, որոնք գտնվում են «քաղաքական ծանր պայմաններում», ենթարկվում «բարբարոսական հալածանքների, զանգվածային ջարդերի ու կոտորածի»[9]։ Լենինյանները վճռականորեն դատապարտելով Թուրքական բռնակալության այդ ոճրագործ քաղաքականությունը, միաժամանակ մերկացնում էին հայ ազգայնականներին, որոնք ձգտում էին կովկասահայերին կտրել համառուսական հեղափոխական շարժումից։ Նույնպիսի նպատակ էին հետապնդում ղուբատովականները, որոնք հայերին հորդորում էին՝ «Ձեր եղբայրներին կոտորում են Թուրքիայում, ձեր բոլոր ուժերն ուղղեք Թուրքերի դեմ, Ռուսաստանում առանց այն էլ համեմատաբար տանելի է ապրելը, ձեր պայքարով դուք կարող եք միայն դաղափեցնել ռուսական կառավարությանը»[10]։

Հասկանալի է, որ ցարիզմին ձեռնտու նման քարոզները խիստ վնասում էին ոչ միայն համառուսական հեղափոխական շարժմանը, այլև հայ ժողովրդի ազատագրմանը, որն անխզելիորեն կապված էր այդ շարժման հաղթանակի հետ։ Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ «պրոլետարիատը չի կարող պայքար տանել սոցիալիզմի համար և պաշտպանել իր ամենօրյա տնտեսական շահերը առանց բոլոր ազգությունների բանվորների ամենասերտ և լիակատար դաշինքի՝ առանց բացառության բանվորական բոլոր կազմակերպություններում»[11]։

Բոլշևիկները լիովին պաշտպանում էին արևմտահայության ազատագրման դաղափարը, բայց դեմ էին այն ռուսական հեղափոխության դեմ շանթարգել դարձնելուն կամ, համենայն դեպս, նրան հակադրելուն։ Հենց այդպես էին վարվում հայ ազգայնականները, առանձնապես դաշնակցականները, որոնք յուրաքանչյուր հայից պահանջում էին մոռանալ ամեն մի դասակարգային շահ ու տարբերություն և ճանաչել միայն մեկ իդեալ՝ Արևմտյան Հայաստանի «ազատագրումը», որը, սակայն, նրանք կապում էին իմպերիալիստների ագրեսիվ դաղութային քաղաքականության հետ։ Ստ. Շահումյանը, խարազանելով ազգակործան դաշնակցականներին, նշել է, որ նրանց «Թուրքահայ ավանտյու-

9 «Второй съезд РСДРП. Протоколы», М., 1959, стр. 530։

10 Նույն տեղում, էջ 530։

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 291—292։

բան» հանդիսանում է «հայ ազգային ռեակցիայի ռեզերվը, որն այնքան վնաս հասցրեց Կովկասի հայ բնակչությանը, այնքան վիշտ ու տառապանք պատճառեց թուրքահայերին, և այնքան անգնահատելի ծառայություն մատուցեց հայ բուրժուազիային»[12]: Միանգամայն իրավացի էր նաև Ս. Սպանդարյանը, որը դաշնակցականներին համարում էր «հայ կյանքի ցեցեր», «հայ բանվոր դասակարգի գիտակցությունը բթացնողներ և հայ գյուղացիությանը ամենաանամոթ կերպով հարըստահարողներ ու կեղեքիչներ»[13]:

Հեղափոխական շարժման նոր վերելքի տարիներին, երբ Վ. Ի. Լենինը մշակեց ազգային հարցի տեսությունն ու ծրագիրը, բոլշևիկները մեծ ուշադրություն դարձրին նաև հայկական հարցին: «Պրավդա»-ի բազմաթիվ հոդվածներում խարազանվում էր «երիտասարդ թուրքերի» անտանելի լուծը, որի տակ հեծում էին Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդները, այդ թվում հայերը: «Թուրքական դեպքերը» հոդվածում մատնանշվում էր, որ «երիտասարդ թուրքերը» մի կողմից «դրսևորեցին լիբերալ բուրժուազիայի ողջ արատավորությունն ու թուլությունը, իսկ մյուս կողմից՝ իշխանության գլուխ անցած ռազմա-սպայական կաստայի ամբողջ դեսպոտիզմը»: Շարունակելով, «Պրավդա»-ն ընդգծում էր, որ նրանց ձգտումը՝ թուրքացնելու սլավոններին, հայերին, հրեաներին և այլն, «ընդունեց ավելի կոպիտ ու հարկադրական բնույթ, քան Աբդուլ-Համիդի ժամանակ»[14]:

«Պրավդա»-ն դիմակազերծ է արել նաև օտարերկրյա ու հատկապես գերմանական իմպերիալիստների ագրեսիվ ձգտումները Հայաստանի նկատմամբ: Այդ տեսակետից բնորոշ է «Փոքր Ասիան և հայկական հարցը» հոդվածը, որտեղ հայ ժողովուրդն անվանվում է «Առաջավոր Ասիայի կուլտուրտրեգերը»: Միաժամանակ այնտեղ նշվում է, որ «Փոքր Ասիայի, այդ նշանակում է և Հայաստանի մասին, գերմանական կապիտալը շատ վաղուց է երազում»[15]: Գերմանական իմպերիալիզմի մոլի գաղափարախոս Պ. Ռոհրբախը պահանջում էր օր առաջ գրավել Հայաստանը, որն «իր աշխարհագրական դիրքով ու մակերևույթի կազմությամբ հանդիսանում է բանալին այն դիրքի, որը տիրապետություն է տալիս Անատոլիայի թերակղզու ու Միջագետքի հովտի վրա»[16]:

---

12 Սա. Շահումյան, *Երկեր*, հատ. 1, Երևան, 1955, էջ 290:

13 Ս. Սպանդարյան, *Երկեր*, հատ. 1, Երևան, 1959, էջ 68:

14 «Правда», 27 июля 1912 г.

15 «Правда», 27 июля 1913 г.

16 *П. Рорбах*, Война и германская политика, М., 1915, стр. 11.

Որպես Թուրքիայում ազգային հարցի լուծման կարևորագույն պահանջ «Պրավդա»-ն առաջ էր քաշում ազգերի ինքնորոշման իրավունքը, որի իրականացումն ամեն մի ժողովրդի կատար քաղաքական, տնտեսական ու կուլտուրական զարգացման լայն հնարավորություն[17]:

Առաջին աշխարհամարտի ժամանակ բոլշևիկները Վ. Ի. Լենինի գլխավարությամբ, վարելով միակ ճիշտ հեղափոխական-ինտերնացիոնալիստական դիծը, մերկացնում էին պատերազմի թալանչիական բնույթը, որն արտահայտվում էր նաև Հայաստանի նկատմամբ: Վերջինս դարձել էր կռվախնձոր Թուրքիայի, Գերմանիայի, ցարական Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի միջև և իմպերիալիստների շահերի համար պետք է հոսեր հայ ժողովրդի արյունը: Այդպես էլ եղավ: Այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը գլխովին սրի էր քաշվում, միջազգային իմպերիալիստական դիվանագիտությունն զբաղված էր ասիական Թուրքիայի բաժանման հարցով: Սայքս-Պիկոյի համաձայնագրով «վերջ էր տրվում հայկական հարցին» և Արևմտյան Հայաստանը ոչ միայն «ինքնավարություն» չէր ստանում, այլև կորցնում էր իր տարածքային ամբողջականությունը: Անտանտի պետությունները Հայաստանը համարում էին իրենց «փոքր դաշնակիցը», բայց դա արվում էր դիմակավորվելու (քրիստոնյաներին օգնելու պատրվակով) և հայ ժողովրդին իբրև թնդանոթի միս օգտագործելու համար:

Կասկածից վեր է, որ գերմանա-թուրքական հայացինջ քաղաքականությունը և Անտանտի պետությունների նենգամիտ, դավերով պարուրված ագրեսիվ պլանները տանում էին դեպի հայ ժողովրդի լիակատար ֆիզիկական ոչնչացում: Ինչպես ասում են, միայն «հրաշքը» կարող էր փրկել դրությունը: Եվ այդ «հրաշքը» տեղի ունեցավ: Դա Հոկտեմբերյան հեղափոխությունն էր, որը մեր երկրի բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև հայ ժողովրդին, տվեց սոցիալական ազատություն ու ազգային վերածնունդ: Արմատականորեն լուծվեց ազգային հարցը և սովետական իրավահավասար ու բարեկամ ժողովուրդները կանգնեցին քաղաքական, տնտեսական ու կուլտուրական զարգացման ուղու վրա:

Սովետական իշխանության ծնունդը նշանավորվեց ոչ միայն հաշտության ու հողի մասին դեկրետներով, այլև Ռուսաստանում բնակվող բոլոր ազգերին ինքնորոշման իրավունք տալով: Դրա պերճախոս վկայությունն է «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որն ընդունվեց 1917 թ. նոյեմբերի 2 (15)-ին: Այն ամբողջու-

---

17 Տե՛ս «Правда», 1 февраля 1914 г.

Բյամբ տարածվում էր նաև հայ ժողովրդի վրա, բայց, դժբախտաբար, սովետական իշխանության բարիքներից Անդրկովկասի ժողովուրդները լրիվ օգտվեցին մի փոքր ավելի ուշ: Դա բացատրվում է նրանով, որ այստեղ միաժամանակ ձգձգվեց սոցիալիստական հեղափոխության հաղթանակը:

Մեծ Հոկտեմբերից հետո Անդրկովկասում իշխանությունը ժամանակավորապես անցավ բուրժուական ու մանրբուրժուական կուսակցություններից կազմված հակասովետական բլոկի ձեռքը, ապա այն տրոհվեց օտարերկրյա իմպերիալիստներից կախված 3 սատրապությունների՝ մենշևիկյան Վրաստանի, մուսաֆաթական Ադրբեջանի ու դաշնակցական Հայաստանի, որոնց կառավարողների ռեակցիոն, ազգայնական ու արկածախնդրական քաղաքականությունը երկրամասի ժողովուրդներին կանգնեցրեց ահավոր աղետի առջև:

Այդ ծանր պահին Սովետական Ռուսաստանը պարզեց իր փրկարար ձեռքը և պատրաստակամություն հայտնեց օգնելու ներքին ու արտաքին թշնամիներից Անդրկովկասի ժողովուրդների ազատագրմանը: Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանը, անմիջականորեն գլխավորելով երկրամասում սովետական իշխանություն հաստատելու համար մղվող պայքարը, բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին ուղղած կոչում ասում էր. «Կովկասը կանգնած է անդունդի եղրին: Փրկեցե՛ք նրան: Ստեղծե՛ք այստեղ ինտերնացիոնալ բանվորագյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու ժողովրդական Կոմիսարների Սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությանը կառաջնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»[18]:

Կոմունիստական կուսակցությունը մեծագույն հոգատարությամբ էր լցված դեպի Անդրկովկասի ժողովուրդները, այդ թվում հայ ժողովուրդն ու նրա արևմտյան հատվածը: Բնորոշ է, որ հեղափոխությունից հետո սովետական պետական ապարատում անմիջապես ստեղծվեց հայկական գործերի կոմիսարիատ՝ ականավոր լենինյան Վաղարշակ Ալվանեսովի գլխավորությամբ, իսկ նրա տեղակալ նշանակվեց բոլշևիկ-բանաստեղծ Վահան Տերյանը: Մեծ օգնություն կազմակերպվեց սոված ու անօթևան հայ գաղթականությանը, իսկ 1917 թ. դեկտեմբերի 29-ին ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ ընդունեց «Թուրքա-

18 Ստ. Շահումյան, *Երկեր*, հատ. 3, Երևան, 1958, էջ 69—70:

Հայաստանի մասին» դեկրետը, որը լենինյան ազգային քաղաքականության փայլուն դրսևորումն էր։ Այն, ինչի մասին բոլշևիկները խոսում էին մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, այժմ բարձրացվեց պաշտոնական պետական քաղաքականության աստիճանի։ Հայկական հարցի լուծումը դուրս էր բերվում իմպերիալիստական դիվանագիտության ճանկերից և դրվում ռեալ ու արդարացի ուղու վրա։ Ազդարարվեց Արևմտյան Հայաստանի անկախություն, հռչակվեց տարաբախտ ու ցրված հայերի հայրենադարձության կազմակերպման անհրաժեշտություն, առաջադրվեցին արևմտահայության ազատ ինքնորոշման երաշխիքներ։ Սովետական պետությունն այն ժամանակ մեծ ջանքեր գործադրեց այդ դեկրետը կենսագործելու համար, բայց հանդիպեց միջազգային իմպերիալիզմի ու Անդրկովկասի հակահեղափոխության դիմադրությանը։ Հատկապես կործանարար դեր կատարեցին թուրքերը, որոնք 1918 թ. փետրվարին, «որպես առիթ օգտագործելով իրենց իսկ հրահրած կոնֆլիկտը հայկական ջոկատների և մահմեդական բնակչության միջև, իրենց զորքերը մտցրին «Թուրքահայաստանի» տարածքը և հայ բնակչությանը զրկեցին ժողկոմսովետի դեկրետով նախատեսված ազատ ինքնորոշման իրավունքը իրականացնելու հնարավորությունից»[19]։ Ավելին, թուրքական զորքերը գրավեցին նաև Կարսը, Արդահանը, Բաթումը և մտան Անդրկովկասի խորքերը, որպեսզի զավթեն ամբողջ երկրամասը և ոչնչացնեն նաև արևելահայությանը։ Դաշնաբարո էնվեր փաշան հրամայել էր. «որտեղով կանցնի թուրքական ասկյարը, այնտեղ հայ չպետք է մնա»։

Այդպիսով, ստեղծվեց ծանր կացություն, որը մահացու վտանգ էր սպառնում Անդրկովկասի ժողովուրդներին ընդհանրապես և հայ ժողովրդին՝ մասնավորապես։ Այդ օրհասական պահին հայ ժողովուրդը դիմեց Սարդարապատի հերոսամարտին, որը նրան փրկեց թուրքական սրածումից։

Թուրքական ագրեսիան հնարավոր դարձավ Կովկասյան ռազմաճակատի մերկացմամբ, որն Անդրկովկասի կառավարողների հակասովետական ու ավանտյուրիստական քաղաքականության արդյունքն էր։ Երկրամասի հակահեղափոխական բլոկի ամենամեծ հանցագործությունն այն էր, որ նա Անդրկովկասը կտրեց Սովետական Ռուսաստանից և մերկացվեց Կովկասյան ռազմաճակատը։ Անդրկովկասի բուրժուա-ազգայնական կառավարողները շտապում էին որքան կարելի է շուտ ա-

---

[19] «Документы внешней политики СССР», т. 1, М., 1957, стр. 712.

զատվել Կովկասյան ռազմաճակատի հեղափոխականորեն տրամադրված ռուսական զորքերից։ Այդպիսի մեկուսացման ու թշնամական քաղաքականությունը չէր կարող խոր զայրույթ չառաջացնել առանց այն էլ անարդարացի պատերազմից հոգնած ու դժգոհ ռուս զինվորների մեջ, որոնք, սակայն, պատրաստ էին պաշտպանելու սովետական իշխանությունը։ «Կովկասում,— գրել է Ստ. Շահումյանը՝ խարազանելով երկրամասի ռեակցիոն կառավարողներին,— կանգնած է ռուս զինվորների կեսմիլիոնանոց բանակ, զինվորների, որոնք երեք տարի արյուն են թափել, պաշտպանելով Կովկասի սահմանները։ Ի՞նչ եք կարծում, կարո՞ղ է նա հանգիստ մնալ ռազմաճակատում, երբ դուք դավաճանում եք ռուսաստանյան հեղափոխությանը, երբ դուք Կալեդինին գերադասում եք Լենինից։ Ռուս զինվորը ոչինչ չպետք է ունենա Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի ավտոնոմիայի դեմ։ Բայց նա իրավունք ունի վճռականապես բողոքելու Ռուսաստանի բանվորա-գյուղացիական հեղափոխության նկատմամբ թույլ տված ձեր դավաճանության դեմ։ Ռուս զինվորը կարող է իրեն հարց տալ, թե ես ինչու պիտի պաշտպանեմ ճակատը թուրքերից, եթե ես Կովկասում «եկվոր» տարր եմ, որի շահերը կովկասցիք չեն կամենում հաշվի առնել։ Ռազմաճակատում ամեն մի զինվոր կարող է մտածել, որ հեղափոխական պարտքը հրամայում է իրեն անմիջապես գնալ Հյուսիսային Կովկաս՝ կովելու Կալեդինների և Կաբաուլովների դեմ ի պաշտպանություն ռուսական հեղափոխության, հանուն «հողի և ազատության»[20]։

Բուրժուական ազգայնականների ոճրագործ քաղաքականությունը, որով մերկացվում էր Կովկասյան ռազմաճակատը, ոչ միայն նորից թուրքական հորդաների հոշոտմանն էր հանձնում Արևմտյան Հայաստանը, այլև բացում էր Կովկասի դարպասները նրանց և մյուս իմպերիալիստների առաջ։ Այդպես էլ եղավ։ Թուրքական, գերմանական, անգլիական, ամերիկյան նվաճողները ներխուժեցին Անդրկովկաս։ Ստեղծվեց կատարյալ մղձավանջ երկրամասի ժողովուրդների համար, իսկ դաշնակցականների տիրապետության ժամանակ (1918—1920) Հայաստանը վերածվեց օտարերկրյա իմպերիալիստների դաղութի, ավերակների ու մահվան երկրի։ Քեմալական Թուրքիան շարունակում էր երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը և ձգտում իսպառ ոչնչացնել նաև արևելահայությանը։ Եթե Մուստաֆա Քեմալն անհիմն

20 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, էջ 27։

Կերպով ու չարամտորեն փոքրիկ Հայաստանը համարում էր «իմպերիալիստական»[21], որի դեմ նրա կառավարությունը պատրաստակամություն էր հայտնում պատերազմելու, ապա նրա ռեակցիոն գեներալ Քյազիմ Կարաբեքիրը, որը նշանակվել էր Արևելյան ռազմաճակատի հրամանատար, ցինիկաբար հայտնում էր. «Մոտակա օրերին ես պետք է հաղորդեմ այն մասին, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզից»: Հենց այդ նպատակով թուրքերը 1920 թ. սեպտեմբերին պատերազմ սկսեցին Հայաստանի դեմ: Այդ ժամանակ դաշնակցական գործիչները, լիովին դավաճանելով հայ ժողովրդի ազգային շահերին և լցված հակասովետական թույնով, մերժեցին Սովետական Ռուսաստանի օգնությունը: Տխրահռչակ Կ. Սասունին հրճվանքով պնդում է, թե «դաշնակցությունը ռուսական օրիենթասիոն չուներ»[22]: Հապա ո՞րն էր նրա օրիենտացիան՝ արևմտյան, իսկ այդ ճակատագրական պահին՝ նաև թուրքական: Պատահական չէ, որ դաշնակցական «Հառաջ» թերթը գրում էր. «Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական ու ֆիզիկական գոյությունը հարատևորեն, նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»[23]:

Այդպիսով, ազգակործան դաշնակցականները հայ ժողովրդի փրկությունը տեսնում էին դարավոր ոսոխի արյունոտ ճիրաններում: Այդ խայտառակ քաղաքականության արդյունքն էր 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքված Ալեքսանդրապոլի ստորագուցիչ ու ապօրինի պայմանագիրը, որով Հայաստանը դառնում էր Թուրքիայի մի պրովինցիան:

Հայ բանվորն ու գյուղացին չէին կարող հաշտվել դաշնակցության ու նրա օտարերկրյա տերերի արյունոտ լծի հետ: Նրանք դիմեցին հեղափոխական ելույթների, մայիսյան հերոսական ապստամբությանը, իսկ 1920 թ. նոյեմբերի 29-ին հաստատեցին սովետական կարգեր: Դա կատարվեց կոմունիստական կուսակցության գլխավորությամբ և ռուս մեծ ժողովրդի օգնությամբ: Սկսվեց հայ ժողովրդի ազատ ու երջանիկ կյանքի լուսապայծառ դարագլուխը:

Այդպիսով, սովետական իշխանությունը բախտորոշ ու փրկարար նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Նա ազատվեց լիակատար բնաջնջման վտանգից և ապահովեց իր գոյության իրավունքը: Հայ ժողովրդի մեծ բարեկամ Գ. Օրջոնիկիձեն ասել է. «Պատմության մեջ

21 *Տե՛ս* АВП СССР, ф. 132, оп. 3, п. 2, ед. хр. 11, л. 2.

22 Կ. Սասունի, *Բուրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914—18)*, Պեյրութ, 1966, էջ 25:

23 «Հառաջ», 20 նոյեմբերի 1920 թ.:

քիչ կան այնպիսի ժողովուրդներ, որոնք այնքան շատ զոհեր տված լինեին, ինչպես հայերը, և քիչ կան այնպիսի երկրներ, որտեղ այնքան արյուն թափված լիներ, որքան Հայաստանում»[24]:

Սովետական իշխանության հաստատմամբ այդ ծանր «ժառանգությունը» մեկընդմիշտ դառնում էր անցյալի սեփականությունը՝ այլևս չկրկնվելու համար:

Դրանով սահմանափակվում է արդյո՞ք սովետական իշխանության նշանակությունը հայ ժողովրդի համար: Իհարկե, ոչ: Նոր կարգերում նա ձեռք բերից իսկական ազատություն, խաղաղություն, ապրից ազգային վերածնունդ, հաստատեց ազգային պետականություն և դարձավ սովետական ժողովուրդների միասնական ու անխախտ ընտանիքի իրավահավասար անդամը:

Լինելով հզոր Սովետական Միության իրավահավասար անդամը, Սովետական Հայաստանը դարձավ զարգացած սոցիալիստական ինդուստրիայի, առաջավոր գյուղատնտեսության և բարձր կուլտուրայի ու դիտության հանրապետություն:

Ահա հայ ժողովրդի ազատագրման Հոկտեմբերյան ուղու արդասավոր պտուղները: Վերհիշելով մեր ժողովրդի ծանր անցյալը, ավելի հստակորեն ենք տեսնում նրա սոցիալիստական վերածնության վեհությունը:

Պատմական այդ մեծագույն դասը խորապես ուսանելի է նաև սփյուռքահայության համար: Իրավամբ Սովետական Հայաստանը դարձել է նրա մայր հայրենիքը, հայ ժողովրդի ազգային համախմբման հաստատուն կենտրոնը:

Աշխարհով մեկ ցրված աշխատավոր հայերի քարավանները մշտապես հանգրվանում են մայր հայրենիքում՝ Սովետական Հայաստանում, ու ակտիվորեն մասնակցում նոր կյանքի կառուցմանը: Սովետական Հայաստանի գոյությունն ու ծաղկումը նրան դարձրել է ոչ միայն ձգողության կենտրոն սփյուռքահայության համար, այլև կատեցնում է հայերի «սպիտակ ջարդը» կապիտալի աշխարհում: Վերջապես, մեր սոցիալիստական ապրելակերպի ու մտածելակերպի բարերար ազդեցությունը նրա վրա ունի հեղափոխականացնող նշանակություն՝ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում: Սփյուռքահայության հիմնական զանգվածը, հակահարված տալով ազգադավ դաշնակցականներին, որ-

---

24 *Г. К. Орджоникидзе,* Статьи и речи, т. 1, М., 1956, стр. 412.

Այնպես մասնակցություն է ցույց տալիս հին աշխարհի արմատական վերափոխմանը։

Ուրեմն, սովետական իշխանությունը ազատարար ու ոգեշնչող նշանակություն ունի ամբողջ առաջադեմ հայության համար։

Կյանքը լիովին հաստատեց այն մեծագույն ճշմարտությունը, որ հայ ժողովրդի փրկության ու բարգավաճման միակ ուղին Հոկտեմբերի ուղին է, բոլոր ժողովուրդների ազատության ու երջանկության մայրուղին։

Ի. Ա. ԹԱԻՐՅԱՆ

XI ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԵՎ ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի օրերին Հայաստանի քաղաքներում ու գյուղերում տեղի էին ունենում բանվորների, գյուղացիների, զինվորների ու մտավորականության մասսայական ցույցեր ու ժողովներ։ Ամենուրեք որոշումներ էին ընդունվում, որոնցում Հայաստանի աշխատավորները ողջունում և պաշտպանում էին մեծ Հոկտեմբերի հաղթանակը։ Հետագայում երբ Անդրկովկասի ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, հանուն սովետական իշխանության մահու և կենաց պայքար էին մղում ներքին ու արտաքին թշնամիների դեմ, Հյուսիսային Կովկասում ձևավորվում և մարտերում կռիվ էր XI կարմիր բանակը, որը շուտով օգնության եկավ Անդրկովկասի ժողովուրդներին, նրանց հեղափոխական պայքարում։

Եղբայրական Վրաստանի մեծ զավակ Գ. Կ. Օրջոնիկիձեն, որը կազմակերպում ու գլխավորում էր այդ բանակը, դեռ 1918 թ. հոկտեմբերի 12-ին գրեց Վ. Ի. Լենինին. «Հայաստանի դրությունը ողբերգական է։ Երևանի նահանգի երկու գավառների ոչ մեծ հողակտորում կուտակվել են 600000 գաղթականներ, որոնք մասսայաբար կոտորվում են սովից և խոլերայից։ Թուրքերն իրենց գրաված գավառներում մորթոտել են բնակչության կեսը... Հայկական բնակչությունը Սովետական Ռուսաստանից օգնություն է սպասում»[1]։

Հայաստանի բոլշևիկները աշխատավորությանը բացատրում էին բուրժուական «անկախության» կեղծ, հակաժողովրդական բնույթը և ցույց տալիս երկիրը կործանումից դուրս բերելու ելքը։ 1920 թ. հունվարին Հայաստանի բոլշևիկների կոմիտեն (Արմենկոմը) Հայաստանի

1 *Г. К. Орджоникидзе*, Статьи и речи, т. 1, М., 1956, стр. 45.

աշխատավորությանը դիմեց հետևյալ կոչով. «Բանվորներ և գյուղական չքավորներ. դուք չունեք անկախություն, դուք չունեք ազատություն, դուք չունեք սեփական Հայաստան: Դուք կունենաք անկախություն ու ազատություն միայն այն ժամանակ, երբ Հայաստանում կհաստատվի ձեր սեփական իշխանությունը, երբ դուք երկրի տերը կդառնաք, երբ դուք կունենաք սոցիալիստական հայրենիք...»[2]:

Դա, իհարկե հնարավոր կլիներ միայն Սովետական Ռուսաստանի օգնությամբ, որի հերոսական XI կարմիր բանակը Ատրպատականից մինչև Կովկասի լեռները պայքարի ու հաղթանակների փայլուն ուղի անցնելով, 1920 թ. մարտի վերջերին ընդհուպ մոտեցավ Անդրկովկասին ու կենտրոնացավ Ադրբեջանի սահմանագլխում: Այդ օրերին այն իր կազմում ուներ 39-րդ, 40-րդ հրաձգային և 7-րդ հեծյալ դիվիզիաները և Թամանյան հեծյալ բրիգադը: Բացի այդ XI բանակին միացվեցին X բանակի 20-րդ, 28-րդ, 32-րդ լեռնա-հրաձգային և 18-րդ հեծյալ դիվիզիաները: Անդրկովկասի սահմանագլխին կարմիր բանակի զորամասերի երևալը երկրամասում հեղափոխական շարժման նոր թափ առաջացրեց:

1920 թ. մարտի 15-ին բոլշևիկների Կովկասյան երկրային կոմիտեն Անդրկովկասի ժողովուրդների և կոմունիստական կազմակերպությունների անունից դիմեց Կոմունիստական ինտերնացիոնալին, Սովետական Ռուսաստանի Կենտգործկոմին ու կարմիր բանակի հրամանատարությանը, խնդրելով ռազմական օգնություն ցույց տալ երկրամասի աշխատավորությանը՝ կապիտալի կեղեքումից ազատագրվելու համար: Ադրբեջանի աշխատավորությունը վաղուց էր սպասում կարմիր բանակի օգնությանը: 1920 թ. ապրիլի 19-ին Բաքվի հեղկոմը դիմեց XI բանակի հրամանատարությանը, խնդրելով ռազմական օգնություն: Կատարելով իրենց ինտերնացիոնալ պարտքը, XI բանակի զորամասերը օգնության հասան Ադրբեջանի աշխատավորությանը և ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվեցին սովետական կարգեր:

Քաղաքացիական կռիվներում Սովետական Ռուսաստանի զորքերի տարած փայլուն հաղթանակը, Եղբայրական Ադրբեջանում սովետական կարգերի հաստատումը և Հայաստանի սահմանագլխին կարմիր բանակի զորամասերի երևալը խոշոր դեր խաղացին երկրում հեղափոխական շարժումների նոր վերելքի գործում:

1920 թ. մայիսի 1-ին ամբողջ Հայաստանում տեղի ունեցան բոլշևիկյան լոզունգներով քաղաքական ցույցեր, միտինգներ ու խոշոր հա-

2 «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (հուշերի և փաստաթղթերի ժողովածու)», Երևան, 1936, էջ 170:

վաքներ։ Ելույթներն ավելի բազմամարդ ու կազմակերպված անցան Ալեքսանդրապոլում (Լենինական), Երևանում, Սարիղամիշում, Կաղզվանում ու Կարսում։ Ալեքսանդրապոլում մայիսմեկյան ցույցեր տեղի ունեցան դևպոյում, Երկաթուղում և այլ ձեռնարկություններում, որոնք անցան բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ։ Իրենց զորամասերով ցույցարարների կողմն անցան գեներալ մայոր Խաչատուրովը, հեծյալ գնդի հրամանատար Ա. Մելիք-Շահնազարովը, հեծելազորային էսկադրոնի հրամանատար, այժմ Սովետական Միության մարշալ Հ. Բագրամյանը և ուրիշներ։

Մայիսի 7-ին «Վարդան զորավար» զրահագնացքում տեղի ունեցավ Հայաստանի բոլշևիկների խորհրդակցություն, որտեղ քննարկվեց վինված ապստամբության նախապատրաստման հարցը։ Խորհրդակցությունում ընտրվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե։

Մայիսի 9-ի վաղ առավոտյան Կարսում ապստամբները տապալեցին դաշնակցականների տիրապետությունը, մարզում հռչակեցին սովետական կարգեր և կապ հաստատեցին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի հետ։ Նույն օրը Սարիղամիշում, որտեղ փաստորեն իշխանությունը գտնվում էր ժողովրդի ձեռքին, բանվորական ու զինվորական ժողովը ընտրեց ռազմահեղափոխական կոմիտե։ Մայիսի 10-ին Սարիղամիշում ապստամբները գրավեցին քաղաքային վարչության շենքը, ձերբակալեցին դաշնակցական կառավարության աստիճանավորներին և քաղաքում հռչակեցին սովետական իշխանություն։ Այդ օրը ռազմահեղափոխական կոմիտե ստեղծվեց նաև Քավիթաղուի (Փանիկ) շրջանում։

Նույն օրը Ալեքսանդրապոլում ապստամբները զենքի ուժով գրավեցին քաղաքը։ Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն երկրում սովետական իշխանություն հռչակեց։

Սակայն Հայաստանի մյուս գավառներում զինված ապստամբությունը ձգձգվեց, իսկ կարմիր բանակի ռազմական օգնությունն ուշացավ։ Օգտվելով դրանից, դաշնակցական կառավարությունը ուշքի եկավ և դիմեց վճռական միջոցների։

1920 թ. մայիսի 13-ի վաղ առավոտյան Անի—Աղին կայարանների միջև ընկած տարածության վրա կատաղի մարտեր սկսվեցին Ալեքսանդրապոլի ապստամբների և կառավարական կանոնավոր զորքերի միջև։ Ապստամբները կռվում էին խիզախորեն, ցուցաբերելով անսասան վճռականություն՝ արյան գնով պաշտպանելու բանվորների ու գյուղացիների իշխանությունը։ Չնայած հերոսական դիմադրությանը, ապստամբները

ստիպված էին տեղի տալ։ Մայիսի 14-ի լուսաբացին քաղաք ներխուժեցին դաշնակցական զորամասերը և դաժան հաշվեհարդար տեսան ապստամբների հետ։ Շուտով զինված ապստամբությունը ճնշվեց նաև Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում (Կամո), Բարանայում (Նոյեմբերյան) և Միխայլովկայում (Կրասնոսելսկ)։ Այսպիսով դաշնակցական կառավարությանը հաջողվեց օտարերկրյա բուրժուական պետությունների օգնությամբ ճնշել մայիսյան փառապանծ ապստամբությունը։

Ապստամբության պարտությունից հետո Հայաստանում ժողովրդական պայքարն ընդդեմ դաշնակցական տիրապետության ոչ միայն չթուլացավ, այլև ավելի լայն թափ ստացավ։ Այսպես, Ղազախ-Շամշադինի աշխատավորներն անհավասար մարտեր էին մղում դաշնակցական կառավարության կանոնավոր զորքերի և մաուզերիստական բանդաների դեմ։

Շամշադինի շրջանային հեղկոմը մայիսի 31-ին շրջանի աշխատավորությանը կոչ արեց խտացնել ապստամբների շարքերը՝ թշնամու դեմ մարտնչելու համար և գյուղերի հեղկոմներից պահանջեց մեկ օրվա ընթացքում լրիվ մարտական վիճակում իր տրամադրության տակ դնել 500 մարդ։ Հունիսի 1-ին շրջհեղկոմին ներկայացան 530 պարտիզաններ, որոնցից կազմվեց մարտական ջոկատ՝ Աղաբեկ Շահնազարյանի հրամանատարությամբ։

Հունիսի 5-ի լուսաբացին Շամշադինի ապստամբներն անցան վճռական հարձակման և փախուստի մատնեցին թվով մի քանի անգամ գերազանցող կառավարական զորքերին։ Հինգժամյա կատաղի մարտերից հետո ապստամբները կազմակերպված նահանջեցին նախկին դիրքերը, իրենց հետ տանելով 63 գերիներ։

Հունիսի 6-ից մինչև 15-ը Շամշադինի ապստամբների և դաշնակցական կառավարության կանոնավոր զորքերի միջև տեղի էին ունենում փոփոխակի հաջողություններով դիրքային կռիվներ։ Հունիսի կեսին զինված ապստամբների թիվն անցնում էր 2000-ից, սակայն դաշնակցականների ուժը երեք անգամ ավելի էր։ Չնայած դրան, Շամշադինի ապրստամբները նախապատրաստական մեծ աշխատանք կատարելուց և մարտական գործողությունները Քարվանսարայի (Իջևան) հեղափոխական ուժերի հետ համաձայնեցնելուց հետո հունիսի 16-ի լուսաբացին ամբողջ ճակատով վճռական հարձակման անցան և շուրջ հինգ թշնամուն։ Այդ օրվա 10-ժամյա հարձակողական մարտերի ընթացքում ապստամբները առաջ շարժվեցին ավելի քան 30 կմ։ Թշնա-

մին մարտի դաշտում թողեց շատ սպանվածներ և ռազմական ավար, այդ թվում՝ մեկ դաշտային հրանոթ։

Ոգևորված հաջողություններով, ապստամբների ընդհանուր հրամանատար Թարխան Հայկազյանը հունիսի 27-ին XI բանակի հրամանատար Ս. Լևանդովսկուն գրում էր՝ «Եթե ուղարկեք 1000-ի չափ մարտիկներ, անհրաժեշտ քանակությամբ փամփուշտ և մի քանի գնդացիրներ, մենք տեղի գյուղացիության օգնությամբ կմաքրենք Քարվանսարայի շրջակայքը և առաջ կշարժվենք մինչև Դիլիջան...»[3]։

Սակայն, դժբախտաբար, Անտանտայի նոր արշավանքը Սովետական Ռուսաստանին հնարավորություն չտվեց օգնության ձեռք մեկնելու դաշնակցականների արյունոտ լծի դեմ ապստամբած հայ աշխատավորներին։

1920 թ. հունիսի 30-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն քննարկեց Հայաստանում XI բանակի զորամասերի գործունեության հարցը և արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինին հանձնարարեց միջոցներ ձեռք առնել, որպեսզի դադարեցվի կարմիր բանակի զորամասերի հետապնդումը[4]։

Կենտկոմի այդ որոշման համաձայն XI բանակի 20-րդ դիվիզիայի գլխավոր ուժերը հետ քաշվեցին Սովետական Ադրբեջանի տերիտորիան, խնդիր ունենալով պաշտպանել նրա սահմանները։ Ապստամբները ևս կազմակերպված նահանջեցին ու կենտրոնացան Բաքվում։ Այստեղ գլխավորապես ապստամբներից կազմակերպվեց հայկական հատուկ դունդը։

Ազգամիջյան ընդհարումները կանխելու նպատակով XI բանակի 32-րդ դիվիզիայի զորամասերը մտել էին Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի գավառները։

Սովետական Ռուսաստանի զորամասերի ներկայության շնորհիվ Զանգեզուրի կոմունիստները դուրս եկան խորը ընդհատակից և գավառային հեղափոխական կոմիտեն ամբողջ երկրամասը սովետական հրաչակեց։ Զանգեզուրի աշխատավորները սովետական կարգերի հաստատումն ու կարմիր բանակի զորամասերին ցնծությամբ ընդունեցին։

Հուլիսի 9-ին դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստր Հ. Օհանջանյանը Վրաստանում իր կառավարության դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Բեդզադյանին գրեց. «Բոլշևիկները գրա-

---

3 ЦГАСА, ф. 195, ед. хр. 633, л. 1.

4 Նույն տեղում, թ. 8։

վել են Գորիսը։ Դրան իր զորքերով նահանջել է։ Տեղական ժողովուրդը չի պայքարում բոլշևիկների դեմ։ Հաղորդեցեք օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներին, մասնավորապես անգլիացիներին, որ մենք պայքարում ենք, բայց, հավանական է, չենք կարողանա դիմադրել, եթե չլինի արտակարգ ու իրական օգնություն»[5]։

Օգոստոսի 1-ին դաշնակցականներին հաջողվեց Զանգեզուրում խուովություն բարձրացնել։ Դաշնակցական զորքերը խմբապետ Դրոյի գլխավորությամբ հանկարծակի հարձակման անցան XI բանակի զորամասերի վրա։ 10 օր շարունակ կատաղի կռիվներ էին մղվում մի կողմից կարմիր բանակի զորամասերի և Զանգեզուրի կոմունիստական ջոկատների, մյուս կողմից՝ դաշնակցական կանոնավոր զորքերի և տեղական կուլակային բանդաների միջև։ Շուտով Զանգեզուրի աշխատավորությանը և այնտեղ գործող կարմիր բանակի զորամասերին օգնության հասավ քաղաքացիական կռիվների լեգենդար հերոս Պյոտր Կուրիշկոյի գլխավորած 18-րդ հեծյալ դիվիզիան։ Օգոստոսի 6-ի լուսաբացին կարմիր բանակի զորամասերը տեղական կոմունիստների հետ միասին Պ. Կուրիշկոյի ընդհանուր հրամանատարությամբ հարձակման անցան և համառ մարտերից հետո ջախջախեցին թշնամուն։ Զանգեզուրում, Սիսիանում և Նախիջևանի մարզում հաստատվեց սովետական իշխանություն։ Բնակչությունն անցավ խաղաղ ստեղծարար աշխատանքի։

1920 թ. օգոստոսի 10-ին հաշտության համաձայնագիր կնքվեց դաշնակցական Հայաստանի և Սովետական Ռուսաստանի կառավարությունների միջև։ Այդ համաձայնագրով սովետական կառավարությունը, ինչպես միշտ, հետապնդում էր բոլոր հարցերի խաղաղ լուծում։ Սակայն դաշնակցական պարագլուխները այդ համաձայնագիրն օգտագործեցին իրենց սեոր նպատակների համար։ Օգոստոսի վերջերին դաշնակցական կառավարությունը ուխտադրժորեն զինված ուժեր կենտրոնացրեց Զանգեզուրի հատվածում և խմբապետ Նժդեհին ցույցում ավելց խռովություն բարձրացնել կարմիր բանակի զորամասերի թիկունքում ու ակտիվ մարտական գործողությունների անցնել։ Նժդեհին հաջողվեց նորից կուլակային խռովություն բարձրացնել ու քաղաքացիական կռիվներ բորբոքել ամբողջ Զանգեզուրում։ Երբ դաշնակցական կառավարությունը Զանգեզուրում կարմիր բանակի զորքերի դեմ պատերազմ էր վարում, օգտվելով դրանից, թուրքական 30 հազարանոց բանակը սեպտեմբերի 28-ին ներխուժեց Հայաստան, գրավեց Օլթին, Սարիղամիշը, Կաղզվանը և շարժվում

5 ՄԱԻ ՀՄԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1084, թ. 1։

էր դեպի երկրի խորքը։ Թուրքական զավթիչների թիկունքում կանգնած էին Անտանտայի պետությունները։ Դրությունը տագնապալի դարձավ։ Գ. Օրջոնիկիձեն հոկտեմբերի 5-ին Վ. Ի. Լենինին և Գ. Չիչերինին հղած հեռագրում գտնում էր, որ Թուրքերի կողմից Կարսը գրավվելու դեպքում հարկավոր է դաշնակցական կառավարությանն առաջարկել, որպեսզի նա թույլ տա կարմիր բանակի զորամասեր մտցնել Հայաստան՝ զավթիչներին հակահարված տալու համար, իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմը հոկտեմբերի 8-ին դիմեց ժողովրդին, կոչ անելով պատրաստվել տապալելու դաշնակցականների ատելի իշխանությունը։

Ելնելով Հայաստանի համար ստեղծված օրհասական իրադրությունից, հոկտեմբերի 14-ին Վ. Ի. Լենինի առաջարկով ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն որոշեց զորք մտցնել Հայաստան՝ թուրքական զավթիչներին սանձելու, հայ ժողովրդին օգնելու և երկրում սովետական կարգեր հաստատելու համար։

Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի 1920 թ. նոյեմբերի 23-ի որոշմամբ կոմունիստների մի մեծ խումբ ուղարկվեց Հայաստան՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի տրամադրության տակ։ XI բանակի 20-րդ հետևակային և 18-րդ հեծյալ դիվիզիաները և հայկական հատուկ գունդը կենտրոնացվեցին Ղազախի սահմանագլխին։ Այդ նույն ժամանակ բոլշևիկները մեծ աշխատանք էին կատարում Ղազախ—Շամշադինի, Դիլիջանի, Միխայլովկայի և այլ շրջանների ագգաբնակչության ու դաշնակցական զորամասերի մեջ սկիզբ առած ապստամբական շարժումը ծավալելու ուղղությամբ։ Վ. Ի. Լենինի ցուցումների և ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի նոյեմբերի 8-ի հրամանի հիման վրա XI բանակի հրամանատարությունը նոյեմբերի 12-ից սկսեց իր ռազմական ուժերի համակենտրոնացումը Ղազախի բնագծում։ 20-րդ հետևակային, 18-րդ հեծյալ դիվիզիաներից և հայկական հատուկ գնդից մի զորախումբ կազմվեց Մ. Վելիկանովի հրամանատարությամբ։

Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի նոյեմբերի 23-ի հրամանում ասված է, որ դաշնակցականները բանվորների ու գյուղացիների ցասումից ազատվելու համար փախչում են քայքայված երկրից, հափշտակելով ժողովրդի վերջին ունեցվածքը, որ հազարավոր բանվորներ ու գյուղացիներ մոտենում են սահմանին և մեղանից օգնություն խնդրում, ուստի մենք չենք կարող չօգնել Հայաստանի ապստամբներին։

Հաշվի առնելով ստեղծված օրհասական դրությունը, 1920 թ. նոյեմբերի 29-ին XI բանակի զորամասերը օգնության եկան Հայաստանի

ապստամբ աշխատավորությանը։ Նրանց հետ էր նաև հայկական հատուկ գունդը, որը կազմված էր գլխավորապես Ղազախ—Շամշադինի ապստամբներից։ Հայկական հատուկ գունդը դրավեց Քարվանսարան, վերցրեց մեծ քանակությամբ զենքեր ու ռազմավար։ Բնակչությունը ցնծությամբ դիմավորեց կարմիր բանակի մարտիկներին։

XI բանակի հեղափոխական զինվորական խորհրդի ներկայացուցիչ Նաւրիջանյանը զեկուցում էր, որ «Քարվանսարան ազատագրվեց առանց մի գնդակ արձակելու։ Շրջանի գյուղացիները խնդությամբ ընդունեցին մեր զորամասերին։ Ամեն ինչ ասում է այն մասին, որ հետագայում ևս դիմադրություն չի լինելու»[6]։

Կարմիր բանակի զորամասերի մարտական գործողությունները հաջող էին նաև Միխայլովկայից դեպի Դիլիջան հատվածում։ Նրանք մեկ օրում թշնամուն հարկադրեցին անձնատուր լինել, գերելով 400 զինվոր, 10 սպա, գրավելով հարուստ ռազմական ավար՝ թնդանոթներ, գնդացիրներ և այլն։

Ճանապարհին կարմիր բանակի զորամասերը և ապստամբները հանդիպում էին ժողովրդի ջերմ վերաբերմունքին։ Այդ մասին հետաքրքիր և հուզիչ հուշեր են թողել քաղղեկ Խորեն Իսրայելյանը, կուսակցական գործիչներ Շավարշ Ամիրխանյանը, Տիմոֆեյ Բորոդինը, գրող Ե. Զուբարը և հայկական հատուկ գնդի առաջին դումարտակի հրամանատար Սրմենակ Բաղդասարյանը։

Խորեն Իսրայելյանը գրել է. «Հիշողությանս մեջ ընդմիշտ տպավորվել է մեր հանդիպումը Ուզունթալա գյուղի հասակավոր բնակչի հետ։ Ծերուկը մեզ հանդիպեց ուրախության արցունքներն աչքերին։ Թող Ձեր ճանապարհը վարդերով ծածկված լինի, մեր ազատարարներ ու փրկարարներ։ Ծերուկը մեզ հրավիրեց իր տուն։ Ս. Կասյանը հարցրեց նրան. գիտեք, արդյոք, հայրիկ, թե մենք ովքեր ենք։ Չգիտեմ անձամբ ձեզ, զավակներս,— պատասխանեց նա,— բայց գիտեմ, որ դուք բոլշևիկներ եք, դուք մեր ազատարարներն եք»[7]։ Ս. Ամիրխանյանը գրել է. «Հայկական հատուկ գունդը և նրա հետևից շարժվող կարմիր բանակի զորամասերը ուրախությամբ ու ցնծությամբ էին դիմավորվում Իջևանի շրջանի ազգաբնակչության կողմից։ Տղամարդիկ, կանայք, ծերունիներն

---

[6] ЦГАКА, ф. 109, оп. 1, д. 23, л. 7.

[7] *И. Таирян,* XI Красная армия в борьбе за установление и упрочение Советской власти в Армении, Ереван, 1971, стр. 148.

ու երեխաները դուրս էին վազում դաշնակցականների կողմից այրված ու ավերված տներից, բարձրանում կտուրները, բլուրները, ժայռերը, ծափահարում կարմիր մարտիկներին և ուրախությունից գրկում իրար։ Շատերը, հանդիպելով հայկական գնդում գտնվող իրենց բարեկամներին ու ընկերներին, կախվում էին նրանց վզից ու համբուրվում։ Որոշ տեղերում ծերունիները մոտենում էին կարմիրբանակայիններին, գրկում նրանց ու ձեռքները խփում նրանց ուսերին։ Հազարավոր սրտեր միանում էին մի մեծ սրտում, որը ուրախալի խփում էր հայ ժողովրդի կյանքում այդ մեծագույն պատմական օրը»[8]։ XI կարմիր բանակի օգնության գալու լուրը կայծակի արագությամբ տարածվեց Հայաստանի աշխատավորության մեջ։ Իրենց դարավոր ճնշումից ու աղքատությունից ազատագրողներին աշխատավորական լայն զանգվածները դիմավորում էին աղ ու հացով, ուրախության արցունքներով ու չտեսնված ցնծությամբ։

Կարմիր բանակի զորամասերն առաջ էին շարժվում այնպիսի արագությամբ, որը հակառակորդին լրիվ խուճապի էր մատնում և զրկում դիմադրություն կազմակերպելու հնարավորությունից։

Հայհեղկոմը նոյեմբերի 29-ին հրապարակեց իր պատմական դեկլարացիան, որտեղ ասված էր. «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ, Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունը այսօրվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։ Այսօրվանից Խորհրդային Հայաստանի կարմիր զորքը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից»[9]։

Այդ օրը, ժամը 17-ին, հայկական հատուկ գնդի 1-ին դումարտակը և 20-րդ դիվիզիայի 178-րդ հրաձգային գունդն առանց մարտի տիրեցին Թարսաչայի կամուրջին և ազատագրեցին Ջարխանչ (Կույբիշև) գյուղը։ Խմբապետ Սեպուհի կողմից կարմիր բանակի զորամասերի դեմ ուղարկված 6-րդ հրաձգային գնդի և միլիցիական ջոկատի մի մասը անցան կարմիր բանակի կողմը։ Նույն օրը 20-րդ դիվիզիայի 58-րդ հրաձգային բրիգադը և 170-րդ հրաձգային գունդը ազատագրեցին Նովո-Սարատովկա գյուղը, իսկ 179-րդ հրաձգային գունդը՝ Միխայլովկան։

Հայ ժողովրդի մեծ բարեկամ Գ. Օրջոնիկիձեն ուշի-ուշով հետևում էր Հայաստանում տեղի ունեցող ազատագրական պայքարի ընթացքին

---

8 *Ш. Амирханян*, Из истории борьбы за Советскую власть в Армении, Ереван, 1967, стр. 43.

9 «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960, էջ 403։

ու բոլոր առօրյա հարցերի վերաբերյալ ղեկավար ցուցումներ էր տալիս։ Զորախմբի հրամանատար Մ. Վելիկանովը նոյեմբերի 30-ին նրան ղեկուցեց. «29-ի օրը Հայհեղկոմը գտնվում էր Քարվանսարայում։ Այսօր ժամը 10-ին նա զորամասերի հետ միասին պետք է շարժվեր դեպի Ջարխեչ»։ Գ. Օրջոնիկիձեն Մ. Վելիկանովին հանձնարարում է «կապի մեջ լինել Հայհեղկոմի հետ, ինֆորմացիա տալ իրադրության մասին, ուշադիր հետևել, որպեսզի հեղափոխական օրինականության ոչ մի խախտում չլինի։ Նորից ու նորից եմ խնդրում ազգաբնակչության նկատմամբ լինել անսահման քաղաքավարի»[10]։

Նույն օրը Քարվանսարայից Հայհեղկոմը Հայաստանի աշխատավորության անունից հեռագրեց Վ. Ի. Լենինին. «Թող հայտնի լինի համաշխարհային հեղափոխության առաջնորդին, որ Դիլիջանի ու Քարվանսարայի շրջանների գյուղացիները զայրացած դաշնակցական կառավարության հանցավոր քաղաքականությունից և երկրում խորացող անարխիայից, բարձրացրին ապստամբության դրոշը։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը իսկույն ևեթ ստանձնեց այդ տարերային շարժման ղեկավարությունը և ստեղծեց Հայաստանի Հեղկոմ, Հայաստանը հայտարարելով Սոցիալիստական Սովետական Հանրապետություն։ Հաստըված է առաջին հարվածը՝ Դիլիջան քաղաքը մեր ձեռքումն է։ Ոգևորված ապստամբներն առաջ են նետվում ատելի թշնամուն՝ Անտանտի գործակալին վերջնականապես տապալելու համար։ Եվ կատարելով նրանց կամքը, մենք, վազմելով Հեղկոմ, առաջ ենք շարժվում այն կատարյալ հույսով, որ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատարարը՝ սոցիալիստական մեծ Ռուսաստանի հերոսական կարմիր բանակը, մեզ իրական օգնություն ցույց կտա մեր այս դժվարին պայքարում։ Հայաստանի բոլոր բանվորների ու գյուղացիների անունից մենք խնդրում ենք Մոլկոմխորհրդին՝ ցույց տալ այդ օգնությունը»[11]։

Նոյեմբերի 30-ին ազատագրված Դիլիջանում զինաթափվեցին դաշնակցական 6-րդ և 7-րդ հրաձգային գնդերի մնացորդները, կալանավորվեցին տեղի դաշնակցական գործիչները, բանտից ազատ արձակվեցին քաղաքական բանտարկյալները, քաղաք ժամանեցին ՀԿ(բ)Կ կենտկոմի և Հայհեղկոմի անդամները։ Կազմակերպվեց գավառային հեղկոմ։ 18-րդ հեծյալ դիվիզիայի հրամանատար Պ. Կուրիշկոյի ղեկավարությամբ 1-ին

---

10 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 85, оп. 14, ед. хр. 35, л. 2.

11 «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 406։

հեծյալ բրիգադն արագությամբ հասավ Ղարաքիլիսա (Կիրովական), որի երկաթուղային կայարանը գրավված էր թուրքական զորքերի կողմից։

Դեկտեմբերի 2-ին ՌՍՖՍՀ կառավարությունը Սովետական Հայաստանի հետ պայմանագիր կնքեց նրան ռազմաքաղաքական ու տնտեսական օգնություն ցույց տալու մասին։

Դեկտեմբերի 3-ին XI բանակի զորախմբի գլխավոր ուժերը Դիլիջանից առաջ շարժվեցին Ելենովկա (Սևան)—Երևան գծով։ Նրանց առաջապահ ջոկատները ազատագրեցին Սեմյոնովկա և Ջիբուխլու (Մովագյուղ) գյուղերը։ Զորախմբի մյուս զորամասերն ազատագրեցին Յամաքարերդն ու Ելենովկան, վինաթափեցին տեղական կայազորը, ազատ արձակեցին Ելենովկայի բանտում արգելափակված քաղաքական բանտարկյալներին։ Այդ բոլորի մասին զորախմբի հրամանատար Մ. Վելիկանովը զեկուցեց Գ. Օրջոնիկիձեին և նրանից հրահանգ ստացավ «բոլոր դեպքերում գործել Հայհեղկոմի ցուցումներով, զորամասերում պահպանել առավելագույն օրինակելիություն ու կարգապահություն, մատակարարումը կատարել միայն սեփական ուժերով...»[12]։

Դեկտեմբերի 4-ի առավոտյան 20-րդ դիվիզիայի 2-րդ հեծյալ բրիգադը և 3-րդ լեռնային ձիաքարշ մարտկոցը հասան Ելենովկա։ Զորախմբի առաջապահ ջոկատները հայկական հատուկ, 105-րդ, 106-րդ հեծյալ գնդերի և 3-րդ մարտկոցի կազմով Նոր Բայազետի (Կամո) ուղղությամբ թողնելով մի ուժեղացված ջոկատ, ժամը 18-ին հասան Ն. Ախտա (Հրազդան)։ Նույն օրը երեկոյան Հայհեղկոմը լրիվ կազմով Գևորգ Հովսեփյանի հատուկ հեծյալ ջոկատի ուղեկցությամբ հասավ Երևան և անցավ իր անմիջական պարտականությունների կատարմանը։ Մեկ օր հետո Երևան մտան նաև կարմիր բանակի հիմնական ուժերը։ Այդ կապակցությամբ 1920 թ. դեկտեմբերի 6-ին Երևանում տեղի ունեցավ մեծ միտինգ։ Նրա մասնակիցները ողջույնի հեռագիր հղեցին Վ. Ի. Լենինին, ուր ասված է. «Խիտ ու կուռ շարքերով համախմբվելով կոմունիստական կարմիր դրոշների շուրջը, աշխատավորությունը հանձին Ձեզ՝ ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդին՝ հեղափոխություն, որի ալիքները խորտակելով ու ոչնչացնելով բոլոր արգելքները, հասան հեռավոր Հայաստան ...Մտնելով խորհրդային հանրապետությունների պրոլետարական ընտանիքի մեջ, մենք հետևում ենք Հոկտեմբերյան հեղափոխության հերոսական օրինակին։

---

12 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 85, оп. 1, ед. хр. 35, л. 21.

Ունենալով ռուս բանվորների անցյալի փորձը և ստանալով աշխատավորական Ադրբեջանի ու Ռուսաստանի օգնությունը, Խորհրդային Հայաստանի երիտասարդ հանրապետությունը համարձակ ու անվախ դիմում է դեպի ապագան և բնավ չի կասկածում, որ աշխատանքը վերջնականապես հաղթանակելու է կապիտալին»[13]։

Այսպիսով, XI կարմիր բանակի զորամասերը Հայաստանի ապրատամբ աշխատավորությանն օգնեցին ազատագրվելու դաշնակցականներն և նրանց օտարերկրյա տերերի արյունոտ լծից։ Ապստամբ աշխատավորության և պանծալի կարմիր բանակի մարտիկների միացյալ ջանքերով Հայաստանը դարձավ սովետական։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման հենց առաջին օրերից ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Հայհեղկոմի առջև ծառացավ զինված ուժեր ստեղծելու հարցը։ Դեկտեմբերի 6-ին Սովետական Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց հայկական հատուկ գնդի բազայի վրա ստեղծել հայկական կարմիր բանակ։ Դեկտեմբերի 12-ին հիմնվեց բանակի բաղվարչություն և զինվորական կոմիսարիատ։ Բանակը զտվեց անվստահելի սպաներից, զորացրվեցին մեծահասակները, անցկացվեց զորահավաք, հարյուրավոր կոմունիստներ զորակոչվեցին բանակ։ Կարճ ժամանակամիջոցում ստեղծվեցին երեք հրաձգային, մեկ հեծյալ բրիգադներ, չորս առանձին ջոկատներ, երկու առանձին գումարտակներ, չորս թնդանոթային մարտկոց և այլ տեխնիկական զորամասեր։ Բանակի սրամադրության տակ կար երկու զրահագնացք։

Երբ Հայաստանի կառավարությունը, ՀԿ(բ)Կ Կենտկոմը և տեղական կոմունիստական կազմակերպությունները զբաղված էին երկրի քայքայված տնտեսության վերականգնման գործով, XI և հայկական նշանակյալ բանակների գլխավոր ուժերը օգնության էին հասել հեղափոխական ապստամբներին Լոռում և Վրաստանում, ահա հենց այդ ժամանակ դաշնակցականները խռովություն բարձրացրին։

1921 թ. փետրվարի 13-ին խմբապետներ Յապոնի և Մեսրոպի 1500 հոգուց բաղկացած բանդան հանկարծակի ներխուժեց Քիշիշքենդ (Եղեգնաձոր), ոչնչացրեց տեղի սովետական հիմնարկությունները, սրի քաշեց 180-րդ գնդի 1-ին գումարտակի մարտիկներին, կոմունիստներին և կողոպտեց խաղաղ բնակչության։ Միայն հատուկենտ մարդկանց հա-

---

13 «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 416։

ջողվեց դուրս պրծնել մարդասպանների ճիրաններից և միանալ Աբասկուլի Շաղլինսկու գլխավորած կարմիր ջոկատին։ Փետրվարի 16-ի լուսաբացին դաշնակցական խոռվարարները մարտական գործողություններ սկսեցին Երևանի շրջակայքում։

Փետրվարի 16-ին Հայհեղկոմի նախագահի տեղակալ Իսայ Դովլաթյանը, գինժողկոմ Ավիս Նուրիջանյանը և արտակարգ հանձնաժողովի նախագահ Շավարշ Ամիրխանյանը հեռագրեցին Գ. Օրջոնիկիձեին, որ «Հայաստանում լարված վիճակ է...»[14]։

Երևանում գինք վերցրին բոլոր կոմունիստներն ու կոմերիտականները։ Նրանցից կազմվեց կոմունիստական ջոկատ։ Ն. Երմոլենկոյի հրամանատարությամբ ռազմաքաղաքական դպրոցի սաներից և անկուսակցական կարմիրբանակայինների կոնֆերանսի պատգամավորներից ձևավորվեց մարտական ջոկատ։ Ջինաթափվեց անվստահելի ինժեներական զորամասը։ Նախիջևանից Երևան կանչվեց 20-րդ լեռնահրաձգային դիվիզիայի 178-րդ հրաձգային գունդը, իսկ հայկական կարմիր բանակի 1-ին հրաձգային գունդը շարժվեց դեպի Քանաքեռ՝ խնդիր ունենալով Էլարի (Աբովյան) տեղամասում հարվածել Թշնամու աջ թևին և այդ շրջանը մաքրել խռովարարներից։ Բացի այդ, Հայհեղկոմը դիմեց աշխատավորությանը՝ կոչ անելով օգնել կարմիր բանակին՝ ճնշելու դաշնակցականների խռովությունը։ ՀԿ(բ)Կ Դիլիջանի գավկոմն իր հերթին բնակչությանը կոչ արեց մահու և կենաց մարտի ելնել Թշնամու դեմ։ Արձագանքելով կոչին, Ղազախ-Շամշադինի և Լոռի-Փամբակի աշխատավորների գինված ջոկատները փակեցին Թշնամու ճանապարհը դեպի այդ շրջանները։

Փետրվարի 17-ին շարունակվում էին կատաղի մարտերը Երևանի համար։

Փետրվարի 18-ի առավոտյան խռովարարները բոլոր կողմերից գրոհեցին Երևանի վրա և Թեժ կռիվ բորբոքվեց։ Կարմիր բանակի Երևանյան ջոկատը շրջապատումից խուսափելով նահանջեց դեպի Կայարան։ Հայկական կարմիր բանակի 5-րդ հրաձգային գունդը, չկարողանալով պաշտպանել Կոնդից մինչև Հրազդանի կամուրջն ընկած տարածությունը, նահանջեց դեպի քաղաքի կենտրոն, իր տեղը զիջելով Երևանյան գումարտակին։ Տագնապալի դրություն ստեղծվեց։

Ղամարլուից (Արտաշատ) դեպի Երևան շարժվող 178-րդ գունդը

---

[14] ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 785, оп. 14, ед. хр. 60, л. 1.

նույն օրը հասավ Երևան և դիրքեր գրավեց Նորքի բարձրունքներում։ Ամենուրեք շարունակվում էին կատաղի կռիվները։

Փետրվարի 18-ի դիշերը Սովետական Հայաստանի կառավարությունը զինված ուժերով, ժամանակավորապես հողնելով Երևանը, անցավ Դամարլուի, ապա Վեդիի (Արարատ) տեղամասը։

Ինչպես նշվեց, XI բանակի և հայկական կարմիր բանակի գլխավոր ուժերն այդ ժամանակ զբաղված էին եղբայրական Վրաստանի ապըստամբ աշխատավորներին օգնելու գործով։ Հայաստանում մնացած նրանց փոքրաթիվ զորամասերը կոմունիստական և պարտիզանական ջոկատների հետ միասին հերոսաբար մարտնչում էին խռովարարների դեմ՝ Ելենովկայի և Դամարլուի ռազմաճակատներում։

Մարտի 27-ին Ախտայի և Համամլուի (Սպիտակ) ռազմաճակատներում արդեն կենտրոնացված էին 18-րդ և 20-րդ հրաձգային, 18-րդ հեծյալ դիվիզիաները, Ղազախ-Շամշադինի, Լոռու, Բայազետի կոմունիստական և պարտիզանական ջոկատները։ Այս բոլոր ուժերից կազմվեց XI բանակի Երևանյան ռազմական խմբավորում՝ 20-րդ դիվիզիայի հրամանատար Մ. Վասիլիանովի հրամանատարությամբ։

Նույն օրը այդ խմբավորումն անցավ վճռական հարձակման երկու ուղղությամբ՝ Ախտա—Քանաքեռ—Երևան և Համամլու (Սպիտակ)—Ապարան—Աշտարակ—Երևան։

Ճնշելով թշնամու համառ դիմադրությունը, երևանյան ռազմական խմբավորումը մեծ արագությամբ շարժվում էր դեպի Երևան։

Ապրիլի 2-ին կարմիր բանակի զորամասերի և տեղական կոմունիստների ջանքերով Երևանը ազատագրվեց։ Խռովարարները Դարալագյազի վրայով խուճապահար փախան Ջանգեզուր։ Սովետական Հայաստանի կառավարությունը ապրիլի 4-ին վերադարձավ Երևան։

Խռովարարների Երևանյան խմբավորման ջախջախման օրերին, կարմիր բանակի հյուսիսում գործող խմբավորման հետ կապի բացակայության հետևանքով Դամարլուի ճակատի սովետական զորքերը չկարողացան կտրել խռովարարների ճանապարհը դեպի Ջանգեզուր։ Այդ էր պատճառը, որ խռովարարների մնացորդներին հաջողվեց դուրս գալ շրջապատումից և կենտրոնանալ Դարալագյազի ու Ջանգեզուրի գավառներում։

Դաշնակցական բանդաների այդ գավառներից դուրս շպրտելու համար արագորեն կազմակերպվեց հայկական հատուկ բրիգադ՝ Միրիմանովի հրամանատարությամբ։ Բրիգադն ապրիլի 10-ին հասավ Նորաշեն՝ պատրաստվելով մարտական գործողություններին։ Այն ուժեղացված էր

20-րդ դիվիզիայի 180 հրաձգային գնդով, հայկական հեծյալ գնդի առաջին էսկադրոնով և Աբաս-Կուլի Շադլինսկու կարմիր ջոկատով։

Հայկական հատուկ բրիգադի հարձակումն սկսվեց ապրիլի 14-ի լուսաբացին Շարուրից (Նորաշեն) դեպի Քիշիշքենդ (Եղեգնաձոր)։

Հույս ունենալով, որ հնարավոր կլինի Զանգեզուրի հարցը խաղաղ ճանապարհով լուծել, կարմիր բանակի հրամանատարությունը դադրեցրեց հարձակողական մարտերը։

Վրաստանում սովետական կարգեր հաստատվելուց և դաշնակցականների ավանտյուրան ճնշելուց հետո կոմունիստական կուսակցությունն ու սովետական իշխանությունը վճռական միջոցների դիմեցին Ալեքսանդրապոլի (Լենինական) գավառը թուրքական զավթիչներից և Զանգեզուրը դաշնակցական ավանտյուրիստներից ազատագրելու համար։

1921 թ. ապրիլի 20-ին XI բանակի հրամանատարությունը թուրքական բանակի հրամանատարությունից պահանջից 24 ժամվա ընթացքում իրենց զորքերը հանել Ալեքսանդրապոլից։ Թուրքերը ստիպված տեղի տվեցին, և կարմիր բանակի զորամասերը 1921 թ. ապրիլի 22-ին մտան Ալեքսանդրապոլ։ Մնում էր ազատագրել Զանգեզուրն ու Մեղրին։

Դաշնակցությունը Զանգեզուրը իր հենարանն էր դարձրել։ Բոլոր կողմերից այստեղ էին հավաքվում հակահեղափոխական ուժերը։ Պարսկական կառավարության օգնությամբ Զանգեզուրի «կառավարությունը» կապ էր հաստատել Անտանտայի պետությունների հետ և սրանց օգնությամբ նոր ավանտյուրա էր նախապատրաստում Սովետական Հայաստանի դեմ։

ՀՍՍՀ կառավարությունն ամեն ինչ անում էր, որպեսզի Զանգեզուրը խաղաղ ճանապարհով միացվի Սովետական Հայաստանին։ Սակայն Զանգեզուրի դաշնակցական ավանտյուրիստները հակառակ դրան էին գործում։ Նրանց զինված ուժերը հունիսի 15-ին հանկարծակի հարձակման անցան հայկական կարմիր բանակի հատուկ բրիգադի դիրքերի վրա և գրավեցին Դարալագյազը, սպառնալով Երևանին։

Սովետական կառավարության կոչով ամբողջ ժողովուրդը ոտքի ելավ չափը կորցրած թշնամու դեմ։ XI կարմիր բանակի՝ Մ. Վելիկանովի գլխավորած ռազմախումբը Երևանից, Մ. Տոդորսկու կորպուսը՝ Ղարաբաղից աջ ու ձախ առան թշնամուն։ Հունիսի 22-ից մինչև հուլիսի 13-ը կատաղի մարտեր տեղի ունեցան, որոնց ընթացքում կարմիր բանակի զորամասերի և տեղի կոմունիստների միացյալ ուժերով ազատա-

պրվեց Զանգեզուրը։ Հուլիսի 13-ին կարմիր բանակի զորամասերը մտան Մեղրի։

Դրանով վերջ տրվեց դաշնակցականների հրահրած քաղաքացիական պատերազմին Հայաստանում։

Այսպիսով, Սովետական Ռուսաստանի XI կարմիր բանակի օգնությամբ հայ ժողովուրդը փրկվեց կործանումից և եղբայրական սովետական ժողովուրդների հետ միասին ձեռնամուխ եղավ սոցիալիստական շինարարությանը։

Հ. Ռ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ (1917—1920)

Հայ ժողովուրդը դարեր շարունակ անհավասար և հերոսական պայքար է մղել օտարերկրյա և սեփական կեղեքիչների դեմ, անցել դաժան փորձություններն ու մաքառումների երկարատև ուղի։ Սակայն անցյալի ոչ մի արհավիրք չկարողացավ կոտրել հայ ժողովրդի ազատաբաղձ ոգին, առաջադիմելու նրա կամքը։

Առաջին համաշխարհային պատերազմը անհաշիվ աղետներ բերեց բազմաթիվ ժողովուրդների։ Իր բազմադարյա պատմության ամենաողբերգական ժամանակաշրջանն ապրեց նաև հայ ժողովուրդը։ Թուրքիայի տիրապետության տակ դտնվող Արևմտյան Հայաստանը դարձավ ռազմական թատերաբեմ։ Օգտագործելով պատերազմական իրադրությունը, երիտթուրքական կառավարությունը, գերմանական իմպերիալիստների հովանավորությամբ, իրականացրեց թուրքական հետադեմ վերնախավերի վաղեմի մտադրությունը։ 1915—1916 թթ. թուրքական ջարդարարները սրի քաշեցին շուրջ մեկուկես միլիոն անզեն ու անպաշտպան հայերի։ Ավերակ դարձավ և արյամբ ողողվեց հայ ժողովրդի հինավուրց օրրանը։ Հայ ժողովրդի արևմտյան հատվածի ֆիզիկական բնաջնջումը կատարվեց հետևողական սադիզմով ու սառնասրտությամբ, այնպիսի ծավալով ու դաժանությամբ, որ անօրինակ էր նույնիսկ թուրքական բռնակալության ամբողջ պատմության մեջ։

Թուրքական յաթաղանից հրաշքով փրկված կամ իրենց հայրենիքից բռնի արտաքսված հարյուր հազարավոր արևմտահայ գաղթականներ ապաստան գտան Ռուսաստանում և արտասահմանյան մի շարք երկրներում։

Ցրվելով արտասահմանյան տարբեր երկրներում, արևմտահայության բեկորները սովարացրին Իրանի, Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Կիպ-

յոսի, Հունաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի և ԱՄՆ-ի մինչ այդ գոյություն ունեցող հայ գաղութները։ Մի շարք երկրներում (Անգլիա, Բրազիլիա, Արգենտինա, Ուրուգվայ և այլն) ստեղծվեցին հայկական նոր գաղթօջախներ։

Ջարդերին հաջորդող առաջին տարիներին հայ գաղթօջախները մատնված էին իսկական շվարումի։ Տեղահան եղած ու փախստական դարձած հայ բազմությունները ևնթարկված էին բախտի քմահաճույքին։ Ազգային օրգանիզմին հասցրած հարվածն այնքան ուժգին էր, որ արևմտահայության բեկորները չէին կարողանում ուշքի գալ և սթափ գնահատել կատարված իրողության ահավորությունը։ Ազգային-քաղաքական հարցերի շուրջը խորհրդածելու ո՛չ ժամանակ կար, ո՛չ էլ սիրտ։ Անհատակ վշտի ծանրության տակ կքված հայրենազուրկ հայ բազմությունների համար օրվա հրատապ խնդիրը մի կտոր հաց վաստակելը և ֆիզիկական գոյությունը պահպանելն էր։

Այդ է պատճառը, որ 1915—1918 թթ. սփյուռքում լույս տեսած մամուլի օրգաններում, գրքերում և տարեգրքերում տեղ չեն գտել նյութեր, որոնք գրված լինեին ազգային մեծ ողբերգության ծավալները, նրա սարսափելի հետևանքները քիչ թե շատ ամբողջական ձևով ըմբռնած մարդու գրչով։

Նկավ համաշխարհային պատմության շրջադարձային պահը՝ 1917 թ. Հոկտեմբերը։ Ռուսաստանի պրոլետարիատը Վ. Ի. Լենինի, նրա ստեղծած բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ տապալեց ժամանակավոր կառավարությունը և հաստատեց աշխարհում առաջին բանվորա-գյուղացիական իշխանությունը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը նշանավորեց մարդկության պատմության նոր դարաշրջանի սկիզբը։ «Կապիտալիզմի և նրա հետքերի ոչնչացումը, կոմունիստական հասարակարգի հիմքերի հաստատումը,— ասում էր Վ. Ի. Լենինը,—կազմում է համաշխարհային պատմության այժմ սկսված նոր դարաշրջանի բովանդակությունը»[1]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, սովետական իշխանության առաջին դեկրետների ու միջոցառումների մասին լուրերը սփյուռքահայ գաղթօջախներում արձագանք գտան արդեն հեղափոխությանը հաջորդած առաջին շաբաթներում։

Նոր կազմավորվող գաղութներում հայ քաղաքական կուսակցությունները դեռևս չունեին իրենց կազմակերպությունները։ Բայց նրանք

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 491։

ունեին մամուլի օրգաններ, որոնցում արտացոլվում էին սփյուռքի հասարակական շերտերի ու խավերի տրամադրությունները։

Ժամանակի մամուլի և արխիվային նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հոկտեմբերյան հեղափոխության բնույթի և նպատակների մասին միանգամայն հակասական լուրերը սկզբնական շրջանում դաղութահայությանը հնարավորություն չէին տալիս ճիշտ կողմնորոշվել և ըստ ամենայնի դնահատել Ռուսաստանում ծավալվող պատմական իրադարձությունները։

Դա վերաբերվում է հնչակյան ս. դ. և ռամկավար կուսակցություններին, նրանց թերթերին, անկուսակցական գործիչներին և մամուլի անկախ օրգաններին։

Այլ էր դաշնակցության կուսակցության վերաբերմունքը։ Եթե հնչակյանները, ռամկավարները և անկախները սկզբնական շրջանում չէին կարողանում կողմնորոշվել Ռուսաստանում տեղի ունեցած դեպքերի դնահատման մեջ, ապա դաշնակցությունը հենց սկզբից իր պարզ ու որոշակի կարծիքը և վերաբերմունքը դրսևորից Հոկտեմբերյան հեղափոխության և սովետական իշխանության նկատմամբ։ Հենց սկզբից նա ինչնամական դիրք բռնեց հեղափոխության հանդեպ։ Արտասահմանյան մի շարք երկրներում (ԱՄՆ, Շվեյցարիա, Ֆրանսիա) լույս տեսնող նրա թերթերի («Հայրենիք» և այլն) էջերում Հոկտեմբերյան հեղափոխությունը ներկայացվում ու դնահատվում էր սոցիալիստական հեղափոխության բացահայտ ու ամենամոլի ինչնամիների դիրքերից։

Հետագա շրջանում (1918—1920 թթ.) սփյուռքի ինչպես առաջադիմական, այնպես էլ հետադիմական թերթերը ավելի հաճախ են անդրադառնում Հոկտեմբերյան հեղափոխությանը, սովետական իշխանության գործունեությանը, քաղաքացիական կռիվների նկարագրությանը։ Դրանցում լույս տեսած հոդվածների ու նյութերի, ինչպես նաև այդ տարիներին հրատարակված գրքերի, տարեգրքերի և գրքույկների հեղինակները Հոկտեմբերյան հեղափոխությանը անդրադառնալիս ցույց են տալիս նաև նրա խաղացած դերը Անդրկովկասի ժողովուրդների ճակատագրում, խորհրդածում հեղափոխության հեռանկարների հարցի շուրջը, յուրովի մեկնաբանելով դրանք։

Հոկտեմբերյան հեղափոխության շուրջը սփյուռքահայ դաղթօջախներում ծավալված արձագանքը արտացոլվում էր ոչ միայն մամուլի էջերում և գրքերում։ Սովետական Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքը մի ջրբաժան էր, որը զատում էր դաղութների հետադիմական և առաջադիմական ուժերին։ Այդ վերաբերմունքը երբեմն դրսևորվում էր

չափազանց բուռն ձևերով, որի հետևանքներն էին լինում ոչ միայն քաղաքական վիճաբանությունները, այլև բացահայտ բռնի ակտերը։

Դաշնակցության գործիչները և նրանց մամուլը ինչպես Անդրկովկասում, այնպես էլ արտասահմանում, հենց սկզբից փորձեցին ցույց տալ, թե Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունը «պատահական» է, «պատմական օրինաչափության խախտում»։

Այսպես, 1920 թ. Իզմիրում լույս է տեսնում դաշնակցության պարագլուխներից Ռ. Դարբինյանի «Բոլշևիզմը և Հայաստանը» գրքույկը։ Արևմուտքի բուրժուական գործիչների և լրագրողների նման Ռ. Դարբինյանը գիտակցաբար խեղաթյուրում է Ռուսաստանի տնտեսական և սոցիալական զարգացման պատմությունը։ Սոցիալիստական հեղափոխությունը պատմականորեն արդարացված չէ, այն «սոցիալ-տնտեսական խելահեղ էքսպերիմենտ է»[2], որը «սկզբից իսկ դատապարտված է վիժեցման»[3],— գրում էր նա։— Ինչո՞ւ։ Որովհետև հեղափոխությունը, նրա կարծիքով, անհրաժեշտ նախադրյալներ չուներ Ռուսաստանի տնտեսական և սոցիալական զարգացման մեջ, այն միայն պատերազմի հետևանք էր, ռազմական ճգնաժամի և պատահական այլ խաղերի արդյունք։

Հանդես գալով սոցիալիստական հեղափոխության բոլշևիկյան տեսության դեմ, Ռ. Դարբինյանը գրում էր, թե «այնտեղ, ուր կապիտալիզմի աճումը չի հասել իր գագաթնակետին, չկան ու չեն կարող լինել նաև այն նախապայմանները, որոնք բացարձակապես անհրաժեշտ են սոցիալիզմի իրականացման համար, հետևաբար այնտեղ չի կարող որևէ լուրջ խոսք լինել սոցիալիստական կարգերի անմիջական ստեղծման մասին»[4]։ Մարդկության ապագան ոչ թե սոցիալիզմի, այլ կապիտալիզմի մեջ է, պնդում էր Ռ. Դարբինյանը։

Ընդունելով բուրժուական պրոպագանդայի լույս աշխարհ բերած վարկածը, դաշնակցականները գրում էին, թե սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում հաղթանակել է միայն նրա հակառակորդների թույլ տված կոպիտ, աննկարելի սխալների և ժամանակավոր կառավարության անվճռական գործողությունների հետևանքով։ Դաշնակցական գործիչները և նրանց մամուլը հատկապես շեշտը դնում էին Հոկտեմբերյան հեղափոխության ընթացքի խեղաթյուրման վրա, կեղծում էին հեղափոխության նախօրյակին Ռուսաստանում ստեղծված իրադրու-

---

2 Ռ. Դարբինյան, Բոլշևիզմը և Հայաստանը։ Երկրորդ տպագրություն, Իզմիր, 1920, էջ 20։

3 Նույն տեղում, էջ 9։

4 Նույն տեղում, էջ 10։

բյունը, բոլշևիկյան կուսակցության դերը, նրա ազդեցության աճը ժողովրդական զանգվածների վրա։ Միաժամանակ նրանք լուսաբանում էին մատենում այն վճռական փաստը, որ 1917 թ. վերջերին Ռուսաստանի այն ժամանակվա տիրապետող դասակարգերի քաղաքականությունը վերջնականապես մտել էր փակուղի, որից կարելի էր դուրս գալ միայն հաղթական սոցիալիստական հեղափոխության միջոցով։

Ի տարբերություն սփյուռքահայ գաղթօջախներում գործող դաշնակցական գործիչների ու մտավորականների, արտասահմանի հայ առաջադեմ գործիչները և մամուլը արդեն 1918 թ. կեսերից հանդես էին գալիս Հոկտեմբերյան հեղափոխության և սովետական իշխանության պաշտպանությամբ, ցույց էին տալիս նրա պատմական նշանակությունը մարդկության բախտի համար։

Հնչակյան, ռամկավար և անկախ թերթերում լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ ու նյութեր, որոնց հեղինակները բավարար կամ պակաս լավատեղյակությամբ սփյուռքահայությանը պատմում են սովետական իշխանության առաջին ձեռնարկումների և հեղափոխական միջոցառումների մասին։ Այդ հոդվածների ու նյութերի հեղինակները թույլ փորձեր էին անում ցույց տալու, որ որոշակի կապ կա Հոկտեմբերյան հեղափոխության և միջազգային իրադարձությունների միջև։ Միաժամանակ այդ հոդվածներում հանդիպում ենք նկարագրությունների, որոնք ցույց են տալիս այն ընդհարումները, որ սփյուռքի այս կամ այն գաղութում տեղի էին ունենում ազգայնական և ինտերնացիոնալիստական ուժերի միջև՝ Սովետական Ռուսաստանի նկատմամբ դրսևորած վերաբերմունքի հողի վրա։ Դրանցում նաև ղգալի ուշադրություն է նվիրված սոցիալական տարբեր շերտերի ու դասակարգերի, սոցիալ-դեմոկրատական շարժման տարբեր հոսանքների գործողություններին վերլուծությանը։

Գաղութահայ մամուլի օրգանները լուսաբանում էին Հոկտեմբերյան հեղափոխության ընթացքը, Բրեստ-Լիտովսկի բանակցությունները, Սահմանադիր ժողովի վախճանը, բանվորական, գյուղացիական և զինվորական դեպուտատների սովետների գործունեությունը։

Հատկանշական է, որ սփյուռքի թերթերում հատկապես ցայտուն է արտահայտվել Հոկտեմբերյան հեղափոխությանը գաղութահայ քաղաքական ուժերի տված բաղադրական գնահատականը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը հնչակյան կուսակցության օրգան «Երիտասարդ Հայաստան» թերթը որակեց որպես համաշխարհային նշա-

նակություն ունեցող իրադարձություն, որը բաց արեց «մեծ և անակնկալ դեպքերի ժամանակաշրջանը», «կուրքերի հեղինակությունների կործանման դարագլուխը»[5]: Թերթը նշում է, որ «դարերով հարստահարված դասակարգերը՝ պրոլետարիատը և աղքատ գյուղացիությունը քաղաքական նախաձեռնությունը միանգամից առան իրենց հզոր բազուկների մեջ և բոլորովին հեղաշրջեցին քաղաքական-հասարակական և դիվանագիտական դոգմանները...»[6]:

Նույն կուսակցության՝ Բոստոնում հրատարակվող «Վերածնություն» պարբերականը «Անպարտելի հեղափոխությունը» խորագիրը կրող խմբագրականում, բարձր գնահատելով մարդկության պատմության մեջ Հոկտեմբերյան հեղափոխության դերը, գրում էր, որ այն «բռնատիրության վրա ժողովրդային միահեծանության այն փայլուն հաղթանակներեն մեկն է, որ թերևս մարդկային քաղաքակրթությունը տակավին տարած չէ իր պատմության ընթացքի մեջ»[7]: «Պատիվ այդ հեղափոխության աննկուն և անբասիր գործավորներուն»[8]:

«Երիտասարդ Հայաստան» թերթը խմբագրական հոդվածներից մեկում նշում է, որ հին Եվրոպայի չարիքներից մեկը գաղտնի պայմանագրերն էին, «որոնց դեմ բողոքել են դեմոկրատիայի ամենալավ ներկայացուցիչները իրենց հարյուր տարուց ի վեր»[9]: Երկրի կառավարությունը իրենց ձեռքը առնելով, բոլշևիկները քաջություն ունեցան հրապարակելու գաղտնի պայմանագրեր, աշխարհի առաջ պատռելով բուրժուական կառավարությունների դիմակը: «Դրանով բոլշևիկները մեծ ծառայություն մատուցեցին ժամանակակից մարդկության..., ամբողջ աշխարհին, ընդհանուր դեմոկրատիային: Նրանք բոլոր ժողովուրդների աչքերը բացին այն ներքին դավերի դեմ, որ կապիտալիստական պետությունների ներկայացուցիչները կատարում էին միայն ու միայն իրենց նեղ դասակարգային շահերից մղված»: Թերթը այնուհետև շարունակում է, որ եթե այդ գաղտնի պայմանագրերը հրապարակ չհանվեին, ապա «ժամանակակից պետությունների ղեկավարները պիտի հաջողեին ամեն տեսակ խաղեր խաղալ ժողովուրդների և մանավորապես գործավոր դասակարգի գլխին»[10]: Նույն ոգով է արտահայտվել հնչակյան դոր-

---

5 «Երիտասարդ Հայաստան», 10 սեպտեմբերի 1919 թ.:

6 Նույն տեղում:

7 «Վերածնություն», 1920, 9 տարի, թիվ 7, հուլիս, էջ 225:

8 Նույն տեղում, էջ 228:

9 «Երիտասարդ Հայաստան», 26 մարտի 1919 թ.:

10 Նույն տեղում,

ծիլ Գ. Թահմազյանը «Վերածնություն» թերթում տպագրված հոդվածում[11]։

«Երիտասարդ Հայաստան» թերթը նշում էր, որ հռչակելով ազգերի ինքնորոշման իրավունքը, ռուս բոլշևիկները մեծ ծառայություն մատուցեցին «Սոցիալիստական միջազգայնության և նրա միջոցով ամբողջ մարդկության»։ Հեղինակը այն կարծիքն էր հայտնում, որ «լինել սոցիալիստ և ազգերի ինքնորոշման բացարձակ իրավունքը չընդունել՝ չի կարելի։ Նա որ սոցիալիստ է, նա որ մարքսիստ է՝ ազգերի ինքնորոշման սկզբունքը նրա համար էական նշանակություն ունի»[12]։ Ազգերը լիակատար իրավունք պիտի ունենան ինքնորոշվելու, տնօրինելու իրենց սեփական բախտը։ Չպետք է լինի տիրող և տիրվող ազգ, բոլոր ազգերն էլ, որպես պատմական անհատականություններ, անկախ նրանց թվաքանակից, պետք է լինեն ընդհանուր մարդկության համազոր և համահավասար անդամները։ Հոդվածագիրը նշում է, որ «բոլշևիկները զովելի հանդգնություն ունեցան, առաջին օրից իսկ, երբ ռուսական կառավարության ղեկն իրենց ձեռքն առան, բարձր ի գլուխ հայտարարեցին ռուս պետական շրջանակին մեջ պարփակված ազգերի ինքնորոշման իրավունքը։

...Ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը, սակայն, միայն հարցի մեկ կողմն է, նրա իրավաբանական կողմը։ Բայց սոցիալիստական հեղափոխության տվածը շատ ավելին էր նշանակում։ Ու նրանք՝ մեծամասնականները ոչ միայն այդ իրավունքը ճանաչեցին խոսքով, Բղշի լոկ հայտարարություններով, այլ իրենք աջակցեցին անդամ այդ իրավունքի և սկզբունքի իրականացմանը՝ իրենց կարողության սահմաններում»[13]։

Հակահարված տալով բոլշևիկների հասցեին բուրժուազիայի և նրա լակեյների զրպարտություններին, «Երիտասարդ Հայաստան»-ը ցույց էր տալիս, որ բոլշևիկները Ռուսաստանի հեղափոխական շարժման ոգին են, բանվոր դասակարգի հարազատ զավակները, որոնք այլ շահ չունեն, քան աշխատավոր դասակարգերին անձնվիրաբար ծառայելը։ «Կոմունիստները ներկա հեղափոխական պրոլետարիատի հարազատ և իսկական ներկայացուցիչներն են»[14],— գրում էր թերթը։ Նա նշում էր, որ ժամանակակից աշխարհում չկա միջին ճանապարհ, աշխատավոր դա-

11 «Վերածնություն», Բ տարի, թիվ 1—2, հունվար—փետրվար, 1919, էջ 47։

12 «Երիտասարդ Հայաստան», 16 մարտի 1919 թ.։

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում, 10 սեպտեմբերի 1919 թ.։

սակարգերը կա՛մ պետք է կոմունիստների հանից դնան, կա՛մ թաթվեն իմպերիալիստների դավերից։

Այդ ամենից հետո պատահական չէ, որ դաշնակցահայ սթափ ու հեռատես գործիչները, մամուլի առաջադեմ օրգանները ողջունում էին Հոկտեմբերյան հեղափոխության արձագանքները Անդրկովկասում և հատկապես Հայաստանում, նրա ազդեցությամբ տեղի ունեցող հեղափոխական շարժումները։

«Վերածնություն»-ը գրում էր, որ «Հայաստանի, հայ ժողովրդի համար ռուսական ընկերավարական հեղափոխությունը երկնառաք պարգև մը, օրհնաբեր հրեշտակ մը դարձավ»[15]։

Իսկ Անդրկովկասում դեպքերը զարգանում էին սրընթաց արագությամբ։

1917 թ. դեկտեմբերի 29-ին ՌՍՖՍՀ ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ ընդունեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը։

Վ. Ի. Լենինի ստորագրությամբ ընդունված այս փաստաթուղթը հայ ժողովրդի նկատմամբ կոմունիստական վտանգության և սովետական իշխանության հոգատարության վառ դրսևորումներից մեկն էր։ Դեկրետով ճանաչվեց Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը։ Բայց դա բոլորը չէր։ Նրանում ունայ երաշխիքներ էին տրվում դեմոկրատական սկզբունքներով արևմտահայության անկախ պետականության ստեղծման համար։ Դեկրետը ցույց էր տալիս ոչ միայն հայ ժողովրդին հուզող հարցի արդարացի ու ճշմարիտ լուծման բոլշևիկյան ուղիները, այլև ամբողջ աշխարհի առջև տալիս էր ազգային հարցի իսկական՝ պրոլետարական, մարքս-լենինյան լուծման մի փայլուն օրինակ ևս։

«Երիտասարդ Հայաստան»-ը գրում էր. «Պաշտոնապես հայտարարելով, թե հայերը Ռուսաստանի և Թուրքիայի մեջ իրավունք ունեն ինքնորոշվելու և իրենց անկախությունը կազմակերպելու՝ որպես առանձին պետություն... դրանով իսկ նրանք (բոլշևիկները—Հ. Ս.) մի դաս տվեցին տատանվող սոցիալիստ կուսակցություններին»[16]։

Բայց Հայաստանի ու նրա աշխատավոր զավակների թշնամիները պատրաստ էին հրով ու սրով փակելու հայ ժողովրդի ազատության ճամփաները։ Նրանցից առաջինը սուլթանական յաթաղանի վարպետներն էին, թուրքական ռեակցիոներների և ազգաջնջման նրանց երեկվա ավան-

---

15 «Վերածնություն», 1920, Գ տարի, թիվ 7, հուլիս էջ 228։

16 «Երիտասարդ Հայաստան», 26 մարտի 1919 թ.։

դուլբների նորագույն պահապաններն ու շարունակողները, որոնք ելան սովետական կառավարության դեկրետի դեմ։

«Թուրքահայաստանի մասին» դեկրետը չիրագործվեց նաև Անդրկովկասի հակահեղափոխական ուժերի գործողությունների հետևանքով։ Ջճանաչելով սովետական իշխանությունը, Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը միաժամանակ ամեն կերպ նպաստում էին Հոկտեմբերյան հեղափոխության թշնամիների այն ջանքերին, որոնք ուղղված էին սոցիալիստական հեղափոխության և սովետական իշխանության դեմ։

1918 թ. մայիսին դաշնակցականները Հայաստանը հայտարարեցին «անկախ» հանրապետություն։ Իր գոյության երկուսուկես տարիների ընթացքում դաշնակցականների իշխանությունը նոր աղետներ բերեց հայ ժողովրդին։ Արևելյան Հայաստանի աշխատավոր զանգվածները թերևս երբեք այնպիսի բացառիկ ծանր ժամանակներ չէին ապրել, ինչպես 1918—1920 թթ.։ Այդ տարիներին Հայաստանը ողբի ու որբի երկիր էր։ Սովն ու համաճարակը անխնա հնձում էին ժողովրդին։ Ոչ մի գավառ, շրջան կամ քաղաք բացառություն չէր կազմում։ Դրությունն էլ ավելի անտանելի էր դառնում ազգամիջյան կոտորածների և թուրքական ագրամոլների չդադարող ասպատակությունների հետևանքով։ Պատերազմական գործողություններ տեղի ունեցան մենշևիկյան Վրաստանի և մուսավաթական Ադրբեջանի հետ։ Երկրում իշխում էր վայրենի կամայականությունը։ Մարդու կյանքի ու գույքի ապահովություն գոյություն չուներ։ Անիշխանությունն ու անօրինականությունները մշտական երևույթներ էին դարձել։ Դաշնակ ղոչիների հղփացած կյանքը, մաուզերիստների անօրենությունները, պետական պաշտոնյաների կաշառակերությունը անհևակայելի չափեր էին ընդունել։

«Հայաստան՝ ոսկ քափիթալիզմի» խորագրով խմբագրական հոդվածում «Վերածնություն»-ը ցույց էր տալիս, որ Հայաստանի հանրապետության մեջ հայ ժողովրդի սոսկալի, ողբերգական կացության պատասխանատուն կապիտալիզմն է, բուրժուական կարգերը[17]։ Թերթը գրում էր, որ Հայաստանի կառավարող կուսակցության՝ դաշնակցության և նրա համախոհ հեղհեղուկ քաղքենի մտավորականության մտահոգության առարկան ոչ թե ժողովրդի գոյության հարցն է, աշխատավոր դասակարգերի բախտը, այլ հայ բուրժուազիայի շահը, բանվորների և աշխատավոր գյուղացիների կեղեքման, տառապանքի, արյան ու արցուն-

17 Տե՛ս «Վերածնություն», 1919, Բ տարի, թիվ 8, օգոստոս։

քի վրա հիմնված բուրժուական տիրապետության պահպանումն ու ամրապնդումը:

Դաշնակցականների կառավարության թողտվության պայմաններում Անտանտայի տերությունները Հայաստանից դուրս էին տանում հոգևարք ապրող երկրի նյութական վերջին միջոցները, ազգաբնակչությանը կողոպտում էին բոլոր հնարավորություններով:

Հայաստանի աշխատավոր դասակարգերը իրենց դառն փորձով համոզվում էին, որ տեռորի ու ահաբեկումների միջոցով պահպանվող, ժողովրդի տառապանքի, հառաչանքի ու շահագործման վրա կառուցված կարգերը հայ ժողովրդին չեն կարող փրկել աղքատությունից ու ֆիզիկական բնաջնջումից: Բազմատանջ հայ ժողովրդին, մղձավանջով պատած Հայաստան երկրին փրկություն կարող էին բերել միայն Ռուսաստանում հաղթանակած սովետական կարգերը: Հայ ժողովուրդը կործանումից փրկվելու այլ ելք չուներ:

Սակայն Ռուսաստանը այդ ժամանակ ծանր օրեր էր ապրում: 1918 թ. աշնանը Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի պարտությունից հետո Անտանտայի տերությունները իրենց ողջ ուժերը կենտրոնացրին Ռուսաստանում սովետական կարգերը ոչնչացնելու նպատակին, բոլոր միջոցներով օգնելով Ռուսաստանի ներքին հակահեղափոխությանը: Ռուսաստանում բոլշևիկյան հեղափոխությունը ճնշելու կոչերով հանդես էր գալիս ոչ միայն բուրժուական մամուլը, այլև Երկրորդ ինտերնացիոնալի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների պարագլուխները, ամեն տեսակի կեղծ սոցիալիստները, բուրժուազիայի կամակատարները:

ԱՄՆ-ում լույս տեսնող դաշնակցական մամուլն արտատպում էր «Նյու-Յորք Թայմս», «Չիկագո տրիբյուն», «Կարնեգի հիսթորի» և այլ պարբերականների էջերում լույս տեսած զանազան հակասովետական կեղծիքներ, աշխարհում առաջին բանվորագյուղացիական իշխանության նկատմամբ թշնամաբար տրամադրված գրողների, լրագրողների, քաղաքագետների հոդվածներ, որոնցում նրանք նախատեսում էին սովետական իշխանության մոտալուտ կործանումը: Արևմուտքի հետադիմական մամուլը, հանդես գալով ինտերվենցիայի ուղղակի աջակցությամբ, կապիտալիստական երկրների կառավարություններին կոչ էր անում առևտրական և դիվանագիտական հարաբերություններ չհաստատել Սովետական Ռուսաստանի հետ:

Բուրժուական, այդ թվում դաշնակցական պրոպագանդան այն տեսակետն էր տարածում, թե բոլշևիկների «բռնապետության» տակ ընկած Ռուսաստանը դարձել է քաոսի թագավորություն, որ այլևս խոսք չի կա-

լող լինել նրա տնտեսական վերականգնման մասին, քանի դեռ այնտեղ գոյություն կունենա սովետական իշխանությունը, քանի դեռ այնտեղ չեն վերականգնվել կապիտալիստական կարգերը։

Գաղութներում գործող պաշնակ գործիչների և սիյուռքի մյուս հեռադիմականների կանխատեսումներին հակառակ, գաղութահայ առաջադեմ ուժերը հավատացած էին, որ չնայած ռուսական հակահեղափոխության և օտարերկրյա իմպերիալիստների բոլոր ջանքերին, այնուամենայնիվ, Ռուսաստանի պրոլետարիատը, աշխատավոր զանգվածները հաղթանակով դուրս կգան դժվարին փոթորիկին հանդեպ» խմբագրական հոդվածում «Երիտասարդ Հայաստան»-ը գրում էր. «Մենք երբեք չենք հավատում, որ այսօրվա դեմոկրատական Ռուսաստանը պարտվի Կոլչակից և մյուս հակահեղափոխական գեներալներից։ Ընդհակառակը, դեմոկրատական Ռուսաստանը երթալով է՛լ ավելի ուժեղ և ներդաշնակ կերպով կկանոնավորի, կկազմակերպի իր ուժերը, թույլ չտալու, որ հին Ռուսաստանը վերականգնվի՝ այս ու այն պատրվակի տակ։ Ռուս ժողովուրդը իր սեփական ուժի և զորության համն ու հոտը առել է, նա իր բարեկամներն էլ գիտի, իր թշնամիներն էլ։ Նա Կոլչակյաններից այլևս չի խաբվի։ Եվ մենք սրտանց ցանկանում ենք, որ նա չխաբվի։ Հին Ռուսաստանը մեռավ, նա այլևս վերականգնվել չի կարող»[18]։

Գաղութահայ առաջադեմ ուժերը լավ էին ըմբռնում, որ Ռուսաստանի աշխատավորների կենաց ու մահու կռիվը իմպերիալիստական ինտերվենտների և ներքին հակահեղափոխական ուժերի դեմ, ունի համամարդկային պատմական նշանակություն, որ նրա ելքից է կախված մարդկության ճակատագիրը։ «Երիտասարդ Հայաստան»-ը նշում էր, որ «կանգնած ենք մի ահռելի ալտերնատիվի առաջ, կամ ցարդ ամենակարող բուրժուազիան վերստին պետք է իր ձեռքն առնի տիեզերքի դերիշխանությունը և մարդկությանը թելադրի իր հրամանները, կամ Արևելյան Եվրոպայում բոցավառված հրդեհն իր կարմրափայլ ալիքները պետք է տարածի հեռուն ու հեռուն, արևմուտք ու հարավ, օվկիանոսի այն կողմը ևս»[19]։ Եվ, իսկապես, հրդեհը տարածվում էր ամենուր։

Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության տակ մի շարք երկրներում տեղի էին ունենում բուրժուադեմոկրատական և սոցիալիստական հեղափոխություններ։ «Ռուսական հեղափոխության բոլոր ելևէջնե-

18 «Երիտասարդ Հայաստան», 2 հուլիսի 1919 թ.։

19 Նույն տեղում, 10 սեպտեմբերի 1919 թ.։

բը կրկնվում են ամենայն հարազատությամբ Հունգարիայում, Գերմանիայում և ծավալվում են ավելի Արևմուտք»[20],— գրում էր «Երիտասարդ Հայաստան»-ը: Սփյուռքահայ մյուս թերթերը ևս անդրադառնում էին Գերմանիայի, Հունգարիայի, Ֆինլանդիայի, Իտալիայի, Բուլղարիայի և մի շարք այլ երկրների աշխատավոր դասակարգերի հեղափոխական ելույթներին:

Միջազգային և ռուսական հակահեղափոխության հույսերը չարդարացան: Քաղաքացիական պատերազմի բոլոր ճակատներում բանվորագյուղացիական կարմիր բանակը հաջողությամբ ևս էր մղում ինտերվենտների և սպիտակգվարդիականների հարձակումները: Բանվորները և չքավոր գյուղացիությունը կրծքով պաշտպան էին կանգնել Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումներին: «Ինչքան էլ հին Ռուսաստանը ճիգ թափի վերահաստատվելու,— գրում էր «Երիտասարդ Հայաստանը»,— նա այդ նպատակին չպիտի կարողանա հասնել: Եվրոպական կայսերապաշտականների ձգտումները իրականության ժայռին զարկվելով՝ կը փշրվեն, կանհետանան... Երիտասարդ Ռուսաստանը ժայռի պես կանգնած է, նա դարերի ոգուց է թրծված, շաղախված: Այդ ժայռը կմնա անխորտակելի: Եվ դա ցանկալի է... քաղաքակրթության, իրավունքի, արդարության, ազգերի ինքնորոշման սկզբունքի տեսակետից...»[21]:

Թերթը գրում է, որ հին Ռուսաստանը, ժամանակավոր ինչպիսի ղգեստների մեջ էլ մտնելու լինի, մնում է որպես ժողովուրդների թշնամի: Ազատության բոլոր ջատագովները ցանկանում են, որ նոր Ռուսաստանը հավերժվի: «Չևոքերդ հեռու Սովետական Ռուսաստանից» լոզունգը հավատո հանգանակ դարձավ արտասահմանյան երկրների միլիոնավոր աշխատավորների, այդ թվում հայ աշխատավորների համար:

1918 թ. դեկտեմբերին Կանադայի Համիլտոն քաղաքում կազմակերպված միտինգին, որն անցնում էր «Չևոքերդ հեռու Սովետական Ռուսաստանից» լոզունգով, մասնակցում էին նաև տեղի հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ: Դաշնակցականների փորձերը՝ խափանելու հայերի մասնակցությունը միտինգին, ոչ մի արդյունք չտվեց: Լուրջ ընդհարում տեղի ունեցավ դաշնակցականների և նրանց քաղաքական հակառակորդների միջև: «Երիտասարդ Հայաստան» թերթում զետեղված հոդվածից իմանում ենք, որ մի ամիս հետո՝ 1919 թ. հունվարի 23-ին, Համիլտոնի դաշնակցականները հարձակում են գործել հնչակյանների և

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում, 6 դեկտեմբերի 1919 թ.,

անկուսակցական հայերի վրա՝ որպես «բոլշևիկյան խռովարարների»։ Հաջորդ օրը՝ հունվարի 24-ին, տեղական թերթերը, մասնավորապես «Տհը Հիմիլքըն Հերալտ»-ը երկար սյունակներ նվիրեցին «հայ բոլշևիկների» «քայքայիչ» գործունեությանը և նրանց «մերկացմանը», առաջարկելով «մեկուսացնել նրանց՝ իբրև բոլշևիկյան վարակի»[22]։

1920 թ. գարնանը սովետական հանրապետության ռազմական դրությունը սպիտակ լեհերի և Վրանգելի համատեղ գործողությունների կապակցությամբ նորից վատացավ։ Նորից խանդավառ օրեր էին ապրում Ռուսաստանի ներքին հակահեղափոխական ուժերը և օտարերկրյա իմպերիալիստները։ Արևմուտքի բուրժուական պրոպագանդան կրկին կանխատեսում էր սովետական իշխանության մոտալուտ վախճանը։

Իր վերոհիշյալ գրքում դաշնակցական պարագլուխներից Ռ. Դարբինյանը մեծագույն ոգևորությամբ գրում էր, թե սպիտակ լեհերի արշավանքի հետևանքով «վերջին մեկ-երկու շաբաթվա ընթացքում» կրկին անչափ վատթարացել է «բոլշևիկյան Ռուսաստանի քաղաքական և ռազմական դրությունը»[23]։ Նա ափսոսանք էր հայտնում, որ «Լեհաստանը երկար ժամանակ լուռ հանդիսատես էր բոլշևիկների եռուռաջին և մատը մատին չխփեց Դենիկինին փրկելու համար վերջնական ջախջախումից»[24]։ Այժմ Լեհաստանը ճիշտ վճիռ է ընդունել, գրում էր Ռ. Դարբինյանը, նա «իր ամբողջ ռազմական թափով հրապարակ է եկել բոլշևիկյան Ռուսաստանի դեմ, որն արդեն միամտորեն կարծում էր, որ կարող է հանգստանալ վերջապես և վայելել իր հաղթանակի պտուղները»։ Ռ. Դարբինյանին հատկապես մեծապես ուրախացնում էր այն հանգամանքը, որ «Լեհաստանի հետ միացած է Ուկրաինան՝ հանձին Պետլյուրայի կառավարության» և մյուս հակահեղափոխական ուժերի։

Հենվելով ժողովրդական զանգվածների հերոսության, ամբողջ աշխարհի հասարակական առաջավոր ուժերի ինտերնացիոնալ համերաշխության վրա, սովետական երիտասարդ հանրապետությունը հաջողությամբ դիմացավ բոլոր փոթորիկներին և հաղթող դուրս եկավ քաղաքացիական պատերազմից։

«Վերածնություն»-ը խմբագրական հոդվածներից մեկում գրում էր. «Շուրջ երեք տարի է, որ քափիթալիստ պետություններ ներելի և աննեղելի ամեն միջոցներով պայքար կմղեն ռուսական հեղափոխության դեմ,

---

22 Նույն տեղում, 15 փետրվարի 1919 թ.։

23 Ռ. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 17։

24 Նույն տեղում, էջ 18։

պայն իր սաղմին մեջ խեղդելու ջանադրությամբ, սակայն, ինչ որ XVIII դարուն ավատական միապետությունները անզոր մնացին ֆրանսիական հեղափոխութեան առաջ և իրենց պարտությունը խոստովանեցան, նույնը, այսօր, քափիթալիստական բռնապետությունները իրենց պարտությունը կխոստովանին և գլուխ կծռեն անխուսափելիին առաջ»[25]:

Հաղթելով քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում, կարմիր բանակը մոտենում էր Անդրկովկասի սահմաններին: Հայ ժողովրդի լավագույն զավակները, որոնք կարմիր բանակի շարքերում հերոսաբար կռվում էին Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանության համար, երազում էին օր առաջ ոտք դնել հայոց բազմաչարչար հողի վրա, նրան բերել սպասած ազատություն:

1918—1920 թթ. ծանր ժամանակաշրջանում Սովետական Ռուսաստանի կառավարությունը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ անում էր հնարավոր ամեն բան ստեղծված անելանելի վիճակից հայ ժողովրդին դուրս բերելու, նրա պահպանված հատվածների ֆիզիկական գոյությունը ապահովելու համար: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի գլխավորած սովետական կառավարության սիստեմում հայկական գործերի կոմիսարիատի ստեղծումը: Այդ մարմինը մեծ աշխատանք ծավալեց Ռուսաստանի տարբեր վայրերում բնակվող հայ զանգվածների ուժերը միավորելու, նրանց նյութական ծանր վիճակը թեթևացնելու, կրթության և առողջապահության գործը կազմակերպելու ուղղությամբ: Սովետական կառավարության հոգատարության ներքո Ռուսաստանում ապաստանած մոտ կես միլիոն հայ գաղթականները օթևան և աշխատանք գտան, նրանց համար բացվեցին դպրոցներ, հիվանդանոցներ, մանկատներ, հայերեն լեզվով հրատարակվում էին թերթեր և գրքեր: Վ. Ի. Լենինի նախագահությամբ ժողկոմսովետը մի քանի անգամ որոշումներ կայացրեց Սովետական Ռուսաստանում ապրող հայ գաղթականներին դրամով և պարենով օգնելու, նրանց աշխատանքի և ապրուստի հոգսերը հոգալու մասին:

Հայաստանի աշխատավորները բոլշևիկների ղեկավարությամբ հերոսական ջանքեր էին գործադրում ազատագրվելու դաշնակների լծից, կապվելու Սովետական Ռուսաստանի հետ, երկրում հաստատելու սովետական իշխանություն, որի միջոցով միայն հնարավոր կլիներ ժողովրդին փրկել վերահաս բնաջնջումից, նրա համար ապահովել խաղաղ կյանք ու բարգավաճում:

---

25 «Վերածնություն», 9 տարի, թիվ 7, 1920, 7 հուլիսի, էջ 226:

Համընդհանուր տագնապի այդ օրերին Հայաստանի և սփյուռքի աշխատավորներին ոգևշնչում էին սովետական իշխանության վճռական գործողությունները, որոնք ուղղված էին հին աշխարհի վերջնական կործանմանը:

Ամերիկահայ բանվոր Լ. Մարտիրոսյանը գրում էր. «...Այս հուսահատեցուցիչ խավարին, այս ընդհանուր անստուգության, իրերու այս տխուր երևույթին քովն է, որ մեզի կերևվի աննկարագրելիորեն մեծ և հուսագրիչ պատկեր մը, որու միջեն կգոլանա հստակորեն պատմության անջնջելի վճիռը, պրոլետարական տիքտատորության հաղթանակը»[26]:

Հայ աշխատավորներին ոգևշնչում էր միջազգային բանվոր դասակարգի գնալով ուժեղացող համերաշխությունը Ռուսաստանի պրոլետարիատի հետ: Դրա ակնառու ապացույցներից մեկը Կոմինտերնի կազմակերպումն էր: Կրախի մատնված երկրորդ ինտերնացիոնալին փոխարինելու էր գալիս մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների վրա խարսխված Կոմինտերնը, որը կոչված էր պատմական դեր խաղալու միջազգային բանվորական շարժման մեջ:

«Երիտասարդ Հայաստան»-ն անդրադառնալով Կոմինտերնի ունեցած նշանակությանը, գրում էր. «Ահա՛ր հիս բախտը վերջ ի վերջո պետք է որոշի համաշխարհային հեղափոխական դեմոկրատիան, ի դեմս ընդվզած ահեղ պրոլետարիատի: Սրանք իրենց լոզունգները և հրահանգները կընտանան... Գ. ինտերնացիոնալից, ուր զենք ու զրահ է դարբնվում համաշխարհային գործարանային ահարկու բանակի համար»[27]:

Դասակարգային պայքարի բովում Հայաստանի աշխատավորները ավելի ու ավելի էին համախմբվում բոլշևիկների, Կոմինտերնի շուրջը: Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների շարքերը համալրվում էին գիտակից ու ակտիվ բանվորներով, գինվորներով, գյուղացիներով: Հայ բոլշևիկները մեծ աշխատանք էին ծավալել աշխատավորական լայն խավերի մեջ, գլխավորում էին նրանց հեղափոխական ելույթները, գործադուլային շարժումը և զանգվածային ցույցերը:

Բոլշևիկները մերկացնում էին դաշնակցական կառավարողների հակաժողովրդական, դասակարգային էությունը, ցույց էին տալիս, որ աշխատավորների դեմ մղվող պայքարում նա չի խորշում ոչ մի միջոցից, ընդհուպ մինչև Ռուսաստանի հակահեղափոխական, միապետական ուժերի հետ սերտ գործակցություն հաստատելը: Դաշնակցական կառավա-

---

26 «Երիտասարդ Հայաստան», 27 սեպտեմբերի 1919 թ.:

27 Նույն տեղում, 10 սեպտեմբերի 1919 թ.:

թյունը հատկապես սերտ կապեր էր հաստատել գեներալ Դենիկինի հետ, նրան հնարավոր միջոցներով աջակցելով սովետական իշխանության դեմ մղվող պայքարում։

Դաշնակցականների հակաժողովրդական կառավարության այդ հանցագործ արարքները դատապարտում էին գաղութահայ առաջադիմական գործիչները, մամուլը։ «Հայ ազգային շահերի տեսակետից» խելահեղություն է Դենիկինի հետ հաստատած գործակցությունը,— գրում էր «Երիտասարդ Հայաստան»-ը։ Թերթը նշում էր, որ «Դենիկինները, իրենց բոլոր համհարզներով միասին՝ կմնան մեզ թշնամի, բարեկամ չեն կարող լինել։ Նրանք... Գոլիցինների հաջորդները կմնան շարունակ։ Հետևապես չպիտի խաբվել նրանց խոսքերից, որքան էլ դրանք մեղրածորան շրթունքներից գալու լինեն»[28]։ Մասնավորապես դատապարտելով Դենիկինի հետ կապ հաստատելու ուղղությամբ դաշնակցական կառավարության քայլերը, թերթը գրում էր. «Սխալ էր, վերին աստիճանի սխալ, բոլորովին հակառակ մեր ներկայի ու ապագայի շահերին, բացարձակ ձախավեր մի քաղաքականություն էր, որ Հայաստանի հանրապետությունը պատվիրակություն ուղարկեց Դենիկինի մոտ։ Դրա անմիջական հետևանքը արտացոլացավ մեր կյանքի վրա, դրանով մեր հարևանների, մեր թշնամիների անշիջելի կասկածը նորից մեր վրա գարձրինք, առանց դրական որևէ օգտակարություն ձեռք բերելու, բացի վնասից։ ...Մեզ բարեկամ է և բարեկամ էլ կմնա երիտասարդ Ռուսաստանը և ոչ թե հինը, փտածը, արդեն մեռած, դիակնացածը, հավիտենական գերեզմանի խորքը իջնողը»[29]։

Սփյուռքի առաջադեմ գործիչները միաժամանակ խիստ քննադատում էին կովկասյան լեռնական ազգայնականների, Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի կառավարողների գործելակերպը, նրանց շուտափույթ տապալումը։

Հետադիմական համարելով կովկասյան լեռնականների շրջանում ծագած զանազան ազգայնական, «սուվերեն» ու «անկախ» պետական միավորումների գոյությունը, «Երիտասարդ Հայաստան»-ը գրում էր. «Կովկասյան զանազան լեռնականները, օրինակ, դաղստանցիներ և այլն, ազգերի ինքնորոշման սկզբունքից օգտվելով՝ Ռուսաստանից անջատվեցան։ Բայց առաջադիմական եղա՞վ այդ քայլը, մարդկությունը, քաղա-

---

28 Նույն տեղում, 6 դեկտեմբերի 1919 թ.։

29 Նույն տեղում։

քակրթությունը դրանից օգուտ՞ ց։ Բնավ։ Ընդհակառակը, հետադիմություն էր, որ շահեց»[30]։

Մի այլ առիթով Թերթը «հակաժողովրդական և անմիտ» է համարում Ադրբեջանի մուսավաթական կառավարողների ջանքերը՝ մնալու իշխանության գլուխ։ Ադրբեջանում Սովետական իշխանության հաստատումից քսան օր առաջ «Երիտասարդ Հայաստան»-ը գրում էր. «...Ապահովաբար վստահ ենք, որ Ադրբեջանի ժողովրդի աշխատավոր մասը այդ (Սովետական— Հ. Ս.) Ռուսաստանի կողմը պիտի անցնի։ Դրա մասին կասկած անգամ չի կարող լինել։ Ադրբեջանի ժողովրդի զանգվածը, մասնավորապես բանվորությունը, գյուղացիությունը, այս կարճ ժամանակի մեջ ճաշակեց ազգայնական տիրապետության «քաղցրությունները»։ Հիմա հիասթափության մեջ է»[31]։ Ուստի նա ցնծությամբ է ընդունելու մուսավաթական բռնապետության տապալումը և սովետական իշխանության հաստատումը։

Նույն կերպ են վարվելու վրացի բանվորն ու գյուղացին, գրում էր Թերթը։ Քննադատելով Վրաստանի մենշևիկյան կառավարողների հակաժողովրդական քաղաքականությունը, Թերթը հիշեցնում էր, որ նրանք «Թեթևամտություն ունեցան, ադրբեջանցիները իրենց հետ առնելով՝ Բարձրագույն Խորհրդին ներկայանալու (խոսքը Վերսալի Բարձրագույն Խորհրդի մասին է— Հ. Ս.), առաջարկելով, որ իրենց զենք, ռազմամթերք տրվի՝ բոլշևիկյան Ռուսաստանի դեմ կռվելու համար։ Մինչդեռ այդ կողմից իրենց և ոչ մի վտանգ, ոչ մի սպառնալիք էր եղած»[32]։ Հեղինակը հիշեցնում է, որ հենց «բոլշևիկյան Ռուսաստանն էր, որ Վրաստանի համար «ազգերի ինքնորոշման սկզբունքը իրավունք ճանաչեց, գործադրեց, խոսքը իրականացրեց, դաշափարին մարմին տվեց գործով»[33]։ Բայց վրացական հակահեղափոխությունը դրան արժեք չտվեց և Վրաստանի «անկախության» ամբողջ ժամանակաշրջանում նա անվերջանալի դավեր էր նյութում Սովետական Ռուսաստանի դեմ։ Այժմ մոտենում էր պատմական պահը։ Այժմ խոսքը Վրաստանի աշխատավոր ժողովրդինն էր, որը, աչքերը հառած Հյուսիսին, սպասում է իր փրկությանը։

Իսկ հա՞յը, հայ ժողովո՞ւրդը։

«Վերածնություն»-ը ջերմորեն ողջունում էր կարմիր բանակի մոտենալը Հայաստանի սահմաններին։ Նա գրում էր, որ «հայ ժողովուրդը

30 Նույն տեղում, 14 ապրիլի 1920 թ.։
31 Նույն տեղում, 8 ապրիլի 1920 թ.։
32 Նույն տեղում, 7 ապրիլի 1920 թ.։
33 Նույն տեղում։

գոնե իր ազգային և քաղաքական գոյության տեսակետով մեր դրացի մեծ ժողովրդի, մեծ հեղափոխության, ռուսական սովիեթական նվաճումներու շատ բան կպարտի... Հատակատես աչքերը, որոնք նախապաշարումներու և սգիտության մշուշով պատված չեն, կրնան ըմբռնել և տեսնել հորիզոնի վրա պայծառ արևի ճաղփուն ճառագայթները»[34]:

«Երիտասարդ Հայաստան»-ը անարգանքի սյունին էր գամում դաշնակցական կառավարողներին, որոնք 1920 թ. սկզբներից նոր ուժով սկսեցին ջանքեր գործադրել, որպեսզի արևմտյան իմպերիալիստական տերություններից որևէ մեկը վերցնի Հայաստանի մանդատը: 1920 թ. ապրիլի 7-ի խմբագրականում թերթը հիշեցնում էր, որ Հայաստանի բախտը կապել մանդատի հետ, նշանակում է մեծ վնաս հասցնել հայ ժողովրդին: Եթե «Ֆրանսիան կամ Անգլիան հանձն առնեն վերցնելու ամբողջական Հայաստանի մանդատը, դրանից ոչինչ չի շահի մեր ժողովուրդը: Արդյունքը միայն այն կլինի, որ Հայաստանը լիովին կենթարկվի իմպերիալիստներին, կդառնա նրանց կիսագաղութը: Այդ մանդատը, անշուշտ, կուղղվի բոլշևիկյան Ռուսաստանի դեմ, որի հանդեպ, սակայն, մենք՝ հայերս ոչինչ ունենք ասելիք, ոչինչ գանգատվելիք՝ այսօր»[35]:

Այնուհետև, բարձր գնահատելով Սովետական Ռուսաստանի խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը, թերթը նշում է, որ «բոլշևիկյան արտաքին քաղաքականությունը չի սպառնում» Հայաստանի հանրապետության գոյությանը, որ Սովետական Ռուսաստանը հայ ժողովրդի բարեկամն է[36], որ նրա անկեղծ ցանկությունն է հայ ժողովրդին տեսնել ազատ ու երջանիկ: Ուստի պատահական չէ, որ հայ ժողովուրդը անկեղծ ու խոր զգացմունքներ է տածում Սովետական Ռուսաստանի նկատմամբ: «Ինչ էլ որ լինի,— նշում էր թերթը,— մենք գործիք չենք կարող լինել, ինչ կերպարանքի և երևույթի տակ էլ դա գալու լինի: Մենք և ոչ մի ժամանակ կարող ենք մի այդպիսի խորթ... մեր շահերին տրամագծորեն հակառակ կոալիցիայի մեջ մտնել»[37]: Ոչ մի հայ մարդ, եթե նա թմբնավորված չէ բուրժուական պրոպագանդայով ու ազգայնականության բացիլներով, ղենք չի բարձրացնի Հայաստանի սահմաններին մոտեցող կարմիր բանակի դեմ:

---

34 «Վերածնություն», 1920, Գ տարի, թիվ 7, հուլիս, էջ 228:

35 «Երիտասարդ Հայաստան», 7 ապրիլի 1920 թ.:

36 Նույն տեղում:

37 Նույն տեղում:

Եթե գաղթաշխարհի հայ աշխատավորները, առաջադեմ գործիչներն ու մամուլը երազում էին օր առաջ Հայաստանը տեսնել ազատագրված, ապա սփյուռքի անհեռատես, հետադիմական շերտերը, ամենից առաջ դաշնակցականները, սարսափ էին զգում կարմիր բանակի, նրա առաջխաղացման հանդեպ։ Ատելություն տածելով սովետական կարգերի նկատմամբ, հայ գաղութներում գործող դաշնակցական գործիչները և մամուլի օրգանները Հայաստանի հանրապետության կառավարողներից պահանջում էին «ամուր կանգնել սովետների ռազմատենչ ձգտումների հանդեպ», բոլոր միջոցներով Հայաստանի սահմանների վրա կանգնեցնել «բոլշևիկյան վարակը» և «պաշտպանել հանրապետության անկախությունը»։

Սակայն պատմությունը ընթանում էր իր ընթացքով։ Սովետական կարգերի թշնամիները անզոր էին կանգնեցնելու Հոկտեմբերյան հեղափոխության հաղթական երթը։

Հայաստանը գնում էր սովետական կարգերին ընդառաջ, դեպի կարմիր նոյեմբեր։

Հ. Հ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան հեղափոխության ծնունդ սովետական իշխանությունը Հայաստանում արմատական հեղաշրջում մտցրեց հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում։ Ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ ձեռք բերելով սոցիալական և ազգային ազատագրություն, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայ ժողովուրդն ապրեց իր սոցիալիստական վերածնունդը։

Մտնելով Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ, երբեմնի հետամնաց Հայաստանը ոչ միայն կարողացավ արագորեն վերականգնել երկրի քայքայված էկոնոմիկան, այլև դարձավ սոցիալիստական ինդուստրիայի, զարգացած գյուղատնտեսության, ծաղկող գիտության ու մշակույթի հանրապետություն։

Ելակետ ունենալով ազգային ծայրամասերի և շրջանների տնտեսական ու կուլտուրական հետամնացության աստիճանաբար վերացման մասին Վ. Ի. Լենինի ցուցումները և կուսակցության դիրեկտիվները, սոցիալիստական շինարարության տարիներին Հանրապետությունում նախատեսվում էին արդյունաբերության զարգացման ավելի բարձր տեմպեր և դրանց համապատասխան մեծ կապիտալ ներդրումներ։

Այդ հարցերի լուծման տեսակետից պատմական մեծ նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի ծրագրային նամակը՝ ուղղված «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնականների Հանրապետության կոմունիստ ընկերներին»։ Նամակում Վ. Ի. Լենինը հանճարեղ խորաթափանցությամբ շարադրել էր նոր տնտեսական քաղաքականության իրականացման կոնկրետ ուղիները Անդրկովկասում. «...Ամենից ավելի կարևոր է,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց դրության, իրենց հան-

բանակցությունների դրության յուրօրինակությունը, ի տարբերություն ՌՍՖՍՀ դրության ու պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[1]:

Ուղեցույց ունենալով Վ. Ի. Լենինի նամակը, Հայաստանի աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ձեռնամուխ եղան հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնմանը: Այդ գործում անգնահատելի օգնություն ցույց տվեցին Սովետական Ռուսաստանը և եղբայրական մյուս ժողովուրդները:

Ոչ լրիվ տվյալներով միայն 1922 թ. Սովետական Ռուսաստանը օգնության կարգով Հայաստանին է տրամադրել 1,5 միլիոն ռուբլի ոսկով, ավելի քան 110 վագոն հացահատիկ, 11 վագոն շաքար, 7 վագոն դեղորայք, մեկ տեքստիլ ֆաբրիկայի սարքավորում՝ 18 հազար իլիկով, 25 վագոն մանուֆակտուրա և մեծ քանակությամբ այլ տեսակի կենսամթերքներ, ապրանքներ ու սարքավորումներ[2]:

Սովետական Ռուսաստանի և մյուս հանրապետությունների եղբայրական օգնությունը ավելի էր ոգևորում Հայաստանի աշխատավորներին՝ նոր կյանքի կառուցման գործում: 1921—1925 թթ. հիմնականում ավարտվեց հանրապետության արդյունաբերության, ինչպես նաև գյուղատնտեսության վերականգնումը: Դրան զուգընթաց ստեղծվում էին արդյունաբերական նոր ճյուղեր (տեքստիլ, քիմիական, շինանյութերի, էլեկտրաէներգիայի արտադրության և այլն): Զարգանում էին պղնձարդյունաբերությունը և գինեգործությունը, մի քանի անգամ ավելացել էր պոլիգրաֆ արդյունաբերության արտադրությունը: 1925 թ. Սովետական Հայաստանի ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը կազմում էր նախապատերազմյան արտադրանքի 75,5 տոկոսը[3]: *Ժողովրդական տնտեսության վերականգնման ավարտից հետո Հայաստանը թևակոխեց սոցիալիստական ինդուստրացման ժամանակաշրջանը:*

1926 թ. հունվարին Անդրկովկասի Կենտգործկոմի Երևանում կայացած նստաշրջանը նշեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի զարգացման կոնկրետ խնդիրները: Նախատեսվեց Հայաստանում ստեղծել և զարգացնել պղնձի, քիմիական ու շինանյութերի արդյունաբերության

---

1 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 32, էջ 402:

2 «*Հայ ժողովրդի պատմություն*», հատ. VII, Երևան, 1967, էջ 193:

3 Նույն տեղում, էջ 240:

ձյուղերը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, ինչպես նաև թեթև և սննդի արդյունաբերությունը։ Ինդուստրացման հենց առաջին տարում շահագործման հանձնվեց Երևանի հիդրոէլեկտրակայանը՝ հանրապետության ինդուստրիալ ձեռնարկությունների առաջնեկը։ 1925 թ. սկսվեց Լենինականի հիդրոէլեկտրակայանի շինարարությունը, որն ավարտվեց 1928 թ.։ 1927 թ. սկսվեց Զորգեսի կառուցումը։ Էլեկտրիֆիկացիայի ընդլայնումը հանրապետության բնական հարստությունները շահագործելու, լեռնահանքային և քիմիական արդյունաբերությունը զարգացնելու հնարավորություններ ստեղծեց։ 1927 թ. շահագործման հանձնվեց Երևանի կաբելի գործարանը, որն առաջիններից մեկն էր Սովետական Միությունում։ Պայմաններ ստեղծվեցին Արթիկի տուֆի հանքերի լայն օգտագործման համար։ 1926—1929 թթ. նախկին մեխանիկական արհեստանոցի բազայի վրա կառուցվեց Երևանի Ջերժինսկու անվան մեխանիկական գործարանը, նախկին դաբաղանների փոխարեն Երևանում գործարկվեց կաշվի երկու գործարան, Լենինականի հիդրոէլեկտրակայանի բազայի վրա շահագործման հանձնվեցին տեքստիլ գործարանի մանվածքային, գործվածքային, գուլպայի ու տրիկոտաժի բաժանմունքները, ինչպես նաև սննդարդյունաբերական մի շարք ձեռնարկություններ։

Սոցիալիստական ինդուստրացման առաջին տարիների արդյունքները ցույց տվեցին, որ հանրապետությունում անշեղորեն կենսագործվում է Հայաստանի տնտեսական հետամնացությունը վերացնելու ծրագիրը։ Տեղական հանքային հարստությունների արդյունաբերական մշակումը դարձավ հանրապետության ինդուստրացման հիմնական ուղին։

Հանրապետության տեխնիկատնտեսական հետամնացությունը վերացնելու և սեփական ինդուստրիալ բազա ստեղծելու համար պահանջվում էին մեծ չափերի հասնող կապիտալ ներդրումներ։ Առաջին հնգամյակում նախատեսված 276,8 միլիոն ռուբլու դիմաց Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ փաստացի կապիտալ ներդրումները կազմեցին 312,3 միլիոն ռուբլի։

Առաջին հնգամյակի տարիներին կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Զորագեսը, Երևանի երկրորդ ավտոմատ էլեկտրակայանը, Լենինականի հիդրոկայանի երկրորդ հերթը, Երևանի Ջերժինսկու անվան մեխանիկական (հետագայում մեքենաշինական), ֆերմենտացիոն գործարանները, կարի ֆաբրիկաներ Երևանում և Լենինականում, Մինջևան—Ղափան երկաթուղին, Ղարաքիլիսայի (Կիրովական) կղմինդրի և աղյու-

սի գործարանը և այլն։ Ընթացքի մեջ էր Քանաքեռի խոշոր հիդրոէլեկտրակայանի, Ղարաքիլիսայի քիմիական կոմբինատի, Դավալուի (Արարատ) ցեմենտի գործարանի, Երևանի ծխախոտի ֆաբրիկայի, Հոկտեմբերյանի բամբակազտիչ գործարանի, Երևանի տրամվայի և մի շարք այլ ձեռնարկությունների շինարարությունը։

Առաջին հնգամյակի ընթացքում միայն խոշոր արդյունաբերության արտադրական միջոցները աճեցին ավելի քան 3 անգամ, իսկ համախառն արտադրանքը՝ 4,5 անգամ[4]։

Արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ նրա տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքի մեջ հնգամյակի վերջում բարձրացավ մինչև 58 տոկոսի՝ 1927/28 թթ. 21,5 տոկոսի դիմաց[5]։

Առաջին հնգամյա պլանի հաջող կատարումը ապահովեց սոցիալիստական էկոնոմիկայի հիմքերի կառուցումը։ Նախադրյալներ ստեղծվեցին սոցիալիստական շինարարության հետագա ծավալման համար։

Հայաստանի աշխատավորները հաջողությամբ կատարեցին նաև ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը։ Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղաբաշխման սկզբունքի հետևողական կիրառման շնորհիվ փոխվեց հանրապետության ժողովրդական տնտեսության պատկերը։ Ավարտվեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերակառուցումը։ Խոշոր չափով ընդարձակվեց տնտեսության զարգացման հիմնական լծակ հանդիսացող էլեկտրաէներգիայի արտադրությունը։ Շահագործման հանձնվեցին Քանաքեռի հիդրոէլեկտրակայանի չորս և Զորագետի երեք ագրեգատները, Ալավերդու պղնձաքարջասպի, Դավալուի ցեմենտի, Երևանի բազալտի, պեմզաբետոնի բլոկների, գրանիտի և մարմարի մշակման գործարանները, վերակառուցվեցին և ընդարձակվեցին Երևանի մեքենաշինական և կենցաղային մեխանիկական գործարանները։ Ծավալվեց թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկությունների շինարարությունը։ Գործող ձեռնարկությունների վերակառուցմանը զուգընթաց կառուցվեցին և շահագործման հանձնվեցին մի շարք նոր գործարաններ ու ֆաբրիկաներ։

Առավելագույն տեմպերով էր զարգանում հանրապետության ծանր արդյունաբերությունը։ Այսպես, 1932 թ. 85,6 միլիոն ռուբլու դիմաց

4 Նույն տեղում, էջ 330։

5 Նույն տեղում, էջ 331։

1937 թ. նրա արտադրանքը կազմեց 214,3 միլիոն ռուբլի, իսկ Բերիևի արդյունաբերության համախառն արտադրանքը 25,4 միլիոն ռուբլուց հասավ 40,9 միլիոն ռուբլու[6]։

Հնգամյա պլանի հաջող կատարման շնորհիվ Հայաստանը դարձավ ինդուստրիալ առաջավոր հանրապետություն։ Բարձրացավ հանրապետության արդյունաբերության տեխնիկական զինվածությունը, աճեց տեխնիկական մտավորականությունը։ 1936 թ. բանվորների ու ծառայողների թիվը հասավ 105 հազարի[7]։

Նախապատերազմյան երրորդ հնգամյակի երեք տարիների ընթացքում հանրապետության բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների ջանքերով ավարտվեց սինթետիկ կաուչուկի գործարանի շինարարությունը։

Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի մի շարք արտադրամասերի և Ալավերդու ծծմբաթթվի գործարանի գործարկումով զգալի չափով բարձրացավ քիմիական արդյունաբերության տեսակարար կշիռը։ Ավարտվեց Համամլու (Սպիտակ)— Լենինական էլեկտրահաղորդման գծի կառուցումը։ Շահագործման հանձնվեցին Լենինականի մանվածքային և գործվածքային ֆաբրիկանները, Երևանի ալրաղաց կոմբինատը, Քանաքեռգէսի հինգերորդ և վեցերորդ ագրեգատները։

Այսպիսով, նախապատերազմյան տարիներին Հայաստանը դարձավ առաջավոր սոցիալիստական հանրապետություն։ Կառուցվեցին արդյունաբերական 25 խոշոր ձեռնարկություններ։ Ստեղծվեցին արդյունաբերության բոլորովին նոր՝ մեքենաշինական, քիմիական, շինանյութերի, աննդի և թեթև արդյունաբերության ճյուղեր։ Ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ 1940 թ. աճեց 3,7, այդ թվում ծանր արդյունաբերությունը՝ 23, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 72 անգամ։ Այս ամենի շնորհիվ 1940 թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ կազմեց 78 տոկոս։

Սովետական Հայաստանի աշխատավորները, ոգեշնչված սոցիալիզմի կառուցման հաջողություններով, ջանքեր չէին խնայում ստեղծագործական աշխատանքով էլ ավելի հզորացնելու իրենց սոցիալիստական հայրենիքը։ Սակայն ֆաշիստական Գերմանիայի ոխերիմ հարձա-

---

6 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», Ереван, 1940, стр. 23.

7 Նույն տեղում, էջ 12։

կումը մեր սրբազան հայրենիքի վրա, ընդհատեց սովետական ժողովրդի խաղաղ ստեղծագործական աշխատանքը։

Ռազմաճակատի պահանջներին համապատասխան փոփոխվում էր արդյունաբերության կառուցվածքը, ստեղծվում էին նոր ձեռնարկություններ։ Չնայած Հայրենական մեծ պատերազմի տարիներին Սովետական Հայաստանում կառուցվեցին 114 արդյունաբերական խոշոր և միջին ձեռնարկություններ, իսկ ռազմական արդյունաբերության հետ կապված արդյունաբերական որոշ ճյուղերի արտադրանքը ավելացավ մի քանի անգամ, այնուամենայնիվ, արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ իջավ 7 տոկոսով[8]։

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո սովետական ժողովուրդը, այդ թվում հայ ժողովուրդը, անցավ ստեղծագործական խաղաղ աշխատանքի։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը հետևողականորեն շարունակելով Լենինյան ազգային քաղաքականությունը, նախագծեցին ազգային հանրապետությունների արտադրողական ուժերի տեղաբաշխման և զարգացման նոր միջոցառումներ, որտեղ հաշվի էր առնվել յուրաքանչյուր հանրապետության ու տնտեսական շրջանի առանձնահատկությունները, արտադրողական ուժերի հետագա զարգացման հեռանկարները։ Ինչպես սոցիալիստական շինարարության բոլոր էտապներում, այնպես էլ ետպատերազմյան տարիներին կուսակցությունը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում ծանր արդյունաբերության համակողմանի զարգացմանը։ Խոշոր արդյունաբերության, առաջին հերթին մեքենաշինության զարգացումը Վ. Ի. Լենինը դիտում էր որպես մեր երկրի հաջող վերափոխման, նրա տնտեսական անկախության և ռազմաքաղաքական հզորության ամրապնդման հիմնական պայմանը, որպես սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման նյութական բազան։ Վ. Ի. Լենինը ուսուցանում էր, որ «սոցիալիստական հասարակություն ստեղծելու իսկական ու միակ բազան միայն ու միայն մի բան է՝ խոշոր արդյունաբերությունը»[9]։ Երկրի խոշոր արդյունաբերության զարգացումը Վ. Ի. Լենինը համարում էր սոցիալիստական էկոնոմիկայի կառուցման, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերազինման ու աշխատանքի արտադրողականության բարձրացման հիմնական միջոցը։

---

8 «Народное хозяйство Армянской ССР», Ереван, 1957, стр. 23.

9 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 32, էջ 523։*

Անշեղորեն ընթանալով լենինյան ուղիով, կուսակցությունը մշակեց հետպատերազմյան առաջին հնգամյակում երկրի էկոնոմիկայի զարգացման նոր ծրագիր։ Նախատեսվում էր ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ 1950 թ. ավելացնել 48 տոկոսով։

Հաշվի առնելով Հայկական ՍՍՀ տեխնիկատնտեսական պայմանները, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանով հանրապետության արդյունաբերության համար սահմանվեցին աճի առավել բարձր տեմպեր։ ՍՍՀՄ արդյունաբերության զարգացման միջին տեմպերի համեմատությամբ առավել արագ էին աճելու ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերը (մեքենաշինություն, գունավոր մետալուրգիա, քիմիական արդյունաբերություն, էլեկտրաէներգիայի արտադրություն և շինանյութերի արդյունաբերություն)։ Հնգամյա պլանով նախատեսվում էր տեղական արդյունաբերության արտադրանքի մակարդակը 1940 թ. համեմատությամբ 1950 թ. ավելացնել 2—3 անգամ։ Սովետական հանրապետությունների եղբայրական ընտանիքում Հայաստանի աշխատավորները հաջողությամբ ձեռնամուխ եղան չորրորդ հնգամյակի առաջադրանքների կատարմանը և հասան խոշոր արդյունքների։

Հնգամյակի տարիներին հանրապետությունում կառուցվեց, վերակառուցվեց և գործարկվեց մոտ 220 գործարան, ֆաբրիկա, էլեկտրակայան (այդ թվում 60 նոր արտադրական ձեռնարկություն)։

Հանրապետության արդյունաբերության զարգացումը, նրա տեխնիկական կատարելագործումն ու արտադրական կարողությունների ավելացումը պահանջում էին էլեկտրաէներգիայի արտադրության ավելացում։ Այդ առումով մեծ նշանակություն էր տրվում նոր էլեկտրակայանների կառուցմանը։ Արագորեն վերակառուցվեցին Զորագետի և Քանաքեռի հիդրոէլեկտրակայանները, 1948 թ. շահագործման հանձնվեց Սևանի հիդրոէլեկտրակայանը, արագ տեմպերով էր ընթանում Գյումուշի հիդրոէլեկտրակայանի շինարարությունը։ Հնգամյակի տարիներին շահագործման հանձնվեցին նաև Բասարգեչարի, Այգեձորի, Ակնաղբի, Ջերմուկի, Ազատեկի, Ագարակի և մի շարք այլ ջրջանային ու կոլտնտեսային էլեկտրակայաններ։ Այդ բոլորի շնորհիվ էլեկտրաէներգիայի արտադրությունը 1950 թ., նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ, ավելացավ 2,4 անգամ և գերազանցեց հնգամյա պլանի առաջադրանքը։

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո առա-

չին պլանի վրա դրվեց ծանր ինդուստրիայի, այդ թվում քիմիական արդյունաբերության ճյուղերի կառուցումը։ Ավարտվեց Երևանի ավտոդողերի գործարանի կառուցումը, Ալավերդիում ընդլայնվեց պղնձարջասպի, ծծմբաթթվի և սուպերֆոսֆատի արտադրությունը, որը խոշոր դեր խաղաց ոչ միայն մեր հանրապետության, այլև եղբայրական մյուս հանրապետությունների գյուղատնտեսության քիմիացման գործում։ Ներմուծվող հումքի բազայի վրա Երևանում շահագործման հանձնվեց «Պոլիվինիլացետատ» գործարանի առաջին արտադրամասը, նոր արտադրատեսակներ յուրացվեցին Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանում և Կիրովականի քիմիական կոմբինատում։ Կիրովականում գործարկվեց ազոտի գործարանը, որը հետագայում միավորվեց քիմիական կոմբինատի հետ։ Հնգամյակի տարիներին հիմնականում շեշտը դրվեց արտադրանքի առավել արդյունավետ տեսակների՝ ացետիլենի, սինթետիկ կաուչուկի, քացախաթթվի, տաբեթը տեսակի խեժերի և լաքերի արտադրության վրա։ Երևանի լաքի և ներկի գործարանում արտադրանքի տեսակները հասցվեցին մինչև 40-ի։ «Պոլիվինիլացետատ» գործարանի արտադրանքի բազայի վրա էջմիածնում կազմակերպվեց պլաստմասսաների գործարանը՝ Հայաստանի պլաստմասսաների արտադրության առաջնեկը։ Այս ամենի շնորհիվ քիմիական արդյունաբերության արտադրանքն ավելացավ 3,7 անգամ[10]։

1950-ական թվականներին քիմիայի ու տեխնոլոգիայի արագ զարգացման հիման վրա քիմիական արդյունաբերության մեջ սկսեցին ներմուծվել նոր ուղղություններ, որոնց շնորհիվ կատարվեցին կառուցվածքային տեղաշարժեր։

Եռպատերազմյան առաջին հնգամյակի տարիներին զգալի հաջողությունների հասան Հայկական ՍՍՀ գունավոր մետալուրգիայի ճյուղերի աշխատանքները։ Հումքային հարուստ բազայի վրա կառուցվեցին Քաջարանի, Դաստակերտի, Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատները, Ղափանի և Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատներում շարքից դուրս եկան նոր արտադրամասեր։ 1940 թ. համեմատությամբ 1950 թ. պղնձաձուլարի հանույթը Ղափանի և Շամլուղի հանքերում ավելացավ ավելի քան 50 տոկոսով, իսկ սև և կարմիր պղնձինը՝ 45 տոկոսով։ 1950 թ. գործարկվեց Քանաքեռի ալյումինի գործարանի (Կանազ) առաջին հերթը։ Այս ամենի շնորհիվ գունավոր մետալուրգիայի արտադրանքը հրնդամյակում ավելացավ 51 տոկոսով։

10 «Հայաստանը 35 տարում», Երևան, 1955, էջ 71։

Ընդլայնվում ու զարգանում էր թեթև և սննդի արդյունաբերությունը։ Վերելք ապրեց հանրապետության տեքստիլ արդյունաբերությունը, որի համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ 1950 թ. կազմեց 226 տոկոս։ Շահագործման հանձնվեցին մահուդի գործարանը՝ Երևանում, տրիկոտաժի ֆաբրիկան՝ Կիրովականում, ընդլայնվեց Լենինականի մանվածքային ֆաբրիկան։ Ավելացավ կաթնամթերքի, մսի վերամշակման, գինիների ու պահածոների և սննդամթերքների բազմաթիվ այլ տեսակների արտադրությունը։ Ընդհանուր առմամբ սննդի արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ 1950 թ. ավելացավ 35 տոկոսով։

Չորրորդ հնգամյակի տարիներին հանրապետությունում բուռն թափով սկսեց զարգանալ մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերությունը։ Նախապատերազմյան ժամանակաշրջանում մեքենաշինությունը դեռևս չէր ձևավորվել որպես արդյունաբերության ինքնուրույն ճյուղ։ Նրան բաժին էր ընկնում ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի միայն 0,7 տոկոսը։ Հանրապետությունում մեքենաշինական և մետաղամշակման ձեռնարկությունների կառուցման լայն ծրագիր իրականացվեց եռապատերազմյան տարիներին։ Հատկապես զարգանում էր էլեկտրաէներգետիկ մեքենաշինությունը։ 1948 թ. շահագործման հանձնվեց արդյունաբերության այդ կարևոր ճյուղի խոշոր ձեռնարկություններից մեկը՝ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանը, որը հետագա տարիներին Միության մեջ հայտնի դարձավ դիենքրատորների, տրանսֆորմատորների և էլեկտրաէներգետիկ կարգավորման վահանների արտադրությամբ։ Այդ տարիներին հանրապետությունում կազմակերպվեց էլեկտրալուսավորման արմատուրայի, էլեկտրական ճշգրիտ չափիչ սարքերի, էլեկտրալամպերի, կաբելի, հիդրոտուրբինների, կոմպրեսորների, ավտոպահեստամասերի, ժամացույցների և մեքենաշինական արտադրանքի այլ տեսակների արտադրությունը։ Բավական է նշել, որ արտադրանքի այդ տեսակների թողարկման շնորհիվ հնգամյակի վերջում արդյունաբերության այդ ճյուղերի արտադրությունը կազմում էր 1940 թ. 557 տոկոսը[11]։ Հանրապետության մեքենաշինական ձեռնարկությունները հնգամյակի վերջին տարվա արտադրական պլանները կատարեցին 109,5 տոկոսով, որով համախառն արտադրանքի թողարկումը, 1948 թ. համեմատությամբ, 1950 թ. ավելացավ ավելի քան 3 անգամ[12]։

11 «Народное хозяйство Армянской ССР», стр. 25.

12 Նույն տեղում, էջ 24։

Սվարտվեց էլեկտրասարքավորումների, կոմպրեսորների, փոքր հիդրոտուրբինների, ավտոպահեստամասերի գործարանների շինարարությունը։ Հնգամյակի վերջում հանրապետության մեքենաշինության արտադրանքը 18 անգամ գերազանցեց 1945 թ. և 15 անգամ՝ 1940 թ. մակարդակը[13]։

Հայաստանի արդյունաբերության տարբեր ճյուղերի շարքում կարևոր տեղ է գրավում շինանյութերի արդյունաբերությունը։ Այն շատ ավելի բարձր տեմպերով զարգացավ եռապատերազմյան շրջանում։ 1950 թ. Հայաստանի շինանյութերի արդյունաբերության համախառն արտադրանքը 13 անգամ գերազանցեց 1940 թ. մակարդակը։ Կառուցվեցին երկաթբետոնի խոշոր գործարաններ, կրկնապատկվեց ցեմենտի արտադրությունը, լայն գործածություն ստացավ գրանիտի, բազալտի, մարմարի, հրակայուն նյութերի, ապակու և հախճապակու արտադրությունը։ Եռապատերազմյան առաջին հնգամյակի տարիներին հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի պետական պլանը կատարվեց 103 տոկոսով, որով 1940 թ. մակարդակը գերազանցվեց 2,6 անգամ[14]։

Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման և ազգային եկամտի աճի շնորհիվ բարձրացավ բնակչության նյութական բարեկեցությունը։ Հասարակական արտադրության զարգացումը, արտադրության նոր ճյուղերի, արդյունաբերական նոր կենտրոնների ստեղծումը, դրանց հետևանքով ժողովրդական տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը սոցիալիստական արտադրական հարաբերությունների պայմաններում հանգեցրին աշխատավորների կենսամակարդակի բարձրացմանը։ Հնգամյակի վերջում հանրապետության արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը անցավ 65 հազարից, որից 55 հազարը աշխատում էր խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում։

Չորրորդ հնգամյակի ժողովրդատնտեսական խնդիրների հաջող կատարումը հնարավորություն ստեղծեց ապահովելու էկոնոմիկայի զարգացման առավել արագ աճ, տնտեսության բոլոր ճյուղերի ինտենսիվացում։

Ելնելով ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքից, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարու-

---

13 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. VIII, Երևան, 1970, էջ 222։

14 «Հայաստանը 35 տարում», էջ 71։

թյունը, ինչպես նախորդ հնգամյակներում, այնպես էլ հինգերորդ հնգամյա պլանում (1951—1955 թթ.) միութենական հանրապետություններ-ի համար նախատեսում էին տնտեսական և մշակութային զարգացման առավել բարձր տեմպեր: Ելնելով լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներից, տեղական հումքային, վառելիքային և էներգետիկ հնարավորությունների հիման վրա երկրի տնտեսական շրջաններում և ազգային հանրապետություններում ստեղծվելիք արդյունաբերության նոր ճյուղեր, ընդլայնվեց մասսայական սպառման առարկաների արտադրությունը:

Հաշվի առնելով Հայկական ՍՍՀ-ի հումքային և էներգետիկ ռեսուրսները և բավարար աշխատուժի առկայությունը, ընդունվեցին Հանրապետության արդյունաբերության զարգացման առավել բարձր տեմպեր:

Եթե Սովետական Միության արդյունաբերության ընդհանուր արտադրանքը հնգամյակի ընթացքում աճելու էր 70, ապա Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը՝ մոտ 100 տոկոսով: Ժողովրդական տնտեսության աճող պահանջմունքները և բնակչության կենցաղային կարիքները էլեկտրաէներգիայով բավարարելու նպատակով նախատեսվում էր հնգամյակի ընթացքում 2 անգամ ավելացնել էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հինգերորդ հնգամյա պլանի կատարման արդյունքներն ամփոփեց Հայաստանի կոմկուսի XVIII համագումարը, որը տեղի ունեցավ 1956 թ. հունվարին: Համագումարը նշեց, որ արդյունաբերության զարգացման հնգամյա պլանը կատարվել է ժամկետից մեկ տարի շուտ: Արդյունաբերության զարգացման արագ տեմպերի պայմաններում հատկապես արագ զարգացան ծանր արդյունաբերությունը և նրա առաջատար ճյուղերից մեկը՝ մեքենաշինությունը, ինչպես նաև գունավոր մետաղների արտադրությունը, մետաղամշակությունը, քիմիական արդյունաբերությունը: 1955 թ. Հանրապետությունում գունավոր մետաղների համախառն արտադրանքը 1945 թ. համեմատությամբ ավելացավ 8,2, իսկ 1950 թ. համեմատությամբ՝ 3,3 անգամ: Մեքենաշինության և մետաղամշակության ճյուղի արտադրանքը համապատասխանաբար ավելացավ 11 և 2,6 անգամ: 1950 թ. համեմատությամբ գեներատորների արտադրությունն ավելացավ 255, տրանսֆորմատորներինը՝ 225, մետաղահատ հաստոցներինը՝ 307 տոկոսով, կոմպրեսորներինը՝ 4,2 անգամ: Մեծ զարգացում ապրեց նաև քիմիական արդյունաբերությունը, որի համախառն

արտադրանքը 1946 թ. համեմատությամբ 1955 թ. աճել 5,7, իսկ 1950 թ. համեմատությամբ՝ 2,5 անգամ[15]։

Հինգերորդ հնգամյակի տարիներին շահագործման հանձնվեցին 63 նոր ձեռնարկություններ, որոնց թվում Երևանի էլեկտրալամպերի, Թումանյանի հրակայուն աղյուսի, Արարատի ցեմենտ-շիֆերի գործարանները, Քաջարանի ու Դաստակերտի պղնձամոլիբդենային կոմբինատները, Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան։ Հանրապետության ծանր արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ 1955 թ. աճել 123 անգամ[16]։

Զարգացման բարձր մակարդակի հասավ էներգետիկ տնտեսությունը։ Եթե 1950 թ. հանրապետության էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմում էր 949,3 միլիոն կիլովատ-ժամ, ապա 1955 թ. այն հասավ 2 միլիարդ 214,7 միլիոն կիլովատ-ժամի։ Դա նշանակում է, որ 1955 թ. Հայաստանում 440 անգամ ավելի էլեկտրաէներգիա է արտադրվել, քան 1913 թ.։ Մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ Սովետական Հայաստանն առաջ էր անցել կապիտալիստական այնպիսի երկրներից, ինչպիսիք են Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան և այլն։ Թուրքիայի համեմատությամբ Սովետական Հայաստանում բնակչության մեկ շնչին 30 անգամ ավելի էլեկտրաէներգիա էր ընկնում, իսկ Իրանի համեմատությամբ՝ մոտ 100 անգամ[17]։

Ծանր արդյունաբերության և էներգետիկ տնտեսության զարգացումը պայմաններ ստեղծեց թեթև և սննդի արդյունաբերության զարգացման համար։ Այդ զարգացումը տեղի էր ունենում կապիտալ ներդրումների ինտենսիվ աճի, աշխատանքի արտադրողականության բարձրացման և դյուղատնտեսական առատ հումքի շնորհիվ։ Հինգերորդ հնգամյակի տարիներին կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին թեթև և սննդի արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ, այդ թվում՝ Երևանի մակարոնի, կոմբինացված կերերի, Լենինականի յուղի-կաթի գործարանները և լայն սպառման ապրանքների արտադրության մի շարք նոր ձեռնարկություններ։ 1950 թ. համեմատությամբ հանրապետության տեքստիլ արդյունաբերության համախառն արտադրանքը 1955 թ. ավելացավ 201, կարի արդյունաբերության արտադրանքը՝ 155 տոկոսով։

---

15 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. VIII, էջ 281։

16 «Народное хозяйство Армянской ССР», стр. 22.

17 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. VIII, էջ 282։

Հայաստանի կոմկուսի XVIII համագումարը, ամփոփելով հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հինգերորդ հնգամյակի արդյունքները և նշելով արդյունաբերական ձեռնարկությունները նոր տեխնիկայով հագեցնելու, արտադրական պրոցեսները մեքենայացնելու և ավտոմատացնելու գործում ձեռք բերված նվաճումները, կուսակցական, սովետական և տնտեսական մարմինների ուշադրությունը կենտրոնացրեց արդյունաբերության հետագա վերելքի, տեխնիկական առաջադիմության արագացման խնդիրների վրա։ Անհրաժեշտ համարվեց նոր տեխնիկայի, կոմպլեքսային մեքենայացման, արտադրության ավտոմատացման բազայի վրա ապահովել արտադրության տեխնիկական մակարդակի բարձրացումը, բարձր արտադրողական նորագույն հաստոցների, մեքենաների ու սարքերի արմատավորումը և արտադրության տեխնոլոգիայի մշտական կատարելագործումը։

Հայաստանի ժողովրդական տնտեսության հետագա զարգացման համար շրջադարձային նշանակություն ունեցան ՍՄԿԿ XX համագումարի ընդունած պատմական որոշումները։ Համագումարի ցուցումները նպաստավոր պայմաններ ստեղծեցին արդյունաբերության և շինարարության կոմպլեքսային զարգացման, էներգետիկ բազայի ամրապնդման, պլանավորման ու ղեկավարման ձևերն ու մեթոդներն ավելի կատարելագործելու ասպարեզում։

Այս խնդիրների կատարումը և հանրապետության հետագա ինդուստրիալ զարգացումը կախված էր ամենից առաջ արդյունաբերության էներգետիկ բազայի աճից։

Հաշվի առնելով ՀՍՍՀ էներգետիկ ռեսուրսների սահմանափակ լինելը և Սևանա լճի ջրերի խնայողաբար օգտագործման անհրաժեշտությունը, որոշ չափով սահմանափակվեց էներգատար արդյունաբերության հետագա զարգացումը։ Դրա փոխարեն սկսեցին ավելի արագ տեմպերով զարգանալ մեքենաշինությունը, սարքաշինությունը և արդյունաբերության ոչ էներգատար մի շարք այլ ճյուղեր։ Խնդիր դրվեց Որոտան և Դեբեդ գետերի վրա ստեղծել երկրորդ էներգետիկ բազան, ինչպես նաև գտնել էլեկտրաէներգիայի արտադրության այլ աղբյուրներ։

Այդ բոլորի շնորհիվ էլեկտրակայանների ընդհանուր կարողությունը ավելացավ 2,5 անգամ։ 1958 թ. Հայաստանի էլեկտրակայանների տարեկան արտադրանքը կազմեց 2 միլիարդ 543,8 միլիոն կիլովատժամ։ Նույն թվականին արտադրված էլեկտրաէներգիան մոտ 500 անգամ

գերազանցեց Հայաստանի և 1,3 անգամ՝ ցարական Ռուսաստանի 1913 թ. մակարդակը[18]։

Էլեկտրաէներգիայի արտադրության նման ածը հնարավորություն տվեց հաջողությամբ կատարելու վեցերորդ հնգամյակի առաջին երեք տարիների առաջադրանքները։ Այսպես, արդյունաբերության համախառն արտադրանքի թողարկման պետական պլանը կատարվեց 102,2 տոկոսով։ 1956—1958 թթ. շահագործման հանձնվեց 87 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն[19]։ 1958 թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքը 1913 թ. համեմատությամբ աճել էր ավելի քան 55, իսկ 1919 թ. համեմատությամբ՝ 202 անգամ[20]։

Առանձնապես մեծ թափով զարգացավ պղնձի, ալյումինի, մոլիբդենի և գունավոր այլ մետաղների արտադրությունը։ Երևանում, Կիրովականում և Ալավերդիում զարգացավ ժամանակակից տեխնիկայով զինված քիմիական արդյունաբերությունը։ Հատկապես լայն թափ ստացավ էլեկտրատեխնիկական, հաստոցաշինական և շինանյութերի արդյունաբերությունը։

Ծանր արդյունաբերության զարգացման հետ միասին ստեղծվեցին թեթև և սննդի արդյունաբերության բազմաթիվ նոր ճյուղեր, որոնք սկսեցին թողարկել ժողովրդական լայն սպառման ապրանքներ։ Ամբողջությամբ վերցրած Հայաստանի թեթև արդյունաբերության արտադրանքը 1940 թ. համեմատությամբ 1958 թ. աճեց ավելի քան 5 անգամ, կազմելով Հայաստանի ողջ արդյունաբերության համախառն արտադրանքի 18 տոկոսը[21]։

Այդ տարիներին վճռական քայլ կատարվեց տեխնիկական առաջադիմության ուղղությամբ։ Ընդլայնվեց արտադրական պրոցեսների ավտոմատացման և ծանր աշխատատար պրոցեսների մեքենայացման մակարդակը։ Մեծ աշխատանքներ կատարվեցին գործարանների կարողությունների ընդլայնման և դրանց տեխնիկական վերազինման ուղղությամբ։

1958 թ. հունվարին Հայաստանի կոմունիստական կուսակցության XIX համագումարը, հանրագումարի բերելով արդյունաբերական և շի-

---

18 Տե՛ս «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», Ереван, 1967, стр. 81.

19 Տե՛ս նույն տեղում, էջ 7։

20 «Советская Армения за 40 лет», Ереван, 1960, стр. 44.

21 «Հոկտեմբերը և Հայաստանի տնտեսական զարգացումը», Երևան, 1967, էջ 44—45։

նարարական ձեռնարկությունների գործունեության արդյունքները, նշից, որ ՍՄԿԿ XX համագումարի որոշումների կենսագործման բնագավառում նշանակալից հաջողություններ են ձեռք բերվել։ Միայն երկու տարում կառուցվել և շահագործման էին հանձնվել 30 արդյունաբերական ձեռնարկություններ։ Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացումն այդ տարիներին ընթացել էր հատկապես ճշգրիտ մեքենաշինության ստեղծման և ընդլայնման ուղղությամբ։ Մեքենաշինության արտադրանքը 1955 թ. համեմատությամբ 1957 թ. աճել էր ավելի քան 40 տոկոսով, իսկ գործիքաշինությանը՝ 5 անգամ։

Կոմունիստական շինարարության հետագա ծավալման, երկրի արտադրողական ուժերի համակողմանի զարգացման, ծանր արդյունաբերության հիմքի վրա արտադրության բոլոր ճյուղերի վերելքն ապահովելու գործում կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿԿ XXI (1959 թ. հունվար) համագումարի ընդունած յոթնամյա (1959—1965 թթ.) պլանի իրականացումը։

Հայաստանի աշխատավորները յոթնամյակի տարիներին նորանոր հաջողություններ ձեռք բերեցին ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։ Արդյունաբերական արտադրանքն ավելացավ 2,2 անգամ։ Կառուցվեցին բազմաթիվ արդյունաբերական նոր ձեռնարկություններ, խոշոր արտադրամասեր, յուրացվեցին արտադրանքի ավելի քան 600 նոր տեսակներ։ Արտադրատեսակների ընդլայնմանը զուգընթաց աճեց Հայաստանում թողարկվող ապրանքների պահանջարկը ինչպես ՍՍՀՄ-ում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Յոթնամյակի վերջում Հայաստանի 55 արդյունաբերական ձեռնարկություններ աշխարհի 69 երկրներ էին արտահանում 130 անուն արտադրանք[22], այդ թվում՝ ժամանակակից հաստոցներ, մեքենաներ, սարքեր, էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի բազմաթիվ տեսակներ։

Յոթնամյակի տարիներին հանրապետությունում ստեղծվեցին էլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, սարքաշինության և գործիքաշինության, հաշվիչ մեքենաների արտադրության և այլ առաջատար ճյուղեր։ Դրա շնորհիվ էապես փոխվեց հանրապետության արդյունաբերության ճյուղային կառուցվածքը։

Հայաստանի ինդուստրիալ զարգացումը միաժամանակ նշանավորվեց բանվոր դասակարգի բուռն աճով և բնակչության ընդհանուր թվի մեջ նրա տեսակարար կշռի բարձրացմամբ։ Այսպես, 1913 թ. Հայաստա-

22 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. VIII, էջ 264։

նի բանվորների ընդհանուր թիվը կազմում էր 5 հազար, իսկ բնակչության՝ 1 միլիոն մարդ։ Յոթնամյակի վերջում բնակչության թիվը կազմել 2 միլիոն 198 հազար մարդ, իսկ միայն արդյունաբերական բանվորների թիվը հասավ 155 հազարի[23]։ Ընդհանրապես 1965 թ. Հայաստանում բանվորների ընդհանուր թիվը հասավ 350 հազարի, իսկ ինժեներատեխնիկական աշխատողներինը՝ 40 հազարի։

Յոթնամյակի տարիներին, ժողովրդական տնտեսության զարգացմանը զուգընթաց, նոր վերելք ապրեց Սովետական Հայաստանի էներգետիկ տնտեսությունը։ Հայաստանի հիդրոշինարարները 1962 թ. ավարտեցին Սևան—Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայանների կառուցումը։ Կասկադի ավարտումով հանրապետության էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը հասավ 2,5 միլիարդ կիլովատ ժամի։ Կասկադի արտադրած էլեկտրաէներգիայի բազայի վրա ստեղծվեցին արդյունաբերական մի շարք նոր ճյուղեր, որոնք արմատապես փոխեցին հանրապետության ինդուստրիալ դեմքը։ Մետաղամշակման արդյունաբերության ձեռնարկությունները վերակառուցելու և ընդլայնելու հետ միասին ստեղծվեցին մասնագիտացված մեքենաշինության նոր ճյուղեր։ Ըստ որում, զարգացման տեմպերով մեքենաշինությունը գերազանցեց ծանր արդյունաբերության մյուս բոլոր ճյուղերին։ Յոթնամյակի ընթացքում էլեկտրաէներգիայի սպառումը աճեց ավելի քան 80 տոկոսով։ Արմատական փոփոխություններ կատարվեցին էլեկտրաէներգիայի ստացման աղբյուրների բնագավառում։ Եթե առաջ էլեկտրաէներգիան ստացվում էր միայն հիդրոէլեկտրակայաններից, ապա յոթնամյակի տարիներին ջերմային ծագում ունեցող էլեկտրաէներգիան կազմեց Հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին։ Կառուցվել և աշխատում էին Երևանի, Կիրովականի և Հրազդանի ջերմաէլեկտրակենտրոնները։ Էլեկտրակայանների շինարարության հետ միաժամանակ յոթնամյակի ընթացքում խոշոր աշխատանքներ կատարվեցին էլեկտրահաղորդման գծերի կառուցման ուղղությամբ։ Այդ գծերի կարողությունը աճեց 2,5 անգամ, Հանրապետության բոլոր շրջանները ծածկվեցին բարձրավոլտ էլեկտրահաղորդման և ենթակայանների ցանցով։

Հանրապետության ժողովրդական տնտեսությունը էլեկտրաէներգիայով ապահովելու և միաժամանակ Սևանա լճի մակարդակի հետագա իջեցումը կանխելու նպատակով իրագործվեցին մի շարք միջոցառումներ։ Դրանց թվին են պատկանում էներգետիկ նպատակներով բնական գաղ-

23 «Հոկտեմբերը և Հայաստանի տնտեսական զարգացումը», էջ 15։

լային օգտագործումը, ջերմաէլեկտրակայանների հզորությունների ավելացումը, Անդրկովկասյան միասնական էներգահամակարգի միջոցով լրացուցիչ էներգիայի ստացումը, նոր ջրամբարների ու ջրհան կայանների կառուցումը։

ՍՄԿԿ XXII համագումարում ընդունված կուսակցության նոր Ծրագիրը (1961) խնդիր դրեց այսուհետև ևս վարել սովետական հանրապետությունների տնտեսական համակողմանի զարգացման գիծ, ապահովել արդյունաբերության ռացիոնալ տեղաբաշխումը և բնական հարստությունների պլանաչափ օգտագործումը, կատարելագործել հանրապետությունների միջև աշխատանքի սոցիալիստական բաժանումը, եղբայրական համագործակցությունը և փոխադարձ օգնությունը։

Կուսակցության Ծրագրի այդ պահանջներին համապատասխան ինչպես յոթնամյակի, այնպես էլ հետագա տարիներին Սովետական Հայաստանում լուրջ ձեռնարկումներ կատարվեցին արտադրողական ուժերի հետագա տեղաբաշխման, մասնագիտացման և կոոպերացման ուղղությամբ։

Մասնագիտացված առաջին միավորումները ստեղծվեցին նախ ծանր, իսկ հետագայում՝ թեթև և սննդի արդյունաբերության մեջ։

Արտադրական միավորումների ստեղծումը ձեռնարկություններին հնարավորություն տվեց է՛լ ավելի ծավալուն աշխատանքներ կատարել տեխնիկական առաջընթացի, տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացման և ծանր աշխատատար պրոցեսների մեքենայացման ուղղությամբ։ Ստեղծվեցին կոմպլեքսային մեքենայացված և հոսքային մեքենայացված տեղամասեր, կազմակերպվեցին հոսքային մեքենայացված գծեր ու կոնվեյերներ։ Արտադրության մեջ արմատավորվեցին մեծ քանակությամբ բարձր արտադրողական մեքենաներ և սարքավորումներ։

Հանրապետությունում ստեղծված արտադրական ավելի քան 20 միավորումների աշխատանքի փորձը վկայում էր, որ դրանց ձեռնարկություններում զգալիորեն բարձրացել է արտադրության արդյունավետությունը, տեխնիկական առաջադիմությունը, որը բարերար ազդեցություն է ունեցել արտադրանքի թողարկման և որակի բարելավման վրա։ Այսպես, օրինակ, 1965 թ. հանրապետության ժողտնտխորհը, քննության առնելով մի շարք արտադրական միավորումների ձեռնարկություններում արտադրանքի թողարկման և որակական ցուցանիշների բարելավման միջոցառումների կատարման ընթացքը, դրամական պարգևների արժանացրեց Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, լուսատեխնիկական, էլեկտրաշարժիչների, էլեկտրալամպերի, էլեկտրա-

ապարատների, կաբելի, փորձնական էլեկտրատեխնիկական, Լենինականի կենցաղային էլեկտրասարքավորումների, Կիրովականի «Ավտոմատիկա», Էջմիածնի «Պլաստմասսա» գործարանների կոլեկտիվներին, ինչպես նաև թեթև ու սննդի արդյունաբերության մի շարք ձեռնարկություններին։

Արդյունաբերության առանձին ճյուղերի մասնագիտացման և կոոպերացման ուղղությամբ յոթնամյակի տարիներին լուրջ քայլեր իրականացվեցին նաև անդրկովկասյան հանրապետությունների միջև։

Հաշվի առնելով մեր հանրապետությունում գոնավոր ու հազվագյուտ մետաղների և զգալի քանակությամբ որակյալ աշխատանքային ռեսուրսների առկայությունը, անհրաժեշտ համարվեց Հայաստանում զարգացնել էլեկտրատեխնիկական մեքենաշինությունը, հաստոցաշինությունը, ճշգրիտ մեքենաների ու ավտոմատացման միջոցների արտադրությունը։

Անդրկովկասյան միացյալ էներգասիստեմը, Ղարադաղ—Թբիլիսի—Երևան գազամուղը, Բաքու—Բաթում նավթամուղը, մեքենաշինական և մետալուրգիական ձեռնարկությունների մասնագիտացումը նպաստեցին Անդրկովկասի բնական հարստությունների ավելի նպատակահարմար օգտագործմանը, ինչպես նաև կարևոր նյութերի և սարքավորումների միջհանրապետական փոխանակությունների ծավալի մեծացմանը։

Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացման գործում վճռական դեր խաղաց գիտության ու տեխնիկայի նվաճումների ներդրումը արտադրության մեջ։ Գիտության նվաճումների արմատավորումը արտադրության մեջ որակական նոր փոփոխություններ առաջացրեց արդյունաբերության բոլոր ճյուղերում։ Գիտատեխնիկական առաջընթացի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ ղեկավարման կատարելագործված ձևերի արմատավորումը, ձեռնարկություններում կոնստրուկտորական բյուրոների ու փորձնական հզոր բազաների ստեղծումը, արտադրության մեջ աշխատող գիտական կադրերի ավելացումը։ Դրա շնորհիվ ուժեղացավ գիտության և արտադրության կապը, բարձրացավ գիտության դերը որպես անմիջական արտադրողական ուժի։ Գիտատեխնիկական նվաճումների ներդրման շնորհիվ բարձրացավ արդյունաբերության հետագա մասնագիտացման ու կոոպերացման մակարդակը, արդյունաբերության շատ ճյուղերում ստեղծվեցին կոմպլեքսային մեքենայացված ու ավտոմատացված տեղամասեր, կոնվեյերային ու հոսքային գծեր։ Միայն յոթնամյակի տարիներին իրագործվեց սարքավորումների կատարելագործման, ավտոմատ և կիսաավտոմատ մեքենա-

նների ու հաստոցների տեղադրման ավելի քան 600 միջոցառում։ Արտադրության մեջ ներդրվեցին հազարավոր նորարարական և դյուտարարական առաջարկություններ, որոնք տվեցին 148,8 միլիոն ռուբլու տարեկան պայմանական տնտեսական օգուտ[24]։ Արդյունաբերության զարգացմանը մեծ չափով նպաստեց հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում լայնորեն ծավալված կոմունիստական աշխատանքի շարժումը։

Ութերորդ հնգամյակը նշանավորվեց մեր երկրում տեղի ունեցած կարևոր իրադարձություններով, կոմունիստական շինարարության վիթխարի վերելքով։ Կենսագործելով ՍՄԿԿ XXIII համագումարի առաջադրած խնդիրները՝ սովետական ժողովուրդը ստեղծագործական աշխատանքով ապահովեց երկրի արտադրողական ուժերի հետագա զարգացումը, մի նոր առաջընթաց քայլ կատարելով կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ճանապարհին։ Հնգամյա պլանի կատարումը ժողովրդական տնտեսությանը հասցրեց ավելի բարձր աստիճանի։ Արագացան տեխնիկական առաջադիմության, արտադրության և աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը, մեծացավ հանրային արտադրության արդյունավետությունը, բարելավվեց ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքը, պայմաններ ստեղծվեցին էկոնոմիկայի հետագա վերելքի համար։

Կուսակցության գիտականորեն հիմնավորված տնտեսական քաղաքականությունը, արդյունաբերության ղեկավարման ճյուղային սկզբունքին անցնելը և տնտեսական նոր ռեֆորմը մեծապես նպաստեցին արտադրողական ֆոնդերի, աշխատուժի, նյութական ու ֆինանսական ռեսուրսների օգտագործմանն ու բարելավմանը, աշխատանքի առավել արդյունավետ կազմակերպմանը, արտադրության շահավետության բարձրացմանը։

Իրագործելով ՍՄԿԿ XXIII համագումարի պատմական որոշումները, հանրապետության աշխատավորները ժամկետից շուտ և բարձր ցուցանիշներով կատարեցին ութերորդ հնգամյակի առաջադրանքները։ Տնտեսության և մշակույթի ասպարեզում ձեռք բերած աչքի ընկնող նվաճումների համար մեր հանրապետությունը երկրորդ անգամ արժանացավ Լենինի շքանշանի, իսկ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50 ամյակի առթիվ պարգևատրվեց Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով։

---

24 «Народное хозяйство Армянской ССР в 1965 г.», Ереван, 1966, стр. 25.

Արդյունաբերական արտադրանքի ծավալը ութերորդ հնգամյակում աճեցավ մոտավորապես 1,8 անգամ։ Եթե 1961—1965 թթ. արտադրության աճի տարեկան միջին տեմպերը կազմում էին 9,4 տոկոս, ապա 1966—1970 թթ.՝ 12,5 տոկոս։ Հնգամյակի ընթացքում շահագործման հանձնվեցին 110 արդյունաբերական ձեռնարկություններ և խոշոր արտադրամասեր։

Հնգամյակում կատարվեց 3 միլիարդ 350 միլիոն ռուբլու կապիտալ շինարարություն կամ աճը կազմեց 62 տոկոս։ Կապիտալ ներդրումների ծավալը արդյունաբերության մեջ հասավ 1.234 միլիոն ռուբլու, նախորդ հնգամյակի 777 միլիոն ռուբլու դիմաց[25]։

Էներգետիկ նոր կարողությունների գործարկումը հնարավորություն տվեց ավելի շատ էլեկտրաէներգիա տալ ժողովրդական տնտեսությանը, ապահովել նրա անխափան մատակարարումը։ Էլեկտրաէներգիայի սպառումը հանրապետությունում ութերորդ հնգամյակում նախորդ հինգ տարվա համեմատությամբ ավելացավ 1,57 անգամ։ 1970 թ. Հանրապետության էլեկտրակայանների կարողությունը, 1913 թ. համեմատությամբ, աճեց 480 անգամ, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 1000-ից ավելի անգամ[26]։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման իններորդ հնգամյա պլանի (1971—1975) առաջադրանքների իրագործումը հանդիսացավ կոմունիզմի ուղիով սովետական հասարակության հետագա առաջընթացի, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման կարևոր փուլը։ Հնգամյակի տարիներին պահպանվեցին ՍՍՀՄ ծանր ինդուստրիայի զարգացման արագ տեմպերը։ Հետագա զարգացում ապրեցին գյուղատնտեսությունը և ժողովրդական տնտեսության մյուս բոլոր ճյուղերը, մշակույթն ու գիտությունը։ Զգալի չափով բարձրացավ ժողովրդի կենսամակարդակը։

Մեր հայրենիքի ժողովուրդների եղբայրական ընտանիքում, իններորդ հնգամյակի տարիներին, սոցիալ-տնտեսական հսկայական նվաճումների հասավ նաև Սովետական Հայաստանը։

Հայաստանի կոմկուսի XXVI համագումարը (1976 թ. հունվար) ամփոփելով իններորդ հնգամյակի արդյունքները նշեց, որ հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները, կենսագործելով կուսակցության XXIV համագումարի, ՍՄԿԿ կենտկոմի և ՀԿԿ կենտկոմի պլենումների որոշումները, լայնորեն ծավալելով սոցիալիս-

25 «ՀԿԿ կենտկոմի զեկուցումը ՀԿԿ XXV համագումարին», Երևան, 1971, էջ 43։

26 «Սովետական Հայաստան», 23 դեկտեմբերի 1970 թ.։

տական մրցությունը, ապահովեցին իններորդ հնգամյակի բոլոր տարիների պլանների կատարումը։ Կառուցվեցին 45 արդյունաբերական նոր ձեռնարկություններ և տասնյակ խոշոր արտադրամասեր ու աշխատամասեր, գործարկվեցին Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի էներգետիկ կարողությունները, շարք մտան զուված երկաթի արտադրության փորձնական-արդյունաբերական գործարանը Երևանում, Իջևանի «Բետոնիտ» կոմբինատը, Չարենցավանի լիզինի արտադրության գործարանը, Աբովյանի բիոքիմիական պատրաստուկների գործարանը, Շինուհայրի ռետինե կոշկեղենի գործարանը, Կիրովականի և Հոկտեմբերյանի կահույքի ֆաբրիկանները, կաշվի-գալանտերեայի ֆաբրիկան և մի շարք այլ արդյունաբերական ձեռնարկություններ։ Իրագործվեց մի շարք գործարանների ու ֆաբրիկանների վերակառուցումը, ընդլայնումն ու տեխնիկական վերազինումը։

Հնգամյակի տարիներին արդյունաբերության մեջ հիմնական արտադրական ֆոնդերն աճեցին 1,6 անգամ։ Աճեց արդյունաբերության մեջ զբաղված բանվորների, ինժեներատեխնիկական աշխատողների և ծառայողների թիվը։ 1975 թ. տվյալներով արդյունաբերության մեջ զբաղված էին մոտ 260 հազար բանվոր և ավելի քան 36 հազար ինժեներ ու տեխնիկ։ Ամբողջությամբ վերցրած, հնգամյակի ընթացքում արդյունաբերական արտադրության ծավալն ավելացավ 45 տոկոսով, իսկ աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 27 տոկոսով[27]։ Հնգամյակի ընթացքում գործարկվեցին 500-ից ավելի մեքենայացված հոսքային և ավտոմատ գծեր։ Ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեցին նոր տեխնիկայի ավելի քան 2.400 կարևորագույն միջոցառումներ, որոնց շնորհիվ բարձրացավ մեքենայացված աշխատանքի մակարդակը։

Չգալի աշխատանք կատարվեց թողարկվող արդյունաբերական արտադրանքը պետական որականիշի համար ատեստավորելու ուղղությամբ։ 1975 թ. տվյալներով հանրապետության արդյունաբերությունը թողարկել է պետական որականիշ ունեցող մոտ 500 արտադրատեսակ, յուրացվել են արդյունաբերական արտադրանքի ավելի քան 300 նոր տեսակներ[28]։

Կուսակցությունը և կառավարությունը, ինչպես միշտ, բարձր գնահատեցին հանրապետության բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյու-

---

27 «Հայաստանի կոմկուսի կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVI համագումարին», Երևան, 1976, էջ 13։

28 Նույն տեղում, էջ 15։

ղացիության ու մտավորականության աշխատանքը։ Ձեռք բերած մեծ արդյունքների և հնգամյակի առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար 6 մարդու շնորհվեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում, 294 բանվորներ, կոլտնտեսականներ, գիտության ու տեխնիկայի գործիչներ, ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչներ, ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի աշխատողներ պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով[29]։ Սովետական Հայաստանի դրոշի վրա Լենինի երկու շքանշանների և Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանի կողքին շողշողում է նաև ժողովուրդների բարեկամության շքանշանը։

Իններորդ հնգամյակում Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման ասպարեզում ձեռք բերած հաջողությունների հետ միասին նկատվել են նաև թերություններ և բացթողումներ։ Այդ հարցերին անդրադարձավ ՀԿԿ Կենտկոմի 1975 թ. հուլիսյան պլենումը։

Պլենումը նշեց, որ Հանրապետության արդյունաբերությունը զգալի չափով զարգացել է նյութատար և էներգատար ուղղությունների հաշվին, առանց նկատի ունենալու Հանրապետության առանձնահատկությունները, տակա և պոտենցիալ արտադրողական ուժերը, հումքային և նյութական ռեսուրսները։ Սակա են արդյունաբերության կառուցվածքի անհամամասնություններ, ուղղությունների չարդարացված բազմատեսակություն։

Այս և մի շարք այլ թերությունների և վրիպումների վերացումը պահանջից մշակել և իրականացնել կոմպլեքսային միջոցառումների մի ամբողջ համակարգ։

Հաշվի առնելով Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարները, ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1975 թ. ապրիլին որոշում ընդունեցին «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին»։

Այդ որոշումը «որակապես նոր փուլ է նշանավորում Հայաստանի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար և սահմանում է դրանց հետագա զարգացման սկզբունքային ուղիները, հանրապետության արտադրողական ուժերի տակա և պոտենցիալ հնարավորություն-

29 Նույն տեղում, էջ 10։

ների խորապես գիտական ու կոմպլեքսային հաշվառման հիման վրա»[30]։ Որոշման համաձայն Հանրապետության հետագա զարգացումը իրականացվելու է նրա կառուցվածքի արմատական կատարելագործման հիման վրա՝ առավել արագ զարգացնելով մեքենաշինության ոչ նյութատար արտադրության բարձր կուլտուրա և մակարդակ ունեցող աշխատատար ճյուղերը և արդյունաբերության ուրիշ ճյուղեր։ Նախատեսվում է 1976—1980 թթ. և հետագա տարիներին ավելի արագ զարգացնել էլեկտրոնային, ռադիոտեխնիկական, սարքաշինական, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, կապի միջոցների արտադրությունը և ժողովրդական տնտեսության տեխնիկական առաջադիմությունը որոշող արդյունաբերական մյուս ճյուղերը։

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի որոշումը հիրավի պատմական փաստաթուղթ է, ակնառու քաղաքական իրադարձություն Հանրապետության աշխատավորների կյանքում։ Դա Հայկական ՍՍՀ զարգացման նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության մեծ ուշադրության ևս մի վառ դրսևորումն է, լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի, սովետական ժողովուրդների բարեկամության կենսահաստատ ուժի փայլուն օրինակ։

ՍՄԿԿ XXV համագումարը (1976 թ. փետրվար-մարտ) ամփոփելով իններորդ հնգամյակում սովետական ժողովրդի ձեռք բերած պատմական հաղթանակները, նշեց նոր՝ տասներորդ հնգամյակում ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները։ Համագումարը հնգամյակի գլխավոր խնդիրը համարեց հետևողականորեն բարձրացնել ժողովրդի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակը՝ հանրային արտադրության դինամիկ ու համամասնական զարգացման, նրա արդյունավետության բարձրացման, գիտատեխնիկական առաջադիմության արագացման, աշխատանքի արտադրողականության աճի, ժողովրդական տնտեսության բոլոր օղակներում աշխատանքի որակի ըստ ամենայնի բարձրացման հիման վրա։

Տասներորդ հնգամյակի նախագծումներով Հայաստանում արդյունաբերական արտադրանքի ծավալը մեծանալու է 43—47 տոկոսով, շարունակվելու է արդյունաբերության ճյուղային կառուցվածքի կատարելագործումը՝ բարձրացնելով աշխատատար արդյունաբերության բաժինը։ Նախատեսվում է զարգացնել մեքենաշինության ոչ մետաղատար ճյուղերը՝ էլեկտրոնային, ռադիոտեխնիկական, էլեկտրատեխնիկական, հաս-

30 «Սովետական Հայաստան», 20 ապրիլի 1975 թ.։

տոցագործիքաշինական արդյունաբերությունը և սարքաշինությունը։ Ապահովվելու է էներգետիկայի, գունավոր մետալուրգիայի, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերության հետագա աճը։

Սովետական Հայաստանի աշխատավորների ձեռք բերած հարուստ փորձը, առկա կարողությունների լրիվ ու ռացիոնալ օգտագործումը, ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների արմատավորումն ու տնտեսական խթանման առաջադիմական մեթոդների կիրառումը լիովին կապահովեն հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման տասներորդ հնգամյակի խնդիրների կատարումը։

Վ. Ն. ՂԱԶԱԽԵՅԱՆ, Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ

Նախասովետական Հայաստանը ցարական Ռուսաստանի հետամնաց ծայրամասերից մեկն էր, որի գյուղատնտեսությանը բնորոշ էին խիստ մանրատվածությունը և տեխնիկական հետամնացությունը։ Գյուղացիությունը կազմում էր բնակչության ճնշող մեծամասնությունը։ Հայաստանի գյուղատնտեսությունը էլ ավելի հետադիմեց առաջին համաշխարհային պատերազմի և հատկապես դաշնակցականների արյունոտ սիրապետության տարիներին։ Տնտեսական քայքայման խորացմանը և ժողովրդի խոպան ոչնչացման ահեղ վտանգին վերջ դրեց միայն սովետական իշխանությունը։ Մեծ Հոկտեմբերի հաղթանակը բացեց հայ ժողովրդի ազգային վերածնության դարաշրջանը։ Սովետական երկրի բոլոր ժողովուրդների հետ միասին, կազմելով մի եղբայրական ընտանիք, հայ ժողովուրդը նվիրվեց նոր կյանքի կառուցման գործին։

Հողային ռեֆորմի և նոր տնտեսական քաղաքականության շնորհիվ 1920-ական թվականներին զգալի տեղաշարժեր կատարվեցին հայ գյուղի սոցիալ-տնտեսական հարաբերություններում։ Լուծվեց հողային հարցը։ Վերացվեց կալվածատիրական հողատիրությունը և հողը դարձավ համաժողովրդական սեփականություն։ Հողի ազգայնացման շնորհիվ, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, ամենամեծ հնարավորություններն ստեղծվեցին հողագործության մեջ սոցիալիզմին անցնելու համար[1]։

1920-ական թվականների ագրարային վերափոխումներն ունեին դեմոկրատական բնույթ և օգնում էին բարելավելու գյուղացիության տնտեսական ու սոցիալական դրությունը։ Միաժամանակ, այդ վերափոխումները նախապատրաստում էին սոցիալիստական հողագործությանն

1 *Տե՛ս* Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 28, էջ 401։*

անցնելը։ Գյուղատնտեսության կոլեկտիվացման նախապատրաստումն ավելի արագացավ 1920-ական թվականների վերջերին, երբ գյուղատնտեսության վերականգնումն ավարտվելուց հետո երևան եկան նրա զարգացման սահմանափակ հնարավորությունները, երբ գյուղում սրվեց դասակարգային պայքարը և ուժեղացավ կուլակային ճնշումից աշխատավոր գյուղացիներին պաշտպանելու անհրաժեշտությունը։

Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում շարունակվում էր գյուղի շերտավորումը, որը սկզբունքորեն տարբերվում էր կապիտալիստական գյուղի շերտավորումից։ Գյուղը միջականում էր, կրճատվում էր չքավորների թիվը։ Գյուղի կենտրոնական դեմք միջակը դարձել էր տնտեսական և քաղաքական կարևոր ուժ։ Սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր օրինաչափությունների հետ մեկտեղ մեր հանրապետության գյուղն ուներ որոշ առանձնահատուկ կողմեր։ Այն դանվում էր տնտեսապես և տեխնիկապես ավելի հետամնաց վիճակում։ Բավական ցածր էր գյուղացիության (հատկապես կանանց) կուլտուրական մակարդակը։ Իրեն զգացնել էր տալիս սակավահողությունը, որի պատճառով մինչև կոլեկտիվացումը հնարավոր չեղավ իսպառ վերացնել հողազրկությունը։ Գյուղական բնակչության մեջ մեծ թիվ էին կազմում արևմտահայ գաղթականները։ Այս ամենը լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։

Գյուղի սոցիալիստական շինարարության ուղին անցնում էր գյուղատնտեսական կոոպերացիայով։ Լենինյան կոոպերատիվ պլանի շնորհիվ աշխատավոր գյուղացիներն աստիճանաբար ընտելանում և ներգրավվում էին սոցիալիստական շինարարության մեջ։ 1920-ական թվականների վերջին Հայաստանում գյուղացիական տնտեսությունների կեսն ընդգրկված էր գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերություններում, իսկ սպառողական կոոպերացիայում՝ մեծ մասը։ Աստիճանաբար լայն տարածում էին ստանում արտադրական կոոպերատիվ ընկերությունները, հատկապես արտելները, որոնք դարձան կոլտնտեսությունների հիմնական ձևը։ Կուսակցության XV համագումարից (1927) հետո, որը որոշում ընդունեց կոլեկտիվացման կուրս վերցնելու մասին, արագացավ կոլեկտիվացման նախապատրաստման տեմպը։

Գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման և սոցիալիստական վերակառուցման նախադրյալներ ստեղծելու գործում մեծ է տեխնիկայի դերը։ Տրակտորները և մյուս բարդ մեքենաները, որոնց անհատական օգտագործումը ձեռնտու չէր, կենտրոնացվում էին վարձակալական կետե-

յում, կոոպերատիվ ընկերություններում, իսկ այնուհետև՝ մեքենատրակտորային կայաններում։ Առաջին կոլտնտեսությունների և սովխոզների հետ միասին վերջիններս մեծ դեր խաղացին աշխատավոր գյուղացիների հոգեբանությունը հօդուտ կոլեկտիվ աշխատանքի վերափոխելու գործում։ 1929—1930 թթ. հանդիսացան սովետական գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման նոր ժամանակաշրջանի սկիզբը։ Անհատական սեփականությունն աստիճանաբար լայն թափով փոխարինելու եկան կոլեկտիվ տնտեսությունները։

Հայաստանում համեմատաբար դանդաղ էին հասունանում գյուղատնտեսության կոլեկտիվացման պայմանները։ Դանդաղ տեմպերով ընթացավ նաև բուն կոլեկտիվացումը։ Այսպես, եթե 1929—1932 թթ. Սովետական Միության շատ շրջաններում (հատկապես հացահատիկային) համատարած կոլեկտիվացումը հիմնականում հաղթանակեց և 1932 թ. կոլտնտեսությունների մեջ էին ընդգրկված բոլոր գյուղացիական սեփականությունների 61,5 տոկոսը, իսկ ցանքատարածությունների դծով կոլեկտիվացումը կազմում էր 77,7 տոկոս[2], ապա Հայաստանում համապատասխան ցուցանիշները բավական ցածր էին՝ 37,9 և 39,2 տոկոս[3]։ Այդ տարիներին համատարած կոլեկտիվացում իրականացրին միայն Հանրապետության Ղուրդուղուլու (Հոկտեմբերյան) շրջանը և մի շարք այլ գյուղեր։ Գյուղի սոցիալիստական վերակառուցումը բարձր տեմպեր ընդունեց հատկապես 1930-ական թվականների կեսերին, իսկ երկրորդ հնգամյակի վերջում այն ընդհուպ մոտեցավ միութենական մակարդակին։ 1937 թ. կոլեկտիվացել էին Հայաստանի գյուղացիական տնտեսությունների 88,7 տոկոսը, իսկ կոլտնտեսությունները մշակում էին բոլոր ցանքատարածությունների 92,6 տոկոսը[4]։ 1074 կոլեկտիվ տնտեսություններում ընդգրկված էին 165,4 հազար գյուղացիական տնտեսություններ[5]։ 1940 թ. կոլեկտիվացած տնտեսությունների թիվը հասավ 174 հազարի[6], որը նշանակում էր գյուղի սոցիալիստական վերակառուցման լրիվ ավարտում։

Կոլեկտիվացման քանակական ցուցանիշների աճը ուղեկցվում էր կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպական ամրապնդումով։

---

2 Տե՛ս «Достижения Советской власти за 40 лет в цифрах», М., 1957, стр. 25.

3 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР», Ереван, 1961, стр. 7.

4 Տե՛ս նույն տեղում։

5 Տե՛ս նույն տեղում, էջ 8։

6 Տե՛ս նույն տեղում։

Այդ ուղղությամբ 1933—1934 թթ. մեծ աշխատանք կատարեցին ՄՏԿ-ների քաղբաժինները։ Կոմունիստական կուսակցությունը լուծեց արտադրական-կազմակերպական նշանակություն ունեցող այնպիսի հարց, ինչպիսին է աշխատանքի բրիգադային և օղակային սիստեմը։

1930-ական թվականների սկզբներին իրականացվեց մեր երկրի ամենաբազմամարդ և վերջին շահագործող դասակարգի՝ կուլակության վերացումը։ Երկրորդ հնգամյակի տարիներին վերացվեցին նրա և մյուս շահագործող դասակարգերի մնացորդները։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումն ընթանում էր տեխնիկական վերակառուցման հետ միաժամանակ։ Սոցիալիստական ինդուստրացումը և կոլտնտեսությունների կազմակերպումը նյութական և սոցիալական պայմաններ էին ստեղծում գյուղատնտեսությունը նոր տեխնիկական բազայի վրա դնելու համար։ 1930 թ. Հայաստանում կազմակերպվեց առաջին մեքենատրակտորային կայանը։ Դրանց թիվը երկրորդ հնգամյակի վերջում հասավ 24-ի։ Այդ կայանները սպասարկում էին հանրապետության կոլտնտեսությունների մեծ մասին։ Մեքենայացվեց գյուղատնտեսական ծանր աշխատանքների զգալի մասը, որն ունեցավ սոցիալ-տնտեսական մեծ նշանակություն։

Երկրորդ հնգամյակի վերջին՝ 1937 թ., մեծ Հոկտեմբերի 20-րդ տարեդարձը սովետական ժողովուրդը նշեց սոցիալիզմի վճռական հաղթանակների պայմաններում։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ իրականացվեց անցումը կապիտալիզմից սոցիալիզմին։ Հաղթանակեց Լենինյան կոոպերատիվ պլանը։ «Սովետական գյուղի անցումը խոշոր սոցիալիստական տնտեսության՝ մեծ հեղափոխություն էր տնտեսական հարաբերությունների մեջ, գյուղացիության կյանքի ամբողջ կացութաձևի մեջ։ Կոլեկտիվացումը գյուղը ընդմիշտ փրկեց կուլակային տարրայնումից, դասակարգային շերտավորումից, քայքայումից և աղքատացումից։ Լենինյան կոոպերատիվ պլանի հիման վրա գյուղացիական դարավոր հարցը գտավ իր իսկական լուծումը»[7]։

* * *

Երրորդ հնգամյակով մեր երկրի համար սկսվեց պատմական նոր ժամանակաշրջան։ Կուսակցության XVIII համագումարը (1939) նոր

---

7 «Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը», Երևան, 1961, էջ 15։

խնդիրներ դրեց սովետական ժողովրդի առջև։ Դրանց կատարումը կնշանակեր առաջընթաց քայլ սոցիալիզմի վերջնական հաղթանակի ուղղությամբ։

1939—1941 թթ. նոր նվաճումներ ձեռք բերվեցին Հայաստանի գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման ճանապարհին։ Կուսակցության կարևոր միջոցառումներից մեկը կոլտնտեսային հողօգտագործման ամրապնդումը և հանրային հողերը շռայլելուց պաշտպանելն էր։ Անցկացվեց տնամերձ հողամասերի չափում-ստուգում, մտցվեց աշխօրերի պարտադիր մինիմում։ Միութենական կառավարությունը և Համկ(բ)Կ Կենտկոմը 1940 թ. որոշում ընդունեցին Հայաստանում պտղաբուծությունը, խաղողագործությունը և տեխնիկական կուլտուրաները զարգացնելու ձեռնարկումների մասին։ Նախատեսվեց զգալի չափով ընդարձակել ոռոգման ցանցը։ Հիմնականում լեռնային և տնտեսապես դեռևս ետ մնացող շրջաններից մոտ 10 հազար տնտեսություններ վերաբնակվելու էին դաշտային շրջաններում։ 1941 թ. մայիսին որոշում կայացվեց Հայաստանում գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը և անասնաբուծության մթերատվությունը բարձրացնելու համար կոլտնտեսականների աշխատանքի լրացուցիչ վարձատրություն սահմանելու մասին։ Խրախուսական միջոցառումներ կիրառվեցին մեխանիզատորների համար։

Գյուղի սոցիալ-տնտեսական դրությունը ամրապնդելու և կոլտնտեսականների նյութական-կուլտուրական մակարդակը բարձրացնելու մշակված ծրագրի կենսագործումը ընդհատվեց 1941 թ. հունիսին, Սովետական Միության վրա ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումով։

Հայրենական մեծ պատերազմի ահեղ տարիներին փայլուն կերպով դրսևորվեցին կոլտնտեսային կարգի ուժն ու կենսունակությունը։ «Պատերազմի պայմաններում,— գրված է Համկ(բ)Կ Կենտկոմի 1946 թ. փետրվարի 2-ին՝ ընտրողներին ուղղած կոչի մեջ,— կոլտնտեսային կարգը ցույց տվեց իր կենսունակության մեծ ուժը։ Եթե պատերազմի ժամանակ մեզ մոտ կոլտնտեսություններ չլինեին, գյուղատնտեսությունը լրիվ անկում կապրեր և բանակն ու երկիրը կթողնվեին առանց մթերքների։ Միայն կոլտնտեսությունների շնորհիվ էր, որ մեր գյուղացիությունը պատվով կատարեց ռազմական ժամանակների խնդիրները»[8]։

---

8 «Борьба КПСС за восстановление и развитие народного хозяйства в 1945—1953 гг.», М., 1961, стр. 40.

Չնայած Հայաստանը ռազմական գործողությունների անմիջական թատերաբեմ չդարձավ, պատերազմը ծանր անդրադարձավ նաև մեր Հանրապետության ժողովրդական տնտեսության վրա։ Թեև այդ տարիներին կառուցվեցին հարյուրից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ և մոտ 25 հազար հեկտարով ավելացան ցանքատարածությունները, այնուամենայնիվ, արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքը նվազեց։ Կոլտնտեսությունների հիմնական աշխատող ուժը՝ ուղամարդիկ, զորակոչվել էին գործող բանակ, խիստ կերպով կրճատվել էր մեքենաների, պահեստամասերի, քիմիական պարարտանյութերի արտադրությունը։ Այսպիսի ծանր պայմաններում ռազմաճակատ մեկնած տղամարդկանց փոխարինելու ելան կանայք ու պատանիները։ Ջահեսված մեծ ակտիվություն հանդես բերեցին հատկապես կանայք, որոնք գարձել էին կոլտնտեսային արտադրության հիմնական դեմքը։ Կոլտնտեսային գյուղացիության անձնվեր աշխատանքի շնորհիվ պատերազմի բոլոր տարիների պարտավորությունները գերակատարվեցին։ Գյուղի աշխատավորները ամեն տարի հարյուր հազարավոր փութ հացահատիկ և գյուղատնտեսական այլ մթերքներ էին մուծում պաշտպանության ֆոնդ[9]։

Պատերազմը հաղթականորեն ավարտելուց հետո սովետական ողջ ժողովրդի հետ համատեղ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը մեծ ոգևորությամբ ձեռնամուխ եղավ խաղաղ, ստեղծագործ աշխատանքներին։ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման չորրորդ հնգամյա պլանով (1946—1950) նախատեսվում էր հանրապետության գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնել 75 տոկոսով։ Հնգամյակի առաջին տարում մասսայական պայքար ծավալվեց գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության խախտումները (աշխօրի սխալ ծախսում, հանրային հողերի հափշտակում, կոլեկտիսային սեփականության յուրացում, կոլտնտեսային դեմոկրատիայի անտեսում և այլն) վերացնելու և կոլտնտեսություններն ամրապնդելու համար։

Սոցիալիստական գյուղատնտեսության հետպատերազմյան շրջանի վերելքին ուղղված միջոցառումների շարքում կարևոր տեղ էր գրավում կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդումը։ Սովետական կառավարությունը այդ ուղղությամբ խոշոր կապիտալ ներդրումներ կատարեց։ Հանրապետության գյուղատնտեսությունը սկսեց

9 Տե՛ս «Սովետական Հայաստան», 11 նոյեմբերի 1945 թ.։

արագ տեմպերով համալրվել անհրաժեշտ մեքենաներով։ Հանրապետությունում 1940 թ. 38 ՄՏԿ-ների փոխարեն 1950 թ. գործում էին 46 ՄՏԿ-ներ, իսկ 1953 թ.՝ 53։ Տրակտորների քանակը նույն ժամանակաշրջանում 1955-ից հասավ 2055-ի, իսկ կոմբայններինը՝ 288-ից 696-ի[10]։ Տարեցտարի բարձրանում էր ծանր և աշխատատար պրոցեսների մեքենայացման մակարդակը։ Անասնապահական ֆերմաներում երևացին առաջին ավտոմատ ջրամխոցները և էլեկտրական կթի ապրանքները։ Գյուղատնտեսական արտադրության մեջ օգտագործվում էր էլեկտրականությունը։

Սակավահող Հայաստանում գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման գործում վճռական նշանակություն ունեցավ ջրաշինարարական աշխատանքների հետագա ծավալումը, ջրային ռեսուրսների ճիշտ օգտագործումը։ Զորրորդ հնգամյակի տարիներին շարք մտան Դալմայի, Սպիտակի, Լոռու, Գառնիի, Ադիամանի ջրանցքները, որոնց շնորհիվ առոգելի դարձան մոտ 17 հազար հեկտար հողատարածություններ։ Հետպատերազմյան տարիներին ծանր վիճակ էր առեղծվել գյուղատնտեսությունը բարձրորակ կադրերով ապահովելու գործում։ Կադրերի պակասը լրացնելու նպատակով 1947 թ. Երևանում բացվեց կոլտնտեսությունների ղեկավար կադրերի պատրաստման երկամյա դպրոց, իսկ գյուղատնտեսական ինստիտուտին կից սկսեցին գործել ՄՏԿ-ների դիրեկտորների և բաժնի վարիչների վերապատրաստման վեցամսյա դասընթացներ։

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման, կադրերի պատրաստման, առոգման ցանցի ընդլայնման և այլ միջոցառումների շնորհիվ կոլտնտեսային գյուղի աշխատավորները հաջողությամբ կատարեցին չորրորդ հնգամյակի առաջադրանքները (հատկապես աչքի ընկան կոմերիտական-երիտասարդական օղակները)։ Բարձր ցուցանիշների համար 28 կոմերիտական-երիտասարդական օղակներ պարգևատրվեցին ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրով, իսկ Թալինի շրջանի Ջրվեհանքով գյուղի կոմերիտական-երիտասարդական օղակի ղեկավար Մ. Մարտիրոսյանն արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ Նա հանրապետության կոլտնտեսային դաշտերի առաջին հերոսուհին է։

Սակայն հետպատերազմյան տարիներին գյուղատնտեսության զարգացման տեմպերը բավականին ցածր էին, որի պատճառով փաստորեն

10 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР», стр. 11, «Советская Армения за 40 лет», Ереван, 1960, стр. 114.

խախտվել էր ժողովրդական տնտեսության համաչափ զարգացումը։ 1940—1950 թթ. Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքը աճել էր 2,6 անգամ, քաղաքային բնակչությունը կրկնապատկվել, իսկ գյուղատնտեսական արտադրությունն ավելացել էր միայն 15 տոկոսով[11]։ Այն ետ էր մնում ամբողջ երկրում։ ՍՍՀՄ գյուղատնտեսության զարգացման հարցերը հատուկ քննարկման առարկա դարձան ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թ. սեպտեմբերյան պլենումում։ Այդ պլենումը բացահայտեց գյուղատնտեսության հետ մնալու օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները և կոնկրետ միջոցառումներ մշակեց նրա վերելքն ապահովելու համար։ Զգալիորեն ավելացվեցին կապիտալ ներդրումները։ Այսպես, եթե 1921—1953 թթ. Հանրապետության գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների տարեկան միջին չափը կազմել է 77 միլիոն ռուբլի, ապա 1954—1959 թթ. այն կազմեց 233 միլիոն ռուբլի[12]։ Դա էական դեր խաղաց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործում։

Սեպտեմբերյան պլենումը հատուկ ուշադրություն դարձրեց արտադրության խթանման այնպիսի կարևոր գործոնի վրա, ինչպիսին աշխատողների նյութական շահագրգռվածությունն է։ Այն խախտվել էր հիմնականում հարկերի ու մթերումների համակարգում եղած սխալների ու թերությունների պատճառով։ Այնպես էր ստացվել, որ արտադրության ավելացումը նյութապես ինչպես հարկն է չէր խրախուսվում։ Պլենումի որոշումների համաձայն վերանայվեցին գյուղատնտեսական հարկերն ու մթերումների գները։ 1952—1957 թթ. Հայաստանում գյուղատնտեսական մթերքների պետական մթերումների գները բարձրացվեցին հետևյալ չափով. հացահատիկ՝ 2 անգամ, կարտոֆիլ՝ 5,3, շաքարի ճակնդեղ՝ 1,7, ծխախոտ՝ 2, կաթ՝ 3,4, բուրդ՝ 3,1 անգամ[13]։ Դա զգալիորեն բարձրացրեց կոլտնտեսությունների շահութաբերությունը, նպաստեց արտադրության ավելացմանը։ Կատարելագործվեցին նաև վարձատրության ձևերը։ Աստիճանաբար արմատավորվեց ամենամսյա երաշխավորված դրամական վարձատրությունը։

Արմատական փոփոխության ենթարկվեց գյուղատնտեսության մեքենայական սպասարկումը։ Ետպատերազմյան տարիներին սոցիալիս-

11 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.», Երևան, 1960, էջ 268։

12 Տե՛ս «Советская Армения за 40 лет», стр. 141 (հաշվումները կատարված են հեղինակների կողմից)։

13 Տե՛ս ՄԼԻ հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 124, թ. 82։

տական արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ ոչ միայն վերականգնվեց ՄՏԿ-ների պարկը, այլև ստեղծվեց միանգամայն նոր տեխնիկական բազա։ Գյուղատնտեսությանը մատակարարվեցին հազարավոր նոր մեքենաներ։ Սակայն, ինչպես արդարացիորեն նշվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թ. դեկտեմբերյան պլենումում, ՄՏԿ-ները, լինելով պետական կարևոր հենակետեր, որոնք մեծ դեր խաղացին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ժամանակ, արդեն սպառել էին իրենց և փաստորեն դարձել լուկ միջնորդ-վարձակալներ։ Շատ դեպքերում ՄՏԿ-ները սկսել էին արգելակել առաջավոր տնտեսությունների նախաձեռնությունը։ Ելնելով կոլտնտեսությունների նյութական-տնտեսական բազայի ամրապնդման շահերից, ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թ. փետրվարյան պլենումը որոշեց ՄՏԿ-ները վերակառուցել և մեքենաները վաճառել կոլտնտեսություններին։ Գյուղատնտեսության առաջընթացին մեծապես նպաստելուց բացի, դա ունեցավ նաև կարևոր սոցիալական նշանակություն։ Գյուղ մեկնեցին բազմահազար մեխանիզատորներ, իրենց հետ տանելով բանվոր դասակարգի լավագույն ավանդույթները, հմտություններն ու աշխատանքի կազմակերպման հարուստ փորձը։

Գյուղատնտեսության վերելքի ծրագիրը կենսագործելու խնդրում անընդհատ աճում էր կադրերի դերը։ Ինչպես միշտ, այս անգամ էլ գյուղատնտեսությանը եղբայրական օգնության ձեռք մեկնեց բանվոր դասակարգը։ 1955 թ. արդյունաբերության 30 հազար առաջավորներ մեկնեցին գյուղ՝ գյուղատնտեսության մեջ աշխատելու։ ՀՍՍՀ-ում գյուղ մեկնեց մոտ 500 մարդ, որից 134-ը կուսակցության կոչով[14]։ Միաժամանակ մեծ ուշադրություն դարձվեց բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստմանը։ ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թ. սեպտեմբերյան պլենումի որոշումների կենսագործման համար համաժողովրդական մրցություն ծավալեցին գյուղատնտեսության աշխատողները։ 1954 թ. Մոսկվայում կրկին բացվեց Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը, որը դարձավ առաջավոր փորձի պրոպագանդման կարևոր դպրոց։ 1954—1957 թթ. մեր հանրապետությունից ցուցահանդեսին մասնակցեցին ավելի քան 7 հազար առաջավորներ, որից 625-ը պարգևատրվեցին ոսկե և արծաթե մեդալներով։ Նույնպիսի ցուցահանդեսներ բացվեցին նաև միութենական հանրապետություններում։

---

14 Տե՛ս «ՀԿԿ կենտկոմի հաշվետու զեկուցումը ՀԿԿ XVIII համագումարին», Երևան, 1956, էջ 58—59։

Սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակի համար մղված պայքարի տարիներին հանրապետության կոլտնտեսային դաշտերի աշխատավորները հերոսական աշխատանքով խոշոր նվաճումներ ձեռք բերեցին։ Բարձրացավ հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը, բարելավվեց այդեղործության վիճակը, իսկ անասնապահությունը դուրս եկավ փակուղուց և բռնեց վերելքի ուղին։ Այդ նվաճումների համար 1958 թ. մեր հանրապետությունը պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Սակայն գյուղատնտեսության հաջողությունները տնտեսապես չամրապնդվեցին և հետագա զարգացման չհասան։ Յոթնամյակի (1959—1965) տարիներին գյուղատնտեսության ղեկավարման պրակտիկայում արմատավորվեցին վարչարարության, սնապարծության և կոլտնտեսությունների ներքին գործերին չհիմնավորված կերպով միջամտելու արատավոր մեթոդները։ Տնտեսական զարգացման շատ կարևոր հարցերի լուծման գործում թույլ էր տրվում կամայական մոտեցում։ Սոցիալիստական արտադրության տնտեսական օրենքներն ու օրինաչափությունները անտեսելու հետևանքով գյուղատնտեսական արտադրության տեմպերը բավականին նվազեցին։ ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումը բազմակողմանիորեն քննարկեց գյուղատնտեսության հետ մնալու պատճառներն ու ծրագրային որոշումներ ընդունեց նրա հետագա զարգացման համար։

* * *

Մարտյան պլենումի մեծագույն նշանակությունն այն է, որ նա համակողմանի միջոցառումներ մշակեց գյուղատնտեսության զարգացման մեջ արմատական բեկում մտցնելու, գյուղում առաջացած հարցերը լուծելու համար։ Պլենումի մշակած ագրարային քաղաքականության սկզբունքները զարգացվեցին և ամրապնդվեցին կուսակցության մի շարք այլ պլենումների, XXIII, XXIV և XXV համագումարների որոշումներում։

Կուսակցության և կառավարության որոշումների համաձայն բարձրացվեց գյուղատնտեսության աշխատողների նյութական շահագրգռվածությունը՝ մթերքների գնման գների բարձրացման և գնումների կայուն պլաններ սահմանելու միջոցով։ Ավելացվեցին կապիտալ ներդրումները գյուղատնտեսության բոլոր ճյուղերում և հատկապես նրա կոմպլեքսային մեքենայացման նպատակով։ Կուսակցության ագրարային քաղաքականության կարևոր սկզբունքներից է նաև գյուղատնտեսական արտա-

դրության մասնագիտացման և համակենտրոնացման համակողմանի զարգացումը՝ միջտնտեսական կոոպերացման և ագրարային-ինդուստրիալ ինտեգրացման հիման վրա:

Գյուղատնտեսության զարգացման կոմունիստական կուսակցության մշակած ծրագիրը գործողության պլան է սովետական ամբողջ ժողովրդի համար: Այն ջերմությամբ ընդունվեց քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորների կողմից, որոնք մեծագույն խանդավառությամբ ձեռնամուխ եղան նրա կենսագործմանը:

Գյուղատնտեսության վերելքի իրականացման ուղղությամբ զգալի հաջողություններ են ձեռք բերվել նաև Սովետական Հայաստանում:

1966—1974 թթ. գյուղատնտեսության մեջ ներդրվել է 1 միլիարդ 257,5 միլիոն ռուբլի: Ընդ որում, այդ գումարը կազմում է սովետական իշխանության տարիներին գյուղատնտեսության մեջ ներդրված ամբողջ գումարի մոտ 59 տոկոսը: Ներդրումների մեծ մասը կատարվել է պետության կողմից: Պետական ներդրումների տեսակարար կշիռը աստիճանաբար ավելանալով, ութ-իններորդ հնգամյակների տարիներին հասել էր մոտ 84 տոկոսի[15]: Ներկայումս սովետական պետությունը հնարավորություն է ստացել մեծ միջոցներ ներդնելու գյուղատնտեսության մեջ՝ նրա տեխնիկական զինվածությունը զգալիորեն բարձրացնելու, տնտեսական վերելքը ապահովելու համար: Տասներորդ հնգամյակում դրանք կազմում են 1,24 միլիարդ ռուբլի, որը մեծ չափով ավելի է նախորդ հնգամյակի գումարից: Կապիտալ ներդրումների բուռն վերելքի շնորհիվ մեծապես աճել են հիմնական ֆոնդերը: Անցած տասնամյակում դրանք ավելացել են ավելի քան երկու անգամ[16]: Գիտատեխնիկական հեղափոխության ներկա ժամանակաշրջանում էական տեղաշարժեր են կատարվում գյուղատնտեսության տեխնիկական զինվածությունը զարգացնելու, գյուղատնտեսությունը ինդուստրիալ հիմքերի վրա փոխադրելու ուղղությամբ, որը աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու հիմնական պայմաններից մեկն է: Միայն 1970—1974 թթ. հանրապետության գյուղատնտեսությունն ստացել է 7.455 տրակտոր, որն ավելի շատ է, քան 1965 թ. ունեցած տրակտորների ամբողջ թիվը: 1974 թ. տրակտորների թիվն անցնում էր 11 հազարից, հացահատիկահավաք կոմբայններինը՝ 1500-ից, իսկ բեռնատար ավտոմեքենաներինը հասնում էր մոտ

15 Տե՛ս «Армения в единой семье народов СССР», Ереван, 1972, стр. 144. «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», Ереван, 1975, стр. 139.

16 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1974 году», стр. 71.

12 հազարի[17]։ Հայաստանում ծավալուն աշխատանքներ են տարվում խոպան և քարքարոտ հողերի յուրացման, այգեգործության մեքենայացման և մեր պայմաններին համապատասխանող գյուղատնտեսական տեխնիկա ստեղծելու ուղղությամբ։ Մեծ չափով ավելացել է էլեկտրաէներգիայի օգտագործումը արտադրական նպատակներով։ Միայն 1970—1974 թթ. նրա տեսակարար կշիռը կազմեց ծախսված էլեկտրաէներգիայի 70 տոկոսը[18]։ Գյուղատնտեսության էներգետիկ հզորությունը արդեն վաղուց բաղկացած է բացառապես մեխանիկական շարժիչներից։ Զարգացած սոցիալիզմի տարիներին այն աճել է ավելի քան 3 անգամ[19]։ Արմատապես փոխվել են գյուղատնտեսության աշխատողների աշխատանքային պայմանները։ Կոմպլեքսային մեքենայացման տեսակետից համեմատաբար առաջատար վիճակում են հացահատիկային կուլտուրաները։ Մեքենայացված է նաև մյուս դաշտավարական կուլտուրաների նախացանքային մշակությունը։ Կոմպլեքսային մեքենայացման աշխատանքները սկսվել են նաև անասնաբուծության ճյուղում։ Զգալի տարածում է ստացել կթի ագրեգատների օգտագործումը, ոչխարի էլեկտրախուզը և այլն։ Սակայն, ինչպես նշեց ՀԿԿ XXVI համագումարը (1976), գյուղատնտեսության աշխատատար պրոցեսների մեքենայացումը դանդաղ է ընթանում։ Այն հատկապես հետ է մնում խաղողագործության, պտղաբուծության, տեխնիկական կուլտուրաների մշակության և այլ բնագավառներում։ Գիտատեխնիկական հեղափոխության նոր պայմաններում հնարավոր է դարձել սոցիալիստական գյուղատնտեսությունը հագեցնելու առավել արդիական, բարձրարտադրողական բազմազան տեխնիկայով։ Ելնելով դրանից, ՍՄԿԿ XXV համագումարը որոշեց տասներորդ հնգամյակի ընթացքում հիմնականում ավարտել կոմպլեքսային մեքենայացումը հացահատիկային տնտեսության մեջ, զգալիորեն բարձրացնել մեքենայացման մակարդակը հողագործության մյուս ճյուղերում, ինչպես նաև անասնապահության մեջ[20]։ Գյուղատնտեսական աշխատանքների արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմա-

17 Տե՛ս նույն տեղում, էջ 119։

18 Տե՛ս նույն տեղում, էջ 39 (տոկոսային հաշվարկը կատարված է հեղինակների կողմից)։

19 Տե՛ս նույն տեղում, էջ 42։

20 Տե՛ս Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում (Զեկուցում ՍՄԿԿ XXV համագումարում, 1976 թ. փետրվարի 24-ին), Երևան, 1976, էջ 82։

տացման ընդլայնումը գյուղատնտեսության զարգացման կարևոր խնդիրներից մեկն է ներկա հնգամյակում[21]։

Ջոր կլիմա ունեցող մեր հանրապետության համար և հատկապես կայուն բերք ապահովելու տեսակետից կարևոր նշանակություն ունի ոռոգման զարգացումը։ Տակավին 1921 թ. ապրիլին «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների Հանրապետության կոմունիստ ընկերներին» ծրագրային նամակում Վ. Ի. Լենինը խնդիր դրեց «բոլոր ուժերով զարգացնել հարուստ երկրի արտադրողական ուժերը, ոռոգումը։ Ոռոգումը հատկապես կարևոր է հողագործության ու անասնապահության ինչ գնով էլ լինի բարձրացնելու համար»[22]։ Սովետական իշխանության և բանվոր դասակարգի անմիջական օգնությամբ Հայաստանի գյուղի աշխատավորները ստացան տասնյակ հազարավոր հեկտար նոր հողատարածություններ, դարերով անմշակ մնացած հողերը վերածվեցին ծաղկուն այգիների ու դաշտերի։ 1974 թ. տվյալներով ոռոգելի հողատարածությունները կազմում էին 289,1 հազար հեկտար, 1913 թ. 97 հազար հեկտարի դիմաց, այսինքն սովետական իշխանության տարիներին դրանք ավելացել են 3 անգամ։ Միայն վերջին տաս տարվա ընթացքում յուրացվել են 35,3 հազար հեկտար նոր ոռոգելի հողեր[23]։ Տասներորդ հնգամյակում նախատեսվում են իրականացնել մեծագույն միջոցառումներ։ Ոռոգման ցանցը ընդարձակվելու է 20 հազար հեկտարով։ Ջրարբիացվելու են 60 հազար հեկտար արոտավայրեր։ Աշխատանքներ են ծավալվելու Արարատյան դաշտավայրի աղուտների գյուղատնտեսական յուրացման ուղղությամբ։ Ջրաշինարարական խոշոր միջոցառում է Ախուրյանի խոշորագույն ջրամբարը, որի կառուցումն ընթացքի մեջ է։ Այն ոռոգելի ջրով լրիվ կապահովի Հոկտեմբերյանի և Թալինի շրջանները։ Աղուտների յուրացումը և Արարատյան դաշտավայրի մյուս գերխոնավ հողերի մելիորացումը տնտեսական մեծագույն նշանակություն ունի։ Միայն աղակալված հողերի գյուղատնտեսական յուրացման շնորհիվ հնարավոր կդառնա մոտավորապես կիսով չափ ավելացնել Արարատյան դաշտավայրում մշակվող խաղողի, պտուղների և բանջարեղենի բերքը, ինչպես նաև անասնաբուծական

---

21 «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմնական ուղղությունները», Երևան, 1976, էջ 66։

22 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 32, էջ 403—404։

23 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», стр. 88. «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940)». Ереван, 1940, стр. 62.

մթերքների արտադրությունը[24]։ Ներկայումս կոմպլեքսային միջոցառումներ են մշակվում և իրականացվում այդ հողերը գյուղատնտեսական շրջանառության մեջ մտցնելու համար։ Արդեն մշակելի են դարձվել առաջին մի քանի հազար հեկտար արգավանդ տարածություններ։

Մելիորացիայի հետ մեկտեղ գյուղատնտեսության մեջ լայն կիրառում է գտել քիմիացումը։ 1974 թ. հողի մեջ ներդրվել է 340 հազար տոննա հանքային պարարտանյութ, որը 1965 թ. համեմատությամբ ավելի է 2,4, իսկ 1960 թ. համեմատությամբ՝ 4,2 անգամ[25]։

Գյուղատնտեսության մասնագիտացման և համակենտրոնացման համար մեծ նշանակություն ունի միջտնտեսական կոոպերացման զարգացումը։ Սովետական Միության մի շարք շրջանների փորձը վկայում է միջտնտեսական կոոպերացման կարևոր նշանակությունը արտադրության վերելքի գործում։ 1975 թ. Հանրապետությունում գործում էին 12 միջտնտեսական կազմակերպություններ։ Այդ բնագավառում զգալի հաջողություններ են ձեռք բերվել Շահումյանի շրջանում, որտեղ միջտնտեսական կոոպերացումը ընդգրկում է շինարարության, խոզաբուծության և թռչնաբուծության ճյուղերը։ Սպիտակի շրջանում կազմակերպվել է մատղաշ անասունների աճեցման միջտնտեսական միավորում։ Նախատեսված է մինչև 1978 թ. կազմակերպել 80 միջկոլտնտեսային և կոլտնտեսային-սովխոզային ձեռնարկություններ[26]։ Հայաստանում ագրոինդուստրիալ ձեռնարկությունների ստեղծման առաջին փորձերը կատարվել են դեռևս զանգվածային կոլտնտեսային շարժման արշալույսին՝ 1930-ական թվականների սկզբին։ Սակայն դրանց կազմակերպման համար նյութական նախադրյալները ստեղծվել են միայն զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում։ Միջտնտեսային կոոպերացումը ունի մեծ ապագա։ Նրա հանդեպ գալը օրինաչափ է և բխում է սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման ընթացքից։ Արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման տվյալ ուղին նշանավորում է լենինյան կոոպերատիվ պլանի զարգացման նոր փուլը։ Ելնելով Սովետական Միության առաջավոր շրջանների դրական փորձից, ՍՄԿԿ XXV համագումարը նպատակահարմար գտավ ըստ ամենայնի նպաստել միջտնտե-

---

24 Տե՛ս «Правда», 26 ноября 1973 г.

25 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», стр. 120. «Սովետական Հայաստանը 50 տարում», Երևան, 1970, էջ 164։

26 Տե՛ս «Курсом Мартовского пленума», М., 1975, стр. 229.

սային կոոպերացման և ագրոարդյունաբերական ինտեգրացման առաջադիմական պրոցեսին[27]։

Չնայած իններորդ հնգամյակի տարիները կլիմայական պայմանների տեսակետից հիմնականում նպաստավոր չէին, այնուամենայնիվ, այդ և նախորդ հնգամյակի ընթացքում զգալի նվաճումներ ձեռք բերվեցին գյուղատնտեսության զարգացման բնագավառում։ Ութերորդ հնգամյակում գյուղատնտեսության տարեկան աճի միջին տեմպը կազմեց 4,8 տոկոս, յոթնամյակի տարեկան 1,8 տոկոս միջին աճի դիմաց։ 1971—1974 թթ. նշված պատճառով այդ տեմպը որոշ չափով նվազեց և կազմում էր 3 տոկոս[28], իսկ հնգամյակի եզրափակիչ տարում բարձրացավ 5,9 տոկոսի[29]։ Ավելի բարձր են գյուղատնտեսական մթերքների գնումների ավելացման տեմպերը։ Այսպես, իններորդ հնգամյակում պետական տարեկան միջին գնումները նախորդ երկու հնգամյակների համեմատությամբ բարձրացել են համապատասխանաբար հետևյալ կերպ. հացահատիկ՝ 53 և 60, ծխախոտ՝ 7 և 31, կարտոֆիլ՝ 82 և 372, բանջարեղեն՝ 65 և 216, մեխ և թեյուն (ապանդանոցային քաշով)՝ 64 և 100, կաթ՝ 28 և 60 տոկոսով, ձու՝ 1,8 և 2,7 անգամ և այլն։ Համեմատաբար ցածր են խաղողի և պտուղների գնման, ինչպես նաև դրանց արտադրության զարգացման տեմպերը։ Այդ մասին քննադատական խոսք ասվեց նաև ՀԿԿ XXVI համագումարում։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումը և նրա վերելքը արմատապես փոխել են Հայաստանի գյուղի դեմքը։ Արմատական տեղաշարժեր են կատարվել գյուղական բնակչության սոցիալական կազմում։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում անբարեկարգ գյուղերին և հողաշեն խրճիթներին փոխարինելու եկան պլանով կառուցապատված բնակավայրերը, որոնք ունեն արտադրական և կուլտուրա-կենցաղային օբյեկտներ և ժամանակակից բնակարաններ։ Հանրապետությունում գյուղական բնակչի տների 80 տոկոսը կառուցվել է հետպատերազմյան երեք տասնամյակում[30]։ Բնակչության մեծ մասի կենցաղի մեջ վաղուց են մտել ռադիոընդունիչը, հեռուստացույցը, լվացքի մեքենան,

---

27 Տե՛ս Լ. Ի. Բրեժնև, նշված զեկուցումը, էջ 84։

28 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», стр. 92.

29 Տե՛ս «Սովետական Հայաստան», 4 փետրվարի 1976 թ. (ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր ԿՎՎ-ի հաղորդագրությունը՝ «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման 1975 թ. պետական պլանի կատարման արդյունքների մասին»)։

30 Տե՛ս «Армения в единой семье народов СССР», стр. 198.

գազօջախը, ժամանակակից կահույքը, ավտոմեքենան և այլն։ Կոլտնտեսությունների և սովխոզների լրիվ էլեկտրիֆիկացումը (լուսավորության իմաստով) ավարտվել է դեռևս 1960-ական թվականների սկզբին։

Գյուղատնտեսության մեքենայացման և սոցիալիստական ինդուստրիայի զարգացման շնորհիվ զգալի չափով իջել է գյուղական բնակչության տեսակարար կշիռը, չնայած բացարձակ չափերով այն նույնիսկ որոշ չափով ավելացել է։ Դա երկրի զարգացման ժամանակակից էտապում և գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում անխուսափելի և առաջադիմական երևույթ է, որը կշարունակվի նաև ապագայում։

1970 թ. մարդահամարի տվյալներով ՀՍՍՀ գյուղական բնակչությունը կազմում էր հանրապետության ամբողջ բնակչության 41 տոկոսը (1975 թ. հաշվումներով այն իջել է 37 տոկոսի), 1939 թ. 71 և 1926 թ. 81 տոկոսի դիմաց[31]։ Գյուղական բնակչության ցածր տեսակարար կշռով Հայաստանը միութենական հանրապետությունների մեջ գրավում է չորրորդ տեղը, զիջելով Էստոնիային, Լատվիային և ՌՍՖՍՀ-ին[32]։

Զարգացած սոցիալիստական հասարակության հասարակական խմբերն են բանվորները, կոլտնտեսականները և ծառայողները։ Եթե 1959 թ. մարդահամարի տվյալներով գյուղական բնակչության մեծ մասը կոլտնտեսականներ էին (69,4 տոկոս), ապա 1970 թ. նրանք արդեն փոքրամասնություն էին՝ 39 տոկոս։ Փոխարենը ավելացել է գյուղատնտեսական բանվորության տեսակարար կշիռը, համապատասխանաբար կազմելով 20,1 և 48,3 տոկոս[33]։ Այդ սոցիալական տեղաշարժերը հանդիսանում է մեծ թվով կոլտնտեսությունների՝ սովխոզների վերափոխելու արդյունք (1950 թ. Հանրապետությունում գոյություն ունեին 668 կոլտնտեսություն և 27 սովխոզ, իսկ 1972 թ.՝ 377 կոլտնտեսություն և 338 սովխոզ)[34]։ Ծառայողների թիվը 10,4-ից բարձրացել է 11,8 տոկոսի[35]։ Եթե ծառայողների տեսակարար կշիռը մոտ է Սովետական Միության միջին ցուցանիշներին, ապա նույնը չի կարելի ասել կոլտնտեսականների և բանվորների վերաբերյալ։ Հայաստանում 1970 թ. կոլտնտե-

31 Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.», т. 1, М., 1972, стр. 9; «Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Армянская ССР». М., 1963, стр. 11.

32 Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.», т. 1, стр. 9.

33 Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.», т. 5, М., 1973, стр. 15.

34 Տե՛ս «Армения в единой семье народов СССР», стр. 80, 82. «Народно хозяйство Армянской ССР в 1974 г.», стр. 72—74.

35 Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.», т. 5, стр. 15.

սականների թիվը միութենական միջին տվյալներից 4,6 տոկոսով ցածր էր, իսկ գյուղատնտեսական բանվորների թիվը՝ 3,4 տոկոսով բարձր[36]։ Դա նշանակում է, որ Հայաստանում ավելի մեծ թվով կոլտնտեսություններ են վերածվել սովխոզների։

Մեծ նվաճումներ են ձեռք բերվել գյուղական բնակչության կրթական ու կուլտուրական մակարդակի և գյուղատնտեսական աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման բնագավառում։ Սովետական իշխանությունը պատմական ամենակարճ ժամանակամիջոցում վերջ տվեց գյուղի և քաղաքի բնակչության անգրագիտությանը։ Դպրոցների դռները լայնորեն բացվեցին նաև գյուղի աշխատավորների առջև։ Գյուղական յուրաքանչյուր հազար բնակչից (10 տարեկանից բարձր) 1939 թ. բարձրագույն կրթություն ուներ 2, 1970 թ.՝ 16 մարդ, իսկ ոչ լրիվ բարձրագույն և միջնակարգ (նաև թերի միջնակարգ) կրթություն՝ համապատասխանաբար 59 և 356 մարդ[37]։ Դա նշանակում է, որ 1939—1970 թթ. գյուղում բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցող մարդկանց թիվը 6-ից բարձրացել է 37 տոկոսի (միութենական համապատասխան տվյալներն են՝ 5 և 33 տոկոս)[38]։

Հանրապետության կոլտնտեսություններում ու սովխոզներում 1973 թ. նոյեմբերի 15-ի դրությամբ աշխատում էին բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ 7220 մասնագետներ։ Միայն 1970—1974 թթ. գյուղատնտեսության համար պատրաստվել են ավելի քան 18 հազար մեխանիզատորական կադրեր[39]։ Սովխոզներում բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեն գրեթե բոլոր դիրեկտորները, գլխավոր մասնագետները, գյուղատնտեսները, զոոտեխնիկները, անասնաբույժների, տեխնիկների ու ֆելդշերների ճնշող մեծամասնությունը, բաժանմունքների (ֆերմաների) վարիչների, բրիգադավարների կեսից ավելին, մեխանիկների 67 տոկոսը, անասնապահական ֆերմաների վարիչների մոտ կեսը[40]։

Աստիճանաբար հաղթահարվում են քաղաքի և գյուղի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև գոյություն ունեցող էական տարբերությունները։

---

36 Տե՛ս նույն տեղում, էջ 9, 15։

37 Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.», т. 3, М., 1972, стр. 395.

38 Տե՛ս նույն տեղում, էջ 365։

39 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», стр. 159.

40 Տե՛ս նույն տեղում, էջ 117։

Հայաստանի գյուղի սոցիալական և կուլտուրական վերելքը, որը բնորոշ է սովետական գյուղին ընդհանրապես, զարգացած սոցիալիստական հասարակության կարևոր նվաճումներից մեկն է։ Սովետական գյուղում իրականացվող սոցիալ-տնտեսական վերափոխումները առաջադիմական քայլ են անդասակարգ կոմունիստական հասարակության ստեղծման ճանապարհին։

ՍՄԿԿ XXV համագումարը պարենամթերքների և հոմքի հոսքալի մատակարարման և մշտապես բավարար ռեզերվներ ունենալու հետ մեկտեղ, որպես գյուղատնտեսական բնագավառի կարևոր խնդիր, առաջադրեց հետևյալ ծրագրային պահանջը՝ «ավելի ու ավելի առաջ գնալ քաղաքի ու գյուղի կյանքի նյութական և կուլտուր-կենցաղային պայմանների մերձեցման ուղիով»[41]։

XXV համագումարի որոշումները նշանավորում են նոր քայլ զարգացած սոցիալիզմի՝ կոմունիզմի վերաճման ճանապարհին։ Նոր հեռանկարներ են բացվում նաև գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ, որի սկիզբը դրել է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։

Այսպիսով, սովետական իշխանության տարիներին Հայաստանի գյուղում տեղի ունեցան սոցիալ-տնտեսական վերափոխումներ, որոնք արմատապես փոխեցին գյուղացիության կյանքն ու կենցաղը։ Դրանք վկայում են սոցիալիզմի առավելությունների մասին և հանդիսանում են մեծ Հոկտեմբերի արդյունքը։

---

41 Լ. Ի. Բրեժնև. նշվ. զեկուցումը, էջ 80։

Կ. Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱԶԳԵՐԻ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Մարդկանց պատմական նոր ընդհանրության՝ սովետական ժողովրդի կազմավորումը արդի դարաշրջանի, մեր երկրում սոցիալիստական հասարակության կառուցման կարևորագույն արդյունքներից մեկն է։ Այդ ընդհանրության կազմավորումը երկարատև, բարդ ու բազմակողմանի պրոցես է, որի հիմքում ընկած են սովետական հասարակության տնտեսական, սոցիալական և կուլտուրական կյանքում տեղի ունեցած վիթխարի վերափոխությունները, ազգերի միջև նոր հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը, նրանց մերձեցումն ու համախմբումը։ «Այս ընդհանրությունը,— նշել է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը,— հիմնվում է երկրի կյանքում տեղի ունեցած ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր կարգի օբյեկտիվ խոր փոփոխությունների վրա, մեր երկրում սոցիալիստական ազգերի առաջացման ու զարգացման վրա, որոնց միջև ստեղծվել են նոր տիպի հարաբերություններ»[1]։

Մարդկանց պատմական նոր ընդհանրության՝ սովետական ժողովրդի առաջանցման կարևորագույն նախադրյալն է հասարակական կյանքի բոլոր ոլորտների ինտերնացիոնալացման պրոցեսը։ Այդ պրոցեսը, որը, ինչպես հայտնի է, սկսվել է դեռևս կապիտալիզմի ժամանակ, սոցիալիզմի պայմաններում խորանում է, դառնում համապարփակ, հանդես է գալիս որպես սովետական հասարակության զարգացման առաջատար օրինաչափություններից մեկը։ Նշելով, որ «մարդկության ամբողջ տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքը շարունակ ավելի ինտերնացիոնալացվում է արդեն կապիտալիզմի օրոք», Վ. Ի. Լենինը եղրա-

1 Լ. Ի. Բրեժնև, *Լենինյան կուրսով*, հատ. 4, Երևան, 1974, էջ 78։

կացրել է, որ «սոցիալիզմն այն ինտերնացիոնալացնում է ամբողջովին»[2]:

* * *

Ինտերնացիոնալացման պրոցեսը սոցիալիզմի պայմաններում, ինչպես իր էությամբ ու նպատակներով, այնպես էլ հետևանքներով, արմատապես տարբերվում է կապիտալիզմի օրոք տեղի ունեցող ինտերնացիոնալացումից: Վերացնելով մասնավոր սեփականությունը և դրանից ծնունդ առնող հարաբերությունները, սոցիալիզմը մեր երկրի բոլոր ժողովուրդների առջև բացեց նրանց նյութական և հոգևոր կյանքի զարգացման լայն հնարավորություններ: Այդ պայմաններում ինտերնացիոնալացման պրոցեսը ծառայում է ժողովուրդների սոցիալ-տնտեսական և հոգևոր զարգացմանը, տանում է դեպի նրանց տնտեսական և կուլտուրական պոտենցիալի մակարդակների մերձեցումը, սոցիալ-դասակարգային միասնության հաստատումը:

Ընդգրկելով հասարակության բոլոր կողմերը, ինտերնացիոնալացման պրոցեսը, ամենից առաջ, բնորոշվում է հասարակության տնտեսական զարգացման օրինաչափություններով: «Նյութական կյանքի արտադրության եղանակը,— նշել է Կ. Մարքսը,— պայմանավորում է կյանքի սոցիալ-քաղաքական և հոգևոր պրոցեսներն ընդհանրապես»[3]: Այդ հիմնական սոցիոլոգիական օրենքը գործում է սովետական հասարակության պատմության բոլոր էտապներում: Դրա հետ մեկտեղ հասարակության կյանքում կատարվող քաղաքական և հոգևոր պրոցեսները ներգործում են երկրի տնտեսական կյանքի վրա, նպաստում սովետական հասարակության սոցիալ-տնտեսական հիմքերի ամրապնդմանը:

Իր զարգացման ընթացքում սովետական հասարակությունն անցել է երեք հիմնական էտապ: Դրանցից առաջինը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու էտապն է, որն ընդգրկում է 1917 թ. մինչև 1930-ական թվականների կեսն ընկած ժամանակաշրջանը: Տնտեսության բնագավառում այդ էտապը բնորոշվում է արմատական սոցիալական վերափոխումներով, որոնք հանգեցնում են նոր՝ սոցիալիստական տիպի արտադրական հարաբերությունների հաստատմանը, ժողովուրդների տնտեսական զարգացման ոլորտում նրանց վիճակի անհավասարության վերացմանը՝ երկրի միասնական ժողովրդատնտեսական կոմպլեքսի ստեղծու-

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 294:

3 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հատ. 1, Երևան, 1972, էջ 689:

մով: Քաղաքական կյանքի բնագավառում այդ էտապը նշանավորվեց պրոլետարիատի դիկտատուրայի ստեղծմամբ և ամրապնդմամբ, ՍՍՀ Միության կազմավորմամբ, բոլոր շահագործող դասակարգերի վերջնական վերացմամբ, սովետական հասարակության զաղափարաքաղաքական միասնությամբ: Հոգևոր կյանքի բնագավառում այդ էտապը բնորոշվում է կուլտուրական հեղափոխության իրականացմամբ, ժողովուրդների մշակութային զարգացման դրծում եղած անհավասարության վերացմամբ, կոմունիստական գաղափարախոսության վերջնական հաղթանակով: Տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքի բնագավառներում տեղի ունեցած հեղափոխական վերափոխումներն ամբողջությամբ վերցրած հանգեցրին մեր երկրում սոցիալիզմի հաղթանակին:

Երկրորդ էտապը՝ սոցիալիզմի կառուցման, ամրապնդման և ավարտի էտապը, ընդգրկում է 1930-ական թվականների երկրորդ կեսից մինչև 1960-ական թվականների սահմանագիծն ընկած ժամանակաշրջանը: Տնտեսության բնագավառում այդ էտապը բնորոշվում է երկրի բոլոր շրջաններում արտադրողական ուժերի բուռն զարգացմամբ, սովետական ազգերի տնտեսական զարգացման մակարդակների հետագա հավասարեցմամբ, նրանց տնտեսական կյանքի ընդհանրության նշանակալի ամրապնդմամբ, երկրի տնտեսական պոտենցիալի մեծացմամբ: Քաղաքական կյանքի բնագավառում այդ էտապն աչքի է ընկնում ՍՍՀՄ ժողովուրդների միասնության և բարեկամության հետագա ամրապնդմամբ, սովետական հասարակական-քաղաքական կարգի կատարելագործմամբ և զարգացմամբ, մասսաների քաղաքական ակտիվության նշանակալի աճով: Կուլտուրական կյանքի բնագավառում այդ էտապը նշանավորվում է մեր երկրի ժողովուրդների ազգային մշակույթների ծաղկմամբ, նրանց փոխադարձ մերձեցման և հարստացման տենդենցների ուժեղացմամբ, աշխատավորական մասսաների կրթության և կուլտուրայի մակարդակի նշանակալի բարձրացմամբ:

1960-ական թվականների սահմանագծում մեր հասարակությունը թևակոխեց զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանը: Այդ էտապը բնորոշվում է երկրի էկոնոմիկայի նոր, հզոր վերելքով, արտադրողական ուժերի զարգացման վիթխարի մասշտաբներով, ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքի հետագա կատարելագործմամբ: Սովետական հասարակության զարգացման այդ էտապի կարևոր տարբերիչ գիծն է գիտատեխնիկական հեղափոխության ծավալումը, որը հարաճուն ներգործություն է ունենում արտադրության վրա: Երկրի էկոնոմիկայի զարգացման մակարդակը հնարավորություն է տալիս ձեռնա-

մուխ լինելու կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծմանը, որը դառնում է զարգացած սոցիալիզմի էտապի գլխավոր տնտեսական խնդիրը։

Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում ձեռք է բերվում մշակույթի նոր, ակնառու վերելք, որը բնորոշվում է հոգևոր արտադրության ոլորտի մեծ ընդլայնումով, հոգևոր արժեքների սպառման աճով, կուլտուրական հեղափոխության խորացմամբ։ Սովետական մշակույթը հաջողությամբ է կատարում իր հիմնական խնդիրը՝ կոմունիստական հասարակարգ կառուցող սովետական մարդու դաստիարակությունը, իր առջև նպատակ դնելով նոր բարձրունքներ ձեռք բերելու նրա մտավոր, գեղագիտական և բարոյական զարգացման գործում։ Այդ խնդրի կատարմանը մեծապես նպաստում է սովետական ժողովուրդների մշակույթների մերձեցումն ու փոխադարձ հարստացումը։ Այդ պրոցեսը, որը գնալով ավելի համակողմանի և վառ կերպով է դրսևորվում, հարստացնում է մեր երկրի սոցիալիստական ազգերի բովանդակությամբ սոցիալիստական, բնույթով ինտերնացիոնալ մշակույթը։

Սովետական հասարակության զարգացման բոլոր երեք էտապներում տեղի է ունենում սոցիալիստական ազգերի մերձեցման պրոցես։ Այդ պրոցեսը հենվում է մի շարք սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոնների վրա, որոնց մեջ առաջինը մեր երկրի էկոնոմիկայի զարգացումն է և ինտերնացիոնալացումը։

Էկոնոմիկայի ինտերնացիոնալացումը աշխատանքի հասարակական բաժանման զարգացման պրոցես է, որի հիմքում ընկած են արտադրության մասնագիտացումն ու կոոպերացումը, միասնական ժողովրդատնտեսական կոմպլեքսի ստեղծումը, որը նախատեսում է ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ նրա առանձին շրջանների տնտեսության զարգացումը։ Երկրի բոլոր տնտեսական շրջանների օրգանական միավորումը և պլանաչափ զարգացումը կոմունիստական կուսակցությունը մշտապես դիտել է որպես տնտեսական և քաղաքական կարևորագույն խնդիր։ Այդ խնդրի լուծմանն են նպատակամղված եղել կուսակցության և սովետական կառավարության ջանքերը մեր երկրում սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում, երբ անհրաժեշտ էր առաջին հերթին վերացնել ազգերի փաստական անհավասարությունը, որը ժառանգություն էր մնացել կապիտալիզմից։ Այդ հիմքի վրա սոցիալիստական շինարարության արդեն սկզբնական ժամանակաշրջանում ի հայտ են գալիս ազգերի տնտեսական միավորման տենդենցներ։ Տնտեսական խնդիրը այստեղ սերտորեն միահյուսվում է քաղաքական խնդրի՝ ազգային հարցի լուծման հետ,

551—16

որովհետև միասնական տնտեսական կոմպլեքսի ստեղծումը, պահպանելով հանդերձ ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ միութենական հանրապետություններից յուրաքանչյուրի շահերը, հնարավոր էր միայն ազգերի միջև նախկին հարաբերությունների լրիվ վերացման, անհավասարության ու անվստահության հաղթահարման պայմանով: Այդ պրոբլեմի լուծման գործում առաջատար դերը պատկանում է ռուս ժողովրդին, նրա բանվոր դասակարգին: Ռուս բանվոր դասակարգի այդ պատմական դերը կանխատեսել է Վ. Ի. Լենինը, որը նախքան սոցիալիստական հեղափոխության հաղթանակը նշել է, որ ռուս պրոլետարիատը պետք է օգնի սոցիալ-տնտեսական զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող ժողովուրդներին «անցնելու մենշևիկներ գործադրելուն, աշխատանքը հեշտացնելուն, անցնելու դեմոկրատիային, սոցիալիզմին»[4]: Ջեռնամուխ լինելով սոցիալիստական շինարարությանը, կուսակցությունը կենսագործեց Վ. Ի. Լենինի ցուցումը: ՌԿ(բ)Կ XII համագումարը իր բանաձևում նշեց, որ «մի շարք հանրապետություններ և ժողովուրդներ, որոնք... ետ են մնացել տնտեսական ու կուլտուրական տեսակետից, ի վիճակի չեն լիովին օգտագործելու ազգային իրավահավասարությամբ նրանց վերապահվող իրավունքներն ու հնարավորությունները, ի վիճակի չեն հասնելու զարգացման ավելի բարձր աստիճանին և, այդպիսով, հասնելու առաջ անցած ազգություններին առանց դրսի իրական և տևական օգնության»[5]: Այնուհետև բանաձևի մեջ նշված է, որ այդ անհավասարությունը կարելի է հաղթահարել «միայն ռուսական պրոլետարիատի իրական ու տևական օգնությամբ՝ Միության հետամնաց ժողովուրդներին նրանց տնտեսական ու կուլտուրական բարգավաճման գործում»[6]:

Մեր պատմագիտական և տնտեսագիտական գրականության մեջ բավական հանդամանորեն է լուսաբանված Սովետական Ռուսաստանի օգնությունը ազգային հանրապետություններին, այդ թվում Հայաստանին, նրանց տնտեսական կյանքի կարգավորման, էկոնոմիկայի վերականգնման գործում: Այդ օգնությունը, որն արտահայտվում էր արդյունաբերության համար սարքավորում մատակարարելով, ֆինանսական միջոցների տրամադրումով, խոշոր ձեռնարկությունները ընդհանուր միութենական բյուջեի հաշվին փոխադրելով, մասնագետ կադրեր և բանվորներ տրամադրելով, վճռական դեր խաղաց միութենական հանրապե-

---

4 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 23, էջ 77:

5 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», I մաս, Երևան, 1954, էջ 912:

6 Նույն տեղում:

տուրյունների արտադրողական ուժերի զարգացման, դրանց սոցիալիստական էկոնոմիկայի հիմքերի ստեղծման գործում։

Սոցիալիստական ինդուստրացման պրոցեսում մեծ ուշադրություն դարձվեց արդյունաբերության ռացիոնալ տեղաբաշխմանը։ Ինդուստրացումը պետք է նպաստեր ոչ միայն ամբողջ երկրի տնտեսական հզորության ուժեղացմանը, այլև ազգային հանրապետությունների ինդուստրիալ արագ զարգացման ապահովմանը, որ ձեռք էր բերվում նախկինում հետամնաց շրջաններում տնտեսական շինարարության արագացված տեմպերի միջոցով։ Այդպիսով, ինդուստրացման պրոցեսին բնորոշ է ինչպես ընդհանուր միութենական, այնպես էլ ազգային հանրապետություններից յուրաքանչյուրի շահերի հաշվառումը։ Այդ կուրսը հետևողականորեն կիրառվել և կիրառվում է ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանների մշակման և կենսագործման ժամանակ։ Այսպես, առաջին հնգամյա պլանը կազմելու վերաբերյալ դիրեկտիվներում, որոնք հաստատել էր կուսակցության XV համագումարը (1927), մատնանշված է. «Հնգամյա պլանը պետք է հատուկ ուշադրություն դարձնի ազգային հետամնաց ծայրամասերի և հետամնաց շրջանների էկոնոմիկայի և կուլտուրայի վերելքի հարցերին, ելնելով նրանց տնտեսական և կուլտուրական հետամնացությունն աստիճանաբար լիկվիդացնելու անհրաժեշտությունից, համապատասխանաբար նախատեսելով նրանց էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման ավելի արագ տեմպը, ելնելով այդ շրջանների կարիքներն ու պահանջները Միության կարիքների ու պահանջների հետ շաղկապելուց»[7]։

Սոցիալիստական շինարարության ընթացքում ապահովվեցին երկրի՝ անցյալում հետամնաց ազգային շրջանների տնտեսության աճի գերապանցող տեմպերը, որի շնորհիվ նախադրյալներ ստեղծվեցին բոլոր հանրապետությունների տնտեսական վերելքի և նրանց զարգացման մակարդակները աստիճանաբար հավասարեցնելու համար։

Բերենք սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանում ամբողջությամբ վերցրած երկրի և առանձին հանրապետությունների էկոնոմիկայի աճի տեմպերը բնորոշող առավել կարևոր տվյալներ։ Այսպես, 1913 թ. համեմատությամբ 1940 թ. արդյունաբերության համախառն արտադրանքը ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ-ում ավելացել էր 7,7 անգամ, իսկ Բելոռուսական ՍՍՀ-ում՝ 8,1, Ղազախական ՍՍՀ-ում՝ 7,8, Վրացական ՍՍՀ-ում՝ 10, Կիրգիզական ՍՍՀ-ում՝ 9,9, Հայկական ՍՍՀ-ում՝

---

7 Նույն տեղում, II մաս, Երևան, 1955, էջ 586։

8,7 անգամ։ Նույն ժամանակաշրջանում արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերով Հայկական ՍՍՀ-ն Միության մեջ գրավում էր չորրորդ տեղը, 1913 թ. մինչև 1950 թ. ընկած ժամանակաշրջանում՝ առաջին տեղը, 1913 թ. մինչև 1968 թ. ընկած ժամանակաշրջանում՝ երկրորդ տեղը։

Մյուս կարևոր ցուցանիշը բանվոր դասակարգի թվի աճն է ազգային հանրապետություններում, որը նույնպես վկայում է ինդուստրիալ զարգացման աստիճանի մեծացումը։ Այսպես, 1926—1970 թթ. արդյունաբերության մեջ բանվորների ու ծառայողների տարեկան միջին թիվը ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ-ում ավելացել է մոտավորապես 9 անգամ, Ուզբեկական ՍՍՀ-ում՝ 25,8, Ղազախական ՍՍՀ-ում՝ 45,7, Վրացական ՍՍՀ-ում՝ 17,5, Հայկական ՍՍՀ-ում՝ 34,1 անգամ[8]։ Արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերի և բանվորների թվի ավելացման վերաբերյալ տվյալները վկայում են, որ սոցիալիստական շինարարության տարիներին, ընդհուպ մինչև ՍՍՀՄ-ի թևակոխելը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանը հետևողականորեն զարկ է տրվել ազգային հանրապետությունների էկոնոմիկայի հարաճուն վերելքին։ Այդ կուրսի գործնական իրականացումը հնարավոր եղավ երկրի առավել զարգացած շրջանների, և ամենից առաջ ռուս ժողովրդի, նրա բանվոր դասակարգի կողմից անցյալում ճնշված ազգերին ու ազգություններին ցույց տրված մեծ ու համակողմանի օգնության շնորհիվ[9]։

Տնտեսագիտական գրականության մեջ նշվում է, որ ազգային հանրապետությունների տնտեսական զարգացման մակարդակների հավասարեցման խնդիրը հիմնականում լուծվել է 1970-ական թվականների սկզբին։ Դա չի նշանակում, իհարկե, որ տնտեսական զարգացման առումով բոլոր հանրապետությունները հասել են ճիշտ նույն մակարդակին։ Ըստ էության, այդպիսի խնդիր չի էլ դրվել։ Այն պայմաններում, երբ ձեռք է բերվել տնտեսական կյանքի ընդհանրություն, երկրի ժողովրդական տնտեսությունը մի միասնական կոմպլեքս է, իսկ ամեն մի հանրապետություն իր ավանդն է ներդնում նրա հետագա զարգացման գործում։ Ընդ որում, այս կամ այն հումքային ռեսուրսների, արտադրության կազմավորված ճյուղերի առկայությունը կանխորոշում է տվյալ հանրապետության տնտեսական պրոֆիլը։ Յուրաքանչյուր հանրապետության ժողովրդական տնտեսությունը երկրի ամբողջ տնտեսական օրգա-

---

8 Հաշվումներն արված են ըստ «Народное хозяйство СССР. 1922—1972», М., 1972, վիճակագրական ժողովածուի տվյալների։

9 Տե՛ս Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հատ. 4, Երևան, 1974, էջ 68—69։

նիզմի անխզելի մասն է: «Սովետական Միության էկոնոմիկան,— նշել է Լ. Ի. Բրեժնևը,— առանձին հանրապետությունների ու մարզերի էկոնոմիկայի գումարը չէ: Դա վաղուց ի վեր մի միասնական տնտեսական օրգանիզմ է, որը գոյացել է բոլոր ազգերի ու ազգությունների ընդհանուր տնտեսական նպատակների ու շահերի հիման վրա»[10]:

Զարգացած սոցիալիզմի պայմաններում երկրի տնտեսական կյանքի ինտերնացիոնալացումը հասել է էլ ավելի բարձր աստիճանի: Զեկավարելով երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը, կուսակցությունը հաշվի է առնում ամենից առաջ ամբողջությամբ վերցրած պետության, ինչպես նաև նրա առանձին շրջանների առանձնահատուկ շահերը: Հիմնական տնտեսական խնդիրը՝ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, լուծվում է ամբողջ երկրի մասշտաբով: Յուրաքանչյուր հանրապետություն իր զարգացման գործում հենվում է երկրի ամբողջ տնտեսական պոտենցիալի վրա: Իր հերթին, այդ պոտենցիալի ավելացումը ձեռք է բերվում միութենական բոլոր հանրապետությունների ջանքերով: Արդյունաբերության խոշորագույն օբյեկտների կառուցմանը, անկախ նրանց ւսարածքային պատկանելությունից, մասնակցում են միութենական բոլոր հանրապետությունները: Այդպիսի համաժողովրդական կառույցներ են ԲԱՄ-ը, Կամայի ավտոգործարանը, երկրի տարբեր շրջանների էլեկտրակայանները, Արփա—Սևան ջրատարը, հայկական ատոմային էլեկտրակայանը և այլն:

Տնտեսական կյանքի ինտերնացիոնալացման հետագա խորացմանը նպաստում են միջհանրապետական է՛լ ավելի ուժեղացված տնտեսական կապերը: Դա կարելի է հաստատել Հայկական ՍՍՀ-ի օրինակով: 1960-ական թվականներին հանրապետությունը ՌՍՖՍՀ-ից ստանում էր իրեն անհրաժեշտ մեքենաշինության արտադրանքի կեսից ավելին, սև մետաղների ավելի քան 2/5-ը, անտառանյութի 90 տոկոսը: Հայկական ՍՍՀ-ից ՌՍՖՍՀ է ուղարկվում մեքենաշինության արտադրանքի 60 տոկոսը, քիմիական արդյունաբերության արտադրանքի դրեթե կեսը, հանրապետությունում արդյունահանվող պղնձի և հազվագյուտ մետաղների նշանակալի մասը, շինանյութեր, պահածոների, գինու ու կոնյակի արտադրանքի մոտ 60 տոկոսը և այլն:

Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում է՛լ ավելի է մեծանում միութենական հանրապետությունների դերը երկրի էկոնոմիկայի զարգացման գործում: Այսպես, իններորդ հնգամյակի տարիներին ամբող-

10 Նույն տեղում, էջ 78:

ջությամբ վերցրած ՍՍՀՄ-ում արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 43 տոկոսով, իսկ Բելոռուսական ՍՍՀ-ում՝ 64, Մոլդավական ՍՍՀ-ում՝ 57, Թուրքմենական ՍՍՀ-ում՝ 55,7, Կիրգիզական ՍՍՀ-ում՝ 52, Հայկական ՍՍՀ-ում՝ 45 տոկոսով և այլն: Մի շարք հանրապետություններ այդ նույն ժամանակ դիրաշանցել են գյուղատնտեսության համախառն արտադրանքի միջին միութենական աճը[11]:

Միութենական հանրապետությունների ժողովրդական տնտեսության զարգացման բարձր տեմպեր են պլանավորված նաև տասներորդ հնգամյակի համար: Նախատեսվում է այդ հնգամյակի ընթացքում ՍՍՀՄ-ում արդյունաբերական արտադրանքի արտադրությունը ավելացնել 35—39 տոկոսով[12], իսկ Ուկրաինական և Թուրքմենական ՍՍՀ-ներում՝ 30—34, Բելոռուսական և Ղազախական ՍՍՀ-ներում՝ 39—43, Վրացական և Ադրբեջանական ՍՍՀ-ներում՝ 37—41, Ուզբեկական ՍՍՀ-ում՝ 35—39, Լիտվական ՍՍՀ-ում՝ 32—36, Հայկական ՍՍՀ-ում՝ 43—47, Մոլդավական ՍՍՀ-ում՝ 45—49 տոկոսով և այլն[13]: Երկրի գյուղատնտեսության հետագա զարգացման ծրագիրը նախատեսում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրության միջին տարեկան ծավալը նախորդ հնգամյակի համեմատությամբ ավելացնել 14—17 տոկոսով[14]: Առանձին հանրապետությունների համար այդ ցուցանիշը է՛լ ավելի բարձր կլինի. Ուզբեկական ՍՍՀ-ի համար՝ 21—24, Վրացական ՍՍՀ-ի համար՝ 21—24, Մոլդավական ՍՍՀ-ի համար՝ 35—38, Հայկական ՍՍՀ-ի համար՝ 22—25, Էստոնական ՍՍՀ-ի համար՝ 17—20 տոկոս և այլն[15]: ՍՄԿԿ XXV համագումարի հաստատած «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները» փաստաթղթում նախատեսվում է «բարձրացնել միութենական հանրապետությունների դերն ու պատասխանատվությունը արտադրական և սոցիալ-կուլտուրական շինարարության հարցերի, ժողովրդական սպառման ապրանքների բողարկումն ավելացնելու, տեղական և ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ առևտուրը և բնակչության մատուցվող ծառայու-

---

11 Տե՛ս М. И. Куличенко, Экономические основы укрепления интернационального единства советского народа («История СССР», 1976, № 3).

12 Տե՛ս «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները», Երևան, 1976, էջ 29:

13 Նույն տեղում, էջ 112—122:

14 Նույն տեղում, էջ 65:

15 Նույն տեղում, էջ 112—122:

բյուններն ընդլայնելու, բնական, աշխատանքային և մյուս ռեսուրսները ավելի լրիվ օգտագործելու հարցերի լուծման գործում»[16]:

Այսպիսով, ՍՍՀՄ հիմնական տնտեսական խնդրի լուծման գործում միութենական հանրապետությունների աճող մասնակցությունը և միջհանրապետական տնտեսական կապերի բուռն զարգացումը նպաստում են տնտեսական կյանքի ինտերնացիոնալացման պրոցեսի հետագա խորացմանը:

Սոցիալիստական ազգերի մերձեցմանը նպաստող հաջորդ գործոնը հասարակական կյանքի ինտերնացիոնալացումն է, մեր երկրի ազգերի սոցիալ-քաղաքական զարգացման մակարդակների հավասարեցումը: ՍՍՀՄ-ում ստեղծված է հասարակության միատիպ սոցիալական կառուցվածք՝ ամբողջ հասարակության և յուրաքանչյուր ազգի համար: Այդ կառուցվածքը ձևավորվել է սոցիալիստական շինարարության ընթացքում և հանդիսանում է սովետական հասարակության միաձուլության ու համախմբվածության հիմքը: 1959 թ. մարդահամարի տվյալները վկայում են, որ մեր երկրում զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանի շեմին արդեն գոյություն ուներ միութենական հանրապետությունների դասակարգերի ու սոցիալական խմբերի մոտավորապես միանման հարաբերակցություն: Այսպես, 1959 թ. ՍՍՀՄ-ում ամբողջությամբ վերցրած բնակչության դասակարգային կազմը ուներ հետևյալ պատկերը (տոկոսներով՝ ամբողջ բնակչության համեմատությամբ). բանվորներ ու ծառայողներ՝ 68,3 (նրանցից բանվորներ՝ 49,5), կոլտնտեսային գյուղացիություն՝ 31,4, մենատնտեսներ ու չկոոպերացված տնայնագործներ՝ 0,3[17]: *Միութենական հանրապետություններում այս նույն ցուցանիշները արտահայտվում էին հետևյալ կերպ*[18].

Միութենական հանրապետություններ	*Բանվորներ*	*Ծառայողներ*	*Կոլտնտեսականներ*	*Մենատնտեսներ ու տնայնագործներ*
1	2	3	4	5
ՌՍՖՍՀ	54,0	21,6	24,2	0,2
Ուկրաինական ՍՍՀ	40,9	17,8	41,4	0,3
Բելոռուսական ՍՍՀ	34,9	15,9	48,5	0,7
Ուզբեկական ՍՍՀ	39,8	17,3	42,6	0,3
Ղազախական ՍՍՀ	58,4	20,8	27,0	0,1

16 *Նույն տեղում, էջ 106:*

17 *Տե՛ս* «Народное хозяйство СССР 1922—1972», стр. 35.

18 *Տե՛ս* «Итоги Всесоюзной переписи населения 1959 г. СССР. Сводный том», М., 1962, стр. 93.

1	2	3	4	5
Վրացական ՍՍՀ	31,7	24,0	44,0	0,3
Ադրբեջանական ՍՍՀ	35,2	22,3	42,4	0,1
Լիտվական ՍՍՀ	40,0	15,8	43,3	0,8
Մոլդավական ՍՍՀ	21,9	11,0	67,5	0,4
Լատվիական ՍՍՀ	51,5	21,9	26,1	0,5
Կիրգիզական ՍՍՀ	40,1	17,9	41,7	0,3
Տաջիկական ՍՍՀ	30,4	15,9	53,5	0,2
Հայկական ՍՍՀ	39,9	22,4	37,5	0,2
Թուրքմենական ՍՍՀ	36,8	20,6	42,1	0,5
Էստոնական ՍՍՀ	55,2	23,6	20,6	0,5

Բերված տվյալները ցույց են տալիս, որ 1950-ական թվականների վերջում տարբեր միութենական հանրապետություններում արդեն գոյություն չուներ դասակարգերի ու սոցիալական խմբերի հարաբերակցության խիստ տարբերություն՝ մի բան, որը վկայում է ամբողջ սովետական հասարակության սոցիալական կառուցվածքի միատարրության մասին։ Միութենական հանրապետություններում միատեսակ ձևով են ընթանում այնպիսի սոցիալական պրոցեսներ, ինչպիսիք են ուրբանիզացիան, մտավորականության տեսակարար կշռի բարձրացումը, բնակչության հիմնական դասակարգերի ու սոցիալական խմբերի ներսում կատարվող փոփոխությունները։ Այդ պրոցեսները բնորոշ են զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանին և տանում են դեպի սովետական հասարակության միատարրության հետագա ամրապնդում։

Հասարակական կյանքի ինտերնացիոնալացման կարևոր գործոն է սովետական հասարակության միաձուլությունն ու քաղաքական համախմբվածությունը, սովետական ժողովրդի միասնական պաղատիարախոսությունը։ Սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ ՍՍՀՄ-ում հաստատվել է ժողովուրդների բարոյաքաղաքական միասնություն և անխախտ բարեկամություն։ Քաղաքական, տնտեսական և հոգևոր շահերի ընդհանրությունն ամրակցում է սովետական ժողովուրդների ու ազգերի միասնությունը։ Պետականության սովետական ձևը լիովին համապատասխանում է ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ երկրի յուրաքանչյուր ազգի ու ազգության շահերին։ Սովետական քաղաքական հասարակարգը ապացուցել է իր կենսունակությունը, այն ունի սովետական ժողովուրդների բարոյաքաղաքական միասնության հետագա ամրապնդման անսպառ հնարավորություններ։ Բնութագրելով սովետական պետությունը, Վ. Ի. Լենինն ասել է. «Մենք իշխում ենք ոչ թե բաժանելով, ըստ հին

Հոսմի դաժան օրենքի, այլ միացնելով բոլոր աշխատավորներին կենդանի շահերի, դասակարգային գիտակցության անխզելի շղթաներով։ Եվ մեր միությունը, մեր նոր պետությունն ավելի ամրակուռ է, քան բռնադատական իշխանությունը, որը սատով ու երկաթով միավորում է իմպերիալիստների համար հարկավոր արհեստական պետական կազմավորումները»[19]։

Ինտերնացիոնալացման պրոցեսն ընդգրկում է հասարակության ոչ միայն քաղաքական-հասարակական համակարգերը, այլև նրա հոգևոր կյանքը։ Մշակույթի ասպարեզում ինտերնացիոնալացումը հենվում է ամենից առաջ յուրաքանչյուր ազգային մշակույթի զարգացման ու ծաղկման վրա, որովհետև մշակույթների ակտիվ փոխներգործությունը, նրանց մերձեցումը և փոխհարստացումը հնարավոր են այն դեպքում, երբ շրփվող մշակույթները դառնում են զարգացման մոտավորապես հավասար մակարդակների վրա, երբ նրանք կարող են հարստացնել միմյանց։ Այդ իսկ պատճառով սովետական ժողովուրդների ազգային մշակույթների ինտերնացիոնալացման պրոցեսն ունեցել է զարգացման փուլեր։ Մեր հասարակության զարգացման առաջին էտապում, անցման շրջանում, կուլտուրական հեղափոխության իրականացման ընթացքում լուծվում էր նախկինում ճնշված ժողովուրդների մշակութային հետամնացության վերացման խնդիրը։ Այդ էտապում ազգային մշակույթների մերձեցման պրոցեսն առավելապես արտահայտվում էր մյուս ժողովուրդների մշակույթի վրա ռուս ժողովրդի մշակույթի ազդեցության միջոցով։ Այդ ազդեցությունն իրականացվում էր հոգևոր կյանքի բոլոր ասպարեզներում և հանդիսանում էր սոցիալիստական մշակույթի ձևավորման, սովետական ազգերի կուլտուրական զարգացման մակարդակների հավասարեցման կարևոր գործոն։

Ինչպես հայտնի է, կուլտուրական զարգացման առավել կարևոր ցուցանիշը բնակչության գրագիտության և կրթության մակարդակն է։ Այս ցուցանիշներով կարելի է տեսնել, թե ինչպես աստիճանաբար մերձենում էին սովետական հանրապետությունների կուլտուրական զարգացման մակարդակները։ Այսպես, 1920 թ. մարդահամարի համաձայն բնակչության գրագիտության առավել բարձր մակարդակը գրանցվել է Ուկրաինական ՍՍՀ-ում (51,9 տոկոս), Բելոռուսական ՍՍՀ-ում (47,4 տոկոս) և ՌՍՖՍՀ-ում (47,8 տոկոս)։ Այդ նույն ժամանակ գրագիտության մակարդակը մի շարք երկրամասերում եղել է չափազանց ցածր.

19 Վ. Ի. Լենին, *երկեր*, *հատ. 26*, *էջ 588*։

Տաջիկստանում՝ 3,1 տոկոս, Կիրգիզիայում՝ 3,5, Ուզբեկստանում՝ 8, Թուրքմենիայում՝ 8,7, Հայաստանում՝ 15,3, Ղազախստանում՝ 18,3, Ադրբեջանում՝ 19,7 տոկոս և այլն[20]:

Խիստ տարբերություն էր նկատվում նաև քաղաքային ու գյուղական բնակչության, տղամարդկանց և կանանց գրագիտության մակարդակների միջև: 1939 թ. գրագիտության առավել բարձր մակարդակ գրանցվել է Էստոնիայում (98,6 տոկոս) և Լատվիայում (92,7 տոկոս): Մյուս սովետական հանրապետություններում գրագիտության մակարդակը տատանվում էր 76,7—89,7 տոկոսի սահմաններում[21]: Զգալիորեն հարթվել էր քաղաքային ու գյուղական բնակչության, տղամարդկանց ու կանանց գրագիտության մակարդակների միջև եղած տարբերությունը: Այս տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ արդեն անցման ժամանակաշրջանի վերջում հիմնականում լուծվել էր միութենական հանրապետությունների բնակչության գրագիտության մակարդակների հավասարեցման խնդիրը:

Մշակույթի ասպարեզում տեղի ունեցող ինտեգրացիայի պրոցեսը արտահայտվում է նաև բնակչության կրթական մակարդակի մասին վկայող տվյալների միջոցով: 1939 թ. միութենական հանրապետությունների ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում զբաղված բնակչության կրթական մակարդակը բնութագրվում էր հետևյալ տվյալներով. յուրաքանչյուր 1000 զբաղվածների համեմատ եղած բարձրագույն, թերի բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցող անձանց թիվը[22].

Ադրբեջանական ՍՍՀ	—122
Կիրգիզական ՍՍՀ	— 56
Տաջիկական ՍՍՀ	— 45
Հայկական ՍՍՀ	—135
Թուրքենական ՍՍՀ	— 78
ՌՍՖՍՀ	—124
Ուկրաինական ՍՍՀ	—139
Բելոռուսական ՍՍՀ	—123
Ուզբեկական ՍՍՀ	— 61
Ղազախական ՍՍՀ	— 99
Վրացական ՍՍՀ	—163

20 Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.», т. III, М., 1972, стр. 570.

21 Նույն տեղում, Լատվիայի և Էստոնիայի վերաբերյալ տվյալները հաշվարկային են:

22 Հաշվումներն արված են հեղինակի կողմից, տե՛ս նույն տեղում, էջ 559—562:

Ինչպես վկայում են բերված տվյալները, 1939 թ. դեռևս նկատելի տարբերություն կար առանձին հանրապետությունների բնակչության կրթական մակարդակների միջև։ Պետք է չմոռանալ, որ Միջին Ասիայի հանրապետություններում դպրոցական ու բուհական համակարգը հիմնականում ստեղծվել է միայն սովետական իշխանության օրոք։

1959 թ. նշված ցուցանիշներն արդեն նկատելիորեն համահարթվել էին[23]։

Լիտվական ՍՍՀ	—250
Մոլդավական ՍՍՀ	—280
Լատվիական ՍՍՀ	—502
Կիրգիզական ՍՍՀ	—429
Տաջիկական ՍՍՀ	—407
Հայկական ՍՍՀ	—527
ՌՍՖՍՀ	—440
Ուկրաինական ՍՍՀ	—438
Բելոռուսական ՍՍՀ	—331
Ուզբեկական ՍՍՀ	—447
Ղազախական ՍՍՀ	—447
Վրացական ՍՍՀ	—492
Ադրբեջանական ՍՍՀ	—473
Թուրքմենական ՍՍՀ	—448
Էստոնական ՍՍՀ	—448

Աղյուսակի տվյալները պերճախոս կերպով վկայում են, որ 1939—1959 թթ. բնակչության կրթական մակարդակի աճի ամենաբարձր ցուցանիշը ձեռք են բերել հատկապես այն հանրապետությունները, որոնք անցյալում ետ էին մնում։ Իհարկե, բնակչության կրթական մակարդակի հավասարեցման խնդրի լուծումը պահանջում է երկար ժամանակ, և այդ խնդրի կատարումը շարունակվում է նաև զարգացած սոցիալիզմի պայմաններում։ 1970 թ. մարդահամարը ցույց տվեց, որ կրթություն ունեցող անձանց բացարձակ քանակի աճի հետ մեկտեղ շարունակում է տվյալ բնագավառում միութենական հանրապետությունների մակարդակների հետագա մերձեցումը[24]։

Լիտվական ՍՍՀ	—596
Մոլդավական ՍՍՀ	—508
Լատվիական ՍՍՀ	—661

23 Հաշվումներն արված են հեղինակի կողմից։ Տե՛ս նույն տեղում։

24 «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.», т. III, стр. 563.

Կիրգիզական ՍՍՀ	—642
Տաջիկական ՍՍՀ	—602
Հայկական ՍՍՀ	—697
Թուրքմենական ՍՍՀ	—682
Էստոնական ՍՍՀ	—660
ՌՍՖՍՀ	—656
Ուկրաինական ՍՍՀ	—668
Բելոռուսական ՍՍՀ	—614
Ուզբեկական ՍՍՀ	—663
Ղազախական ՍՍՀ	—654
Վրացական ՍՍՀ	—.711
Ադրբեջանական ՍՍՀ	—674

Կրկին անդրադառնալով բնակչության գրագիտության մակարդակի ցուցանիշին, նկատենք, որ արդեն 1959 թ. մարդահամարը ցույց տվեց, որ ամբողջ երկրում անգրագիտության վերացման խնդիրը լուծված է վերջնականապես։ Ավելացնենք, որ մի շարք հանրապետություններ գերազանցել են հանրակրթական մակարդակի երկրի միջին ցուցանիշը։ Վերջապես, միութենական հանրապետությունների կուլտուրական զարգացման մակարդակների մերձեցումը արտահայտվում է նաև նրանում, որ բոլոր հանրապետություններում սոցիալիստական շինարարության տարիներին ձևավորվեց սոցիալիստական մտավորականությունը, իրագործվեց կնոջ ազատագրումը, ստեղծվեցին մշակույթի հիմնարկներ և այլն։

Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում շարունակվում է միութենական հանրապետությունների կուլտուրական զարգացման մակարդակների հավասարեցման ընթացքը՝ յուրաքանչյուր ազգային մշակույթի համակողմանի ծաղկման հիման վրա։ Ընդ որում, մերձեցման պրոցեսը բնորոշվում է ոչ միայն կուլտուրական միջավայրի զարգացմամբ, այլև մշակութային արժեքների օգտագործման աստիճանական բարձրացմամբ։ Վերջինս բնորոշվում է բնակչության կրթական մակարդակի, գիտական ու մշակութային գործունեությանը աշխատավորների մասնակցության, կուլտուր-լուսավորական հիմնարկների ընդլայնման, մամուլի ու գրքերի տարածման, ինֆորմացիայի միջոցների (ռադիո, հեռուստատեսություն և այլն) ցանցի ընդլայնման, դրանց հաղորդումների նկատմամբ հետաքրքրության աստիճանի մասին տվյալներով։

Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում աճում է գիտության նշանակությունը, մանավանդ գիտատեխնիկական հեղափոխության ծավալման պայմաններում: Ամբողջ բնակչության քանակի համեմատությամբ գիտական աշխատողների քանակի ավելացումը կարելի է գիտել որպես ավյալ հանրապետության զարգացման մակարդակի ցուցանիշ: Այսպես, 1970 թ. ՌՍՖՍՀ-ում մեկ գիտական աշխատող ընկնում էր մոտավորապես 206 մարդու, Ուկրաինական ՍՍՀ-ում՝ 362, Բելոռուսական ՍՍՀ-ում՝ 427, Ուզբեկական ՍՍՀ-ում՝ 478, Ղազախական ՍՍՀ-ում՝ 476, Վրացական ՍՍՀ-ում՝ 234, Ադրբեջանական ՍՍՀ-ում՝ 300, Լիտվական ՍՍՀ-ում՝ 347, Մոլդավական ՍՍՀ-ում՝ 594, Լատվիական ՍՍՀ-ում՝ 202, Կիրգիզական ՍՍՀ-ում՝ 488, Տաջիկական ՍՍՀ-ում՝ 580, Հայկական ՍՍՀ-ում՝ 208, Թուրքմենական ՍՍՀ-ում՝ 540, Էստոնական ՍՍՀ-ում՝ 340 մարդու[25]: Եթե այս ավյալները համեմատելու լինենք 1959 թ. համապատասխան ավյալների հետ, ապա կտեսնենք, որ 1959 և 1970 թթ. միջև ընկած ժամանակամիջոցում հանրապետություններում տեղի է ունեցել գիտական աշխատողների քանակական մակարդակների հավասարեցման ուժգին պրոցես: Այսպես, օրինակ, 1959 թ. Բելոռուսական ՍՍՀ-ում մեկ գիտական աշխատող ընկնում էր մոտավորապես 1.340 մարդու, իսկ 1970 թ., ինչպես նշվեց, 427 մարդու, Ղազախական ՍՍՀ-ում՝ համապատասխանաբար՝ 1020 և 476, Լիտվական ՍՍՀ-ում՝ 900 և 347, Կիրգիզական ՍՍՀ-ում՝ 1.033 և 488 և այլն[26]:

Սովետական աղգերի հոգևոր արժեքների օգտագործման մակարդակների մերձեցման մասին են վկայում նաև կինոթատրոնների հաճախելիության մասին եղած ավյալները: Այսպես, 1970 թ. մեկ բնակիչը միջին հաշվով դիտել է կինոսեանսներ՝

ՌՍՖՍՀ	22
Ուկրաինական ՍՍՀ	18
Բելոռուսական ՍՍՀ	15
Ուզբեկական ՍՍՀ	12
Ղազախական ՍՍՀ	22
Վրացական ՍՍՀ	12
Ադրբեջանական ՍՍՀ	11
Լիտվական ՍՍՀ	15
Մոլդավական ՍՍՀ	17

25 Հաշվումներն արված են հեղինակի կողմից: Տե՛ս «Народное хозяйство СССР в 1970 г.», М. 1971.

26 Նույն տեղում, էջ 677:

Լատվիական ՍՍՀ	16
Կիրգիզական ՍՍՀ	15
Տաջիկական ՍՍՀ	13
Հայկական ՍՍՀ	12
Թուրքմենական ՍՍՀ	15
Էստոնական ՍՍՀ	17

Հարկ է նշել, որ այս ցուցանիշը քաղաքային բնակչության համար տատանվում է 15—21-ի, իսկ գյուղական բնակչության համար՝ 6—23-ի սահմաններում։ Քննության չենթարկելով այլ տվյալները ևս, նշենք, որ 1960-ական թվականներին տեղի է ունեցել թերթերի ու գրքերի ընթերցման, կուլտուրայի հիմնարկների կողմից հանրապետությունների բնակչության սպասարկման մակարդակների մերձեցում։

Այսպիսով, թե՛ կուլտուրական միջավայրի զարգացման և թե՛ հոգևոր արժեքների օգտագործման մասին եղած տվյալները վկայում են զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում ՍՍՀՄ ժողովուրդների կուլտուրական զարգացման մակարդակների մերձեցման մասին։ Սովետական ժողովուրդների հոգևոր կյանքի ինտերնացիոնալացման պրոցեսը, որը սկսվել է սոցիալիստական շինարարության տարիներին, ժամանակակից էտապում դարձել է ավելի ուժգին, ընդգրկելով սովետական հասարակության հոգևոր կյանքի բոլոր ասպարեզները։

Մեր երկրի զարգացման բոլոր էտապներում սովետական ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու կուլտուրական զարգացման հավասարեցման պրոցեսը պլանաչափ կերպով ղեկավարվում է կոմունիստական կուսակցության կողմից։ Ըստ էության այս պրոբլեմի լուծումը հանդիսացավ կուսակցության ազգային քաղաքականության բաղկացուցիչ մասը։ Դեռևս 1922 թ. նոյեմբերին Վ. Ի. Լենինն ընդգծում էր ժամանակակից քաղաքակրթության զարգացման ամեն մի առաջադիմության փոխադարձ կապն ազգային հարցի ճիշտ լուծման հետ։ «...Տարբեր ազգերի շահերի նկատմամբ հակայական ուշադրությունն է միայն, որ վերացնում է կոնֆլիկտների հողը, վերացնում է փոխադարձ անվստահությունը, վերացնում է ամեն տեսակի ինտրիգների երկյուղը, ստեղծում է, մանավանդ տարբեր լեզուներով խոսող բանվորների և գյուղացիների, այն վստահությունը, առանց որի բացարձակապես անհնարին են թե՛ ժողովուրդների խաղաղ հարաբերությունները և թե՛ փոքրիշատե հաջող զարգացումն այն ամենի, ինչ արժեքավոր է արդի քաղաքակրթության մեջ»[27]։

27 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 457։

Ամփոփելով ասածը, կարող ենք նշել, որ սոցիալիստական ազգերի մերձեցման հիմքում ընկած է սովետական հասարակության տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի ինտերնացիոնալացումը։ «Այսպիսով, ազգային միջնորմների խորտակումը, որի նշանակության մասին քանիցս խոսել է Լենինը, ՍՍՀՄ ժողովուրդների հետագա մերձեցման նախադրյալների ձևավորումը տեղի են ունենում թե՛ նյութական և թե՛ հոգևոր ոլորտներում։ Միավորող հզոր հիմք դարձան ամբողջ սովետական ժողովրդի, նրա կազմի մեջ մտնող բոլոր ազգությունների ու ազգային խմբերի պատմական ճակատագրերի ընդհանրությունը, կենդարյա համատեղ պայքարում և համատեղ աշխատանքում ծնունդ առած ընդհանուր տրադիցիաները, հայացքները, կենսափորձը»[28]։

Սովետական հասարակության կյանքի բոլոր ոլորտների ինտերնացիոնալացման պրոցեսի բարձրագույն արտահայտությունը հանդիսացավ մարդկանց պատմական նոր ընդհանրության՝ սովետական ժողովրդի կազմավորումը։ Այս նոր ընդհանրության կազմավորումը, ընդհանրություն, ուր ազգերը ու ազգությունները զարգանում են որպես միասնական ամբողջության անբաժան բաղկացուցիչ մասեր, հաստատեց Վ. Ի. Լենինի այն կանխատեսումը, որ սոցիալիստական շարժումը «ստեղծում է մարդկային համակեցության նոր, բարձրագույն ձևեր, երբ ամեն մի ազգության աշխատավոր մասսաների օրինական պահանջմունքներն ու պրոգրեսիվ ձգտումներն առաջին անգամ կբավարարվեն ինտերնացիոնալ միասնության մեջ...»[29]։

---

28 Լ. Ի. Բրեժնև, *Լենինյան կուրսով*, հատ. 4, էջ 81։

29 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 21, էջ 33։

Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՄԱՐՔՍ–ԼԵՆԻՆՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ

ՍՄԿԿ XXV համագումարը հանդիսացավ կուսակցության նախորդ համագումարներում մշակված ու պրակտիկ փորձով ստուգված տեսական դրույթների հաջորդական ստեղծագործական զարգացման նոր փուլ: Համագումարը տեսական ընդհանրացումներ կատարեց մեծ Հոկտեմբերի հաղթանակից հետո անցած 60 տարիների ընթացքում հեղափոխության տեսության անշեղ կիրառման մասին, ընդգծեց մարքս-լենինյան տեսությունը կյանքում մարմնավորելու և զարգացնելու խնդիրները:

Մարքս-լենինյան տեսությունը կազմում է կուսակցության գաղափարական-դաստիարակչական աշխատանքի հիմքը, աշխարհի վերափոխման, նոր, կոմունիստական հասարակարգի իրականացման համար նրա անդուլ պայքարի զլխավոր զինանոցը: Այդ տեսությունը, ասաց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXV համագումարում, «մեզ տալիս է պատմական հեռանկարի ըմբռնումը, օգնում է որոշելու սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման ուղղությունը շատ տարիների համար, ճիշտ կողմնորոշվելու միջազգային իրադարձություններում: Մարքսիզմ-լենինիզմի ուժը մշտական ստեղծագործական զարգացումն է: Այդ է սովորեցրել Մարքսը: Այդ է սովորեցրել Լենինը: Նրանց պատգամներին կուսակցությունը միշտ հավատարիմ կլինի»[1]:

ՍՄԿԿ XXV համագումարը գիտական խոր վերլուծության ենթարկեց կուսակցության գործունեությունը Սովետական Միության ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառներում, հանրագումարի բերեց կուսակցության XXIV համագումարի որոշումների կենսագործումը, կան-

1 Լ. Ի. Բրեժնև, *ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում (Զեկուցում ՍՄԿԿ XXV համագումարում, 1976 թ. փետրվարի 24-ին)*, Երևան, 1976, էջ 118:

խագծեց տասներորդ հնգամյակում սովետական երկրի զարգացման խնդիրները, որոնք կազմում են նախորդ հնգամյակներում կատարված մեծագործությունների շարունակությունն ու զարգացումը։ Բազմակողմանիորեն վերլուծելով աշխարհի իրադրությունը և սովետական պետության ներքին ու արտաքին քաղաքականությունը, համագումարը նոր էտապ նշանավորեց մարքս-լենինյան տեսության զարգացման գործում, կանխագծեց կոմունիստական կուսակցության ու սովետական ժողովրդի հետագա գործունեության նոր պրոբլեմները։

Համագումարում Լ. Ի. Բրեժնևի զեկուցման և մյուս նյութերի մեջ հետագա զարգացում ստացավ մարքս-լենինյան տեսությունը սոցիալիստական հասարակության կառուցման մասին, ընդգծվեց, որ սովետական երկրում իրականացվել է զարգացած սոցիալիզմը՝ մարդկության պատմության մեջ առաջին սոցիալիստական հասարակական ու քաղաքական կարգը։ 60 տարի առաջ՝ առաջին անգամ մարդկության պատմության մեջ մեր երկրում իրագործվեց սոցիալիստական հեղափոխությունը։ Մեծ Հոկտեմբերի հաղթանակով արտադրության միջոցները վերածվեցին հանրային, սոցիալիստական սեփականության և հասարակական արտադրությունն ի սպաս դրվեց ամբողջ ժողովրդի նյութական ու հոգևոր կարիքներին։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո սովետական երկրում կառուցվեց զարգացած սոցիալիզմ, որը նոր դարաշրջան նշանավորեց մեր երկրի ժողովուրդների կյանքում և հսկայական ներգործություն ունեցավ ամբողջ աշխարհի ժողովուրդների ազատագրական պայքարի, ինչպես նաև համաշխարհային պատմության զարգացման ընթացքի վրա։

Մեծ Հոկտեմբերի հաղթանակից հետո սովետական ժողովուրդը կուսակցության ղեկավարությամբ տնտեսական շինարարության բնագավառում ձեռք է բերել պատմության մեջ նախադեպը չունեցած նվաճումներ։ Այսպես, օրինակ, վերջին երկու հնգամյակների ընթացքում մեր երկրի արտադրական ֆոնդերն ավելի քան կրկնապատկվեցին։ «Ընդամենը 10 տարում մենք կարողացանք ստեղծել մի նոր այնպիսի տնտեսական պոտենցիալ, ինչպիսին ստեղծվել էր գրեթե կես դարի ընթացքում»[2]։ Արդյունաբերական արտադրանքի ամբողջ շարք տեսակների ծավալով «Սովետական Միությունը դուրս է եկել աշխարհում առաջին տեղը»[3]։

---

2 Նույն տեղում էջ 59։

3 Նույն տեղում, էջ 58։

ՍՄԿԿ XXV Համագումարը նշեց, որ «ինն երորդ հնգամյակի արդյունքները ցույց են տալիս, որ մեր երկիրը առաջ է շարժվել կոմունիստական շինարարության բոլոր ուղղություններով։ Արագ տեմպերով էին զարգանում հասարակության արտադրողական ուժերը։ Զգալիորեն աճել է երկրի գիտատեխնիկական պոտենցիալը։ Արտադրողական ուժերի աճի հետ մեկտեղ կատարելագործվում էին սոցիալիստական արտադրական հարաբերությունները, բարձրացավ արտադրության հանրայնացման մակարդակը։ Ուժեղացավ համաժողովրդական սեփականության տնտեսական ու սոցիալական դերը, նրան է՛լ ավելի մոտեցավ կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականությունը։ Ավելացավ բանվոր դասակարգի թվական կազմը և աճեց նրա դերը որպես կոմունիստական շինարարության առաջատար ուժի։ Կոլտնտեսային գյուղացիությունն իր սոցիալ-տնտեսական դրությամբ մոտեցավ բանվոր դասակարգին»[4]։

Սրանք են զարգացած սոցիալիզմին հատուկ գծերը երկրի սոցիալ-տնտեսական կյանքի բնագավառում։ Սակայն սոցիալ-տնտեսական փոփոխությունների այդ թվարկումով չի սպառվում հարցը։

Կուսակցության տնտեսական քաղաքականության, նրա գլխավոր տնտեսական ստրատեգիայի հիմնական և տևական նպատակների մեջ գերագույնը եղել է ու մնում է ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացումը։ Տևական այս գրույթը կազմում է զարգացած սոցիալիզմի օրինաչափությունը, որի հիմքի վրա էլ կառուցված են տասներորդ հնգամյա պլանի ծրագրերը։

Համագումարն ընդգծեց, որ իրենց գլխավոր խնդիրներով ու տնտեսական գործունեության հիմնական ուղղություններով ինն երորդ ու տասներորդ հնգամյա պլանները մի միասնական ամբողջություն են, կուսակցության տնտեսական քաղաքականության կանխատեսումներ։ Կուսակցության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները ճիշտ որոշելը կազմում է տեսության, նրա ստրատեգիայի ու տակտիկայի կարևոր խնդիրը։

Ինչպես նշեց ՍՄԿԿ XXV Համագումարը, կուսակցության տնտեսական ստրատեգիան սկսվում է խնդիրների, հիմնական ու տևական նպատակների առաջադրումից։ Ըստ հեռանկարային պլանի, առաջիկա 15 տարում սովետական պետությունը կունենա երկու անգամ ավելի նյու-

---

4 «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները», Երևան, 1976, էջ 13—14։

թական ու ֆինանսական միջոցներ, քան նախորդ, այսինքն՝ 1961—1975 թթ. երեք հնգամյակների ընթացքում:

Համագումարը նոր ավանդ մուծեց հեղափոխության տեսության գանձարանում, զարգացած սոցիալիզմի սոցիալ-քաղաքական հարաբերությունների հետագա առաջընթացի և սոցիալիստական հարաբերությունները կոմունիստականի վերաճելու հարցերում: Ցույց տրվեց, որ հասուն սոցիալիզմի զարգացումն ավելի ու ավելի է մեղմացնում դասակարգային տարբերությունները և հաստատում հասարակության բոլոր խավերի սոցիալական միատարրություն: Դա զարգացած սոցիալիզմի կարևոր օրինաչափություններից մեկն է, միաժամանակ նրա բնորոշ գիծը:

Սոցիալական միատարրության գծով տեղի ունեցող պրոցեսներն անմիջականորեն առնչվում են նաև ազգային հարաբերությունների զարգացման հետ: Մեր երկրում անցյալում եղած ազգային հակամարտությունը թաղված է պատմության խորքում. սոցիալիզմի կառուցման շնորհիվ ձևավորվել են սոցիալիստական ազգերը, որոնք համագործակցում են տնտեսական, քաղաքական ու կուլտուրական շինարարության բոլոր ասպարեզներում, պետական ու հասարակական կյանքում:

Մենք ելնում ենք այն իրողությունից, ասված է համագումարին կենտկոմի տված հաշվետվության մեջ, «որ մեզ մոտ ստեղծվել է պատմական նոր ընդհանրություն՝ սովետական ժողովուրդը, որի հիմքում ընկած է բանվոր դասակարգի, գյուղացիության, մտավորականության անխախտ դաշինքը՝ բանվոր դասակարգի առաջատար դերի պայմաններում, երկրի բոլոր ազգերի ու ազգությունների բարեկամությունը»[5]:

Զարգացած սոցիալիստական հասարակարգի սոցիալական այդպիսի կազմի ստեղծումը, այսինքն՝ սովետական ժողովրդի պատմական նոր ընդհանրության առաջացումը, նշանավորվեց նաև նոր մարդու ձևավորումով: Համագումարը բացահայտեց մեծ Հոկտեմբերի ծնունդ նոր մարդու սոցիալ-քաղաքական ու բարոյական դիմագիծը: Սովետական Միության բնակչությունը ներկայումս հասնում է ավելի քան 260 միլիոնի, որից մոտ 215 միլիոնը ծնվել է Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո:

Համագումարում Լ. Ի. Բրեժնևն ասաց. «Անցած 60-ամյակի կարևորագույն արդյունքն է սովետական մարդը: Մարդ, որը կարողացավ ազատություն նվաճելուց հետո այն պաշտպանել ամենածանր մարտերում:

5 Լ. Ի. Բրեժնև, նշված զեկուցումը, էջ 134:

Մարդ, որը կառուցեց ապագան, չհենալով ուժերը և դիմելով ամեն մի զոհաբերության: Մարդ, որն անցնելով բոլոր փորձությունների միջով, ինքն էլ փոխվեց անճանաչելիորեն, իր մեջ միացնելով գաղափարական համոզվածությունն ու հսկայական կենսական եռանդը, կուլտուրան, գիտելիքները և դրանք կիրառելու կարողությունը: Դա մի այնպիսի մարդ է, որը լինելով ջերմագին հայրենասեր, եղել է և միշտ կլինի հետևողական ինտերնացիոնալիստ»[6]:

ՍՄԿԿ XXV Համագումարի առաջադրած տնտեսական դրույթների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում սովետական, սոցիալիստական ապրելակերպի հարցը:

Ժամանակակից բուրժուական աշխարհի պրոպագանդիստները միջոց ու ջանք չեն խնայում գունազարդելու կապիտալիստական աշխարհի ապրելակերպը: Թերթերում, ամսագրերում, գրքերում, ռադիո-հեռուստատեսային հաղորդումներում, եկեղեցական ու համալսարանական ամբիոններից կապիտալիզմի պրոպագանդիստները ճիգեր են թափում փառաբանելու արտադրության միջոցների մասնավոր սեփականատիրական կարգը, բուրժուական ապրելակերպը:

Սոցիալիզմը մերժել է բուրժուական ապրելակերպի հիմունքները, սահմանել մարդկանց կենսագործունեության այլ սկզբունքներ, հասարակության և մարդու միջև հաստատել է նոր հարաբերություններ, որով էկոնոմիկայի, տեխնիկայի և մշակույթի բոլոր նվաճումներն ի սպաս են դրվել ժողովրդին, նրա կյանքի բարելավման մեծ նպատակին:

«Մենք ստեղծել ենք նոր հասարակարգ, մի այնպիսի հասարակարգ, որի նմանը մարդկությունը դեռ չէր իմացել,— ասված է Համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի տված հաշվետվության մեջ:— Դա անգնահատելի, մըշտապես աճող էկոնոմիկայի, սոցիալիստական հասուն հարաբերությունների, իսկական ազատության հասարակարգ է: Դա մի հասարակարգ է, որտեղ տիրապետում է գիտական մատերիալիստական աշխարհայացքը: Դա մի հասարակարգ է, որն անսասանորեն վստահ է ապագայի, կոմունիստական լուսավոր հեռանկարներին: Մեր առջև բաց են հետագա համակողմանի առաջադիմության անծայրածիր հեռատեսանները:

Անցած ուղու գլխավոր արդյունքը մեր սովետական ապրելակերպն է: Իսկական կոլեկտիվիզմի ու ընկերականության մթնոլորտ, երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների համախմբվածություն, բարեկամություն, որոնք օրեցօր ամրապնդվում են, բարոյական առողջություն, որը

---

6 Նույն տեղում, էջ 144:

մեզ դարձնում է զորեղ, տոկուն՝ այսպիսիք են մեր ապրելակերպի վառ կողմերը, այսպիսիք են սոցիալիզմի մեծ նվաճումները, որոնք դարձել են մեր իրականության ուղենուծուծը...»[7]:

Կուսակցության XXV համագումարի որոշումներում նոր լուսաբանություն ստացավ զարգացած սոցիալիզմի համար մղված պայքարում կոմունիստական կուսակցության պատմական փորձը, տեսականորեն հիմնավորվեցին ՍՄԿԿ հետագա զարգացման, նրա կադրային քաղաքականության, գաղափարական-դաստիարակչական աշխատանքի և պետական ու հասարակական կազմակերպությունների ղեկավարման հիմնական հարցերը, սոցիալիստական հասարակարգի հետագա զարգացման և աստիճանաբար կոմունիզմին անցնելու պրոցեսների ղեկավարման խնդիրները:

1917 թ. օգոստոսին բոլշևիկների կուսակցության շարքերում հաշվվում էին 240 հազար կոմունիստներ, որոնք Վ. Ի. Լենինի գլխավորությամբ կազմակերպեցին Ռուսաստանի բանվոր դասակարգի և նրան սատարած աշխատավորների զինված պայքարը, հոկտեմբերյան մարտերում խորտակեցին բուրժուազիայի դիկտատուրան և հաստատեցին աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը, որն անշեղորեն առաջ գնաց սոցիալիստական վերափոխությունների ուղիով և մեր ժողովրդին հասցրեց զարգացած սոցիալիզմին: Անցած վեց տասնամյակի անդուլ աշխատանքի ու պայքարի բովում ստուգվեց կուսակցության գործունեությունը և նրա քաղաքականությունը, տարեցտարի ավելացավ ժողովրդի արժանավոր զավակների հոսքը դեպի կուսակցության շարքերը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին երեք միլիոն կոմունիստ ընկավ մարտի դաշտում՝ հանդես բերելով հայրենիքի և ժողովրդի շահերին անսահման նվիրվածության օրինակ: Միաժամանակ ՍՄԿԿ շարքերը համալրեցին 5 միլիոն սովետական մարդիկ: Կուսակցության XXIV համագումարից մինչև XXV համագումարը նրա շարքերը մտավ ավելի քան երկուսուկես միլիոն մարդ: 1976 թ. վերջերին ՍՄԿԿ շարքերում համախմբված էին 15 միլիոն 694 հազար կոմունիստներ:

Համագումարը հատուկ շեշտեց կուսակցական ղեկավարման լենինյան ոճի անշեղ իրականացման խնդիրը. «Լենինյան ոճը ստեղծագործական ոճ է, որին խորթ է սուբյեկտիվիզմը, նրան բնորոշ է գիտական մոտեցումը բոլոր հասարակական պրոցեսների նկատմամբ: Նա ենթադրում է բարձր պահանջկոտություն իր և ուրիշների նկատմամբ, բացառում է

7 Նույն տեղում:

ինքնագոհությունը, հակադրվում է բյուրոկրատիզմի ու ձևամոլության ամեն տեսակ դրսևորումներին»[8]: Սովետական կոմունիստների համաժողովը նշեց, որ ամեն մի տեսության ճշմարտացիության չափանիշը պրակտիկան է: Զարգացած սոցիալիզմը ակնառու կերպով հաստատում է լենինյան պատգամների կենսունակությունն ու մարմնավորումը կյանքում, կուսակցության նախորդ համագումարների մշակած ծրագրային դրույթների անշեղ կենսագործումը:

Համագումարը վերլուծեց մեր երկրի ներքին և միջազգային կյանքի նոր պրոցեսները, առաջ քաշից արդի փուլում տեսության հետագա ստեղծագործական մշակման նոր խնդիրները: Համագումարի պատմական փաստաթղթերում ընդգծվեց, որ սոցիալիստական հասարակարգի զարգացման ներկա փուլում տեսության մշակման ու զարգացման պահանջմունքը ոչ թե նվազում, այլ, ընդհակառակը, է՛լ ավելի է մեծանում: Ընդ որում, կուսակցությունն ու պետությունը պահանջում են առաջին հերթին մշակել առավել ակտուալ, ժամանակակից հասարակական-քաղաքական խնդիրներին համապատասխանող պրոբլեմներ, այսինքն՝ հետազոտել ու լուսաբանել այնպիսի խնդիրներ, որոնք կապված են հասարակության արտադրողական ուժերի զարգացման ու ժողովրդի դաստիարակության հետ, որոնք լուսաբանում են գիտության արդյունավետության հարցը:

Հասարակական գիտությունների առջև կանգնած խնդիրները կարող են լուծվել կյանքի հետ նրանց ամենասերտ կապի պայմանով միայն, ասված է համագումարին կենտկոմի տված հաշվետվության մեջ: «Սխոլաստիկական տեսականացումը սոսկ կարող է արգելակել մեր առաջընթաց շարժումը: Միայն պրակտիկայի հետ ունեցած կապը կարող է բարձրացնել գիտության արդյունավետությունը: Իսկ դա այսօր կենտրոնական պրոբլեմներից մեկն է»[9]: Այս դիրեկտիվը իմաստուն ծրագիր է հասարակական գիտությունների հետագա զարգացման, այդ բնագավառի գիտական հաստատությունների և աշխատողների համար:

Ընդհանրացնելով գաղափարական աշխատանքի խնդիրները և հասարակական գիտությունների գծով նոր հետազոտությունների հարցերը, համագումարը հիշեցրեց, որ ստեղծագործական մթնոլորտի ապահովումը կարևոր նախապայման է տեսության մշակման ու զարգացման համար: Այդ խնդիրը այսօր էլ մնում է նույնքան կարևոր, որքան և երեկ, նշվեց համագումարում:

---

8 Նույն տեղում, էջ 112:

9 Նույն տեղում, էջ 120:

Միաժամանակ շեշտվեց, որ «հայացքների ստեղծագործական համադրումը պետք է հիմնված լինի մեր ընդհանուր մարքս-լենինյան գաղափարական պլատֆորմի վրա։ Կարևոր է, որ հետևողականորեն պահպանվեն գիտության մեջ կուսակցականության սկզբունքները»[10]։ Համագումարին Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ արձանագրված է, որ այդ սկզբունքների կիրառման շնորհիվ կուսակցությունը հասել է խոշոր հաջողությունների, որ «արմատախիլ են արվում նացիոնալիզմի ու շովինիզմի առանձին դրսևորումներ, պատմական իրադարձությունների գնահատման նկատմամբ ոչ դասակարգային մոտեցման փաստերը, տեղայնության դրսևորումները, նահապետականության գովերգման փորձերը»[11]։

Հայաստանի կոմունիստները արիոն կերպով հետևում են հանրապետության գաղափարական կյանքին և հետևողականորեն իրագործում կուսակցության դիրեկտիվները՝ մարքս-լենինյան տեսության անաղարտությունը պահպանելու համար։ Կուսակցության XXV համագումարի ամբիոնից ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանն ասաց. «Մեր հանրապետության աշխատավորները խորապես գիտակցում են, որ իրենց նվաճումներով և հաջողություններով, այն ամենով, ինչը կազմում է վերածնված սոցիալիստական Հայաստանի փառքն ու պարծանքը, իրենք պարտական են Լենինի գաղափարներին, մեծ Հոկտեմբերին, մեր կուսակցության իմաստուն ազգային քաղաքականությանը։

Հանրապետության աշխատավորները այդ նվաճումները դիտում են որպես իրենց աշխատանքի և Սովետական Միության բոլոր ժողովուրդների ընդհանուր, համատեղ աշխատանքի արդյունքը։ Մեր երկրի ժողովուրդների քաղաքական, տնտեսական և սոցիալական նվաճումների մեջ ապրում ու հաղթանակում է նրանց մեծ բարեկամությունը, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի հզոր ուժը։ Այդ բարեկամությունը, որը մեծագույն փորձություններում ապացուցել է իր անխորտակելիությունն ու անսասանությունը, ամբողջ հայ ժողովրդի սրբության սրբոցն է, որը մենք պահպանում ենք աչքի լույսի պես։

Հանրապետության աշխատավորները լի են սրտագին երախտագիտությամբ սովետական հայրենիքի, բոլոր եղբայր ժողովուրդների հանդեպ՝ բարեկամության և փոխօգնության համար։ Հայ ժողովուրդը անսահմանորեն երախտապարտ է իր ավագ եղբորը՝ ռուս ժողովրդին, ժողո-

10 Նույն տեղում, էջ 121։

11 Նույն տեղում, էջ 124։

վուրդ, որը վճռական, անգնահատելի դեր խաղաց նրա ազգային և սոցիալական վերածնման գործում: Ռուս ժողովուրդը իր հեղափոխական եռանդի ու տաղանդի, իր անձնվիրության, աշխատասիրության, հոգու շռայլության, ինտերնացիոնալիզմի շնորհիվ վայելում է հայ ժողովրդի, մեր մեծ հայրենիքի բոլոր ժողովուրդների սերն ու հարգանքը: Երկու տարի հետո հանրապետության աշխատավորները հանդիսավորությամբ կնշեն 150-ամյակը այն հիշարժան օրվա, երբ Արևելյան Հայաստանի բախտը առհավետ կապվեց Ռուսաստանի հետ, երբ իրականացավ հայ ժողովրդի դարավոր երազանքը: Հենց այդ ժամանակ մեր ժողովրդի մեջ ծնունդ առավ թևավոր ասույթը՝ «Օրհնվի էն ահաթը, որ ուրսի օրհնված ոտը մտավ Հայոց լիս աշխարհը...»: Այն դարձավ մեր ժողովրդի հաջորդ սերունդների ազգային նշանաբանը: Այդ նշանավոր հոբելյանը մենք կնշենք որպես ինտերնացիոնալիզմի և բարեկամության համաժողովրդական տոն, որը մարմնավորում է Սովետական Միության բոլոր ժողովուրդների եղբայրությունը»[12]:

Սովետական Հայաստանի օրինակով կարելի է վառ կերպով ցույց տալ մարքսիզմ-լենինիզմի տեսության հզոր վերափոխիչ ուժը: Այդ ոգով էին առգործված նաև սովետական մյուս հանրապետությունների կոմունիստների պատվիրակների զեկույցները: Դրանք ցույց տվեցին մարքս-լենինյան տեսության և պրակտիկայի անխախտ կապը, այդ տեսության մարմնավորումը կյանքում: Սովետական հանրապետություններում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային արմատական սոցիալիստական վերափոխությունների փորձը հաստատեց մարքսիզմ-լենինիզմի տեսության ճշտությունը, նրա մեծ ուժը և կենսունակությունը: Այդ փորձը միաժամանակ հիմք է հանդիսանում մարքս-լենինյան տեսության հետագա հարստացման, նրա զարգացման նոր փուլի առաջադրած մեծ խնդիրների համար:

Կուսակցության XXV համագումարը հարստացրեց ու զարգացրեց մարքս-լենինյան տեսությունը՝ պետության, զարգացած սոցիալիզմի պայմաններում նրա դերի ու ֆունկցիաների, սոցիալիզմից կոմունիզմին անցման շրջանում սովետական պետության խնդիրների մասին: «Սոցիալիզմը դինամիկորեն զարգացող հասարակարգ է,— ասված է համագումարին Կենտկոմի տված հաշվետվության մեջ,— Մենք ոչ մի օր տեղում կանգնած չենք մնում, մենք շարունակ առաջ ենք գնում: Ուստի մեր հասարակության քաղաքական սիստեմի կատարելագործման նպատակով

[12] «Правда», 29 февраля 1976 г.

կատարված աշխատանքը սոցիալական խոր իմաստ և նշանակություն ունի»[13]:

Համագումարում խնդիր դրվեց ընդհանրացնել մեր հասարակության զարգացման ճանապարհին ձեռք բերված նվաճումները: ՍՍՀՄ նոր սահմանադրության նախագծում արտացոլվել են սոցիալիզմի մեծ հաղթանակները, վավերացվել են սոցիալիստական կարգերի ոչ միայն ընդհանուր սկզբունքները, որոնք արտահայտում են սովետական պետության դասակարգային էությունը, այլև զարգացած սոցիալիստական հասարակության, նրա քաղաքական կազմակերպության հիմնական գծերը: Կոմունիստական շինարարության նոր փուլում առանձնապես կարևոր նշանակություն է ստանում պետության դերը հասարակության հոգևոր կյանքում, դիտության, ժողովրդական կրթության, կուլտուրայի բազմակողմանի զարգացման համար պայմանների ապահովման գործում: Սոցիալիստական պետության գերագույն նպատակը կոմունիզմի կառուցումն է, որը բացահայտում է այդ պետության մարդասիրական բնույթը, ցույց է տալիս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հոչակած մեծ գաղափարների ամենահաղթ ուժը:

Վերլուծելով կուսակցության գործունեության հանրագումարները, համագումարը ստեղծագործորեն զարգացրեց նաև արդի միջազգային հարաբերությունների և սովետական արտաքին քաղաքականության մասին լենինյան տեսությունը: Խորապես վերլուծվեցին սոցիալիստական երկրների տնտեսական, քաղաքական, կուլտուրական զարգացման արդյունքները, սոցիալիստական երկրների փոխօգնության ու նպատակների ընդհանրության հարցերը, միջազգային սոցիալիզմի զարգացման օրինաչափությունները: Սովետական կոմունիստների մեծ համաժողովի ամբիոնից վստահորեն հնչում էր միջազգային կոմունիստական շարժման ղեկավարների խոսքը, որոնք հաստատում էին տարբեր երկրներում գործող կոմունիստների գաղափարների ու նպատակների միասնությունը և նրանց համախմբվածությունը: «Մենք՝ սովետական կոմունիստներս,— ասաց Լ. Ի. Բրեժնևը,— պրոլետարական ինտերնացիոնալիզմի պաշտպանությունը համարում ենք յուրաքանչյուր մարքսիստ-լենինյանի սրբազան պարտականությունը»[14]:

Համագումարում որոշում ընդունվեց Մոսկվայում՝ աշխարհում առաջին սոցիալիստական երկրի մայրաքաղաքում, կառուցել հուշար-

---

13 Լ. Ի. Բրեժնև, նշված գեկուցումը, էջ 142:

14 Նույն տեղում, էջ 50—51:

ձան, ի հիշատակ միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման հերոսների, ժողովուրդների երջանկության համար պայքարած այն անձնվեր մարտիկների, ովքեր զոհվել են դասակարգային պայքարի դիրքերում: Դա կհանդիսանա պրոլետարական ինտերնացիոնալիզմի մեծ գործին սովետական կոմունիստների անշեղ հավատարմության խորհրդանիշը:

Շատ են մարքս-լենինյան տեսության ստեղծագործական զարգացման պրոբլեմները, որոնք լուսաբանված են ՍՄԿԿ XXV համագումարի նյութերում և որոշումներում: Այստեղ քննարկվեց միայն դրանց մի մասը:

Ջինված մարքսիզմ-լենինիզմի տեսությամբ, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական ժողովուրդը անդուլ պայքար է ծավալում տասներորդ հնգամյակի վիթխարի խնդիրները կենսագործելու համար, որի շնորհիվ նոր, վճռական քայլ կարվի մեծ նպատակի՝ կոմունիզմի կառուցման ճանապարհին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Ե. Պ. Աղայան—*Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության միջազգային նշանակությունը* 8

Վ. Ն. Ներկարարյան—*Համաշխարհային հեղափոխական պրոցեսը և մարքս-լենինյան տեսության մի քանի հարցեր* 29

Ա. Մ. Հակոբյան—*Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և ազգային հարցի լուծումը ՍՍՀՄ-ում* 50

Գ. Բ. Ղարիբջանյան—*Անդրկովկասը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթարշավի ժամանակաշրջանում (1917 թ. հոկտեմբեր, 1918 թ. ապրիլ)* 73

Գ. Մ. Գալոյան—*Անդրկովկասի բոլշևիկների պայքարը աշխատավորների ինտերնացիոնալ համախմբվածության համար (1918—1921)* 89

Հ. Խ. Գարբինյան—*Կոմունիստական ինտերնացիոնալը և Անդրկովկասը (1919—1921)* 103

Ի. Ի. Թամրազովա—*Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը և Անդրկովկասը* 123

Մ. Վ. Առզումանյան—*Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և հայ ժողովրդի պատմական բախտը* 146

Ի. Ա. Քահյան—*XI կարմիր բանակը և մեծ Հոկտեմբերի հաղթանակը Հայաստանում* 161

Հ. Ի. Սիմոնյան—*Հոկտեմբերյան հեղափոխության արձագանքները արտասահմանյան հայ գաղութներում (1917—1920)* 177

Հ. Հ. Ազիզբեկյան—*Արդյունաբերության զարգացումը Սովետական Հայաստանում* 196

Վ. Ն. Դազախեցյան, Գ. Մ. Գեղամյան—*Սոցիալ-տնտեսական վերափոխումները Սովետական Հայաստանի գյուղում* 220

Կ. Ս. Խուդավերդյան—*Սովետական ազգերի մերձեցման սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմքերը* 238

Ա. Ն. Մնացականյան—*Մարքս-Լենինյան տեսության զարգացման նոր փուլը* . 256

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՈՒՂԻՈՎ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության և ՍՄԿԿ կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի
ինստիտուտների գիտական խորհուրդների որոշմամբ

Հրատարակչական խմբագիրներ
Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ, Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Նկարիչ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ
Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀՅ 04374 Պատվեր 551 Հրատ. 4603 Տպաքանակ 2000
Հանձնված է շարվածքի 23/V 1977 թ.: Ստորագրված է տպագրության. 29/VII 1977 թ.:
Տպադրական 16,75 մամուլ, հրատ.· 14.84 մամուլ, պայման. 15,57 մամուլ:
Թուղթ № 1, 60×84 1/16: Գինը 2 ռ. 05 կոպ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР. Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
14	8 ն.	հատանյակներիւ	հեռանյակներիւ
97	5 վ.	վերադարձվող	վերադարձող
173	5 վ.	Իսայ	Իսահակ

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲ. 05 ԿՈՊ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1977

II
A 58725
II
A 58927